




854

6 III 5







ՆՈՐ ԵՐԶՆՆԵՐ

II ՏԻՐԻ

ՄԱՌԻՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 5

Մ Ա. Յ Ի Ս

1902

—

Ք Ի Յ Լ Ի Ս

Тиснографіа Груз. Назат. Т—ва. | Եւրոպայի Արտոյ Հրատ. Սեփրութեան.

1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 5

| | | |
|-----|---|------------|
| 1. | ՎՐԱՆԻՆ ՏԱԿ, պատմուածք Լ. Բաւալեանի | 5 |
| 2. | ԺՈՂՈՎՐԴԵՎԱՆ ՄՕՏԻՒՆԵՐ, բանաստեղծ. Աւ. Իսահակեանի | 12 |
| 3. | ԶՀՈՒԿ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրխարի | 13 |
| 4. | ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորթոի, թարգմ. Հ. Առաքելեանի | 23 |
| 5. | ԱՆՃԱՐԱՑԱԾԸ, պատմուածք Ե. Ֆրանգեանի | 38 |
| 6. | ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ԿԻՆԵՐԸ, Ա. Դօղէի, թարգմ. Ա. Ֆեքվանեանի | 45 |
| 7. | ԶՈՒԿԵՐՄԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՐԱՄԱՆ, Ե. Թ. | 83 |
| 8. | ԴՈՒԹԱՆԻ ՇՈՒՐՋԸ, Ա. Արանասեանի | 91 |
| 9. | ԱՇԽԱՏԵ՛՛Լ ԵՍ ԴՈՒ... բանաստեղծ. Ադա Նեգրի, թարգմ. Յ. Յակոբեանի | 104 |
| 10. | ՀԷՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի | 106 |
| 11. | ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՆՍՄԱԿՆԵՐԸ | 127 |
| 12. | ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էտիւդիա. Վ. Արծրունու | 147 |
| 13. | ՀՈՍՀՈՍՆ ՈՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԸ. պատմուածք Առանձաւրի | 160 |
| 14. | ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ.—19) Dr. Max Nordau. „Der Zionismus“, Ե. Թ.—20) Բժկ. Վ. Արծրունի, «Թորոստ կամ Բարակացաւ», Լ. Ս. Նոր ստացուած գրքեր | 174 180 |
| 15. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Անգլիացի և ասիացի նաւթագործը, Ի. | 181 |
| 16. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—† Բագրատ վ. Քաւաքալեան.—Վեղարատը իդէալիստներ.—Մենք չը զիտենք օգտուել եղած ոյժերից.—Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների նախապատրաստութիւններ.—Սնկախութիւն պահպանելու դժուարութիւնը.—Արբունական հողաբաժիններ ձեռք բերելու նոր կանոններ.—Մի խորհուրդ մեր երիտասարդներին.—Մի իթարական երեւոյթ մեր հասարակական կեանքում | 184 |
| | Պաշտօնական հաղորդագրութիւններ | 190 |
| 17. | ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կուրան անկախ.—Մարտինիկայի աղէտը.—Ֆրանս-ռուսական զինակցութեան նոր յոյց.—Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը.—Նոր կա- | |

სურ 212-ის II სურბი

ჴრათ. XIV სურბი

სობრა


გრადან, ჴსობრადანან ბი რად-რადან

ა. ს. ს. ა. ბ. რ.

№ 5

ს. ა. ბ. რ.

1902



ბ. ბ. ჴ. ბ. რ.

Типография Груз. Издат. Т—ва. | სურბან რად ჴრათ. რეკერობან.

1902

Дозволено цензурою. Тифлясь, 1 іюня 1902 году.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 5

| | | |
|-----|--|-----|
| 1. | ՎՐԱՆԻՆ ՏԱԿ, պատմուածք Լ. Բաւաղեանի | 5 |
| 2. | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒՆՆԵՐ, բանաստեղծ. Աւ. Իսահակեանի | 12 |
| 3. | ՋՀՈՒԿ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրխարի | 13 |
| 4. | ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօի, թարգմ. Հ. Առաքելեանի | 23 |
| 5. | ԱՆՃԱՐԱՑԱԾԸ, պատմուածք Ե. Ֆրանգլեանի | 38 |
| 6. | ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ ԿԻՆԵՐԸ, Ա. Դօղէի, թարգմ. Ա. Ֆեքվանեանի | 45 |
| 7. | ԶՈՒԴԵՐՄԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՐԱՄԱՆ, Ե. Թ. | 83 |
| 8. | ԴՈՒԹԱՆԻ ՇՈՒՂԸ, Ա. Աքանասեանի | 91 |
| 9. | ԱՇԽԱՏԵՆ ԵՄ ԴՈՒ... բանաստեղծ. Աղա Նեգրի, թարգմ. Յ. Յակոբեանի | 104 |
| 10. | ՀԷՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի | 106 |
| 11. | ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ | 127 |
| 12. | ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էտիւդ բժայ. Վ. Արծրունու | 147 |
| 13. | ՀՈՍՀՈՍՆ ՈՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԸ. պատմուածք Առանձարի | 160 |
| 14. | ՄԱՏՆՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—19) Dr. Max Nordau. „Der Zionismus“, Ե. Թ.—20) Բժկ. Վ. Արծրունի, «Պոքախտ կամ Բարակացաւ», Լ. Ս. Նոր ստացուած գրքեր | 174 |
| 15. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Անգլիացի և ասիացի նաւթադորձը, Ի. | 181 |
| 16. | ՆՆԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—† Բագրատ վ. Փաւաքալեան.—Վեղարատը իդէալիստներ.—Մենք չը զիտենք օգտուել եղած ոյժերից.—Փիֆլիսի քաղաքային ընտրութիւնները նախապատրաստութիւններ.—Մեկախութիւն պահպանելու դժուարութիւնը.—Արքունական հողաբաժիններ ձեռք բերելու նոր կանոններ.—Մի խորհուրդ մեր երկաւարդներին.—Մի թիթարական երևոյթ մեր հասարակական կեանքում | 184 |
| | Պ ա շ տ օ ն ա կ ա ն հ ա ղ օ Ր զ ա գ ր ու թ իւ ն ն ե Ր | 190 |
| 17. | ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վուբան անկախ.—Մարտինիկայի աղէտը.—Ֆրանս-ռուսական զինակցութեան նոր սրբ.—Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը.—Նոր կա- | |

ապարութիւնը.—Ելլաս-Լօթարինդում բացառիկ օ-
 րէնքննրի վերացումը.—Պրուսիայի քաղաքականութիւ-
 նը լեհական դատոններում.—Համեմատութիւն Անգլիայի
 հետ.—Խաղաղութեան դաշն անգլիացիների և բօէրների
 մէջ.—Անգլիայի և Ռուսաստանի մրցումը մերձաւոր
 Երեւելքում.—Պարսից Շահի նոր ճանապարհորդութիւ-
 նը և Պարսկաստանի բարենորոգման հարցը . . . 191

Սանասարեան դպրոցը.—Կիլիկիայի կաթողիկոսական հարցը. 197

- 18. ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ, Տիգրանի 200
- 19. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԵԱՐՀԻՑ, Անվան ծխախոտ, Կ. Փա-
 շայեանի 202
- 20. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 208
- 21. ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ 216
- 22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 218
- 23. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», վէպ Ի. Ս. Տուրգենևիլի 81—95

Վ Ր Ա Ն Ի Ն Տ Ա Կ

Առաջին անգամ որ տեսայ զիրենք, նաւին կամուրջին վրայ, վատահաբար խօսք ուղղեցի հայերէն լեզուով: Օ՛, տարախոյս չի կար, Հայ էին, և առանց առաջուց տեղեկութեան նշոյլն անգամ ունենալու իրանց վրայ՝ պիտի կրնայի զրուցել թէ Խարբերդի Հայեր էին ասոնք որ Ամերիկայէն կը գառնային:

Կը խօստովանիմ թէ գուշակութեան այս կարողութիւնը մեծ արժանիք մը չէ: Երբոր Մարսիլիոյ շոգենաւի մը վրայ, աղտոտ անկողնի մը քով երկնցած կը գտնէք մարդ մը որ, ֆէսը գլխին, վայրահակ կը մնայ, ախուր, չորս կողմը անցածին գարձածին անտարբեր, մէկի դէմ հարիւր գրաւ դրէք որ Հայ մըն է ան, ու Խարբերդի Հայ մը, որ Ամերիկա կ'երթայ կամ անկից կը գառնայ: Գրաւնիդ կը շահիք:

Երեք հոգի էին, Խարբերդի շրջակայ գիւղերէն, ու անմիջապէս բարեկամ եղանք իրարու, այն միամիտ ու սկզբնական ընտանութեամբ զոր գաւառացիները կ'ունենան: Մին բարձրահասակ աղւոր մարդ մըն էր, կապոյտ աչքերով, զեղին մետաքսաւէտ պիւսերով որ երկու կողմէն վար կ'իյնային. եւրոպական գէմը մը կատարեալ: Խմբին առաջնորդը կը թուէր ու ինք կը խօսէր անոնց կողմէ: Միւս երկուքը պահած էին իրենց դեղացի անեղծ դրոշմը: Մին մանաւանդ, գլխիկոր հիւսանդ մարդ մը, անծուպ աղտոտ ֆէս մը մինչև ականջ-

ներուն վրայ քաշած, պեխերուն ծայրերը կտրած, կարծես դեռ նոր ելած էր իր գիւղէն, յանկարծակի փոխադրուած նաւին կամուրջին վրայ:

Իրենց պատմութիւնը ըրին ինծի: Չորս տարի Ամերիկա մնացեր էին, Ուսթըրի թելի գործարաններուն մէջ աշխատելով, — հայ պանդուխտներուն այդ անյագ Մողոքը որ այնքան զոհեր կ'առնէ իրենցմէ: Օր չանցնիր որ բանւորներէն մէկուն թելը կամ ոտքը չմնայ մեքենաներու տակ: Իրենցմէ մին քաշեց տաբատը և սրունքին վրայ ցոյց տուաւ լայն կտրուածքի մը հետքը: Ամերիկացի բժիշկ մը դարմաներ էր զինքը, մինչև ոսկորը կտրուած երկու կտորները իրարու միացնելով: Գործողութենէն ետքը սակայն, վնասուած ոտքը միւս ոտքէն կարճ մնացեր էր:

— Կալ մնալ չէի ուզեր, ըսաւ խօսակիցս: Նորէն բժշկին գացի, նորէն վէրջս բանալ տուի և այս անգամ վերջապէս կրցաւ երկու ոտքս ալ հաւասար ընել:

Յոգնած ու հիւանդ կը դառնային իրենց հայրենիքը, Ամերիկայի փողոցներուն մէջ ոսկի ժողովելու պատրանքնին կորսնցուցած, նոր աշխարհի քաղաքակրթութեան վրայ պահելով սակայն անճառ հիացում մը որ իրենց աչքերը խոշոր բանալ կուտար ամէն անգամ որ կը խօսէին ելեկտրական լոյսին կամ լայն պողոտաներուն վրայ, իրենց հայերէն խօսակցութիւնը համեմելով անգլիերէն բառերով, որոնք հաստ ու տափակ հնչականութիւն մը կ'առնէին իրենց բերնին մէջ:

Քիչ մը դրամով կը դառնային իրենց հայրենիքը: Ու սրպէս զի ալ աւելի հանգստութիւն կարենային տանիլ իրենցներուն, յանձն առեր էին ձմեռնամուտի այդ զժնդակ օդերուն այդ երկար ճամբորդութիւնը ընել նաւին կամուրջին վրայ, իրենց անկողնին ու վերմակին մէջ փաթթուած, անձրեւին ու բուրբին ենթակայ: Բարեազդաբար, իմ միջնորդութեանս վրայ, երկրորդ նաւապետը կտաւէ վրան մը կանգնել տուաւ իրենց համար, որ ըիչ շատ պիտի պատսպարէր զիրենք: Վրա-

նին առջեւ նստած կ'ընէին իրենց ճաշը, չոր հացէ ու ձիթապտուղէ բաղկացած, զոր Մարտիրիա գներ էին:

Փոթորկալի ծովը կը տանջէր այդ ցամաքի մարդիկը, որոնք անմիջապէս իրենց ապաստանարանը կը քաշուէին:

... Այն իրիկունը, հովը գուրսը կը գողայ, ահաւոր, արձակ միջոցին մէջ թաւալելով իր յորձանքները: Բնութեան մեծ ձայնն է որ կը բարբառի, իր ահագնութեանը տակ ընկճելով բեզ: Շողենաւին լուծքը կը գզրդի, կայմերը կը շառաչեն, շլթաները կը կռնչեն, կը՛ռ, կը՛ռ, կը՛ռ, դադաղը գերեզման իջեցնող չուանին ճռնչիւնէն ալ աւելի սաստիկ ազդելով բեզ անէութեան մահասարսուռ ցուրտը: Ու ինչ որ ամենէն աւելի կուտայ ինծի անգիտակից երկիւղի մոռցուած տպաւորութիւնը, խաւարին արհաւիրքը որ աչքդ կը լեցնէր ցնորական պատկերներով կամ կէս-գիշերուան փոթորկի ազդեցութիւնն որ անկողնին խորը կծկտել կուտայ մանուկներուն, մատաղ տարիքներու այս սարսուռներուն վերաբարձը և անբացատրելի պակուցումներու այս յանկարծական վերածնունդը, ինչ որ գերազանցապէս կուտայ ինծի այս ամենուն ալ տպաւորութիւնը, հովին սուլումն է կայմերուն չուաններուն և ելնարաններուն մէջէն: Մհ, տարօրինակ նուագախումբը, անհունօրէն երկարածիդ: Չէ, չուանները չեն որ կ'արձակեն այդ խառնամանեալ ձայները, սուր, թրթռացող: Ինծի այնպէս կուգայ որ հողի մը ունին այն խեղճ նիհար թելերը, ու հիմակ հովին մտրակող ուժգնութեան տակ պրկուելով ու դալարելով, ցաւի ազադակ մըն է որ կ'արձակեն, տառապանքի մարդկային արտայայտութիւն մը: Սարսուռ մը կը վազէ կը հոսի այդ թելերուն վրայ որոնք ջիղ են համակ, ու իրենց գերազըրգը ուժութիւնը կը հիւսէ այդ նուագը, պտուղէտեան երգի մը պէս հիւանդ ու կենդանի: Այդ չուանները, կ'ապրին:

Վերնայարկի սենեակէն ելլել կ'ուզեմ ու կամաց մը դռնէն դուրս կը սպրտիմ: Մութ է, թանձրահոծ մթութիւն մը, սրուն մէջ հազիւ կ'որոշուի նաւուն զանգուածը տարտամ շրջագծերով: Կայմերուն ծայրերը կը կորսուին խաւարի մէջ, իրենց սր վերջանալուն անստուգութեամբը թուելով հասնիլ անհաշուելի բարձրութեանց: Շոգեհաւին կարմիր կանթեղը միայն կը փեռեկատէ աղջամուղը իր պլպլուն վախկոտ լուսովը:

Հովը կեցած սեղս անշարժ կը պահէ զիս, անձրեւի խոշոր կաթիլներ բերելով կատաղութեամբ զարնելով երեսիս: Չեմ համարձակիլ քայլ մը յառաջանալ, տախտակորմին կրթնած, անոր վրայ սեղմուած: Յուրտը կը սառեցնէ անդամներս: Ու խաւարին մէջ բոլոր այն ձայները ահուելի համեմատութիւն մը կ'առնեն, անգնդային դժոխալուր համերգ մը որ ականջներս կը խուլցնէ և կը գինովցնէ զիս, ոչ թէ մարդուն դատած ողորմելի ըմպելիներուն կամ հունտերուն գինովութիւնը, այլ ամբողջ զգայութիւններդ վայրկենապէս ընկճող ու խեղդող ոչնչացում մը, որ բարձրէն եկող հզոր ծագրի մը, արհամարհանքի մը վեհութիւնը ունի: Ծով ու երկինք չի կայ, ու մերթ ընդ մերթ սենեկին լուսաւոր պատուհանին ցոլացումը տեսնուած սեւ ջրի պատառուածքները աչքերս կ'ողողեն գերեզմանի բերնի մը մուայլ ստուերներովը:

Յանկարծ ձեռքիս դալչող պաղ բանի մը զգայութիւնը կ'ունենամ, որ ելեկտրական ցնցումի մը պէս կը թոթուէ զիս, ու ծանօթ ձայն մը ականջս ի վար կը պտուայ:

—Ես ալ քեզի առնելու պիտի դայի, մըստըր: Խոչ բան ունիս դուրսը աս սոսկալի օդին: Եկուր քիչ մը տաքցնենք քեզի:

Խարբերդցի ճամբորդներէն մին է, դեղինը, երբորդութեան առաջնորդը: Ու առանց պատասխանիս սպասելու, թեւէս կը քաշէ կը տանի, պատուիրելով տախ-

տակորմին կրթնելով քալել: Չորս հինգ քայլէն, վրանին առջեւն ենք:

—Հէ, կը պուռայ ներսիններուն, ծայրը քիչ մը վերուցէք: Գուն ալ, կ'ըսէ ինծի գառնալով, կը ներես, քիչ մը ծռէ նայինք:

Եթէ միայն ծռելով լմննա՞ր: Գետնի վրայ կուշ գալու էր, կտաւին բացուածքէն ներս սողալու համար: Գլուխս ներս կը խոթեմ այդ բացուածքէն և երեք չորս թեւ կը քաշեն զիս:

—Հրամսէ, էֆէնտի: Ծճ, առնջ քշէ անկողինը, թաց տեղը չնստի էֆէնտին:

Ու ինքզինքս տեղաւորուած կը գտնեմ:

Ներսը, չպիտի կրնամ նկարագրել: Ճրագ վառուած չէր ու երեք հիւրընկալներուս գիրքը իրենց ձայնէն միայն կը գուշակէի: Ծանր օդ մը կայ, աւելի ծանր հոտի մը հետ մէկտեղ: Անկողնին վրայ երկնցած եմ, կիսովին ընկողմանած, մէկ թեւովս գետնին կրթնած, ռաբերս քաշած:

Անձրեւը մեծաշառուայ կ'իյնայ վրանին կտաւին վրայ, մանր գնդակներու պէս հարուածելով զայն: Ու հովը վրանին երկու կողմի երեսները կը վերցնէ ու կ'իջեցնէ անընդհատ, բւփ, բւփ, բւփ, բւփ, լայն ու դաշն եղանակով մը որուն վերելքին ու վայրէջքին միջոցը կը կաղմէ խուլ պարապուծիւն մը:

Ու քիչ մը առաջուան կրած ներգործութիւնս կ'աճի կը սաստկանայ հիմա, այս սահմանափակ պատուարին մթութեանը մէջ ուր երեք հոգիներու շունչը կ'իմանամ առանց զիրենք տեսնելու:

—Է ծճ, ինչ էք կեցեր, գինի մը չհրամցնէք մըստորին: Ա՛ռ նայինք: Կը ներես, գաւաթ չունինք, սա՞սամէնանան բերանդ դիր ու տնկէ:

Մերժել կարելի չէ, պիտի վիրաւորուին: Բայց մութ է, հաստափոր սրուակը բերնիս կը տանիմ ու քիչ ետքը իրենց կը դարձնեմ:

—Աննչ ըլլայ, էֆէնտի:

—Աննչ հրամմեցիր, մըստըր:

—Աննչ, աղա, կը մըթմըթայ խորէն տկար ձայն մը, խեղճ նիհարին հիւանդ ձայնը:

Ու իրենք ալ յաջորդաբար բերաննին կ'առնեն սրուակը, իրենց կոկորդներուն կորթկորթսւմովը յայտնելով պարպուած գինիին ահագին քանակութիւնը:

—Զէքին մը տուէք էֆէնտին:

Ու ձիթապտուղի հաս մը կը սպրտի ձեռքիս մէջ, իւզոտ, թմթրկած:

—Հայտէ նայինք, տղաք, բան մը երգեցէք, կը հրամայէ հիմա առաջնորդը:

Ու ահա հաստ ու կոկորդային ձայն մը կը բարձրանայ, հեռուէն, խորունկէն եկածի պէս, ու Հայաստանի երգ մը կ'երգէ ան, հեծութեան մը պէս արտում, աղաչանքի մը պէս ողորդ: Գիտեմ ես ալ այդ երգը, յաճախակի լսած ըլլալով մեր տունը եկող գաւառացի ազգականներէ, երգ մը հինաւուրց և միշտ նոր, զոր Խարբերգի ու Բալուի կ'իները կ'երգեն իրենց բացակայ սիրելիներուն վրայ, ախերով սկսող ու վայելքով վերջացող, ամբողջ ողբ մը, հատնում մը:

Գինիին սրուակը ձեռքէ ձեռք կ'անցնի նորէն:

—Դուն ալ բան մը երգէ, մըստըր:

Գիտեմ, ասկից աւելի մեծ զարմանք չէի կրնար պատճառել իրենց: Ես ալ կը սկսեմ նոյն երգին մէկ ուրիշ տունը, որ ականջիս մէջ լեցած է մանկութեան օրերէն, անփորձի ու անվարժի եղանակով մը որ չի յարմարիր բնաւ երգին գողգոջիւն խազերուն, հառաչանքի մը պէս երկարող:

Հիմակ իրենք երեքը մէկ կը սկսին, գինիով դարձեալ լուալէ ետքը իրենց բերանները: Ու երգը կը տարածուի, տառապանքի համանուագ մը, բացուած վերբերու, սրտէ հստող արիւնի, մաշեցնող կարօտներու, ըղձանքներու, յուսահատութեանց կոծ մը:

Դուրսը, հովը կատղած է ալ աւելի և ալ կարծես պիտի պատուէ հիմակ վրանը, անձրևը կարծես ալ պի-

տի ծածկէ զայն. ցուրտը կ'աւելնայ: Բայց, ինչ փոյթ: Առջի տպաւորութիւնս անյայտացած է, ու անոր տեղը բռնած սրտի անհուն խանդաղատանք մը: Հայրենական բաներու այդ վերյուշութիւնը չեմ գիտեր ինչ ունի իր մէջը գորովական ու մխիթարող, որ կը թեթեւցնէ ճնշուած սիրտս, Ա՛լ ցուրտ չէ այստեղ. զգացումներու ջերմութիւնը որ այդ մարդերէն կուգայ ինձի ու ինէ անոնց կ'երթայ, այդ վրանին ներքնակողմը կը տաքցնէ: Միջերկրականի մէկ անձանօթ կէտին վրայ կորսուած ըլլալու անբացատրելի երկիւղը չունիմ ա՛լ. բան մը կայ իմ ու այդ մարդերուն մէջտեղ զօրոնք չեմ տեսներ սակայն, որ իրարու կը մօտեցնէ, կը միացնէ մեզ: Ու հիմա ճառագայթում մը կ'ելլէ մեր սըրտերէն, որ կը լուսաւորէ այս մութ անկիւն:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒՆԵՐ

II

Հագեր ես կարմիր,
Կայներ ես կալը.
Օրըս սե արիւր,—
Կապեր ես ալը:

Փշերն ինձ թողիր,
Դուն քաղիր վարդը.
Դուն սիրաս բցիր
էս զուլում դարդը:

Դարբէգար արիւր,
Սնր է սնր բցիր,—
Դարգամահ եղայ,
Անունիդ մեռնիմ:

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Զ Հ Ո Ի Դ - Ք Ո Ի Շ Ա Ն ^{*)}

(Հրէտագանութիւն)

Վ Է Պ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

VIII

Երիտասարդ շահագրէ Բէհման-Միրզան իր բիրունի թալարի առաջ ձգուած մարմարէ աւազանի գլխին չորած՝ կատարում էր երեկոյեան նամազը: Աւարտելով նա նոր էր սկսել կոճկել շապկի թեւքերը, նստած սաշագէի վրայ ու հագնել թիրմանման դուլբաները, երբ դրսի բակից դէպի պարտէզը մտնելու դրան վարագոյրը բարձրացաւ և մի կին, ամբողջովին ծածկուած ուրբանդով ու շխշկացող շախչուրների մէջ շտապով ներս մտաւ: Անցնելով շահագրէի մօտով, և ուղղելով քայլերը դէպի հարամխանայի դուռն, կինը բարձրացրեց եւրեսի քօղի մի անկիւնը և շահագրէն նկատելով նրա դէմքը, դողաց: Սակայն կարողացաւ զսպել իր վրդովմունքը և ժպիտը երեսին ողջունել իր հօրեղբայր Մէլիք-Գասըմ-Միրզին և իր կրտսեր շահագրէ եղբայրներին, որոնք այդ միջոցին նոյնպէս ներս մտան պարտէզը, հրաւիրուած լինելով իֆթարի:

Ի տես իր հօրեղբօր, Բէհման-Միրզան շտապեց հանգնել թիրմաշալի ջուբբան, ուղղել գլխի բուխարէ

^{*)} Տե՛ս «Մուրճ» № 3.

մորթու գլխարկը և սաքի կանգնելով խոր գլուխ տալ նրան, հրաւիրելով բազմել մեծ չինարու հովանու ներքոյ դրուած տախտի վրայ, եղբայրները մնացին կանգնած և, ընդհակառակն, իրանք խոր գլուխ տուին իրանց անդրանիկ եղբօր:

—Համարձակութիւն եմ առնում խնդրել, որ թոյլ տաք ինձ մի քանի րոպէ ներս գնալ մի կարևոր թուղթ բերելու համար, ասաց Բէհման-Միրզան հօրեղբօրը:

Վերջինս գլխի շարժումով հաւանութիւն տուեց և երբ Բէհման-Միրզան հեռացաւ, դիմելով երկտասարդ շահագոյէներին, ասաց. «բիսմուլլահ, նստեցէք»: Շահագոյէները չը նստեցին տախտի վրայ, այլ չօքեցին նրա առաջ, սէջադէի վրայ: Փիշխըդմէթները բերին փոքր ֆինջաններով սուրճ և մատուցին ղէյլան:

Բէհման-Միրզան շտապ-շտապ անցաւ պարտէզը, մտաւ հարամխանան և գնաց ուղղակի շահագոյէխանը—մի սենեակը, ուր, քօզը արգէն բարձրացրած, կանգնած էր բամբէշի առաջ մեր ծանօթ Սասաման խափշիկուհին: Բամբէշը լաց էր լինում և երբ ամուսինը մըտաւ, «Չուրը եկել մեզ տարել է, ասաց, տես ինչ գօրծ է բերել Սասամանը»:

—Հը, ինչ կայ, հարցրեց շահագոյէն:

—Այն կայ, լացակումած ասաց Սասամանը, որ Շահը մատանին տուել է բաւթառ Հաջուն և այս գիշեր մէմուրները¹⁾ գալու են: Աբդուլլան, որ երկու օր առաջ իր աչքով տեսել էր, ղէյլանը տալիս, թէ ինչպէս Շահը լացում էր, երբ մատանին յանձնեց Հաջի-Միրզա-Աղասուն և անմիջապէս ինձ ուղարկեց այն օրը ձեզ յայտնելու, այսօր իմացաւ, որ Հաջին—թող նա սատանայի և ջինների փոյ գառնայ, թող Հագրաթ-Աբբասը խռով կենայ նրա գլխին—այս գիշեր է ուղարկելու մէմուրներին իր գժօխային միտքը իրագործելու: Աբդուլլան, եղբայրս, որ երբէք ձեր բարու-

¹⁾ Մ է մ ու ը—վճիռ և հրաման կատարող պաշտօնակալ:

Թիւնները չի մոռանայ, հազիւ ժամանակ է գտել և վազ տարով եկել Իմամ-Ջուլի տունը. ես էլ շնչասպառ եկայ ձեզ յայտնելու, որ ձեր գլխի ճարը տեսնէք:

—Փախիր, փախիր, Բէհման, ասաց շահզադէխանը մը և սկսեց բարձրաձայն հեկեկալ:

—Սնւս, սուս, բարկացած ասաց շահզադէն. գիտես, ինչ է. ուզում ես ազախիւնները և ծառաները իմանան: Պէտք է ոչ մի կերպով ցոյց չը տալ, որ մենք գիտենք մէմուրների գալը: Եասամանը մեզ անձնուէր և հաւատարիմ է. նա մեզ կ'օգնի և Ալլահի օգնութեամբ ես ի դերեւ կը հանեմ չար սատանայ Միրզա-Աղասու ծրագիրը: Կարո՞ղ եմ, Եասաման, քեզ վրայ յոյս դնել:

—Թող իմ տէրը միայն հրամայի իր անարժան ազախին, պատասխանեց խափշիկուհին և նրա սև դէմքը փայլեց բարի ժպիտով. ես պատրաստ եմ ջանս զուրբան անել այն մարդին, որ այնքան բարի եղաւ իմ մինուջար եղբօր վերաբերմամբ:

—Ուրեմն լսիր, շահզադէ խանըմ, դարձաւ իշխանը իր կնոջ, լսիր և դու, Եասաման: Ինձ դուրսը սպասում են իֆթարի հօրեղբայրս և եղբայրներս: Ես կը գնամ և նրանց հետ իֆթար կ'անեմ, որպէս զի ծառաները ոչ մի կասկած չը տանեն. սպա շահզադէներին կը յայտնեմ եղելութիւնը: Իֆթարից յետոյ ես կը դամ այստեղ, պատճառ բռնելով, որ շահզադէխանըմը հիւանդացել է: Երբ մէմուրները կը գան, շահզադէները կը զբաղեցնեն նրանց, մինչեւ որ ինձ կանչեն հարեմխանայից, բայց մինչ ինձ կանչելը մենք կ'իրագործենք մեր ծրագիրը: Այժմ դուր տեղաւորեցէք փոքր արկղի մէջ բոլոր մեր ունեցած ամենաթանկագին գոհարեղէնը և կարեւոր թղթերն, յայտնեցէք ազախիւններից երկու-երեքին, որ իֆթարից յետոյ հիւր էք գնալու շահզադէ-ամուենց ¹⁾ հարեմխանէն: Դու

¹⁾ Ամու—հօրեղբայրս

այն ասա, Եստաման, դուրսը, փողոցում ֆէրաշներ չը կան:

— Ես տեսայ միայն Իբրահիմին և Սէլիմին, Բէգ-լար-բէգու երկու ֆէրրաշներին, որոնք փողոցի սրճատնում նստած ղէյլան էին քաշում: Սէլիմը իմ բարեկամն է և ինչ ասեմ կը կատարի: Նրա կողմից ոչ մի վտանգ չը կայ:

— Շատ լաւ. ուրեմն ի դործ և թող Ալլահը բաղցր անէ իր նայուածքը այս տան վրայ:

Եւ դուրս գալով հարամխանայից, Բէհման-Միրզան վերադարձաւ բիրունին, ուր, աւազանի դիմացի թաւարում, պատրաստուած էր իֆթարը:

— Ներեցէք հօրեղբայրս, և դուք եղբայրներս, որ ձեզ սպասեցնել տուի, բայց ձեր բոյրը մի բիչ բէյֆ չունէր և ստիպուեցայ ինքս որոնել ինչ որ կամենում էի:

— Ինչպիսի, շուտով կ'անցնի շահզադէխանըմի հիւանդութիւնը:

Եւ շահզադէները, լուանալով ձեռները արծաթէ կոնքի մէջ, որ մատուցին սպասաւորները, նստեցան իֆթար անելու, հրաւիրելով և մի քանի սէյիդների ու մօլլաների, որոնք անկոչ հիւրեր էին:

Խորին լուսթեան մէջ կատարուեց իֆթարը. շահզադէները քաջ նկատում էին Բէհման-Միրզայի գէմքի վրայ անձկութիւն, մտազբաղ հոգս. նրանք գիտէին, որ ինչ որ մի աղէտ է սպառնում իրանց եղբօրը, բայց չը գիտէին, թէ նրա գլխին կախուած դօմօկեան սրի թելը կտրուելու վրայ է: Վերջապէս, օտարների ներկայութեամբ խօսելն ևս անյարմար էր:

Իֆթարը վերջացաւ. պատուարժան անկոչ հիւրերը և շահզադէները, սուրճի և ղէյլանի ակնկալութեամբ, ձեռները լուանալուց յետոյ, սկսեցին միսվակի և զկուտոցի գործածութիւնը. վերջինը անհրաժեշտ էր՝ տանտիրոջ քաղաքավարութիւն ցոյց տալու համար. զկուտոցը նշան է բազմաճոխ սեղանի վայելքի:

—Աղաներ, դիմեց Բէհման-Միրզան մօլլաներին, գուր հրամայեցէք այտտեղ վայելեցէք ձեր սուրճը և ղէյլանը, իսկ մենք գնանք մի քիչ հանգստանանք պարտեզում:

Պարտեզում, նստած սաղարթախիտ չինարիներին հովանու տակ Բէհման-Միրզան պատմեց հօրեղբօրը և եղբայներին, որ Շահի հրամանով, այդ դիշեր դահիճները պէտք է գան կուրացնելու իրան:

—Անկարելի բան է այդ մեր եղբօր կողմից, գունատուած, յուզուած բացականչեցին երիտասարդ շահէագէները:

—Դժբախտաբար, ամեն բան կարելի է, նոյն իսկ եղբայրասպանութիւնը, քանի որ Իրանի տէրը ոչ թէ Մահմէդ-Շահն է, այլ քաւթառ Հաջի-Միրզա-Աղասին. նա խելքից հանել է Շահին, տխրութեամբ ասաց Մէլիք-Գասր-Միրզան, խոր թառանջ քաշելով: Ի՞նչ ես մտադիր անել, պէտք է շտապել:

—Ես արգէն գիտէի, թէ և չէի հաւատում, ուստի և կազմել եմ իմ ծրագիրս: Պէտք է փախչեմ և ապաստանեմ ուսւաց կայսրի դրօշակի տակ, հետո առնելով գոհարեղէններս և թղթերս, որքան կը կատաղի Հաջին, իմանալով որ որսը ձեռքից թռաւ, մանուսանդ գոհարեղէններս, որոնց վրայ տնկել է իր աչքը:

—Բայց ապահով ես, որ ուսւաց գետպանը վաղը քեզ չի յանձնի Շահին, երբ սա պահանջէ, այն ժամանակ քեզ համար էլ պրծում չը կայ. քեզ կը մեղադրեն իբրև պետական դաւաճանի և կը դիսատեն:

—Ես միտնգամայն վստահ եմ ուսւաց իմիտերութօրի վեհանձնութեան վրայ: Այժմ, լսեցէք եղբայրներս, ժամանակը սուղ է:

Եւ բոլորովին անլսելի ձայնով, նա հասկացրեց շահագէներին թէ ինչ պէտք էր անել, երբ մէմուրները կը գան: Ապա համբուրուելով հօրեղբօր և եղբայրների հետ, նա դառնապէս լացաւ: Լացին և շահէագէները:

—Եղբայրներս, դիմեց Բէհման-Միրզան շահագագէներին, մեծ է Ալլահի զօրութիւնը. Շահը հիւանդոտ մարդ է, երեւի Ալլահը շուտով կը կանչի նրան իր դատաստանի առաջ. աշխատեցէք որ նոր Շահը, երիտասարդ Նասրէդդինը հօրը նման չը կործանէ Իրանը և պարսից գահը:

Այդ միջոցին հարամխանան տանող դրան վարագոյրը բարձրացաւ, մի աղախին երեւաց շէմքի վրայ և ինչ որ մի խօսք ասաց ծառաներին, որոնցից մինը, գալով շահագագէների մօտ, յայտնեց, որ շահագագէխանըմի քէյֆը նորից խառնուել է և խնդրում են շահագագէն ներս գնայ:

Բէհման-Միրզան վեր կացաւ, գլուխ տուեց իշխաններին և ծանր քայլերով ուղղուեց դէպի հարամխանան:

Շահագագէները սրտամորմոք կսկիծով հեռուեցին նրան, մինչեւ որ վարագոյրը ծածկեց նրան իրանց աչքից:

Մէլիք-Գասըմ-Միրզան ծափ տալով, հրամայեց թէյ և զէյլան բերել և գլղացներով զէյլանի ջուրը ու ըթի պնչերից արձակելով մուխը, նա ընկղմուեց խորին մտածողութեան մէջ: Երիտասարդ շահագագէները նոյնպէս լուռ և մտախոհ ծխում էին զէյլանը:

Լիւսինը երեւաց և նրա մեղմ, արծաթափայլ լոյսով հեռզհեռէ սկսեցին լուսաւորուել շինարիների կատարները. ապա նրա շողը ցոլացաւ ջինջ աւազանի մէջ. աւազանի ջուրը յորդելով սկսել էր վազել պարտիզի անցքերով և նրա ներդաշնակ կարկաչիւնը, խառնուելով ծաղիկների և վարդերի բուրմունքին, հաճելի դուրբութիւն և կենարար թարմութիւն էր սփռում ամբողջ պարտիզի մէջ. մի բիչ հեռու, վարդի թփերի մէջ ծածկուած սոխակները իրանց դայլայիկներն էին լսեցնում հերթով. սկսում էր մինը, շարունակում էր երկրորդը, աւարտում էր երրորդը: Սէր, կեանք էին երգում ծաղիկները, վարդերը, սոխակները. համակ բնութիւնը

սէր, կեանք էր բուրում, բայց, զարմանալի հակասութիւն, այդ բնութեան ծոցում նստած երեք շահագրէների սրտի մէջ մահ էր թագաւորում: Եւ մահը, գարշելի, սոսկալի մահը արդէն մօտենում էր իր ճիւղադէմքով, յանձին մէմուրների և դահիճների: «Ձուր չէր բայղուշի¹⁾ չարագուշակ ձայնը Շահի պալատում, մտածեց Մէլիք-Գասըմ-Միրզան, ահա այսօր խեղճ Բէհմանի օրը խաւարում է»:

Անցաւ մի ժամ, անձկալից, սրտամաշ ժամ: Կորած էր Բէհման-Միրզան, եթէ փախուստը չը յաջողուէր, բայց հարամխանան լուռ էր, ոչ մի աղմուկ չէր լսում:

Յանկարծ պարտիղի դրան վարագոյրը բարձրացաւ. լուսինը արդէն բարձրացել էր երկնակամարի վրայ և լուսաւորել ամբողջովին պարտէղը: Մի աղմուկ բարձրացաւ դրան մօտ և մի սպասաւոր, վազ տալով, սըփըրթնած, դողահար կանգնեց շահագրէների առաջ:

— Շահի արդարաշիններն²⁾ են և ջալլադները³⁾, հաղիւ կարողացաւ արտասանել նա: Շահագրէին են ուղում:

— Ասա դան այստեղ, հրամայեց Մէլիք-Գասըմ-Միրզան:

Բայց մէմուրները, երկու հոգի, արդէն մօտենում էին, առաջնորդուած ճրագները ձեռքին բռնած փիշխըղմէթներով: Աւագը, որ մի կարճահասակ մարդ էր, մօտեցաւ շահագրէներին և խօսք գլուխ տալով, ասաց. «Շահից ֆէրման ենք բերել, որտեղ է շահագրէ Բէհման-Միրզան»:

— Օրհնեալ է Շահի ֆէրմանը, ասաց Մէլիք-Գասըմ-Միրզան, առանց հրաւիրելու մէմուրներին նստելու. շահագրէն այստեղ էր, մի քանի րոպէ առաջ կանչեցին հարամխանայից, շուտով կը վերադառնայ, մենք էլ սպասում ենք: Խէր է ձեր գալուստը:

1) Բու:

2) Պալատական պահակապետ: 3) Դահիճ:

—Սլլահը աւելի շաւից պաշտպանէ շահադէին, պատասխանեց մէմուրը, կամենալով արտայայտել այդ խօսքերով, թէ շահադէն աւելի մեծ դժբախտութեան կարող էր ենթարկուել, բայց Աստուած գլխացել է նրա վրայ:

—Միթէ Բէհման-Միրզային որ և է դժբախտութիւն է սպառնում, խորին զարմանք կեղծելով հարցրեց Մէլէք-Պասըմ-Միրզան:

Եւ դառնալով սպասաւորներին, հրամայեց. «Շուտ սուրճ և զէլան բերէք Միրզա-Աբբաս-խանի համար, իսկ ձեզանից մինը թող խմաց տայ քնդէրունին, որ շահադէին կանչեն. թող ասեն, որ նոր հիւրեր են եկել և շահադէխանըմին ոչինչ չը յայտնեն»:

Ապա դիմելով աւագ մէմուրին, յարեց. «Բիսմուլլահ, Աբբաս-խան, նստի՛ր. այդ ինչ վատ լուր ես բերեմ»:

—Ինչ անեմ, շահադէ, ամենքս պարտաւոր ենք կատարել Շահի մուբարէք հրամանը:

—Ի հարկէ, ի հարկէ, ասացին շահադէները, բայց ինչ հրաման է տուել Շահը:

—Աշխարհի աղօթարանը յանձնելով մեզ այս մատանին, հրամայել է մեզ կուրացնել Բէհման-Միրզա շահադէին, իր եղբօրը:

Եւ հանելով դրպանից թիրմա շալից կարած և ուլունքածուպ մի քսակ, Աբբաս-խանը հանեց միջից Շահի կնիքը ու համբուրելով ու գնելով գլխին, մատուցեց շահադէներին:

Շահադէները նոյնպէս համբուրեցին, դրին գլխըների վրայ:

—Բայց ինչ է Բէհման-Միրզայի յանցանքը, որ արժանացել է այդպիսի մեծ պատժի:

—Նա, շէյթանի դրդմամբ, մտադրուել է զրկել աշխարհիս աղօթարանին կեանքից և ինքն Շահ դառնալ:

—Որպիսի յանդգնութիւն, սարսափելի ոճիր, ար-

դարեւ, արժանի աւելի մեծ պատժի, միաբերան պո-
ռացիին շահագրէները: Բայց միթէ այդ ճշմարիտ է.
միթէ նա ընդունակ է այդպիսի անլուր յանցանք գոր-
ծելու իր հարազատ եղբօր դէմ:

— Ալլահը միայն գիտէ սուտն ու ճշմարիտը, բայց
մենք պարտաւոր ենք կատարել մեզ տուած հրամանը:

— Ի հարկէ, ի հարկէ, ասաց Մէլիբ-Պասըմ-Միր-
զան, բայց մեր այստեղ ներկայ լինելն անյարմար է.
լաւն այն է հեռանանք, գնանք, բանի որ դժբախտին
ոչնչով օգնել չենք կարող: Միայն, Աբբաս-խան, խընդ-
րում ենք այնպէս անել, որ շահագրէն շատ չը տան-
ջուի, եթէ կարելի է, գոնէ միայն մի աչքը խաւարե-
ցնել: Շահը բարկութեան ժամանակ հրաման տուել է,
բայց յետոյ անպատճառ կը փոշիմանի և բեզանից էլ
շատ գոհ կը լինի, որ խնայել ես եղբօրը. հաւատա
ինձ, դու դեռ վարձատրութիւն էլ կը ստանաս:

— Հազրութ Աբբասը վկայ է, որ ես շատ ցաւում
եմ շահագրէի համար և ձեռքիցս եկածը գործ կը
դնեմ մեղմացնելու նրա տանջանքը և գոնէ մի աչքը
կուրացնելու համար, բայց, դուք շատ լաւ գիտէք, որ
այս անիրաւ դահիճները գութ և կարեկցութիւն չու-
նեն և սպասում են, որ դուք մեղմացնէք շահագրէի
տանջանքը:

— Հասկացանք, հասկացանք, ասաց Մէլիբ-Պասըմ-
Միրզան, դահիճները սպասում են սովորական ընծային¹⁾.
մենք պատրաստ ենք տալ նրանց առատ ընծայ. այդ
նրանց իրաւունքն է:

Եւ հանելով գրպանից լուլա ծալած թուղթ ու
զարամդանը նա գրեց 200 թումանի հաւալայ իր
գանձապահի վրայ ու կնքելով, մեկնեց Աբբաս-խանին:

1) Պարսկաստանում սովորութիւն է, որ մեղապարտի ազգականները
պետք է գրամական նուէր տան դահիճին, որպէս զի մեղապարտին զը-
խատելիս, դահիճը չենթարիէ նրան երկար տանջանքի, զլուրը չը կըտ-
րէ բութ զանակով, կամ աչքերը չը հանէ բութ գործիքով:

—Ահա նրանց հասնելիքը, այժմ մենք գնանք: Դժբախտ, դժբախտ եղբորորդի, հառաչելով և արտասուելով ասաց Մէլիք-Գասըմ-Միրզան ու ուղղուեց երիտասարդ շահադէների հետ դէպի դուռը:

—Շահադէների երիվարները թող բերեն, պողաց Աբբաս-խանը, երբ դուրս եկաւ փողոց: Նա բռնեց ձիի ասպանդակը և օգնեց Մէլիք-Գասըմ-Միրզին հեծնել ձին:

Փողոցում արդէն հաւաքուել էր հետաքրքիր անցորդների մի ստուար խումբ, դահիճների գալլը մեծ իրարանցում էր առաջ բերել և ահագին յուզմունք, բայց ոչ ոք դեռ հաստատ չը գիտէր, ում գլուխը պէտք է կտրուի:

Երբ Շահադէները մեկնեցին, Աբբաս-խանը վերադարձաւ պարտէզ, մի քանի րոպէ փսփսաց դահիճների հետ և ապա հրամայեց փիշխըդմէթներին գնալ էնդէրուն և իմաց տալ շահադէին, որ Շահի հրամանով նրանք եկել են մի կարեւոր յանձնարարութիւն կատարելու և սպասում են շահադէին արքայական Ֆիրմանը յայտնելու համար:

Բայց որսը արդէն փախել և թռչնիկը ազատուել էր վանդակից:

Մի քառորդ ժամից յետոյ Աբբաս-խանը և դահիճները համոզուեցին, որ պէտք է ձեռնունայն վերադառնան:

ՇԱՀՐԻԱՐ

(կը շարունակուի)

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ^{*)}

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕԻ

VII

Լիւսիէն Հոլանդը հաստատ բնակութիւն էր հաստատել իր կալուածում: Նա լսում էր անկարեկցարար իր վարձկալ Փաւերաի խառնչփոթ բացատրութիւնները. հագիւ. ծագում էր արշալոյսը, անա ծերունին դալիս էր և տանում նրան դաշտերը. այդտեղ, Լիւսիէնը աշխատում էր հետաքրքրուել դաշտային աշխատութիւններով, գիտել ինչպիս են վարում հողը կամ ինչպէս են քաղահան անում որոմը:

Շատ անգամ նրան այցելում էր ժակ Ալվարը, որ դալիս էր Մէթթօն իր հարսնացուին պչրանք ցոյց տալու: Նրա ձանձրագոյնիչ խոստովանութիւնները ոչ մի հաճոյք չէին պատճառում Լիւսիէնին:

—Անդորձոնէութիւնը ինձ սպանում է, ասում էր ժակը: Դու երեսակայել չես կարող, թէ որքան ափսոսում եմ, որ ընտրողական պայքարը վերջացաւ: Ընտրութիւնիցս յետոյ առաջին օրերը ես դեռ պատրուակ էի գտնում Մէթթօն չը մնալու. կամ պէտք էր շնորհակալութիւնս յայտնէի մի քանի աղճեցիկ ընտրողներին, կամ պէտք էր խաղաչնէի յուզուած մըտքերը մի քանի նահանգներում, կամ պէտք է դեկավարէի լրագիրս Պարիզում նստած, կամ պէտք է մի նոր բնակարանի մասին կարգադրութիւններ անէի: Այսօր, այլ ես չեմ կարող այդպիսի պատրուակներ ասալ բերել: Առաւօտները, ես ուսումնասիրում եմ Փրանսիայի կրօնապետները, բայց երեկոները, ես

*) ՏԵ՛Ս «Մուրճ» № 4.

ստիպուած եմ սիրահարի դեր խաղալ: Չէ որ այդ կը տայ ինձ տարեկան երեսուն հասար ֆրանկ եկամուտ, իսկ զրամական կարողութիւնը անհրաժեշտ է նրան, ով ձգտում է իշխանութեան:

Մարդկանց շահագործելու արուեստի մէջ խիստ ճարպիկ լինելով, նա Լիւսիէնի հետ ունեցած խօսակցութիւններից թանկագին տեղեկութիւններ էր քաղում պարիզեան աշխարհի մասին, և նրա ճանապարհորդած զանազան երկրների առևտրի ու բարգաւաճման մասին: Ապա նա առջեցնում էր Լիւսիէնին, կրկնելով սրա սեպհական խորհրդածութիւնները միայն մի քիչ բարեփոխած ձևով:

Իր ամուսնութեան երկու օր մնացած, նա եկաւ Հալանդի մօտ, որ նոր էր նախաճաշել: Նրա դէմքը մարտական արտայայտութիւն ունէր: Լիւսիէնը նրան տարաւ փոքր սրահը. ծինելոյցի վրայ, Աննիի լուսանկարի առաջ, դրուած էին վարդեր: Ժակը հանեց իր թղթապանակից երկու նամակ:

— Խնդրում եմ քեզանից, ասաց նա իր հին ընկերին, մի խորհուրդ տալ և մի ծառայութիւն անել ինձ: Առաջ խորհուրդը. կարդա այս: Տես ջահէլ աղջկերքը ինչքան զրաւում են միստիցիզմով և այդ քեզ համար, իբրև հոգեբանի, շատ օգտակար է:

Եւ նա մեկնեց առաջին նամակը Լիւսիէնին, որ վարանում էր ընդունել:

— Ոհ, կարող ես կարգալ. անհամեստ սչինչ բան չը կայ. չրոզն կինս է և խօսքը կրօնի մասին է:

Նա ասում էր արդէն կից, որովհետև նա սովոր էր իբրև կատարուած իրողութիւն համարել ամեն մի սրողուած բան:

Լիւսիէն, յայտնի անձկութեամբ և մի տեսակ արտասովոր տխրութեամբ, կարգաց Աննիի այս նամակը.

«Կան բաներ, Ժակ, որ ես կը ցանկայի իմանալ, բայց անկարող եմ արսայայտել քեզ: Սխիպուած եմ գրել քեզ, որովհետև նրանք քանջում են ինձ, որչափ աւելի մօտեցում եմ մեր ամուսնութեան օրհնեալ ժամը: Երբ նոյն իսկ ես շատ լուսկեաց եմ, չը պէտք է կարծել, որ ես չեմ մտածում եւ պէտք է ներողամտութեամբ վերաբերուել ինձ:

«Դուք գիտեք քե որպիսի սեղանք ունեմ մեր երջանկութիւնը տեսնելու: Ինձ բում է, որ այդ երջանկութիւնը կարելի է ձեռք բերել միայն մեր հոգիների միահամուռ միութեամբ: Ես երկիւղ եմ կրում երբեմն, որ աշխարհումս գուցէ չը գտնուեն երկու հոգի, որ տեսնեան եւ սիրոյ մի եւ նոյն եղանակն ունենային: Ժակ, ես չեմ մտածում զրա մասին առաջ. բայց այս վերջին ժա-

մանակներս բոլորովին նոր մտածումներ եւ առաջ եկել իմ մեջ:

«Ես շատ անընդունակ եմ միտքս պարզ արտայայտելու, ժակ: Ես վախեցում եմ, որովհետեւ ոչինչ չը գիտեմ ձեր մասին: Ես բոլորովին պատրաստ եմ մերկացնել ձեր առաջ սիրս, երբ կը կամենամ: Ես արդէն ձեզ եմ տուել այդ սիրքը. նա լի է ձեզմով: Բայց ո՛րքան փափագում եմ իմանալ եւ ձեր մտածումներ: Ինձ շատ պահանջկոտ չը կարծեմ. ես շատ կը ցանկայի, որ մենք երկուսս միասին մի եւ նոյն հաւատք եւ մի եւ նոյն սերը ունենայինք:

«Բարեկամուհիներէս մինը ինձ պատմել է որ իր ձեռքը իր ամուսնունց թալուց առաջ նա խնդրել էր նրանից մի քանի բոսիկ խօսակցել, ասելու համար նրան, որ նա վնուել է պահպանել իր ազատութիւնը եւ ամուսնութիւնից յետոյ: Ազատ լինել, ժակ, ահա ես հեկեց այդ չեմ ցանկանում: Ես կամենում եմ հետեւել ձեր կամքին: Ունենալով երկուսս մի կամք, մի՞թէ այդ չէ նշանակում սիրել միմեանց եւ օգնել միմեանց աւելի լաւ դառնալու: Դուք, որ հզօր եք, դուք կարող եք այնքան բարի գործեր կատարել: Ինձ արժանի դատեցե՛ք ձեզ օգնելու եւ Աստուած կը հովանաւորէ մեր խանդաղակաք սերը:

«Փափագելով կը փափագեի, որ դուք կրօնատէր հոգի ունենայիք: Ոհ, ես չեմ պահանջում ձեզանից կրօնական այն երեսնադր, որն, ինքս, աւաղ, չունեմ, բայց պահանջում եմ միայն նշանաւորութեան տեղը եւ ջանք՝ համաձայնեցնել վարմունքներդ հաւատարմութեան հետ: Չը ծաղրեմ ձեր փոքրիկ նշանածի խնդիրքը. այդ շատ վատ կը լինի. սիրեցե՛ք ինձ ինչպէս ես եմ սիրում ձեզ: Ասացե՛ք ինձ որ դուք հաւատում եք նրան ինչի՞ն ես եմ հաւատում եւ ես կատարելապէս երջանիկ կը լինեմ:

Աճճի Մերան»:

Ժակը հետեւում էր Լիւսիէնի դէմքի վրայ նամակի թողած տպաւորութեանը:

—Նա բարեպաշտ է քնքոյչ հոգի ունի, ասաց Լիւսիէնը, վերադարձնելով նրան նամակը: Նա պաշտելի կի՛ն կը դառնայ:

—Մի քիչ չափազանց ողբերգուած կի՛ն, պատասխանեց ժակը: Բայց այդ բարոյական գեղեցիկ բանաձեւները կ'ամօքուեն ամուսնութեան ընթացքում: Նրա կրօնը կը դառնայ աւելի...

—Աւելի երկրային է աշխարհապաշտ...: Ի՞նչ ես մտադիր պատասխանել նրան:

—Ե՞ս, ոչինչ. աւելի լաւ է խօսել քան գրել: Ես աւելի վստահ եմ խօսում քան մտածում: Ես իսկոյն գնում եմ կաղամախների տակ. ծառերի տակ ես նրա հետ կը խօսեմ իր բարեպաշտ գրայմունքների մասին:

—Բայց նա խնդրում է քեզանից խօսել քո զգացմունքներն ի մասին:

—Դէ լաւ. չէ որ հրապարակական ժողովներում ես յայտարարեցի, որ հասարակութիւնը չէ կարող առանց կրօնի մնալ. չէ որ ես խօսեցի արգարութեան և եղբայրսիրութեան կրօնի մասին:

—Այո, շահական կրօնի մասին, իբրև հասարակական պահապան:

Փակը արհամարհական շարժում արաւ ձեռքով:

—Ի՞նչ ես կամենում ինձանից, իմ մէջ չը կայ աստուածային զգացումը. ես չեմ տանջում ինձ, աշխատելով իմանալ անձանսօթը: Ի՞նչ հարկ կայ հետամուտ լինել նրան, ինչ որ անմատչելի է մեզ. մեր աչքերը թոյլ են տալիս մեզ տեսնել միայն մի որոշ տարածութիւն. ուրեմն աւելի հեռուն տեսնելը աւելորդ է համարուել: Ի սէր Աստու, չընկնենք անօգուտ բաների ետեւից:

—Գուցէ դրանք են միակ կարեւորները նկատեց իր սիէնը:

Փակը մեկնեց նրան երկրորդ նամակը և սասայ:

—Աննին ամենեւին ինձ հոգս չէ պատճառում. բայց կայ մի ուրիշ աւելի ծանրակշիռ բան: Պէտք է քեզ ասեմ...—նա վարանեց մի ըոպէ,—պէտք է քեզ ասեմ, որ կոմսուհի Ֆերրէզին իմ սիրուհիս էր:

—Ահ, մրմնջաց իր սիէնը սաստիկ յուզուած և ակամայ մտածելով Աննիի անբախտութեան մասին:

—Շատ դժուարութեամբ կարողացայ ստանալ նրա համաձայնութիւնը ամուսնութեան համար. կարծում էի, որ ամեն բան վերջացած է: Վերջին ըոպէին, նա խաղում է իմ առաջ ինքնասպանութեան կօմեդիան: Կարգա այս նամակը. ես կը բացատրեմ քեզ յետոյ, թէ ինչ ծառայութիւն եմ սպասում քեզանից:

—Ոչ, ես չեմ սիրում կարգալ սիրային տոմսերը. մարդ ակամայ մտնում է աջակիսի սրտերի մէջ, որոնց գաղտնիքը իրան չէ պատկանում. ես արդէն յանցաւոր եմ զգում ինձ, որ կարդացի առաջին նամակը:

—Սակայն, անհրաժեշտ է որ կարգաս: Գու չեա կարող մերժել ինձ օգնել, դու իմ ամենահին բարեկամն ես: Գործը կարծածիցդ աւելի ծանրակշիռ է:

Եւ իր սիէնին շուտով համոզելու համար, նա աւելացրեց.

—Շուտ կարգա. գուցէ մի կնոջ կեանքն ազատելու մասին է գործը:

*Հալանդը վեր առաւ նամակը զգուանքով: Նրան անդունդ-
ներով լի էր թուում այդ արկածը, որի մէջ գցում էր նրան
ժակը: Նա կարդաց.*

«Այսօր մեր հարսանեկան երեկոյի սարեդարձն է: Սեպտեմբերի 11-ին էր, յիշում ես: Մի տարի է արդէն, որ ես պատկանում եմ քեզ: Այդ իսկական հարսանեկան երեկոն, որ ինձ նոր կեանք մտնեցնեց, ինձ անելի յուզեց քան այն վշտալի զիջերը, երբ ես անհմուտ եւ միամիտ աղջկանից դարձայ մի կին առանց սիրոյ: Եւ այդ օրից, ես ապրում եմ միայն քո համբոյրներով. այդ օրից ես դարձայ քո ցանկութիւնների հլու ստրկուհին: Դու խորհակեցիր իմ մէջ հպարտութիւնը, հանդուճալու հաշակը: Ես այլ եւս չեմ նախաշում ինձ. ես այլ եւս հոգի չունեմ. նա հալուել է իմ տախտակի մարմնի մէջ:

«Դու կամեցար անելի ստրկացնել ինձ. դու հարկադրեցիր ինձ թող սալ քո կեանքը մի ուրիշ կնոջ, խոստանալով վերադառնալ ինձ մօտ ծածկաբար: Ես այնքան ստոր ստրկուհի էի, որ համաձայնութիւն տուի: Դու ինձ ցանցանքի ենթարկեցիր, սխալելով դիտել նշանածից այն աչքերով, որոնք նկատում էին նրա ապագայ գգուանքները: Այդ բառական չէր: Դու նրան սեր խօսեցիր իմ առաջ, դու հպեցիր քո շքուանքներով նրա ծաղիկ այտերը: Եւ միայն քո շքուանքների տեսք խենթեցնում է ինձ:

«Երեք օրից յետ դու կը սեղմես այդ կնոջը քո կրծքին: Դու նրան կը տես մի եւ նոյն համբոյրները: Ես չեմ տեսնի այդ անցիծեալ օրուայ լոյսը: Յայտնում եմ քեզ որ մեռնել եմ կամեցում: Ես վնասեցի մեռնել Մէնթոնի երեկոյին, լուսնի հառապայքներով լուսաւորուած լիւի վրայ: Վաղն առաւօտեան, այս նամակը քեզ հասնելուց առաջ, ես ինձ լինը կը գլորեմ ժայռից: Ես անեծք չեմ կարդում քո գլխին մեռնելով: Ես ցանկանում եմ միայն որ դու մի վերջին անգամ տեսնես մարմինս ջրից հանելիս, որ ես դեռ գեղեցիկ լինեմ եւ որ, չը կարողանալով այլ եւս տեսնալ այդ մարմնին, դու նախանձես, քո պաղ կնոջ գրկում, այն որդիներին, որոնք պէտք է կրծեն մարմինս գերեզմանում:

Լեօնորա:

Լիւսիէն Հալանդը վեր կացաւ:

—Նա չէ սպանել իրան. տեսել ես նրան այսօր:

ժակը պատասխանեց շատ հանդարտ.

—Ոչ, ես նրան չեմ տեսել:

—Բայց գիտես որ նա կենդանի է:

—Ոչինչ չը գիտեմ. սակայն երբ կինը այդպիսի առողջանութեամբ խօսում է, նա չէ սպանում իրան: Միայն նա սաս-

տիկ ջղաղպած է դարձել և ես շատ վախում եմ նրա այդ ջղազգածութիւնից: Ես չեմ կամենում որ վերջին բոպէին իմ ամուսնութիւնը խանգարուի մի յիմար սկանդալի պատճառով: Ես չեմ կարող պնակ նրան տեսնել, նրա ամուսինը և պ. Մէրանը աչքաբաց հսկում են: Վերջինս ստացել է մի անանուն նամակ, որն ինձ ցոյց տուեց: Ես նրան մինչև անգամ ասացի, որ կոմսուհու սիրականը դու ես և նա է պատճառ որ դու վերադարձար Սափոյա, առաջուց հանդիպած լինելով քեզ պարիզում և Իտալիայում:

— Դու իրաւունք չունէիր այդպէս վարուելու, ասաց Լիւսիէնը զայրացած: Ես արդելում եմ քեզ շահագործել անունս:

— Ժակը, առանց ամօթահարուելու, շարունակեց.

— Ամեն բանից առաջ պէտք էր փարատել կասկածները: Ի՞նչ վեաս կարող է հասցնել այդ քեզ, հարցնում եմ: Այդպիսի շաղկապը կարող է միայն շոյական լինել քո ինքնասիրութեան համար և պ. Մէրանը շատ խորհրդապահ մարդ է: Գալով ամուսնուն, նա ոչինչ չը գիտէ քո մասին:

Եւ մինչ Լիւսիէնը՝ յուզուած, ձեմում էր, նա շարունակում էր.

— Անհրաժեշտ է որ դու գնաս նրա մօտ. դու կը յանձնես նրան այս նամակը, որ առանց հասցէի է: Դու կը իսաղաղացնես նրան: Թող հասկանայ վերջապէս, որ ամուսնութիւնս չէ նշանակում խզումն նրա հետ: Նա հրաւիրուած է իմ հարսանիքին և ես կամենում եմ, որ դայ: Եթէ մերժի, նրա ամուսինը վերահասու կը լինի ճշմարտութեան, որ արդէն զուշակում է: Նրա ներկայութիւնը անհրաժեշտ է:

Լիւսիէնը, գրգռուած, մերժեց.

— Ես չեմ ցանկանում ոչ մի մասնակցութիւն ունենալ քո ինտրիգների մէջ:

Ժակը իրան սաստիկ յուզուած ցոյց տուեց:

— Դէ լաւ, բարեկամս, ժամանակը ստիպողական է: Հէնց որ ստացայ այս նամակը, ես ինձ գցեցի կառքի մէջ և եկայ: Ես կարծածիցդ աւելի անհանգիստ եմ: Ես կարծում եմ, ես պահով եմ որ Լէօնօրան չէ սպանել իրան, բայց չը ստանալով ոչ մի պատասխան ինձանից, ջղաղգածութեան մէջ, նա իրապէս կարող է մտածել անձնասպանութեան մասին: Ամեն մի ժամ որ անցնում է, կարող է փութացնել նրա մէջ այդ որոշումը: Քեզանից բացի ո՞ւմ կարող եմ ուղարկել նրա մօտ. ո՞վ կարող է համոզել նրան ապրել ինձ համար. չէ՞ ես չեմ կարող վազ տալ նրա մօտ. այլապէս ես գրգռեմ նրա ամուսնու նախանձոտութիւնը և մի ամբողջ դրամա առաջ կը բերեմ Մէ-

բանների տանը կառքս այնտեղ է. նա կը տանի քեզ Տալուար: Ապա դու կը գաս կը գտնես ինձ կաղամախների տակ: Գնա շուտով, աղերսում եմ:

Այդ աղերսական խօսքերը համողեցին Հալանդին:

— Բարի է, կը գնամ, ասաց նա:

Եւ մտածելով Աննիին, նա յարեց.

— Բայց երգուի՞ր ինձ որ դու վերջնականապէս կը խզես յարաբերութիւններդ սիրունուդ հետ:

Ժակը նայեց նրան՝ ապշած:

— Ի՞նչ վայրագ միտք է:

— Ոհ, եթէ չերգուես, ես չեմ գնայ:

— Դէ լաւ, վերջնականապէս կը խզեմ. այդ արդէն վըճուում է:

Եւ թեթեւաբար շարժեց ուսերը: Երբ Լիւսիէնը մեկնում էր, նա ասաց դարձեալ.

— Որեւէ դժբախտութիւն պատահելու դէպքում, յոյսս քեզ վրայ է:

Իսկ Լուսիէնը մտածում էր.

— Եթէ ժակի համար նոյն իսկ մի քիչ թանգ լինէր իր սիրունու կեանքը, նա, հասած ժամանակ, ամենից առաջ ինձ հետ կը խօսէր նրա մասին և նրա նամակը յոյց կը տար, փոխանակ ծաղրելու իմ առաջ Աննի Մէրանի բարեպաշտական զգայութիւնները:

Ապաքէն, Աննին անհամբեր սպասում էր իր նշանածին

Սեպտեմբերի օրուայ գեղեցիկութիւնը չէր շարժում նրա սիրտը և չէր ներշնչում նրա մէջ այն ուրախալի մտածմունքը, որ արեւը սփռում է երիտասարդութեան և սիրոյ մէջ:

Աշունը նոր էր սկսուել և ամառային պայծառութիւնը դեռ պահպանւում էր նրա մէջ: Ջինջ երկինքը յողացնում էր իր կապուտակ փայլը հայելանման լճի մէջ. պատկերը և նրա ջողացումը մեղմ գոյներով մրցում էին միմեանց հետ: Սարերի մէջ, ափերի վրայ, ծփում էր մի լուսաւոր, կապտաւուն փոշի և այց լուսազեղ փոշին ճօճում էր փայլուն և շարժուն: Առաւօտները հորիզոնի վրայ հանդարտ և մեղմիկ լող էին տալիս վարդագոյն-սպիտակ ամպեր, նմանելով վարդի և շուշանի աստուածային խառնուրդի, իսկ երեկոները, վերջալոյսը իբրև հրդեհ տարածւում էր հորիզոնի վրայ հրաշէկ ամուխի կարմրութեամբ: Բնութիւնը դեռ յոյց էր տալիս երիտասարդութեան անսպառ ոյժ:

Աննին սպասում էր նշանածին հիւսկէն ճիւղերի հովանու

տակ: Թփերի մէջ ծածկուած աղբիւրի ներդաշնակ կարկաչիւնը խառնուում էր անուշահոտ ծաղիկների բուրմունքի հետ. ջահէլ աղջիկը սիրում էր ջրերի այդ անուշարոյր զովութիւնը և յաճախ գալիս էր այստեղ անձնատուր լինելու իր մտախոհումներին:

— Ինչ կը մտածէ իմ նամակի մասին, հարցնում էր ինքն իրան:

Անձնուիրութեան սաստիկ տապով տոչորուում էր նա: Նրա սէրը արտայայտուում էր նրանով, որ նրա հոգու լաւագոյն զգայութիւնները զարթնել և սաստկացել էին, հասնելով յափըշտակութեան: Նրա անմեղ և դեռ ևս խաղաղ էութիւնը երբեմն միայն մի անորոշ ցաւատանջ զգացումն էր կրում, այն համբոյրները, որ ժակը գրոշմել էր նրա շտապուած այտերի վրայ, արտասոււախառն քնքշութիւն էին առաջ բերում նրա մէջ, բայց երբէք չէին խոտովում նրան:

Իր վեհերոտութիւնը, որի հմայքը ինքն չէր կասկածում ամենևին, և որը յաղթահարելու համար անկեղծ սիրեկանը մեծ ուրախութիւն պէտք էր զգար, ամօթխածութեան այդ ծաղիկը, որ նրա ղէմքին տալիս էր մի պաշտելի մանկական շնորհք, ցաւ էր պատճառում իրան: Նա նեղանում էր որ իր նշանածը իրան երեխայ է համարում: Նա չէր համարձակում բանալ իր սիրտը և տանջուում էր այդ լուութիւնից: Եւ սակայն նա զգում էր թէ երբ մարդ վստահ է բոլորովին, որ սիրուած է, նա մոգեկան ոյժ է ստանում մերկայնելու իր հոգին և թափ տալու սրտի խորութիւնը սիրուած էակի առաջ: Այդ պատճառով նա չէր հասկանում թէ ինչու ժակը հետամուտ չէր լինում առանձնանալ իր հետ և միակերպ էր խօսում իր հետ թէ առանձնութեան ժամանակ և թէ օտարների ներկայութեամբ: Այդպէս նա ակամայ ստիպուած էր զսպել իր քնքշութեան և ուրախութեան զեղումները, որ նրա մէջ գրգռելու կ'աշխատէր նրան իսկապէս սիրող տղամարդը:

Ժակը մօտեցաւ նրան: Կեղծ և հովասուն օզը, ծաղիկների բուրումները, զով հովիկը զգուում էին նրանց սիրահարական խօսակցութիւնը:

— Դուք կասկած էք յղացել իմ մասին, ասաց երիտասարդը: Ինչու էք մտածել որ մենք համաձայն չենք լինի մեր կեանքի մէջ: Ես չեմ զիպչի ձեր հաւատին. ինձ դուր է գալիս, որ դուք հաւատացող էք: Կանայք պէտք է բարեպաշտ լինեն: Չէ որ իմ քաղաքական ծրագիրների և ճառերի մէջ ես ինքս պահանջել եմ կրօնական ազատութեան յարգանքը հասարակական արտայայտութեան հետ միասին...

Նա սկսեց համոզեցուցիչ փաստեր առաջ բերել, խօսելով այն ջերմ և յանկուցիչ ձևով, որ նրան զարճում էր մի վտանգաւոր հոետոր, մեղմացնելով և կոկելով նրա տիրապետական ցանկութիւնը: Նա մերկացնում էր կեանքի խորհրդաւոր գաղտնիքը, շօշափում էր մարդկային թշուառութիւնների հարցը: Երբեմն նա մերկացնում էր իր ձերմակ ակոսաները ժպտալու համար, և երբեմն նրա աչքերը ցոյց էին տալիս խորախորհուրդ արտայայտութիւն:

Աննին, հմայուած, հազիւ լսում էր ինչ որ նա ասում էր: Նա երջանիկ էր, որ ժակը այդպէս լաւ խօսում էր միայն իրան համար:

Նրա մեկնելուց յետոյ, Աննին նորոգեց իր յիշողութեան մէջ ամբողջ այս խօսակցութիւնը, որ այնքան ցանկացել էր: Ժակի խօսքերը, մի կողմ թողած նրա անձնաւորութեան հմայքը, ինքն ըստ ինքեան այնքան խղճուկ երեացին, որ նրա հէգ սիրտը սեղմուեց: Նա տեսաւ, որ այջամողջը, որից կամենում էր ազատուել, աւելի ևս թանձրացաւ: Չունենալով բաւականաչափ ոյժ այդ մտածմունքի ամբողջ ծանրութիւնը իր վրայ առնելու, նա սկսեց քիչ-քիչ թափանցել այն խորհրդաւոր տանջանքների մէջ, որոնք անխուսափելի են սիրոյ մէջ: Այդ ինչ զգացումն է, որով բռնւում են մարդիկ, առաջ քան թէ կարողանան պաշտպանուել նրա դէմ: Այդ ինչ զգացումն է, որ մղում է դէպի միմեանց մի անխնայ զօրութեամբ երկու կականեր, որոնք չեն ճանաչում իրար և զուցէ, նոյն իսկ այդ մերձեցումից յետոյ, շարունակեն չը ճանաչել իրար: Մի փաղաքշական խօսք, մի շնորհալի դէմք, մի կրքոտ նայուածքը տակն ու վրայ են անում մի ամբողջ կեանք: Ուրեմն սէրը մի սնդիտակից և ճակատագրական ոյժ է, որ խառնում է մարդկային սրտերը, հակառակ ամեն բանի, քնքշութեան, ուրախութեան և տանջանքի համար: Կարելի է մրցել այդ ոյժի դէմ:

Այդ սոսկալի մտածմունքները վախեցնում էին նրան և նա զարմանում էր, որ նրանք բոլորովին չեն ջախջախել իրան: Մի անհասկանալի մեծ քնքշութեամբ համակուել էր նրա ամբողջ հոգին: Նա հասկանում էր, որ երջանկութիւնը խոյս է տալիս իրանից, բայց ընթանում էր դէպի ապագան, որպէս ծանրաբեռնուած երջանկութեամբ: Սէրը, աւելի ուժեղ քան գիտակցութիւնը, սէրը, որ բռնում է կեանքի զոնները և բաղլսում է կուրօրէն տիրութիւնները ու մեղկութիւնները, քարշում էր նրան, չը նայելով կասկածներին, չը նայելով նրա ազնիւ և բարեպաշտ հոգու անձկութիւններին...

Լէօնօրա Ֆիրրէզին զարթնեց արշալոյսին: Մահճակայի թարմ սաւանները և առաւօտեան անուշ քունը չը կարողացին երկար պահել նրան անկողնում: Զարթնելով, նա զգաց իր այտերի վրայ դեռ չը չորացած արտասուք: Հագնուելիս, նա հաճութեամբ զմայլուեց իր գէմքով հայելու մէջ: Նրա ուսերի մթերը, ալեծուփ վարսերի հիւսկէնները և մարգարտանման մորթը գոհացրին նրա գեղեցկութեան ճաշակը և նա՝ թախծագէմ, ժպտաց իր պատկերին, ինչպէս ժպտում են թանկագին մտերիմ անձանց, սրոնցից բաժանուելը մարդուս վիշտ է պատճառում: Նա հագաւ մի սեաթոյր զգեստ սպիտակ խալերով, բաւական պարզ, բայց որ մի և նոյն ժամանակ պայծառապէս ցոյց էր տալիս նրա անթափանցիկ մորթու ճերմակութիւնը:

Նա դուրս եկաւ անից զաղանագողի. կարելի էր կարծել, որ նա սիրահարական ժամադրութեան էր գնում: Նա անցաւ Տալուարից, ուր բոլոր լուսամուտները փակ էին, բարձրացաւ դէպի սարը և քայլեց մի կէժանով, որ տանում էր դէպի ժայռ: Մի րոպէ նա կանգ առաւ ծաղիկներ քաղելու: Նա զարմանքով լսում էր մանգաղների ներդաշնակ ձայնը, որոնցով գիւղացիները երկրորդ անգամ կատարում էին խոտի հունձը և հովիւների զիւ ու ձիգ աղաղակները:

Ծառերի ճիւղերի միջից նա տեսնում էր լիճը, որ ծփում էր այնպիսի մեղմիկ հովիկով, որ կարելի էր կարծել թէ ծովային յաւերժահարսների շունչն էր շարժում: Լճի դալուկ—կապտաւուն, թափանցիկ ջրերը լողանալու հրաւէր էին կարդում: Առաւօտեան մշուշը անորոշ ձեւերպութիւն էր տալիս սարերին, որոնք գրեթէ սպիտակ էին երևում պայծառ արևի մէջ: Ամենուրեք զգացում էր երկրի համատարած արթնութեան կուսական թարմութիւնը և քնքշութիւնը. ամենուրեք զօղաւորում էին կապտաւուն և ձիւնափայլ գոյները, մեղմ գծերը և անըմբռնելի չերտերը, համակ բնութիւնը ձգտում էր դէպի լոյս և կեանք: Եւ Լէօնօրան, մեծ բերկրանք զգալով ծագող օրուայ այդ քաղցր գգուանքից, փակեց մի րոպէ աչքերը:

Եւ սակայն նա շատ կամենում է մեռնել:

Նա հասել է ժայփի գագաթը, այնտեղ, ուր նստած էր Աննի Մէրանի հետ: Նա առաջացաւ դէպի ժայռի ծայրը և նայեց յանկուցիչ ջրերին. ապա նա վերադարձաւ բուրաստանը, դարձեալ ծաղիկներ քաղելու համար: Նա խառնում էր անուշաբոյր լօշտակները վարդագոյն ցարասիի ցօղունների հետ, և չէր շտապում իջնել այն ստուերների աշխարհը, ուր անծանօթ են սիրոյ տանջանքները: Կազմելով ծաղիկիօւնջը, նա

գտաւ որ զեռ հարկաւոր է մի քանի հացաբոյսերի ցօղուններ
ևս աւելացնել:

Ժայռից դահաւիժելիս՝ նա ձեռքին բռնած կ'ունենայ այս
ծաղկեփունջը, որ ծփալով լճի վրայ ցոյց կը տայ ժակին իր
դիակի տեղը: Պէտք է այնպէս անել, որ հեշտութեամբ կարո-
ղանան գտնել իրան, որպէս զի երկար ժամանակ չը մնայ սա-
ռը ջրի մէջ: Նա յիշեց Օֆելիային և գրականութեան մի քանի
ուրիշ գեղեցիկ մահերը. կիսաձայն նա սաղմոսերգում է փոք-
րիկ ձկնորսուհու երգի առաջին տունը.

Այնտեղ, սարերի վրայ
Կայ մի թռչնիկ, որ երգում է,
Որ երգում է տիւ և գիշեր
Լի-ու-լա.
Որ երգում է տիւ և գիշեր
Թէ քաղցր է սէրը:

Նա չը գիտէ միւս տները և ծաղկեփունջը արգէն կալ-
մուած է: Այլ ևս պատճառ չը կայ ապրելու, Նա խաղաղ է և
համակրութեամբ նայում է լճի փոքրիկ կոհակներին:

—Այս, այս ըտպիւն, մտածում է նա. կամենում եմ մի
քիչ հանգստանալ, շատ յոգնած եմ:

Նա նստեց խոտի վրայ և աշխատեց մտքերը՝ համախմբել:
Նա հանդիպել էր ճանապարհին, Տալուարի մօտ, գեղջկուհիներ-
րի, որոնք աշխատելու էին զնում, ուսերին դրած մեծ ~~քար~~
խոտ հաւաքելու համար: Նրանց տձև իրանք, նրանց խամրած
դէմքը պարզ ցոյց էին աալիս նրանց կոպիտ, աշխատաւոր
կեանքը: Նրանք աշխատելու են ամբողջ օրը արևի կիպիչ սա-
քութեան տակ, նրանց ամուսինները կոպտաբար վարուելու են
նրանց հետ, ծծկեր երեխաները ծծելու են և սպառելու ստինքսը.
նրանք գիտեն այդ ամենը և, այնուամենայնիւ, չեն մտածում
մեռնել: Լէժնօրան նախանձում է նրանց բախտին:

—Նրանք երջանկութիւնը գտնում են իրանց հանապաղօ-
րեայ աշխատութեան մէջ. զոնէ նրանք օգտակար են, իսկ ևս,
ոչ ոքի ուրախութիւն աալ անգամ չեմ կարող:

Նա մօտեցրեց փունջը քթին: Վայրի ծաղիկների բուրման
մէջ նա ներշնչեց բնական կեանք: Խոտը բուրում է, թռչուն-
ները երգում են ծառերի մէջ, լճի ջուրը ծփում է, մի լուսա-
զեղ փռչի երերում է օդի մէջ. ամեն տեղ, ամեն բանի մէջ
կեանք է սփռուած, ամեն բան մրմնջում է կեանքի քաղցրու-
թիւնը առաւօտեան զով հովի մէջ:

Նա տասց ինքն իրան. «Այս բուրումները, այս շունչը

նեղացնում են ինձ... Ես կը ցանկայի մի անգամ ևս տեսնել ինձ, բայց հայելի չունեմ. ես կը ցանկայի մնաս բարև ասել ինձ: Բայց իսկապէս ինչի համար այնքան փափագում էի մեռնել...»

Նա դրեց ծաղիկները գետնին և ծածկելով գլուխը երկու ձեռներով, յենեց նրանց վրայ: Նա յիշեց ժակի համբոյրները, յիշեց Աննիին՝ թեքուած հէնց այստեղ լճի վրայ, նա տեսաւ ժակին՝ գրկած ջահէլ աղջկան և բազուկների մէջ տանելիս...: Նա վեր թռաւ, վազեց մինչև եզրը. կամեցաւ գահավիժել իրան անդունդը, բայց մի սուր ճիչ արձակեց, մի խոր, վշտագնահար ճիչ և յետ կանգնեց դարհուրած:

Այս անգամ նա մտիկից տեսաւ մահը և նրա կանացի հէզ մարմինը ամբողջովին դողդոզաց:

— Որքան դժուար է ուրեմն մեռնելը, մտածեց նա: Ես այդ քաջութիւնը չեմ ունենայ, եթէ նայեմ բաց աչքերով: Պէտք է փակեմ աչքերս: Ով սուրբ Մարիամ, օգնիր ինձ...:

Նա նայեց իր շուրջը, — վերջին անգամն է — շատ երկար: Նա փակեց աչքերը. նա մնաց այնտեղ սառած, աչքերը տնկած գետնին: Միայն մի քայլ, մի ոստումն պէտք է անել դէպի մահը: Մահը կանչում է նրան, ժպտում է նրան, նա վշտի փախճանն է, նա խաղաղութիւն է:

Նա յետ կասեց, թեւերը պարզած օդում, կարծես թէ մի աներեւոյթ բան էր ուզում յետ մղել, և միշտ աչքերը փակ: Երբ աչքերը բացոււ, նա արդէն հեռու էր կզրից: Եւ անհա նա հեծկտաց և թաւալուեց խոտերի մէջ ստորացած, ամօթահար և ինքն իրան գոռալով:

— Վատհոգի, վախկոտ արարած, որ փախում ես մեռնելուց...:

Տիկին Ֆերրէզին հրաման էր տուել ոչ ոքի ներս չը թողնել իր մօտ: Նա փակել էր տուել լուսամտի փեղկերը, որոնց միջից հազիւ թափանցում էր լոյսի մի շող և նստած էր մութի մէջ, որոճալով իր նուատաղիումը: Նա արդէն հրեակայում էր իր սիրեկանի հեղինական դէմքը, երբ նա գալով, կենդանի կը գտնի իրան իր մահուան լուրը այնպիսի հանդիսաւոր կերպով նրան հաղորդելուց յետոյ:

— Նա այժմ կը գայ, մտածում էր նա: Չեմ կամենում տեսնել նրան. ես ապահով եմ, որ նա չէ հաւատացել, որ ինձ կը սպաննեմ: Եւ սակայն ևս հաստատ կամենում էի մեռնել, բայց չը կարողացի. իմ մեղքս չէ: Այսպիսի մի գեղեցիկ օր շատ դժուար է մեռնել:

Նա մի հէգ և վեհերոտ կին եմ:

Նա յիշեց այն արագիկ օրը, երբ կամենում էր սպանել իր հակառակորդուն և այդ յիշողութիւնից զարհուրեց:

—Ոհ, ես շատ էլ վտանգաւոր կին չեմ: Յանկութիւններս սաստիկ են, բայց գործելու ոյժ չունեմ: Առաջուայ մարդիկ երբևէ նոյնչափ արագ գործում էին, որքան մտածում: Ինչ լաւ է այդպէս լինել: Այժմ ես մեռած կը լինէի... Նա ինձ ատում է իմ տկարութեան պատճառով: Նա չեմ կարող տանել նրա նայուածքը: Նա նրան չեմ տեսնի: Բայց գուցէ նա նոյնիսկ չի գայ իմանալու թէ արդեօք դեռ կենդանի եմ...:

Նա լացում էր ողբալով:

—Սեղճ թշուառ կին! խեղճ թշուառ կին!...:

Սպասուէին ներս մտաւ և յայտնեց որ պ. Հալանդը թախանձային խնդրում է ընդունել իրան, որովհետև կարևոր յանձնարարութիւն ունի կատարելու: Նա վարանեց, բայց յետոյ հրամայեց ներս կանչել երիտասարդին:

Վերջինս յանձնեց նրան ժախի նամակը, որ նա բացեց տենդային շտապողութեամբ: Այդ նամակը երեի շատ փաղաքշական չէր, որովհետև կոմսուէին չը կարողացաւ զսպել իր անյայտելի առաջ և հեծկլտաց: Նա ասում էր արտասուախառն ընդհատումներով.

—Նա չէ հաւատում!...: Նա չէ հաւատում, որ ես կամենում էի մեռնել: Ոհ, որքան խտտասիրտ է դէպի ինձ!...:

Սրբելով աչքերը, յոգնած, թուլացած, նա խոստովանեց Լիւսիէնին իր վիշտը: Նա պատմեց իր սիրոյ տանջանքները, ինքնասպանութեան փորձը, իր յանկարծական երկիւղը, իր ամօթահարութիւնը, այդ խոստովանութիւնը հանդարտեցրին նրա ջղերը:

—Երբ մարդ չէ ցանկանում այլ ևս ապրել, մերջացրեց նա խօսքը, արդէն նա մեռածի պէս է: Իսկական մահը, չէ որ ամեն ուրախութեան և յոյսի մահն է. նա մեր ներսումն է, որովհետև ներքին մահ է:

Լիւսիէնը բռնեց նրա ձեռքը.

—Մի խօսէք ամօթի մասին: Դուք այդպէս աւելի կարեկցութիւն էք շարժում: Ամեն մարդի համար բնական է վախել մահից:

Նա նրան մի քանի ուրիշ բարեկամական խօսքեր ասաց և յանկարծ Լէօնօրան մի անակնկալ շարժումով հպեցրեց երիտասարդի ձեռները իր շրթունքին:

—Դուք, դուք շատ բարի էք, մրմնջաց նա: Ոհ, ասացե՛ք ինձ, ինչու սիրում եմ անդու՛թ մարդկանց:

Լիւսիէնը խօսեց նրա հետ և Աննի Մէրանի մասին և մի աննկատելի դարձուածքով խօսքը այնտեղը բերեց, որ խնդրեց նրան հրաժարուել այդ սիրուց, որ միայն տանջանք էր պատճառում իրանս Կոմսուհին ընդհատեց նրան.

— Ո՛հ, մի խնդրէ՛ք ինձանից այդ. դուք լաւ տեսնում էք որ ես ոյժ չունեմ. նա ինձ հմայել է. հասկանում էք այդ. ևս անիծուած եմ. ես նրա իրն եմ:

Եւ նա յարեց.

— Իր նամակի մէջ նա ինձ ժամագրութիւն է տալիս երեք շաբաթից յետոյ: Այս ևս իմացէ՛ք, որ նա ոչնչով չէ մատնում իրան, որովհետև նա ինձ գրում է մեքենայի գրով, առանց հասցէի: Ես նրա մի տող ձեռագիրն չունեմ: Նա պահանջում է նոյնպէս, որ ես ներկայ լինեմ իր հարսանիքին: Ո՛չ, ևս չեմ գնայ: Կամ եթէ գնամ, այն ժամանակ մի անդարմանելի սկանդալ կը սարքեմ...

Լիւսիէնը կարողացաւ մի քիչ հանդարտեցնել նրան և երբ մեկնեց, Կոմսուհին թէև դեռ հառաչում էր, բայց արդէն խոնարհել էր:

Մէնթօնի ճանապարհի վրայ, նա հանդիպեց Մէրանին, որի դէմքը փայլեց նուրբ ժպիտով, տեսնելով նրան վերադառնալիս Տալուարից:

— Նա երևակայում է, որ ևս վերադառնում եմ սիրահարական տեսակցութիւնից, մտածեց երիտասարդը և մտքում հազար անէ՛ծք կարգաց ժակի զլինն:

— Անզգամ! Նա իր կնոջ երեք շա՛ծաթ է նուիրում իր սիրուհու մօտ վերադառնալուց առաջ: Ի՛նչ ունեն բոլոր այս կանայք իրանց երակների մէջ, որ սիրում են այսպիսի թշուառականին, որ նրանց ատում է միայն և գորովանքի ոչ մի ուրախութիւն չէ տալիս նրանց սրտերին: Եւ ինչ խեղճ զգացումն է սէրը, որ այդ թեթև հոգիները մատնում է այդ գազանասիրտ մարդի ճանկերին: Ես պէտք է խափանեմ այս գարշելի մատնութիւնը. այդ իմ պարտքս է: Ես պէտք է զգուշացնեմ Աննիին կամ նրա հօրը. այս ամուսնութիւնը չը պէտք է տեղի ունենայ: Ես քառասուն և ութ ժամ ունեմ խանդարելու համար:

Բայց չուտով նա յուսահատ կերպով շարժեց ձեռքը:

— Այն ինչ որ խղճմտանքս թելագրում է ինձ գործել, պատուոյ մի կեղծ զգացումն արդելում է: Ժակը յանձնել է ինձ, հակառակ իմ կամքի, իր զաղտնիքը. այս զաղտնիքը ինձ չէ պաականում: Նա ինձ հագորդակից է դարձրել իր անպիտանութիւններին և ստիպում է ինձ գրեթէ իր մեղսակիցն դառնալ: Իսկ ևս իրաւունք չունեմ կտրել նրա ճանապարհը:

Ահա ուր է տանում մեզ կեղծ պատուասիրութեան զգացումը:
 Եւ սակայն Աննիի անարատ զէմքը տնկւում էր անզաղար
 իր յիշողութեան առաջ:

— Ես բաւական անշահաւէտ կերպով վարուած կը լինեմ,
 եթէ փրկեմ այս ջահէլ աղջկան:

Նա կրկնեց ինքն իրան.

— Ես դործում եմ անշահասիրաբար. ես նրան չեմ սի-
 րում:

Եւ իր ներքին բարկութեան մէջ, նա, վերջապէս, եկաւ
 այս եզրակացութեան, որ իրան եւ զարմացրեց.

— Ժակը խլեց ինձանից իմ կեանքի իսկական նպատակը:
 Իմ նախնիքը աշխատել են ժողովրդի բարօրութեան համար ե
 ես, իբրև նրանց ժառանգը, պէտք է ստանայի նրա համակրու-
 թեան մի մասը: Ժակը չէ սիրում ժողովրդին, բայց խլում է
 նրան ինձանից: Աննին նա է, որին մի հիանալի ընտրութեամբ,
 մայրս սահմանել էր ինձ համար, դեռ երեխայ, բոլոր կանանց
 մէջ: Ժակ չը դիտէ նրա ընտիր սիրտը, նրա բարեպաշտ ոգին.
 Նա նրան չէ սիրում ե խլում է ինձանից: Ո՛հ, ինչու ես այստեղ
 մնացի. ինչու, մանաւանդ, վերադարձայ այստեղ:

Ֆրանս. Թարգմ. Հ. Ա.ՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)

Ա Ն Ճ Ա Ր Ա Ց Ա Ծ Ը

(Պարսկաստանի բարեբեկց)

I

Մանիան այժմ շատ ջանել է: Նրա 25 տարին թէև դեռ չի լրացել, բայց թառամել է արդէն. կեանքի ծանր և խոր վըշտերը մաշում են նրան: Գեղեցիկ էր նա առաջ, երբ դեռ նոր էր ոտքը դրել ամուսնութեան շէմքի վրայ: Այն ժամանակ նա դեռ 18 տարեկան էր, երջանիկ էր զգում իրեն Մանիան, չէր տեսել նա մինչև այդ ցաւ և արտասուք, դարդ և հոգս, ապրել էր ազատ, հեռու տանջանքներից:

Լաւ էր Մանիայի համար և ամուսնութեան առաջին տարիները. այն ժամանակ էլ նա ուրախ և զուարթ էր. կեանքը քաղցր էր նրա համար: Նա արդէն մայր էր, երկու զաւակների մայր. հրճոււմ էր նա փոքրիկների ամեն մի ժպիտից, ամեն մի շարժումից: Անդուլ աշխատում էր Մանիան տան մէջ, կարում, կարկատում, տան կարիքները հոգում, իսկ Սարգիսը,—այդպէս էր նրա ամուսնու անունը,—գործակատար էր և ամսական ստանում էր 8 (թուման *): Նրանք ապրում էին գոհ և ուրախ:

Օրերը սահում էին քաղցր: Շատերն էին նախանձում Մանիային, հազար երանի տալիս նրան և բախտաւոր համարում, մանաւանդ մոռացուածները և ընկաւծները, որոնք այնքան էլ քիչ չեն Թ... քաղաքում:

Սարգիսը և Մանիան ապրում էին երջանիկ, բայց միմիայն չորս տարի տևեց այդ երջանկութիւնը:

Մի օր ներս մտաւ Սարգիսը տխուր, յօնքերը կիտած: Սարգիսը առհասարակ վերջին ժամանակները մտածկոտ էր և լուռ: Այդ նկատել էր Մանիան:

—Ի՞նչ է պատահել քեզ, Սարգիս, հարցնում է Մանիան, դու վերջին օրերս քեզ լաւ չես զգում և տանջուում ես:

—Այո, Մանիա, ճիշտ ես նկատել, անա մի քանի օր է

*) Թումանը=1 ա. 80 կ.:

ես մտածում էի իմ գնալու մասին և այսօր հազիւ կարողացայ վերջնականապէս վճռել:

— Գնալ, ուր ես գնում, հարցնում է Մանիան շփոթուած:

— Ղարիբութեան:

Մանիան այլայլուում է:

— Մի վրդովիր, Մանիա, ես գնում եմ, բայց շատ շուտով կը վերադառնամ: Մէկ նայիր պ. Անդրեասին է, տես տան ինչ սարքեր և դարձեր ունի, ինչպէս է հաղնում և ապրում. այդ ամենը նա ձեռք է բերել, դու էլ գրտես, մի երկու տարուայ մէջ: Ես ինչով եմ նրանից պակաս. նրանից աւել գրել կարգալ գրտեմ և ճարպիկ եմ: Չէ, կնիկ, հերիք է ինչքան նեղութիւն քաշեցինք, 8 թուամսով ընտանիք պահել չի վնի:

— Ըսկի էլ նեղութիւն չենք քաշում, — վրա է բերում Մանիան, մեր ինչն է պակաս. կթէ մի տասից քսանից պակաս նոք, հարիւրից աւելի ենք: Դու մէկ էլ ես ասել պ. Անդրեասի մասին, հապա ինչի չես ասում Շարխօշնց Մկրտչին, Սրգէնց Անտօնին, պ. Սամսօնին, ես ինչ գրտեմ, հազար ու մէկը, որոնք գնացի և կտրել են, ոչ նամակ կայ, ոչ էլ խաբար: Փառք Աստուծոյ, աչքովդ տեսնում ես թէ ինչ վիճակի մէջ են նրանց ընտանիքները: Ինչի եմ էդ ասում, շատերը պատմում են որ հէնց պ. Անդրեասը ոչինչ չի բերել, ոչ փող, ոչ բան, միայն էդ հագուստն է, մէկ էլ մի քանի կտոր ասն մէջ:

— Ինչ որ է, Մանիա, ես էլ եմ ուզում Ղարիբութեան համը տեսնել: Կը գնամ, բայց շուտ կը վերադառնամ:

— Հապա մենք ինչ անենք, ինչ անեմ էս փոքրիկներին, ինձ չես խղճում, գոնէ սրանց խղճայ:

Ասաց Մանիան, լոտց և սկսեց վշտայի հայեացքով նայել ամուսնուն:

Սարգիսը հաստատ մնաց, նա շփոտեց իր վճիռը: Նա շտապով վերջացնում, մաքրում է իր հաշիւները, ստանում ամսավճարից մնացածը: Եւ ահա մի օր մտնում է տուն, համբուրում է զաւակներին, համբուրում կնոջ հետ և տալիս է 6 թուման:

— Տուածոյս մի տո ժամանակ եօլա դնայ, մինչև ինձնից փող ստանաս, մի, շատ շատ երկու ամսից յետոյ անպատճառ փող կուղարկեմ:

Ասաց Սարգիսը և բռնեց պանդխտութեան ուղին:

Ծանր էր Մանիայի հոգեկան գրութիւնը այդ րօպէին, նա հէնց այդ վայրկեանին զգում էր, որ ինքը անբախտ է և թշուառ և միևնոյն ժամանակ զստն արտասուքներ էր թափում և հեկեկում, ինչպէս մանուկ...

Անցնում են օրեր, Մանիան ուշքի է գալիս, իրան հաւաքում և սկսում է ապրել առաջուան պէս. դեռ փող ունէր նա, դրա մասին չէր մտածում նա, հաց էլ կար:

Նա արդէն Սարգսից երկու նամակ էր ստացել, առաջինը Երեւանից դրած, իսկ երկրորդը՝ Թիֆլիզից: Ուրախ էր Մանիան, նամակները լի էին փայլուն խոստումներով: Վերջապէս, մի երկուշարթից յետոյ էլ ստանում է երրորդ նամակը Բագուից, ուր գրում էր, թէ դեռ գործ չի գտել, իսկ մի քանի ամսից յետոյ էլ ստանում է 5 մանէթ: էլ ուրիշ ոչինչ. դա վերջին խաբարն էր: Նա շատ սպասեց, երկար տանջուեց, ոչ մի լուր, ոչ նամակ: Այդպէս է անցնում առաջին տարին: Նա էլի լաւ էր, քիչ-միջ կար փող, կար և հաց: Սկսում է երկրորդ տարին, այն ժամանակ էլ դեռ վատ չէր. մի կերպ ապրում էր, ծնողներից էր ստանում, կար ու կարկատան էր անում, վերջապէս լուացք էր անում: Այսպէս էր ապրում ամուսնուց մոռացուած Մանիան իր զաւակների հետ. քնում էին մի օր քաղցած, մի օր կուշտ, օրեր մաշում, դիշերները լուսացնում:

II

Այսպէս անցան առաջին երկու տարիները. այժմ նրա դրութիւնը ուրիշ է, այժմ կար էլ չը կայ, ծնողներն էլ չեն կարողանում օգնել: Լուացք անողներն այնքան շատ են, որ հերթ չեն տալիս իրար, աշխատում են շատ աննշան դնով:

Շատ անգամ Մանիան ձեռքերը խաչում, գլուխը կախ քցում և խորհում էր երկար և լուս: Նա յաճախ էր արտասուում. այդ նկատել էր Վաղինակը, Մանիայի մեծ որդին: Նա շատ է հարցրել մօրից նրա տխրութեան պատճառը, բայց միշտ էլ անորոշ պատասխան է ստացել:

Թ... քաղաքում շատ կանայք կան անտէր և անտիրական, մոռացուած և ընկած: Գիտէր այդ Մանիան, շատ լաւ գիտէր, նա մէկ-մէկ, անուն-անուն ճանանչում էր նրանց, գիտէր այժմ նոյնպէս թէ նրանք ինչպէս և ինչ միջոցներով են ապրում: Այժմ չէ որ միմիայն մէկ աստիճան է մնացել, որ ինքն էլ ընկնի, նրանց վիճակին հասնի, ինչպէս կարող է չը ճանանչել: Առաջ Մանիան ատում էր նրանց, անիծում և մեղադրում, բայց այժմ ուրիշ է, այժմ նա կարողանում է հասկանալ նրանց, այժմ մտնում է նրանց զրութեան մէջ: Եւ իսկապէս, ինչ անէին նրանք, ապրել պէտք է, չկան աշխատելու միջոցներ: Մանիան որ առաջ չէր ուզում ընկած կանանց երեսը տեսնել, այժմ ինքն է մօտենում նրանց, մտերմանում նրանց հետ:

— Էդպէս է, Մանիա, — ապա մի օր Նուբարը, — շատերն են մեզ մեղադրում, դու էլ էիր անիծում. ախր ինչ անենք, ինչ հողը տանք մեր գլխին. աշխատող չունենք, մենք էլ աշխատելու միջոցներ չունենք, իսկ էդ եթիմներն էլ միշտ լաց են լինում, պահանջներ անում, սրտեղից տանք: Չէ, Մանիա, մենք մեղաւոր չենք, մենք թշուառ ենք և մոռացուած:

Մանիան լուռ էր. նա միայն դառն և յուսահատական կերպով գլուխը տարուբերեց և քիչ էր մնում արտասուէր:

— Դու առաջ մեղադրում էիր մեզ — շարունակեց Նուբարը — բայց այժմ չես մեղադրի, որովհետև դու էլ ևս մեզ նման ընկել: Այժմ ինչպէս կարող ես ապրել, ուրիշ ինչ կարող ես անել, եթէ ոչ մեզ նման վարուել: Միշտ էդպէս է, նա է մեզ անիծում, ով անընդունակ է մեր դրութեան մէջ մտնելու:

— Չէ, Նուբար, ձեզ նման չեմ վարուի, ես մուրացկանութիւն կանեմ, դո՛սէ դուռ կընկնեմ, կը մուրամ, և թէ ինձ և թէ տղաներիս կը պահեմ, դա աւելի լաւ է, քան ձեր արածը:

Նուբարը ծիծաղեց. հեգնական և ցնցող էր այդ ծիծաղը:

Խեղճ Մանիա, նա մի րոպէ մոռացաւ, որ այս երկրում հայերի մէջ մուրացկանութիւն չը կայ, չեն ընկնում փողոցները և մուրում: Չը գիտէր, որ Նուբարները արարքը շատ ձեռընտու և նպատակայարմար է. կատարում է ամեն ինչ ծածուկ, գաղտնի, շատ քչերը կարող են գիտնալ այդ: Բայց ուրիշ է մուրացկանութիւնը. նրանց բոլորն են տեսնում, ամբողջ աշխարհը գիտէ, կը թքեն և բերնի ծամոն կը դարձնեն:

Այդ գիտէր Նուբարը. երկար տարիների մտածմունքներն էին նրան այս եզրակացութեան բերել: Ահա թէ ինչու Մանիայի խօսքերը նրա մէջ դառն և հեգնական ծիծաղ առաջ բերին:

Դրանից յետոյ Մանիան շատ անգամ լսեց այդպիսի խօսքեր, յաճախ այդ հեգնական քրքիչները խոցեցին նրա վիրաւոր սիրտը: Նա զգում էր, որ ինքն էլ կանգնած է կորստեան ճանապարհի վրայ, զգում էր, որ ոչ մի միջոց կամ հնար չունի ազատուելու: Եւ նա մտածում էր երկնի, անընդհատ...

Հետզհետէ նա մաշւում է, կորցնում թարմութիւնը, զրկւում գեղեցկութիւնից: Այժմ թէև նա 25 տարեկան է, բայց խոր վիշաբ դրել էր արդէն իր կնիքը նրա վրայ, կնճիռները սկսել էին նշմարուել:

«Մեզ նման կեանք վարել», Նուբարի այս խօսքերը երկար զբաղեցրին Մանիային: Նա ճգնում էր նախատեսնել իր մօտիկ ապագան, բայց չէր կարողանում, իր ոյժից վեր էր այդ: Երբեմն նա զայրանում էր, ուզում էր գնալ յարձակուել Նուբարի վրայ, ծուռտել նրան, երբեմն էլ կակղում, բարկութիւնը

իջնում էր և նրա բերնից ականայ թռչում էին «նուբարը ճիշտ է ասում» խօսքերը: Անցնում են օրեր. ներքին կուրը շարունակում է: Մանիան զգում է, որ առաջին միտքը հետզհետե տեղի է տալիս երկրորդին. և դա սաստիկ մաշում էր նրան:

Այդ իմացել էր Եղսան-բաջին, նա վաղուց դիտում էր Մանիայի գրութիւնը: Այժմ ուրախ էր Եղսան-բաջին, անչափ ուրախ՝ նա շատ օգուտներ է սպասում Մանիայից, վաղուց նա հետևում էր Մանիային, մանրամասն տեղեկութիւններ հաւաքում: Նա արդէն մէկ մէկ այցելում էր Մանիային. երկար ու խրատկան քարոզներ կարդում, իր նպատակին պատրաստում: Նա ուրախ և բախտաւոր էր զգում իրեն, Մանիան նրա համար անգին և անսպաս գանձ էր:

«Ձը պէտք է բաց թողնել, կարող են ուրիշները տիրել, պէտք է արագացնել», մտածում է Եղսան-բաջին:

III

Գիշեր էր, անց ու դարձը դադարել էր: Մանիան էլի մտախոհ թաղուած էր իրեն պաշարող մտքերի մէջ, բայց այժմ նա իրան թեթեւ էր զգում:

— Իրաւացի են ասում, — մտածում է Մանիան, ինչ է իմ կեանքը. չէ, այլ ևս անկարող եմ տանել այսքան զրկանքներ. պէտք է վերջ տալ սրան. ինչպէս էլ լինի, թէկուզ խայտառակուեմ, կաննեմ այն, ինչ շատերն են անում իմ վիճակումս եղած մեր քոյրերից...

Նրա այդ մտածմունքները ընդհատում է դռան ծեծը: Բացւում է դուռը և ներս է մտնում Եղսան-բաջին:

Եղսան-բաջին հասակաւոր կին էր, նրա տարիքը 45 անց կը լինէր. նա հաստ ու միջահասակ էր: Թէև արդէն թառամել, պառաւել էր նա, բայց աշխատում էր միշտ ուրախ և գեղեցիկ երեւալ, դուր գալ ուրիշին: Շատերին է յայտնի Եղսան-բաջին: Նրան ճանաչում են բոլոր թշուառ և ընկած կանայք, զիտեն և որոշ մարդիկ: Եղսան-բաջին մենակ չէ թ. ...-ում: Նրա նմանները շատ են այդ քաղաքում: Նրանք ճանաչում են բովանդակ քաղաքը, զիտեն, շատ մանրամասն զիտեն զրեթէ բոլոր ընտանիքների գաղտնիքները:

Նրանք շատ ճարպիկ են, ունեն սյնքան ճարտար և համոզիչ լեզու, որ ընդունակ են օձն անգամ բնից հանել:

Այդպէս է և Եղսան-բաջին:

Եղսան-բաջին ժպիտը երևաին մօտեցաւ, քաղցրալիւր կեր-

պով բարեւեց Մանիային, հարցրեց քէֆ-հալը, համբուրեց փոքրիկներին և նստեց:

—Տեսնում ես էլի, Եղսան-բաջի,—ասաց Մանիան, էլ ինչ ասեմ: Ի՞նչի ես էդպէս ուշ-ուշ երեւում:

—Դէ՛հ, ի՛նչ անենք, հազար դարդ ու ցաւ ունենք, գործից աչք չենք կարում բացել: Եկայ, տեսնեմ թէ ինչպէս ես: Աստուած իմ, էս էլ ապրուստ է, էս էլ վիճակ է, մի փալաս էլ չը կայ: Մարդը Ռուսաստանում հիմի ով է գիտում ինչ քէֆեր է քաշում, իսկ սա էստեղ հալում է: Հիմի որ անիծեմ էդպէս մարդին, Մանիա, աղջիկս, կը մեղադրես ինձ:

Ասաց նա և աչքի տակով նայեց Մանիային, որպէս զի իմանայ թէ իր ասածը ինչ տպաւորութիւն թողեց:

—Դու ճիշտ ես ասում, Եղսան-բաջի, մարդիկ անխիղճ են, հիմի ես շատ լաւ հասկանում եմ:

—Տօ տղամարդիկ ըսկի խիղճ ունեն,—ողելորուած Մանիայի խօսքերից վրայ՝ բերեց Եղսան-բաջին,—նրանք պսակւում են, եթիմներ վաստկում, գցում են մեր գլխին և իրանք, մի օր էլ տեսար, էլ չը կան, կորել են: Քանիս քանիսն են էդպէս արել, մենակ դձու ես մնացել: Ես էլ քեզ նման եղայ, բայց ես շուտ հասկացայ իմ օգուտս, ես խելօք գտնուեցի, քեզ նըման յիմար չէի, դատարկ-մատարկ մտքերով չը պարագեցի. ես էլ իմ ապրելու միջոցը գտայ, այժմ քէֆիս քէֆ չի հասնի: Ինչի իմ մարդս իրաւունք ունի ինձ թողնել ուրիշի հետ լինել, իսկ ես իրաւունք չունեմ. մենք անխելք ենք, անխելք:

—Ա՛խ, Եղսան-բաջի, այժմ շատ լաւ հասկանում եմ քեզ, բայց... բայց...

—Բայց, ի՛նչ բայց, հարցրեց Եղսան-բաջին:

—Բայց մէկ մտածիր, Եղսան-բաջի, որ ես մայր եմ, ունեմ որդիներ:

—Լաւ, ի՛նչ կայ որ. Շողակաթը, Նուբարը, Նազլուն, որն ասեմ, դրանք քեզ նման չեն, նրանք էլ որդի չունեն: Ախր որդիներդ ինչո՞վ պահես և նրանք ինչո՞վ կարող են խանգարել, որ միշտ ասում ես... էն էլ էնքան ծածուկ է կատարում, որ սատանան էլ չի իմանայ:

—Ձէ, Եղսան-բաջի, չեմ կարող, մի քանի օր էլ սպասիր:

—Դու գիտես, որդի, ես քո լաւն եմ ուզում. հարուստ մարդ էի ճարել քեզ համար, էդ պատճառով էդքան խօսեցի, թէ չէ ինչ կայ, էսօր չը լինի էգուց լինի: Մէկ էլ քեզ եմ խելո՞՞ գալիս, ջահէլ-ջիւան ես, հալում, մաշում ես, ախր էդքան էլ տանջանք կը լինի որ դու քաշում ես:—Լաւ մտածիր, որդի, շուտով կը գամ:

Ասաց Եղսան-բաղին, ոտքի ելաւ և դուրս գնաց:

Այս անգամ էլ անաջող անցաւ, բայց նա չը յուսահատուեց:

Նա շարունակում է գնալ, խօսել, քարոզել և ազդել նրան: Մանիան հետզհետէ զիջում և ենթարկւում էր նրան: Ուրիշ ինչ անէր նա: Նա երկնի, շատ երկար խորհեց. չը կար, չը գտաւ ուրիշ հնար...

Եւ ահա մի օր, դեռ բոլորովին չը մթնած, Եղսան-բաղին գաղտագողի ներս սողաց Մանիայինց տունը: Չանցած մի քանի րոպէ, նա էլի գգոյշ կերպով դուրս եկաւ: Նա այժմ մենակ չէր. նրա հետ էր և Մանիան:

Մանիան զոգում էր ամբողջ մարմնով: Նա չզիտէր թէ ուր է գնում, միայն այսքանը գիտէր նա, որ լաւ բանի չէ գընում. այդ էր միայն պարզ նրան:

Եղսան-բաղին հետզհետէ արագացնում էր քայլերը և հրճուանքի մէջ էր, իսկ Մանիան ընդհակառակը դանդաղում էր, նրա ոտքերը ծալւում, առաջ չէին գնում:

Եղսան-բաղին տանում էր Մանիային սեղմած պատին, իր կողքին կպած, մութ տեղով:

—Շտապիր, որդի, հրում էր Եղսան-բաղին, մի վախեցիր, ոչինչ չը կայ: Սա առաջին անգամն է, դրա համար է դժուար երեւում քեզ. ես էլ էդպէս էի առաջին անգամ, բայց քո բախտը կտրուկ է, էս խանը շատ հարուստ է:

—Իմանը, զարմացած հարցրեց Մանիան, մի՞թէ թուրքի մօտ ես տանում...

—Աղջի, դժուել ես, ինչ է, ուզում ես հայի մօտ գնալ, որ բոլորովին խայտառակուես, ամբողջ աշխարհը իմանայ. թուրքի մօտ ոչ ոք չիմանայ, մէկ էլ թուրքերը շատ են տալիս... էս խանը, որի մօտ հիմի գնում ենք, հէնց մենակ ինձ երկու թուման է տուել, դէ տես քեզ ինչքան պէտք է տայ...

Այդ էր անճարացած Մանիայի նոր կեանքի առաջին քայլը...

ԵՐ. ՅՐԱՆԳԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ ԿԻՆԵՐԸ

Ալփօնս Դօդէի

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Իրիկուն մը, ընթրիքէն յետոյ, նկարչի աշխատանոցի մը մէջ, գահաւորակիւն վրայ մի պատկերահան և մի բանաստեղծ տարածուած, սիկանները շրթներուն մէջ, կը խօսակցէին:

Փոխադարձ սրտագեղումներու և խոստովանութեանց ժամն էր: Լամպար մը՝ լուսամբորդին տակէն բոցեղէն շրջանակ մը կը տարածէր խօսակիցներու մտերմութեան վրայ. որմէ դուրս՝ կիսամութիւն մէջ հազիւ նշմարելի թողլով լայնարձակ պատերուն քմայական արդուզարդը, որ կը բաղկանար կտաւներէ, էթիւզներէ, նկարներէ, արուեստագիտական նշանակութիւն ունեցող հին դէքերու հաւաքածոյներէ, panoplie-ներէ և վարադոյրներէ և որոնց տէ վերի վրան բացուող պատուհանէ մէ ազատ ներս կը թափանցէր երկնքի մութ կապոյտը: Այդ շուքին մէջէն, կիսով չափ դուրս կ'ելլէր, մէն մէնակուկ, կնոջ մը պատկերը, թեթև մը դէպի առաջ հակած, մատղաշ, սիրուն խելացի աչքերով, բարութիւն և ծանրումեծութիւն արտայայտող բերանով, սրամիտ ժպիտով, ականջ դնողի երևոյթով մը որ, կարծես, պաշտպանել կ'ուզէր ամուսնոյն եռոտանին յիմարներու և վհատեցնողներու դէմ: Յաճուկ աթոռակ մը՝ վառարանէն քիչ հեռու, մանրիկ կապուտիկ ոտնամաններ գորգին վրայ հոս հոն քարշ ընկած, գուշակել կուտային տան մէջ մանկան մը ներկայութիւնը: Արդարեւ, կողմնական սենեակէ մը, ուր մայրն ու մանկիկը անհետացել էին, նոյնհետայն, անուշալուր խընդուածքի մը շունչեր և ճուղղիւններ կուգային մերթ, քնա՛նալու պատրաստուող սիրուն բոյնի մը կացութիւնը ենթադրել տալով: Այս ամենէն՝ ընտանեկան մի տարտամ, թեթև հոտանոյշ կը բուրէր արուեստագէտի այս բնակարանին մէջ և որուն մեր բանաստեղծը սրտադին կը ցանկար:

«Ապաքէն, սիրելիս, կ'ըսէր նա իւր բարեկամին, դուն իրաւունք ունիս. երջանիկ լինելու բազմապատիկ ձևեր չի կան. երանութիւնը հող է, այո՛, միայն ատոր մէջ... կ'ուզեմ որ զիս ալ կարգես»:

Նկարիչը

Իրաւ որ ոչ, օրինակի համար... եթէ դու այդքան կարեւոր կը համարիս, կարգուէ մինակդ, բայց զիս մի խառներ այդ գործին մէջ:

Բանաստեղծը

Եւ ինչո՞ւ:

Նկարիչը

Որովհետեւ... վասնզի արուեստագէտները չի պէտք է որ ամուսնանան:

Բանաստեղծը

Ճշմարիտ որ կը չափազանցես... Ի՞նչ, դուն ես որ կը համարձակիս ըսել ինձ այդ. կը զարմանամ, ինչպէս ճրագը չի մարիր և պատերը չեն բլչիր զլիսուդ... բայց մտածէ անգամ մը, թշուառական, որ երկու ժամէ ի վեր այս տեղ այդ երջանկութեան ներկայացում մը և փափաքը տալէ յետոյ ինձ, ելել կ'արգելես ինձ դայն: Ի՞նչ, ըսէնք որ դու ալ սա իրենց հանգստաւէտութիւնը ուրիշներու տառապանքով կրկնապատկել ուզող ազան հարուստներուն պէս ես, որ, նստած իրենց կրակարանի դէմ, անհող կը մտածեն թէ դուրսը կ'անձրեւէ և խեղճ ողորմուկներ կան հոն անպատապար:

Նակարիչը

Խորհէ ինձ համար և ըսէ ինչ որ ալ կամիս, բայց շիտակը չեմ կրնար օգնել քեզ այդ կերպ յիմարութիւն մը, անսրբագրելի յիմարութիւն մը ընելու մէջ, անոր համար որ զքեզ շատ չատ կը սիրեմ:

Բանաստեղծը

Տէ՛հ, տեսնենք, ի՞նչ կայ եղել, գո՛հ չես ուրեմն... ինձ թուի սակայն թէ մարդ հոս, այս տեղ, երջանկութիւնը կը չնչէ այնպէս լայնօրէն ինչպէս գիւղի տան մը պատուհանէն երկինքի օդը:

Նկարիչը

Իրաւունք ունիս, ես երջանիկ եմ, բոլորովին երջանիկ, սրտագինս կը սիրեմ կինս. երբ տղուս վրայ կը մտածեմ, հա-

ճոյքէն կը խնդամ մինակս Ամուսնութիւնը ինձ համար հանդարտ և ապահով ջրերով նաւահանգիստի մը պէս եղաւ, և ոչ սա այնպիսին ուր մարդ օղակով մը կը կապուի եզերքին՝ յաւիտեան հանգստելու համար հոն, այլ սա կապոյտ ծոցիկներէն մին, ուր մարդ նաւին կայմերը և առագաստները կը նորոգէ, անկէ դէպի անձանօթ բնագաւառներ նոր թռչք առնելու համար: Ես երբէք այնպէս լաւ աշխատել չէի կրցած ինչպէս որ ամուսնանալէս ի վեր կ'աշխատիմ: Իմ լաւագոյն գործերս այդ թուականէն կը սկսին:

Բանաստեղծը

Լաւ ուրեմն, յետոյ:

Նկարիչը

Սիրելիս, չի նայած որ կարող ես զիս ինքնահաճ անխելք մը համարել, սակայն քեզ կ'ըսեմ որ իմ կրանութիւնս մի կերպ հրաշք, մի անբնական, մի բացառիկ բան կը նկատեմ: Այն, քանի կը տեսնեմ որ այս ամենը ամուսնութեամբ է եղել այնքան, կ'ահարեկիմ բաղդաւորութեանս վրայ: Ես կը նմանիմ ճիշտ սա այն մարդոց, որոնք վտանգի մը վրայէն անցել են աւանց անոր գիտակցութիւնն ունենալու և որոնք, յանդուգն քայլը առնելէ յետոյ՝ յանկարծ՝ իրենք իրենց գալով, սարսափէ կը դժգունին՝ մտածելով իրենց յախուռնութեան վրայ:

Բանաստեղծը

Բայց ինչ են եղել, տեսնե՛ք մէկ մը, այդքան սոսկալի ըսածդ վտանգները:

Նկարիչը

Առաջին և ամենամեծ վտանգը տաղանդը կորուսել կամ պղտիկցնելու վտանգն է. սա բան մ'է և կարծեմ կարևոր բան մը արուեստագէտի մը համար... վասնզի, լաւ գիտէ, որ այս բոպէիս ևս քեզ չեմ խօսիր կեանքի հասարակ և սովորական պայմաններու վրայ: Կը համաձայնիմ որ ամուսնութիւնը ընդհանրապէս ընտիր գործ մ'է, և որ, մարդկանցմէ շատեր միմիայն այն ատեն կըսկսին երևալ, հաշուի առնուիլ երբ ընտանիքը լրացուցիչը կ'ըլլայ անոնց և զանոնք կը մեծացնէ: Սա ստէպ զբաղումին մի պահանջքն է: Չէ կարելի երևակայել ամուրի նօտար մը. ու արժանապատիւի ծանրումեծի վստահելի մարդու տպաւորութիւնը չի պիտի կրնար թողուլ: Բայց մեզ նկարիչներուս, արձանագործներուս, նուագածուներուս, բանաստեղծներուս համար, որ, կեանքէն դուրսը կ'ապրինք միջակ, զայն ուսումնասիրել և զայն արտայայտելու գործերով զբաղած, զմեզ

միշտ քիչ մը անկէ հետու բռնելով, ճիշտ այնպէս ինչպէս նկար
մը լաւ եւ տեսնելու համար հետու կը քաշուինք, կը կրկնեմ
որ ամուսնութիւնը բացառութիւն մը միայն կրնայ ըլլալ: Այն
ջղային պահանջկոտ, դիւրազգամ մարդուն, այն չափահաս
մարդ—մանուկին համար, զոր հասարակօրէն արուեստագէտ
կ'անուանենք, կնոջ մի մասնաւոր, մի առանձինն գրեթէ անգա-
տելի տիպ հարկաւոր է, և ամենաապահովը դեռ բնաւ չի կար-
գուելն է... Ա՛հ, սա Տըլագսուան, որուն վրայ այնքան կը հիա-
նաս դու, ինչպէս լաւ հասկցած էր այս մէկը: Անորինէն ալ
աւելի գեղեցիկ էութիւն, որ իւր չորս պատին մէջ բացարձակ,
բոլորովին իւր արուեստին նուիրուած: Անցած օրը, անոր Վան-
նօզէյի տնակը կը դիտէի. այն տէրտէրի պղտիկ պարտէզը,
լիք վարդերով, ուր նա քսան տարի պտտեցաւ. Ասի, տես, ա-
մուրիութեան անձկութիւնն ու հանդարտութիւնն ունի... տէ՛հ,
լաւ, հիմի երեակայէ Տըլագսուան կարգուած, ընտանիքի հայր,
բեռնաւորուած՝ տղայքը մեծցնելու պակաս եկած դրամին հի-
ւանդութիւններու հոգսերով, կարծես որ նորա թողած Կորժը
պիտի ըլլար այն ինչ որ է:

Բանաստեղծը

Դուն մէջ բերիր ինձ Տըլագսուան, եւ կը պատասխանեմ
քեզ Վիքթօռ Հիւկօն... Կարծես որ ամուսնութիւնը արգելք մը
եղաւ անոր համար այնքան հիանալի գիրքեր գրելու համար...

Նկարիչը

Արդարեւ ես ալ կը կարծեմ թէ, ամուսնութիւնը ոչ մի
կերպ ննջութիւն չի պատճառեց անոր... բայց ամեն էրիկներ
ներող աչքով նայուելու հանճարը չունին և ոչ ալ փառքի մեծ-
կակ արեւ մը չորցնել կրնալու համար իրենց թափել տուած
արցունքները... Այսուամենայնիւ հանճարեղ մարդու մը կնիկը
ըլլալն ալ իրեն հաճոյալի կողմն ունի երբի: Ճանապարհի վե-
րակայուններու կիներ կան թէև որոնք շատ աւելի երջանիկ են:

Բանաստեղծը

Ինչ և է, ամուսնացած և այնու երջանիկ եղած մարդու
մը կողմէ սա պաշտպանողականդ ամուսնութեան դէմ, ճշմա-
րիտ որ եզական բան մ'է:

Նկարիչը

Կը կրկնեմ որ իմ վրայ չափելով չեմ խօսիր, իմ կարծիքս
կազմեցին սա բոլոր այլուր տեսածս տխուր բաները, բոլոր սպ
իրար չի հասկընալները, որ այնքան յաճախագէտ եւ արուես-

տաղէտի տուններուն մէջ և որոնց պատճառը մեր էական կեանքն իսկ է: Նոյն է սա արձանագործը որ իր տաղանդի և տարիքի լուր հասունութեան բոլորին, հոն երեսի վրայ թողած իւր կնիկը և տղայքը, օտարութիւն գիմել է: Հասարակաց կարծիքը դատապարտեց զանի և ապահով որ ևս չէ որ պիտի չքմեղացնեմ զանի: Եւ սակայն երբ լսւ կը հասկնամ որ ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ: Ահաւասիկ տղայ մը որ կը պաշտէր իր արուեստը և ընկերութենէ ու յարաբերութիւններէ կը զըզուէր: Կինը բարի և խելացի, սակայն փոխանակ ազատելու համար զանի այդ իրեն տհաճոյ միջավայրէն, կը դատապարտէր զինքը տասը տարի աշխարհիկ կենաց ամեն կերպ պարտաւորութիւններու: Այսպէս է որ կինը անոր շինել կուտար խել մը նողկալի պաշտօնական կիսարձաններ, մարդուկներու սոսկալի գլուխներ, թաւշկայ գտակներով, կիներ ծրարուածի պէս անչնորհք, որ օրը տասը անգամ կուգային անհանգիստ ընել զինքը անտեղի անժամանակ այցելութիւններով, ապա ամեն իրիկուն սև հագուստ մը և փայլուն ձեռնոցներ հագացած անոր մէկ սալոնէ միւսը կը քաշքշէր... Հիմի պիտի ըսես որ, նա, շատ աղէկ ալ կարող էր գէմ կենալ և պարզապէս պատասխանել «Ոչ»: Բայց չես գիտեր որ մեր նստողական կեանքի ընտրութիւնն իսկ զմեզ առաւել քան բոլոր միւս մարդիկը կախակայեալ կ'ընէ մեր օճախէն տունէն: Տանը օդը մեզ կը պարուրէ, և, եթէ անոր մէջ իղէալի հատիկ մը չի խառնուի, այն ժամանակ այդ օդը զմեզ կը թմբկեցնէ և շուտով կը յոգնեցնէ զմեզ: Մնաց որ արուեստագէտը առհասարակ ինչքան ոյժ և կորով որ ունի, կը թափէ իւր գործին վրայ, և իւր առանձնացածութեան մէջ համբերութեամբ մղած կսիւէն յետոյ՝ երբ զուրս կուգայ ալ ուժասպառ է նա կեանքի փորձութիւններու գէմ: Այն ատեն կնոջական բռնապետութեան գործը գործ է և նայիս ոչինչ զիրար տիրակալուած և զսպուած չէ: Միայն, արթուն կաց պէտք չէ որ նա չափազանց զգայ լուծը: Եթէ օր մը այն սու երևոյթս փայփայող անտեսանելի կապանքը որոշ խորամանկութեամբ կը պատատին զինքը, հարկ եղածէն աւելի սեղմեն զինքը և հասնին մինչև իւր տրուեստագէտի ջանքերը խանդարել, մէկ հարուածով՝ նայես՝ նա կը կտրտէ զամենը, և իւր իսկ սկարութեան չի հաւատալով կը փախչի լիռներէն ալ անդին, ինչպէս, օրինակ, մեր արձանագործը...

Այս մտկնումին վրայ արձանագործին կինը յանկարծակի եկած է դժբաղդը գես կը հարցնէ ինք իրեն. «Ինչ ըրի արդեօք իրեն»: Ոչինչ, նա չէր հասկցած զանի... Որովհետև արուեստագէտի ճշմարիտ ընկերուէին ըլլալու համար բաւական չէ լով

բարի և խելացի լինելը: Դեռ անսահման հեռատեսութիւն մը, խնդումերես անձնուրացութիւն մը հարկաւոր է ունենալ. և ահա այս է որ հրաշք կ'ըսեմ գտնելը կեանքով հետաքրքիր, տգէտ և մատաղատի կնոջ մը մէջ... Կին մը սիրուն է. կարգուկցաւ մարդու մը հետ որ ծանօթ անուն մ'ունի և ընդունուած է ամեն տեղ, տէ ի հարկէ այդ կինը կը սիրէ քիչ մ'ալ իր էրկան թեր մտած երեսալ: Սա բնական չէ մի բոլորովին էրիկը ընդհակառակը. այնօրէն որ լաւ ևս կ'աշխատի, ժամերը կարճ և արուեստը դժուար ևս գտնելով բոլորովին վայրենացած չուղեր որ տեսնին զինքը, առ քեզ կրկուքն ալ գժբաղդ: Եւ ենթադրելով որ մարդը տեղի տայ կամ դիմադրէ, ալ անկէ վերջը իւր կեանքը խանդարուած է, ալ հանգիստ չունի... Ա՛հ, ինչպիսիները տեսայ ես այս կերպ ներքինը իրար անյարմար տուներու, ուր կ'ինը երբեմն զոհ էր կրբեմն դահիճ, յաճախ դահիճ քան զոհ, և գրեթէ միշտ անդիտակ առանց իսկ կասկածելու... Հա, մտիկ ըրէ, անցեալ օրերգիչ ա. Առճէնթիին տունն էի, հոն քանի մը հոգիներ կային. խնդրեցին որ վարպետը բան մը նուագէ բիանօին առջև: Հաղիւ սկսած էր սա պոսանդպուրկական մազուրքաներէն մին ամել, որուն համար զինք Շօբէնի ժառանգները կըսեն, ահա նայիս կ'ինը իսոսկեցել կըսկսի, իսկզբան բոլորովին ցածուկ, ապա քիչ մը բարձրկէկ: Քիչ քիչ խօսակցութիւնը կը տաքնայ, վայրկեան մը յետոյ միակ ևս էի մնացել մտիկ ընող: Այն ատեն վարպետը փակեց դաշնամուրի փեղկը և ժպիտով մը ըսաւ ինձ սիրտախօտոր երեոյթով մը. «Միշտ ասանկ է... կ'ինս չի սիրեր նուագը»: Գիտես մի բան մը որ աւելի սոսկալի ըլլայ. կ'ին անուը մէկը որ քու արուեստդ չի սիրեր... տէհ, դնա, հաւատա ինձ, սիրելիս, չըլլայ որ ամուսնանաս, երբ մենակ ևս, ազատ ևս, գիացիր արժէքը և լաւ պահէ առանձնութիւնդ, մէնութիւնդ և ազատութիւնդ:

Բանաստեղծք.

Է՛հ, դուն գիւրին-գիւրին կը խօսիս կոր մշնութեան վրայ, բարեկամս: Հիմի թող չուտ մը կ'լլեմ երթամ, եթէ քեզ աշխատելու միաքեր գտն սա քու կրակարանիդ քովիկը որ մարերու վրայ է. դու պիտի կրնաս մեղմօրէն հետեւել քու զաղափարներուդ՝ առանց շղջալու շուրջդ կղզիացումը այնքան սյնքան ընդարձակ, այնքան պարապ միջնորտոր, ուր ներշնչումը կը շողիանայ և կը ցրուի... Մնաց որ թող թողունք աշխատանքի ժամուն մէնութիւնը. բայց ձանձրութեան, վնասանքի վայրկեաններ կան երբ մարդ ինք իւր և իւր արուեստի մասին կը կասկածի. այն ատենը, ահա, մարդ կարծեօք երջանիկ ըլլալու

է երբ կը գտնէ իւր քով, սիրող սիրտ մը միշտ հաւատարիմ և պատրաստ, որու մէջ կարող է մարդ զեղուլ իւր վիշտն, առանց վախնալու որ այդպիսով մարդ մի վստահութիւն մի անայլայլելի հրայրք կը խուզէ... Հապա տղան... Պէպէկի ան ժպիտը, որ միշտ կը փթթի և առանց պատճառի, արդեօք լաւագոյն վերերիտասարգացումը չէ որ կրնայ մարդ ունենալ: Ա՛հ շատ անգամ մտածել ևմ այս մասին. մեզ արուեստագէտներուս համար, որ մեծամիտ ենք միշտ, ինչպէս բոլոր յաջողութիւն գրտնելով ապրողները, սա մակերեւոյթային անկայուն ծածանուտ յարգանքով—յարգանք որին հասարակօրէն համբաւ կ'ըսեն—այո մանաւանդ մեզ համար մանուկները անհրաժեշտ են. երևիաները միայն կրնան մեզ տալ ծերանալուն միխթարութիւնը: Տղան է որ կը վաստկի բոլոր ինչ որ մենք կը կորսնցնենք. երբ մարդ ինք չաջողի, ինքնին կ'ըսէ «ան պիտի աջողի» և ամեն օր որ մարդուս մագերը թափին մարդ կ'ուրախանայ տեսնելով որ անոնք գանգրիկ, ոսկեփայլ և կենսալի կը բուսնեն խարտեաչ պզտիկ զլիւս մը վրան որ իրենն է:

Նկարիչը

Ա՛հ բանաստեղծ, բանաստեղծ. մտածեցիր անգեօք նաև բոլոր այն կտուցով մը ջամբուելիքը զոր հարկէ գնել գրչին կամ վրձինին ծայրը սնուցանելու համար թուխս մը...

Բանաստեղծը

Վերջապէս, ինչ կ'ուզես բռէ, արուեստագէտը եղած է ընդունենք ապրելու համար. և սա այնքան ճշմարիտ է որ, մեզմէ անոնք որ չեն ամուսնանար, պինդ մը կը կապուին պատահական ընտանիքի մը ճիշտ սա կարգ մը ճանապարհորդներու պէս, որոնք սեպհական բնակարան մը չունենալէն զգուած, յոգնած վերջ ի վերջոյ հիւրանոցի սենեակի մը մէջ կը տեղաւորուին և կեանքի մնացած օրերը կ'անցունեն սա սովորական դարձած ծանուցումին տակ

«Հոս ամսով եւ օրով բնակարան կը վարձուի»:

Նկարիչը

Այդպիսիները խելք չունին. դոքա ամուսնացածութեան բոլոր ձանձրոյթը կ'ընդունին այդպէսով և բնաւ չի պիտի դիտնան անոր քաղցրութիւնները:

Բանաստեղծը

Ուրեմն կը խոստովանին վերջապէս որ ամուսնութեան մէջ ինչ ալ ըլլայ քանի մը քաղցրութիւններ կան:

Նկարիչը տեղէն ելաւ փոխանակ պատասխանելու և դնաց իւր գծագրութիւններու, ուրուագրերու մէջէն հանեց բոլորովին ճմրթկած ձեռագիր մը և վերագրանալով ընկերոջ մօտ.

«Մենք, սիրելիս, կարող ենք այս կերպ երկար վիճել առանց կարենալ գիրար համոզելու... բայց քանի որ դու հակառակ իմ հայեցողութիւններուս, որոշած ևս ամուսնանալը փորձել, ահա քեզ պզտիկ գրութիւն մը զոր կը յանձնարարեմ քեզ կարդալ: Սա գրուած է ճշմարիտ որ լաւ. ամուսնացած և իւր կնոջմով բոլորովին սիրահար իւր տանը մէջ ամենայնիւ երջանիկ մարդու մը ձեռքով, որ իւր կեանքը արուեստագէտներու մէջ անցունելու պատենութիւնը ունենալով, իբր հետաքրքիր անցորդ, գրօսնելու համար ուրուագծեր է քանի մը հատ սա քեզ նկարագրածս ընտանիքներէն: Այս գրքին առաջին տողէն մինչև վերջինը բոլորովին ճշմարիտ է, անքան ճշմարիտ, որ հեղինակը երբէք չի համաձայնեցաւ հրատարակել զայն: Կարդա՛ անգամ մը, և երբ կարդաս լմնցնես, արի ինձ գտնել նորէն, կը կարծեմ որ այն ատեն զաղափարներդ պիտի փոխես»...

Բանաստեղծը առաւ տարաւ տետրակը, բայց ցանկացուած խնամքով չի պահեց զայն, որովհետև ևս կրցայ քանի մը երևս փրցնել այն փոքր գրքէն և առանց քաշուելու կը նուիրեմ զայն հասարակութեան:

Տ Ի Կ Ի Ն Հ Է Յ Ս Թ Պ Ի Զ

Ասի, անտարակոյս, արուեստագէտի մը հետ ամուսնանալու համար չէր ծնուած, մանաւանդ սա սոսկալի, ազմկալի, հրայրքով լի, զեղուն տղին հետ որ կ'ապրէր քիթը բարձր, ընչացքը տնկած, արհամարհելով ամեն կերպ քաղքենի աւելորդապաշտութիւն ընդունուած պատշաճութիւն և յոխորտանօք կը կրէր սա այլանդակ Հէօսթպիզ անունը: Ինչպէս, որպիսի հրաշքով այն՝ ակնավաճառի մը խանութին մէջ՝ ոսկի շղթայներու շարքին, թելի վրայ՝ անցած մատանիներուն կռնակը նստած կինը միջոց կրցաւ գտնել այն բանաստեղծը հրապուրելու:

Երեւակայեցէք գրասենեակի կնոջ մը շնորքը. անորոջ դիմապիծեր, միշտ ժպտող և պաղ աչքեր, հաճոյալիտար երևս մը տափակ, բնաւ իսկական պերճութիւն, բայց տեսակ մը սէր

ամեն փայտուն և շառաչուկի, զոր, անշուշտ իւր հօր խանութին առաջըը նստելով նստելով ունեցել էր, աստի իւր ճաշակը, որ միշտ կը փնտռէր կերպ կերպ սնդուսէ հանգրիճներ, գօտիներ և օղեր. ասով մէկտեղ վարսոյարդարին ձեռքով շտուկուած և զողմէթիքով ողորկուած մազեր իւր պզտիկ յամառ ճակտին նեղութեան վրայ, ուր կնճիռներու բացակայութիւնը մատաղատիութենէ աւելի գողափարններու կատարեալ ոչնչութիւն մը կ'արտայայտէր:

Ահա այսպէս, Հէօսթպիզ սիրեց զանի, կնութեան խընդրեց, և որովհետև քիչ մ'ալ ստակ ունէր, դժուար չեղաւ կարգուելու գործը:

Այս ամուսնութեան մէջ ինչ որ ամենէն աւելի հաճոյական կը զանէր, նա, կինը, հեղինակի մը հետ կարգուած ըլլալն էր, մի յայտնի մարդ որ իրեն պիտի տար ուզածին չափ թատրոնի տոմսակ: Գալով տղուն, կարծեմ թէ վերջիվերջոյ խանութի սա կեղծ պերճութիւնը, սա յաւակնոտ ձեռուկերպերը, կոճկուած բերանը և պզտի մատը միշտ օղի մէջ բարձր բռնկները շրայուցիր էին զանի իբր փարիզեան ընտիրութեան վերջին խօսքը, վասնզի մեր պարոնը գիւղը ծնած էր, և իսկպէս, չի նայած որ սրամիտ, միշտ ալ գեղացի մնաց:

Հէօսթպիզ, ընտանեկան կեանքի խաղալիկ երջանկութենէն, որմէ զրկուած էր այնքան երկար ասին—փորձուելով չի զիմացաւ և երկու տարի բարեկամներէ հետու անցուց, գիւղը և քաղքի արուարձաններու անկիւն մի պահուրտելով, միշտ Բարիզին մօտիկ սակայն, Բարիզին որ կը խռովէր զինքը և որուն տկարացած մթնոլորտին կը ցանկար ճիշտ սա կարգ մը հիւանդներու պէս որոնց կը պատուիրուի ծովի օդը շնչել, բայց որոնք, չափազանց տկար լինելով տանել կրնալու համար զայն, կը գան քանի մը մղոն հեռուէն շնչելու համար: Հեռուէն հեռու կ'երեւէր իւր անունը լրագրի, հանդէսի մը մէջ, յօդուածի մը տակ, բայց արդէն չի կար այլ ևս սճի այն թարմութիւնը, պերճախօսութեան ճախրանքը որով յայտնի եղած էր: Մինք կը մտածէինք թէ «նա կարգուելէ իվեր չափազանց երջանիկ է... և իւր երջանկութիւնն է որ կ'աւրէ կոր զինքը»:

Յետոյ, օր մը, վերստին եկաւ մեր մէջ և մինք լաւ տեսանք որ նա երջանիկ չ'էր: Թալկացած դէմքը, յաւիտենական զրգոռածութենէ առաջ եկած քաշուած զիմազիծերը, Չղային ցաւկոտութեան մը մէջ փոքրացած, իւր կերպերուն յախուռնութիւնը, իւր գեղեցիկ ծիծաղը՝ արդէն պաղ, բոլորովին ուրիշ մարդ մը կը ներկայայնէին: Չափազանց հպարտ՝ խաբուած

ըլլալը ըսելու համար, չէր գտնուածք. բայց հին բարեկամները որոնց կը բանար իր տունը, շուտով համոզուեցան որ նա ամուսնութիւններու ամենայիմարով կարգուած էր և թէ անոր կեանքը այնուհետև ալ կեանք չէր: Ասոր հակառակ տիկին Հէօսթպիզ մեզ երեցաւ ճիշտ այնպէս, ինչպէս տեսել էիք զինքը երկու տարի առաջ, եկեղեցին, աւանդատան մէջ պսակի օրը: Այն միևնոյն արէվըլուկ ծիծաղը հանդարտ, միևնոյն դէմքը օժանական հագուստ հագած խանութպանուհիի, միայն հաւասարակչուութիւն մը ձեռք բերել էր: Հիմի խօսել սովորել էր: Արուեստագիտական վիճարանութեանց միջոցին երբ Հէօսթպիզ հրայրքով կը նետուէր առաջ իւր բացարձակ դատումներով, խիստ տնարգանքով կամ կոյր խանդավառութիւնով մէկ մ'ալ նայես կնոջ կեղծ, անհամ, անոյշ ձայնը յանկարծ կ'ընդամիջէր զինքը ստիպելով զանի մտիկ ընել որևէ յիմար դատողութիւն մը միշտ անկապ և նիւթէն դուրս:

Սա, նեղացած, այլայլած, գթութիւն հայցող ակնարկով մի կը նայէր մեզ և կը փորձէր վերսկսել ընդհատուած խօսակցութիւնը: Ապա, սնդոզ, յամառ և իսկական հակասութեան առջև, այս փքուած և հովուուոյցի պէս դատարկ թռչնիկի պզգտիկ ուղեղին յիմարութեանը առջև կը լռէր խեղճը, համակերպած, թողով որ երթայ մինչև ծայրը: Բայց այս համրութիւնը կը կատաղեցնէր տիկինը և անոր համար ամենէն տնարգականը և չարժեցնողը կ'երեար, իւր թթուանոյշ ձայնը ճիշտ կ'ըլլար, կը բարձրանար, կը ծակէր, կը բզզար ճանճի խուռկով մը մինչև որ էրիկը ինքն ալ կատաղած, ալ կը պայթէր վայրագ և սոսկալի:

Այս անընդհատ կռիւններէն յետոյ, որոնք արտասուքով կը վերջանային, կինը դուրս կը դար հանգչած, աւելի ևս թարմացած, անձրեւէն ոռոգուած մարգագետնի մը պէս. մարզը, իւրաքանչիւր անգամու ջարդուփշուր եղած, տենդոտ, և անկարող որևէ աշխատանքի: Իրիկուն մը ներկայ էի էրիկ կընկան այս սրտակտուր տեսարանին և տիկին Հէօսթպիզ յազթական կերպով մը սեղանէն ելլելու պահուն էր, տեսայ էրկանը վէճէն այլայլած երեսին վրայ անարգանքի և ցասման այնպիսի մի արտայայտութիւն զոր բառերով կարելի չէ ըսել: Կարմրած, աչերը լիք արտասուքով, բերանը մի հեղնական և սրտձմիկի ժպիտով ծոմած, երբոր, պտտիկ կինը ելաւ գնաց, չոր, կտորոզ, կտորոզ հարուածով մը դուռը փակելով ետևէն, նա, իր վարժապետին ետևէն տնազող չարածճի մը պէս, կատաղութիւնով և ցաւով լիք, մի դիւային տնազ ըրաւ: Եւ, վայրկեան մը յետոյ, մտիկ կուտայի նորա յուզումէն

կտրտուող ձայնին որ կ'ըսէր «ահ, եթէ տղան չ'ըլլար մէջ տեղ, ինչպէս պիտի առնէի քալէի»:

Այն, տղայ մ'ուռնէին, սքանչելի հոյակապ և ազտի մէջ կտրտուած տղայ մը, որ քաչ կուգար ամեն ծակ ու ծուկ, կը խաղար իրմէն մեծ շուներու, պարտէզը հողին և մամուկներու հետ: Մայրը անոր վրան որ կը նայէր, ապահովուելու համար էր որ տղան աղտոտ էր և կը ցաւէր որ անտնտուի քով չէր գրած դանի: Արդարև կիներ, պահել էր միշտ իւր՝ գրասենեակի քաղքենուհոյ աւանդութիւնները և իրենց անկարգութեան մէջ կորած տունը, ուր նա օրնիրուն կը քսքսէր ու կը քաչքը՝ չէր զարգարուն շրջազգեստներ և ապշեցուցիչ գլխարկներ, յիշել կուտար սա իրեն սրտին սիրածը՝ խանութի կոնակի անօդ, աղտէն սեցած, սենեակներէն մին, ուր, վաճառուհին կ'անցնի շուտով մը, առուծախի երկու գործողութեանց միջոցին, անտիպոց սեղանի մը վրայ, ածապարքով մ'ուտելու համար, գէշ պատրտատուած կերակուր մը, ականջն ալ միշտ ուշադիր դռան զանգակին: Այս ընկերութեան մէջ մէկ բան կայ որ հաշուի կ'առնուի, այդ է փողոցը, ուրկէ կ'անցնին՝ գնորդները, վայրաջրջիկները, և արձակուրդի մէջ գտնուած ժողովուրդին խուժումը որով կը ծածկուին՝ կիրակի օրեր, փողոցին մայթերն ու յատակը: Ասոր համար, տեսնել ինչպէս կը ձանձրանար դժբաղդ կիներ, ինչ սրտացաւով կը մտաբերէր իւր Փարիզը. Հէօսթպիզն ալ ընդհակառակը, միտքն առողջ պահելու համար դաշտերուն պէտք ունէր: Բարիզը գլխապտոյտներ կը պատճառէր իրեն դաւառացի նորեկի մը պէս: Կիներ չէր հասկնալ դայս և կը գանգատէր իւր աքսորին համար: Զբօսնելու համար հին բարեկամները կը հրաւիրէր: Այն ատեն երբ էրիկը տունը չ'ըլլար, կիները, անոր ձեռագիրները, յիշատակները և առհասարակ թղթերը խառնշտկելով ժամանակ կ'անցունէին:

«Նայէ, նաէ, սիրելիս, ինչ զարմանալի է... կը փակուի սենեակին մէջ, դուռը կը գոցէ աս բաները զրելու համար. կ'ելլէ կը քալէ վեր վար, մենակ, ինքիբն կը խօսի. բայց, ամեն բանէ առաջ, ես անոր այս բոլոր ըրածէն բան մը չեմ հասկնար»:

Այսպէս անվերջ սրտացաւութիւններ և անձկալի վերագարձ անցեալի մասին:

«Ո՛հ, եթէ գիտցել էի... Երբ կը մտածեմ թէ ևս կարճ էի կարգուիլ ճերմակի վաճառական Օպէռթօ և Ֆափօսին հետ»...

Նա միշտ այս երկու ընկերները միասին կը մտաբերէր, կարծես թէ նոցա վաճառատունն էր որին հետ պիտի պսակուէր:

էրկանը ներկայութեան ալ շատ քաջուել չի կար: Կը խանդաբէր միշտ և լայնարձակ նստել տեղաւորուելով անոր աշխատանոցին մէջ իսկ, ծոյլ, անգործ կնոջ բարձրաձայն անմիտ խօսակցութիւնովը չէր ամչնար ըսել իւր արհամարանքը այդ այնպէս քիչ վաստկեցնող արհեստին համար. արհեստ մը, որուն ամենէն աշխատալի ժամերը առ երևոյթս՝ քմահաճ անգործութեան մը կը նմանին:

Հէօսթպիզի միտքէն կ'անցնէր մերթ փախչիլ այս կացութենէն, որ, ալ ամեն օր առաւել ևս շարաշուք և աղէտալի կըլլար: Կը վազէր Բարիզ կուզար հիրանոցը մի պըզտիկ սենեակ կը վարձէր և ինք զինք ամուրի կ'երեւակայէր: Բայց մէկմալ յանկարծ տղայն միտքը կուզար և միանգամ ալ զանի համբուրելու խօլական բաղձանք է բռնուած, այն օրուան իրիկունն իսկ, նորէն կը դառնար գիւղ: Այս կերպ պարագայներու մէջ, տեղի չի տալու համար վերագործի կուռի և ծանր խօսքերու տեսարանի մը, բարեկամ մը հետ առած կուզար և կը նայէր քանի հնար է երկայն պահել զանի հոն: Հէնց որ կնոջ հետ դէմուդէմ լինելէ կը դազրէր, իւր գեղեցիկ իմացականութիւնը կը վերարթննար, և պարապմունքի իւր ծրագիրները նայիս մի առ մի, հեաղհետէ կը վերածնէին սրտին մէջ: Բայց ինչ սրտապատուութիւն երբ հիւրերը կը մեկնէին. նա կը ցանկար իւր ձանձրոյթի բոլոր ուժովը կառչիլ անոնց փեշերուն: Ի՞նչ տխրութեամբ կ'ընկերանար նա մեզ մինչև արուարձանի պզտիկ հանրակառքի կայարանը, որ մեզ, վերստին յետ Բարիզ կը տանէր: Եւ մեր մեկնելէն յետոյ, ինչպէս խեղճը հանգարտ, կամաց, կուզը կոր, թեւերը կախ, ականջ տալով հեռացող անիւներուն, կը վերագառնար փոշելից ձառքէն: Բանն այն է որ կնոջ հետ գլուխ գլխու գալը ալ ևս անտանելի դարձած էր. և այդ հարկէն ազատ մնալու համար, մտածեց որ լաւ է տունը միշտ հիւրեր ունենալ: Իւր վհատութիւնը և անհողութիւնը միացած իւր բարի սրտին, մէկ մ'ալ նայիս որքան քաղցած զրագէտնէր կան գլխուն ժողովց զրականութեան խել մը գրչակներ ստոր ծառայողներ, ծոյլեր, բախուկներ, ցնորամիտներ, ևկան լաւ մը տեղաւորուեցան տան մէջ: Եւ որովհետև կինը շատ յիմար էր և անկարող դատելու, կը հիանար անոնց վրայ, իւր էրկանմէ բարձր կը գտնէր զանոնք անոր համար որ սոքա աւելի բարձր կը պոռային: Այսպէս, կեանք կ'անցնէր, պարապ անամէջ վիճաբանութիւններով: Նայիս, ծակ բառերու մի ժխոր, շտապ, և քամի մաղել, և խեղճ Հէօսթպիզ, այս բոլոր աղմուկի մէջ անչարժ, անձայն ուսերը վեր առնելով և ժպտելով մը կը բաւակոսնանար: Երբևմն սակայն, երբ ալ ան-

վերջանալի եղած ճաշկերոյթէ մը յետոյ, բոլոր այս հիւրերը, արմուռնկները փոռցքի վրայ տարածած կրբ ալ կը մոլորէին երկնի, անհատնում, խեղդող վայրաբանութիւններու մէջ, հեղձուցիչ ինչպէս իրենց ծխափողերուն մուխ ու մառախուխը. մի անհուն զզուանքով կը բռնուէր, և հնար չ'ունենալով ճամբու զնել բոլոր այս ողորմելիները ինք կ'ելլէր կ'երթար և ութ օր չ'էր վերադառնար:

«Տունս լիք է անխելքներով, կ'ըսէր ինձ օր մը, ալ չ'եմ համաձակէր տուն դառնալ»: Մի անգամ այս ճամբայն թափուած, նա այլ և չէր գրէր: Իւր անունը հազիւ կը լսուէր. և հարստութիւնն ալ աւարի տրուածի պէս կ'երթար այնպէս շուրջը միշտ իրեն մեկնուած ձեռքերու մէջ և այս անտուն մարդիկը հիւրասիրելու անհատնում ծախքերու:

Երկար ժամանակ էր որ զիրար տեսած չ'ունէինք, մէկ մ'ալ առտու մը առմասկ մը ստացայ, գրուած իւր սիրելի և մանրիկ գիրով, որ երբեմն այնքան կորովի սեղմ, այժմ դողդոջ և վարսնոտ դարձել էր:

«Բարիդ կնք, եկուր ինձ տեսնել, կը ձանձրանամ»: Գնացի Պաթինեօլ և գտայ զինքը տխրաբոյր բնակարանի մը մէջ կնոջ, տղուն և շուներուն հետ: Անկարգութիւնը գիւղը կզածին պէս լայն ասպարէզ չի կրնալով ունենալ այս նեղուածքին մէջ, աւելի նողկալի կ'երևար: Եւ երբ որ տղայն շուները առած պղզտիկ սենեակներէն մէկէն միւսը կ'ելլէին. Հէօսթպիդ, հիւանդ պառկած, երեսը պատին դարձուցած էր լուր ուժասպառութեան վիճակի մը մէջ: Կինը միշտ հագուած միշտ անայլայլ, հազիւ ուշադրութիւն կը դարձնէր անոր: «Չեմ գիտեր ինչ ունի ըսաւ ինձ կինը, անհոգ մի շարժուձեւով» (geste). Իսկ Հէօսթպիդ զիս տեսնելով, վայրկեան մը զուարթացաւ, և բոպէ մը խնդաց իւր բարի ժպիտով, բայց իսկոյն մարեցաւ ամեն բան: Եւ որովհետև Բարիդ ալ պահել էին իրենց գիւղի սովորութիւնները նայիս, մէկ մ'ալ նախաձաշի ժամուն էր, երբ եկաւ, այս՝ ալ անձկութեան մէջ գլորած տունը, պղտիկ, տազ մարդ մը հինումին հագուստներուն մէջ տածան ու ռնկող մի հացկատակ և զոր տան մէջ կը կոչեն «Բոիւտօն կարգացած մարդը»: Այսպէս ահա, Հէօսթպիդ կը ներկայայնէր զանի ամենուն և որու իսկական անունը անկասկած որ բնաւ գիտցած չ'ունէր: Երբ կը հարցնէին անոր «սա ո՞վ է», նա կը պատասխանէր համոզուած շեշտով, «ճ, շատ քաջ տղայ մը, որ շատ կարգացել է Բոիւտօնը»: Թէև ըստ երևոյթին բնաւ այնպէս չէր երևար, որովհետև բոլոր սրամտութիւնը՝ սեղանի միջոցին՝ երևան կը բերէր սոսիմը պակասութիւնը կամ խորովածին լաւ չեփած

ըլլալ ըսելու համար: Այդ օր, մեր Բուխտօն շատ կարգադասած մարդը յայտարարեց որ նախաճաշը շատ անպիտան էր, ինչ որ արգելք չ'հղաւ որ ինք մինակ ամբողջին կէսը կլլեց ազուտորիկ մը:

Որքան, ինչպէս երկար անհասնում և արուր թուեցաւ ինձ այս նախաճաշը հիւանդին զլխուն վերև կինը կը շաղա-կրատէր՝ տղին ոսին զլխուն հարուած մը, շունին ոսկոր մը և փիլիսոփային ալ ժպիտ մը տալով: Հէօսթպիզ և ոչ մի անդամ՝ դարձաւ դէպի մեզ, չի նայած որ չէր քնանար: Չեմ կրնար ըսել թէ կը մտածէր... Սիբելի և կտրիճ տղայ, այս փյուն, անընդամէջ, շարունակ կոխներու մէջ իւր կորովի բնութեան լծակը կտորել էր. և սկսել էր արդէն մեռնիլ: Այս լոթի հոգե-վարքը որ աւելի կեանքէ հրաժարում էր, տեկց քանի մ'ամիս: Օր մ'ալ տիկին Հէօսթպիզ այրի մնաց: Այն ատեն, որովհետև արցունքը չէին խաւարած անոր աչքերը և նա միշտ խնամքով կ'ողորկէր կը շտկէր մազերը, և Օպէնթօ և Ֆաժօն դեռ արա-մադիր, ամուսնացաւ Օպէնթօ և Ֆաժօնին հետ: Ո՛վ գիտէ թեր-ևս Օպէնթօյին, գուցէ Ֆաժօյին, կրնայ ըլլալ նաև երկուսին հետ միանգամայն: Բանն այն է որ նա կրցաւ վերսկսիլ այն կեանքը որուն համար ստեղծուած էր, զիւրին շաղակրատու-թիւնը և յաւիտենական ժպիտը գրասենեակի կնոջ:

Ս Ի Ր Ո Յ Հ Ա Ի Ա Տ Ա Մ Ք Ը

Նա միշտ երազել էր ասի, բանաստեղծի մը կինը լինիլ... բայց նորա փառասիրած այդ վիպական և տենդոտ կեանքին հակառակ անողոր ճակատագիրը այնպէս բերաւ, որ նորա հա-մար պստիկ երջանկութիւն մը կաղմեց կարգելով զանի Օթէ-օյլի հարուստ հասարուի մը հետ: Սիրով և քաղցրաբարոյ, քիչ մը չափազանց տարուօք՝ կնոջ բաղդատամբը, միակ մոլութիւն մ'ունէր—բոլորովին անվնաս և հանդատացուցիչ—այդ էր, պար-տիզպանութեան սէր: Պատուական մարդս, սղոցը ձեռքը, բո-լոր ժամանակը կ'անցնէր ճիւղահատելով և խնամելով վարդե-րու մի հիանալի հաւաքածոյ, տաքայնելով ջերոցը և ոտոգելով կողովները, և կարծեմ որ, չիտակը, պիտի համաձայնիք որ ա-սանկ պզտիկ խեղճ սրտի մը համար որ իդէպի քաղց ունի, այս բանի մէջ բաւականաչափ ճարակ չի կայ: Չի նայելով որ այսպէս, սակայն տաս տարի նա բռնեց իւր սիրտը այնպէս չի-տակ և միակերպ որպէս իւր էրկան պարտէզին նրբօրէն աւա-զտած ուղիները: Եւ նա հետեցաւ իր էրկան քայլ առ քայլ, համակերպող ճարձրոյթով մտիկ ընելով նորա միշտ շարժման

մէջ եզող մկրտաներուն ջղազրդիւ չբէքոյը, կամ աղմուկը միօրինակ և անվերջ անձրեւին որ կը թափուէր անոր ռոգզիջնէրու բերնէն թաւախիտ տունկերուն վրայ: Այս կատաղի պարտիզպանը ինչպէս տունկերուն միննոյն և իւր կնոջ համար ալ այն մանր փութկոտ հոգացողութիւնն ունէր: Իր սրահին մէջ որ լցուցած էր փունջերով, շարունակ կը չափէր, կը նայէր տաքէն ու պաղին աստիճանը և իւր կնոջ համար կը վախնար ապրիլին սառոյցէն և մարտին արեւէն: Եւ որովհետեւ այս սընտուկներու մէջ հասած տունկերը որոշեալ ժամանակներն ներս ու դուրս կը հանուին զանի մի կերպը մեթօղով ապրիլ կուտային. աչքերը յառած օդաչափի և լուսնի զանազանութեանց վրայ:

Այսպէս, կինը երկար ատեն կողակցական պարտիզի չորս պատին մէջ բռնուած գլեմատիտի տունկի մը պէս անմեղ, բայց միշտ ներքնապէս թուչկով դէպի այլ նուազ կանոնաւոր պարտէզներ, անխնամ, ուր վարդենիները իրենց բոլոր ճիւղերը անխափր կ'երկարին, ուր հին ու խօշ տունկեր յնորակումն անձանօթ ծաղիկներով բնանաւոր, աւելի տաք արիւ մը տակ ազատ՝ ծառերէն ալ բարձր կ'ելլէն: Այս կերպ պարտէզներ մարդ՝ բանաստեղծներու գրքերուն մէջ միայն կը գտնէ. ուստի նա, պարտիզպանէն դադանի՝ շատ մը ռտանաւորներ կը կարգար, իւր պարտիզպանէն որ, ապաքէն բանաստեղծութիւն ըլլալով օրայոցի երկտող ռարաւորներ գիտէր սա պէս:

Երբ Սուրբ-Մեդադին անձրեւ գայ,
Վերջն ալ քառսուն օր անձրեւ կայ:
(Quand il pleut à la Saint-Medad,
Il pleut quarante jours plus tard.)

Առանց ընտրելու, ազահարար, խեղճ կինը կը լափէր ամենէն գէշ քերթուածները, բաւական որ անոնց մէջ «սիրոյ» և «հրայրքի» ռտանաւորներ գտնուէին: Ապա գիրքը փակած, երկար ժամեր երազելով և հառաչելով կ'անցունէր: «Ահա էրիկը որ ինձ կը յորմարէր»:

Այս ամենը շատ հաւանականաբար սոսկական յանկութեան վիճակին մէջ մնացած պիտի ըլլար, եթէ՝ երեսուն տարեկանի սա սոսկալի բոպէին, բոպէ որ կնոջ առաքինութեան համար վճռողական բոպէն է, ինչպէս կէսօրը օրուան գեղեցկութեան համար վճռողական ժամն է, սա անգլիմադրելի Ամօռիին հանդիպած չ'ըլլար: Ամօռին սալօնի բանաստեղծ մ'է. մին սա տաք գլուխներուն, որ, ամեն իրիկուն ժամը 10-էն 12, հագած իրենց ֆուսկը և մարգարտագորշ ձեռնոցները, կ'երթան

ընկերութեան մէջ և ջաներու լոյսին տակ, մեղամաղձօրէն կրթնած վառարանի մարմարին կը պատմեն իրենց սիրային սքանչացումները, տխրանուշութիւնները, յախրանքը, և յուսախաբութիւնները. մինչ կիները, պարահանդէսի արդուզարդով կը որ շրջաններ կազմած, մտիկ կ'ընեն զանի իրենց հողմահարներու կոնակէն:

Այս Ամօռին, իւր տեսակի մէջ գազափարական տիպն է որ կայ Կոչլակարի ճակատագրական գլուխ մը, խոր ընկած աչքեր, թալուկ երես, ոռուսական ձեով կտրած մազեր, լաւ մը օծուած հունկարական բօմատով: Սա մին է այն կեանքէ յուսահատածներէն—կիներու սիրածը—միշտ վերջին նորածեղութեամբ հագուած պաշած քնարերգական, մը որուն մէջ ներշնչումին անկարգութիւնը յայտնի կ'ըլլայ փողկապին քիչ մը անհոգ և թոյլ կապուածքէն: Ասոր համար է որ տեսնելու էր ինչ յաջողութիւն, երբ կանչկոտող ձայնովը կը սկսի իւր «Սիրոյ հաւատամբը» անուն քերթուածէն մի հատուած. սա մէկ հատը մանաւանդ որ հետեւեալ ապշեցուցիչ ոտանաւորով կը վերջանայ.

«Ին կը հաւատամ Սիրոյ, ինչպէս կը հաւատամ Ասուծո՞յ»...

Դիտեցէք, որ ևս խորապէս կը կասկածիմ այս բարիպտուղին Աստուծոյ և մնացեալի մասին որ և է հոգ ունենալու մասին. բայց կիները այնքան մօտէն չեն նայիր. և բառերու կը պշուենութենէն զիւրաւ կը բռնուին. և իւրաքանչիւր անգամ երբ Ամօռին արտասանէ իւր «Սիրոյ հաւատամբը», ապահովապէս պիտի տեսնէք սրահին բոլոր շրջան ու կարգերուն մէջ պղտիկ վարդադոյն բերաններ որ կը բացուին, կը նուիրուին զպացումի այս զիւրին կարթին: Մէկ մը մտածեցէք. այնքան զեղեցիկ ընչացքով բանաստեղծ մը որ սիրոյ կը հաւատայ այնպէս ինչպէս Աստուծոյ... Մեր պարտիզպանին կիներ չի կրցաւ զիմանալ. երեք նիստէն յետոյ յաղթարուած էր. միայն, որովհետեւ այս եղերգական ընոյթին խմորին մէջ կար պարկեշտ խմորին և երկաթէ բան մը, չուզեց հասարակ և ստոր մեղանչել մը. մնաց որ մեր բանաստեղծը իւր «հաւատամբի» մէջ կը յայտարարէր որ միակ և մի կերպ ուխտագրութիւն կը հասկնար, այն որ բարձր ի գլուխ և համարձակ կ'երթայ զէպի նպատակը հակառակ ընկերութեան և անոր օրէնքներուն: Ուստի «սիրոյ հաւատամբ»-ը իրեն առաջնորդ բռնած, երիտասարդ կիներ յանկարծ փախու Օթէօյլի պարտէզէն և եկաւ նետուիլ բանաստեղծին դիրկը:

—Ալ չեմ կարող ապրիլ այն մարդուն հետ. տար զիս: Այսպիսի պարագայներու մէջ էրիկը միշտ «այն մարդը» կըսուի, մինչև իսկ երբ նա պարտիզպանութեամբ զբաղած է:

Ամօռին ապշուածեան մի վայրկեան անցուցաւ Խնչպէս, չնոր սատանայ, երևակայել որ երեսուն տարու մի պզտիկ մայր կարող է լուրջ բանի տեղ դնել սիրոյ մասին քերթուած մը և տառական ճշտութեամբ հետեւիլ անոր: Սակայն Ամօռի այս ամենալաւ ընդունելութիւն ըրաւ, և որովհետև Օթէօյլի պզտիկ պարտէզին մէջ կինը միշտ պահել էր իւր թարմութիւնը և սիրուն էր. առաւ զանի առանց երկար բարակի: Առաջի օրերը հիւանալի կերպով անցան: Էրկան հետապնդումէն կը վախնային հարկ եղաւ կեղծ անուաներու տակ մտնել, հիւրանոցները փոխել. ապրիլ անհնարին թաղերու մէջ. Բարիզի արուարձանները, և շրջափակի ճամբայները: Երեկոյեան փախչելու պէս դուրս կ'ելլէին, և ամրոցներու կողմը զգայասիրական պտոյտներով կը ձեմէին: Ո՛վ զօրութիւն վիպականի, որքան վախը կ'աւելնար որքան աւելի զգոյշութիւն, վարագոյրներ, վարքաշած քօղեր հարկ կ'ըլլար այնքան իւր բանաստեղծը աւելի մեծ կ'երեւէր իրեն: Գիշերը կը բանալին իրենց փոքրիկ սենեակի պատուհանը և տեսնելով երկաթուղոյն լամպարներու վրայէն կըլլող աստղերը, կինը ըսել, կրկնել կուտար բանաստեղծին իւր հատուածը

«Ես կը հաւատամ սիրոյ, ինչպէս կը հաւատամ Աստուծոյ».

Եւ սա լաւ էր...

Դժբաղդարար այս ամենը չի տեսց. կնոջ ամուսինը հանգիստ թողաւ զանոնք, Խնչ ընել, փիլիսոփայ էր «այն մարդը»: Տեսնելով որ կնիկը մեկնել է, փակեց իւր ովասիսի կանաչ դուռը և հանդարտ ու խաղաղիկ մը վերսկսած վարդերը խնամելու, երջանիկ մտածելով որ ասոնք գոնէ երկար արմատներով հողին կապուած՝ չ'էին կրնար անանկ մեկնիլ իւր տանէն: Աստին մեր սիրահարները ապահովուած, վերադարձան Փարիզ և իսկոյն երիտասարդ կնոջ անանկ եկաւ թէ իւր բանաստեղծը փոխուած էր: Փախուտը, յանկարծակիի գալու վախը, անհատնում զգուշութիւնները, մէկ խօսքով ըսողը այսպէս բաները որ նորա հրայրքը կ'աւելայնէին, այլ ևս գոյութիւն չ'ունէին: Եւ նա սկսաւ յստակ տեսնել, հասկընալ: Մնաց որ իւրաքանչիւր բոպէ, իրենց պտզիկ ամարարութեան տեղաւորման և քաղքենի կեանքի հանապազօրեայ հաղար մանր մունր բաներու մէջ, մարդը, որուն հետ կ'ապրէր հիմա, լաւ ևս կը ճանչնար: Կտոր մը վեհ դիւցալնական կամ քնքոյզ զգացում ալ որ ունէր, նայիս իւր ռոտանաւորներուն մէջ կը հալէր կ'երթար առանց ատոնցմէ բան մը պահելու իւր անձնական սպառումներու համար: Գձուձ ու փոքրողի, եսասէր, մանաւանդ շատ վնթի ազան, ինչ որ սէրը չի ներեր: Ապա կարել էր իւր ընչացքը և այս ժպտումը

չէր վայելէր իրեն: Ի՞նչ տարբերութիւն ու մթապարար գանգրապեղ գեղեցկին՝ զոր իրիկունը մը տեսած էր ջահեր ու լոյսին տակ իւր «հաւաքաւե՛ր» ըսած տունն՝ և այս օրուանին մէջ: Հիմի իրենց այս միայնակեցութեան քաշուածութեան մէջ, որուն համակերպած էր կնոջ համար, ալ սրբան մոլի անակութիւն որ ունէր մէջ տեղ հանել էր, և այս խելայեղութիւններու (կամ շամբշութիւններու) ամենէն մեծն էր կարծելը, որ, ինք շարունակ հիւանդ է: Արդարեւ, մարդ քանի բարակացաւունցողներուն վրայ մտածէ՝ այնքան ալ կը կարծէ թէ ինքն ալ իրաւամբ ակտաւոր է: Մեր բանաստեղծ Ամօսին շարունակ բուսաջուրեր կը խմէր, Papier Fayard ուլ կը պատառուէր և ժամանակ մ'նկաւ երբ նայիս վառարանին վրայ ամեն տեսակ փոշի, ամեն տեսակ սրուակներ կային:

Կինը լուրջի տեղ դբաւ, գթութեան քոյրի իւր այս գերը անձնուիրութիւնը առնուազն իւր յանցանքին մի կերպ քաւումը և կեանքին նպատակը կ'ըլլար հիմի: Բայց, երկար չի դիմացաւ, և այն խղիւղ սենեակին մէջ, ուր բանաստեղծը շարունակ Ֆլանէլներու մէջ կը պլլուէր, սխաւ մտաբերել իւր պըզտիկ հոտաւէտ պարտէզը և իւր բարի պարտիզպանը զոր կը տեսնէր, հեռուէն, ծառերու և կողմներու խումբերու մէջ, որ իրեն կ'երևար այնքան պարզ, սրտաշարժ անշահասէր, սրբան այս միւսը պահանջկոտ և եսասէր...

Չմեռ մը անցած, զգաց որ նորէն կը սիրէր իւր էրիկը, այս անգամ իրապէս կը սիրէր ոչ՝ սովորութիւն դարձած անձնուիրութեամբ, այլ, ճշմարիտ հարազատ սիրով: Օր մը ելաւ մեղայի մի երկար խանդագին և սիրալու նամակ գրեց անոր: Պատասխան չըստացաւ: Կարելի է թէ կը կարծէր թէ դեռ բաւական պատժուած չէ: Անատեն կինը նամակ-նամակի վրայ զրկեց, խոնարհուելով և պաղատելով որ թոյլ տայ իրեն վերադառնայ, այլապէս լաւադոյն կը սեպէր մեռնիլ քան շարունակել «այն մարդուն» հետ ապրիլ: Ինչ որ հազուադէպ է սա է որ, այն նամակները գրելու համար կը պահուըտէր. անոր համար որ կը կարծէր թէ բանաստեղծը դեռ իրեն սիրահար է և մէկ կողմէն էրկանէն ներում ինչպիսի պահուն միւս կողմէն ալ կը վախնա՛ր որ սա մի խախտութիւն չի հանէ նորէն սաքանալով:

«Երբեք չի պիտի թողու զիս մեկնիլ» կըսէր իւրովի:

Այսպէս, գրելով գրելով, երբ վերջապէս ստացաւ ներում, և պարտիզպանը համաձայնեցաւ վերստին ներս առնուլ զինք— (ձեզ ջըսի՛ որ մարդը փիլիսոփայ էր) կողակցական յարկի տակ այս վերադարձը փախուստի մը բոլոր սղբերգական և խորհրդ-

գաւոր կերպերով եղաւ Եւ այս եղաւ մոլորեալի իւր վերջին վայելքը: Իրիկուն մը, զգուած այս երկուքով միասին կեանքէ, բանաստեղծը, հպարտ իւր վերստին բուսած ընչաքքի մասին և նորէն երբ զնացել էր ընկերութեան մէջ արտասանել իւր «սիրոյ հաւատամքը», կինը փոզոցին ծայրը մի տեղ թաւ մի հին ու մին կառքի մէջ ուր իւր էրիկը կ'սպասէր զինք և այսպէս վերագարձաւ Օթէօյի պզտիկ պարտէզը, ընդ միշտ և իսպառ առողջացած բանաստեղծի մը կնիկը լինելու փառասիրութեանէն...

Իրաւ որ աս մէկն ալ, ճիշմարիտը այնքան քիչ բանաստեղծ էր:

Թ Ռ Ա Ն Ս Թ Է Վ Է Ռ Ի Ն Ը Գ)

Ներկայացումը նոր ըմպած էր: Մինչդեռ հասարակութիւնը զանազան փաւորութիւններու տակ ալէվտելով գուրս կը թափուէր թատրոնին լայն մայթին վրայ, քանի մը բարեկամները, որոնցմէ էի և ես, կ'սպասէինք բանաստեղծը՝ արուեստագէտներու յատուկ՝ մտից գրան քոյ, չնորհաւարելու համար զանիւ իւր գործը, սակայն, անանկ ահագին յաջողութիւն մը գտած չ'էր:

Հիմիկու հասարակութեան վախկոտ և բանական երեւակայութեան համար շատ խիստ, այս խաղը, թոյլատրեալ ազատութեանց և յարմարագատութեանց սահմանը եղող թատերաբեմի շրջանակէն դուրս կ'ենէր: Խճբժող քննադատութիւնը ըսած էր. «սա թատերախաղ չ'է...» և պուլվառին վրայ քեքեւտողները (ricaneur) հեշտելով խաղը, դեռ քիչ մը առաջ սնկէ զգացած յուզումներուն ոխը կը հանէին կրկնելով ան սքանչելի տաճարները «սու մ'իսկ չի պիտի տան անոր...»: Գալով մեզ, մենք շատ հպարտ էինք որ մեր բարեկամը համարձակել էր ճնշել, յուզել յորձնանկ տալ իւր գեղեցիկ հնչուն յանդերը ոսկի, որ, փեթակէն հեռացող մեղուններու պար մը կը բռնէին

Հոսմ Տիրեր գետի աջ եղերքը Մոնթէ ճանիքօլի և Մոնթէ Վատիքանի մէջ տեղ դետեգերքի թաղը Փռանտթէվէր կը կոչուի, և անոր բնակիչները Փռանտթէվէրի, որոնց մէջ ըստ ընդհանուր կարծիքի կը զբոսնուին զոտ արիւն հոսմայեցիներու սերունդի մնացորդներ և այդ թաղի գեղեցկուհիները շատ համբաւաւոր են: Անմահ Պառնապիտոն Աստուածային Ռաֆաէլի սիրականը և մատոնաներու օրինակը Փռանտթէվէրի մ'էր:

կարծես ջահին շինծու, սպանիչ արևին շուրջը, ներկայացնելով անձնաւորութիւնները իրենց բնական մոծութեամբ, առանց հոգ ընելու մեր ժամանակակից թատրոնի աշխարհայեցողութիւնը, պղտոր դիտակները և չար աչքերը:

Յանկարծ մեքենավարներու, հրդեհաչէջներու, փողկապաճներով պատատուած երևորդ դերասանուհիներու մէջէն մեզ մօտեցաւ բանաստեղծը. երկար հասակը կորացած, մսկոտ կերպով մը վեր առած իւր օձիքը, ցանցառ մօրուքին և ալ ձերմկնալ սկսող մազերուն վրայ: Տխուր երեւոյթ մ'ունէր: Սրահին մէջ անկիւնը կեցած գրագէտներու կեղծ ծամերը, ընարեալ և նուագաթիւ հանդիսականները ծանուցումներուն այնպէս հապճեպով մէջ տեղից վերցուած լինելու պարագայն, որ բաւական ժամանակ չէր թողած ուշադրութիւն գրաւելու, գուշակկը կուտային որ խաղը շատ մը ներկայացումներ պիտի չի կրնար ունենալ: Երբ մարդ քսան տարի աշխատել է և տաղանդի ու տարիքի լիակատար հասունութեան մէջ կը գտնուի, ժողովըրդին սա զքեզ հասկնալ չ'ուզելու համար դիմադրելը յուսահատեցուցիչ, լքուցիչ բան մ'ունի:

Մարդ մինչև կ'ըսէ իւրովի, «թերևս անոնք իրաւունք ունին»: Մարդ կը վախնայ, ալ բան մը չի գիտեր... Մեր ձեռք սեղմումները, մեր ցնծազին կեցցէները, քիչ մը սիրտ կուտան անոր: «Իրան, կը կ'արծէք այդքան լաւ է մի... Իրաւ որ ինչ որ կրնայի ընել՝ ըրի»: Եւ տագնապէն այրող իւր ձեռքերը՝ մերթններուն կատչելով մտահոգութեամբ, արտասուքով լիք աչքերը՝ սրտատու և անկեղծ ակնարկ մը կը փնտռեն: Ճիշտ մտունել չուզող հիւանդին աղերսող մտահոգութեան պէս որ բժիշկին կը հարցնէ. «անանկ չէ, դոքթոր, չուտով չի պիտի մեռնիմ»: Չէ, բանաստեղծ, դու չի պիտի մեռնիս: Օրբէթիները և դիւթախաղերը (feerie) որ հարիւրներով անգամ կը ներկայացուեն և հազարներով հանդիսատեսներ ունին, վաղուց արդէն մոռացուած պիտի ըլլան շատոնց կորած գնացած իրենց ծանուցումներու հետ, մինչդեռ քու գործը պիտի մնայ միշտ կենդանի և երիտասարդ...»

Մէկ մ'ալ մինչդեռ մենք՝ ալ անապատացած մայթին վրայ մեր բանաստեղծին խրախոյս ու սիրտ կուտայինք. քօնթոալթօ, հուժկու, և իտալացու շեշտով հասարակացած ձայն մը, կարծես պայթեցաւ մեր մէջ տեղ:

«Է՛հ, բանաստեղծ, բաւական է, կշտացանք քու ոտանաւորներէ... Գնանք estoufato (սթուֆատօն) ուտելու...» և նայիս խոշոր կնիկ մը, կարմիր քառնակներով պլլուած պղզտիկ գլխարկով մը եկաւ և այնպիսի յախուռն, այնպիսի հրամայող կերպով մը իւր թիւը մեր բարեկամի թիւին

անցուց, որ խեղճը խոսվեցաւ և ամչցածի արտայայտութիւն մ'առաւ:

«Կինս», ըսաւ մեզ. ապա դառնալով դէպի նա վարանոտ ժպիտով մը.

— Ի՞նչ կ'ըսես, եթէ տանէինք միասին բարեկամները, ցուցնելու համար անոնց թէ ինչպէս լաւ կը պատրաստես ըսթուֆաթօն:

Կինը իտալուհիի վարպետ խոհակերուհուց անձնապատու-թեանը մէջ շողորթութուած, իսկոյն համաձայնեցաւ բուսական շնորհալի կերպով մը և մենք հինգս վեցս մէկէն մեկնեցանք անոնց հետ և գնացինք Մոնմարթրի բարձանց վրայ, անոնց բնակարանը, ըսթուֆաթօ ուտելու:

Կը խոստովանիմ որ առանձին մասնաւոր փափաք մ'ունէի արուեստագէտի այս տունը տեսնելու: Մեր բարեկամը կարգուելէն ի վեր շատ քաշուած կ'ապրէր, գրեթէ միշտ գիւղը. բայց անոր կեանքի մասին իմացածէս էր որ կը փորձուէի:

Տասնհինգ տարի մ'առաջ, մեր բանաստեղծը, իւր վիպա-կան տաղանդի եռ ու զեռ եկած վիճոցին էր, Հոմի չրջակայ-քը տեղ մը կը պատահէր մի մեծագեղ աղջկան, և որուն ուժ-գինս սիրահարուած էր: Մառիա-Ասունթան այն ժամանակը կը բնակէր իւր հօր, մօր և խումբ մը քոյր և եղբայրներու հետ Թոանթէվէոի սա այն տուներէն մին, որոնց քուրստելով կ'ան-ցնեն Տիբերը և որոնց պատերուն առջև անպակաս է ձկնորսի նաւակ մը:

Օր մը գեղանի իտալուհին նաւակին վրայ բոբիկ և մարմնին կպչող հագուստով, ուռուցիկ թևերը մինչև ուսը վեր քաշուած, ջրերը վազող ուռկանէ մը օձաձուկեր հանած պահուն էր որ տեսել էր զանի: Ջրալից ուռկանին ծակերէն ձուկերուն թեփուկին փայլիփայլը, ոսկեգոյն գետը, շառագոյն չրջագետը, աղջկան սևագեղ, խորահայեաց, երազող աչքերը, որոնց երա-զանքը չրջապատի արեխն մէջ աւելի կը մթագնէր, զարկին արուեստագէտին սրտին. կարելի է մինչ իսկ քիչ մ'ալ հասա-րակ կերպով՝ ճիշտ ինչպէս նուազներու տպագրիչի մը դարա-կին մէջ ցոյց գրուած ոսմանի մը փորագիր պատկերի մը պէս: Պատահեցաւ որ աղջիկան սիրտը դեռ ազատ էր և ցայն վայր մի խոշոր կարմիրաչէկ դարանակալ ու սմսեղուկ կատու մը միայն սիրած էր. այս կատուն ալ իւր տիրուհոյն պէս մեծ ձկնորս էր և անոր մօտեցող մը տեսածին պէս մազերը կը անկեր:

Նայիս մեր սիրահար բանաստեղծը յաջողեցաւ ընտանե-ցնել թէ անասունը և թէ մարդիկը, և օր մ'ալ Թոանսթէվէոի

Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ պատկուեցաւ գեղունի Ասուն-
թաին հետ և զանի և կատուին հետ միասին առած վերագար-
ձաւ քրանսաւ:

Ահ, խեղճը, հետը բերելու բաներ մ'ալ եթէ կային ան ալ
սա անտեղի արեին ճազայթներէն հստ մը, կտոր մը կապոյտ
երկինք, այն իւր (հոսումայեցու) հսգուտին տարօրինակու-
թիւնը, Տիբերի եղեգներէն, և Բօնթէ-Ռօթթօյի *) տակ փոռած
ուռկանները, մի խօսքով պատկերը իւր շրջանակով:

Այն ատեն չի սիտի ունենար այն սրտակոտոր յուսախա-
բութիւնը զոր զգաց: Երբ Մոնմարթրի տէ վերի բարձունքը,
չորրորդ յարկի պղտիկ բնակարանի մը մէջ տեղաւորուեցան,
նայեց, որ քսինսլինով մը, ուսուցիկ-թուղթիկ շրջադեցասով մը
և Բարիզեան գլխակով մը, որ միշտ իւր ծամերու ծանր հան-
գոյցներու վրան գէշ հաւասարակչիո՞ կատարելագէս անկախ
հովեր կ'աւնէր, անձանխայուցել էին իւր գեղունի Թաւնսթէ-
վէտինան և Բարիզի երկնքի սոսկալի և ոլաղ լոյսին տակ նկա-
տեց, որ իւր կինը անասուն մ'էր, այն, անսրբագրելի անա-
սուն մը: Նորա սև սևագեղ աչերը անոլերջ հանդիսատեսութեան
մը մէջ կորած այլևս ոչ մի գաղափար չէին թաւալեր իրենց
թաւչէ կոհակներու մէջ: Հանդարտիկ մարտողութեան և լոյսի
երջանիկ արտայայտում մը, ուրիշ ոչինչ: Այսուամենայնիւ, կո-
պիտ, կոշտ, ամենափոքր դիմադարձութիւն մը սոսկալի կերպով
կը բարկացնէր զանի:

Որո՞ւն մտքէն կ'անցնէր, որ, այս, հինաւուրց արձաննե-
րու ամենէն մաքուրին գէմքին պէս անարատ երեսին վրայ՝
լուռթեան մէջ կոճկուած բերանը երբ բացուէր միայն աղմկալի
և մին միու ետեէ հասնող կոճակներու պէս հայտանքի հեղեղ մը
դուրս տալու համար էր... Առանց ինքզինքին և էրկանը յարգը
գիտնալու, ամեն ուրեք, թատրոնը, փողոցը, բարձրաձայն կան-
չուտելով, նախանձու սարսափելի բաներ կը խօսէր: Եւ երբ ձեզ
ըսեմ թէ արուեստագիտական բաներու մասին ոչ մի զգում
չունէր, իւր էրկան զբաղումին, լեղունին, սովորութիւններու
ամեն բանի, բոլոր բոլորովին անտեղեակ էր, ալ կրնաք երե-
ւակայել: Կտոր մը ֆրանսերէնը՝ զոր յաջողեցան սովորեցնել
նմա, ուրիշ բանի չի ծառայեց բայց եթէ մոռացնել տալ իրեն
խտալերէնը, և որով նա ինքնին մի աղաւաղ, կէսկէս լեղու
չինեց, վերին աստիճանի ծիծաղելի կարճ. այս սիրոյ պատմու-

*) Հոսմի մէջ Տիբերի վրայ կամուրջ մը կիսակործան այժմ վերա-
շինուած իտալացոց ձեռամբ: Ծ. Թ.

Թիւնը որ սկսած էր Լամարթինի քերթուածի մը պէս, կը վերջանար Շանֆլէտօրի վէպի մը պէս...: Երկար տուն մեր բանաստեղծը փորձելէ յետոյ քաղաքակրթել իւր վայրենուհին, տեսաւ որ անօգուտ էր և պէտք էր ձեռք քաշել ասկէ: Չափազանց պարկեշտութեան պատճառով չի կրնալով պարզապէս ամուսնաթողութեան գիմել—մտածեց տունը փակուել. մէկը չի տեսնել, և բոլորովին աշխատանքի տալ ինք զինքը: Քանի մը մտերիմներ որոնց համար բաց էին իւր տան դռները, հասկցան գործը և ալ ևս չ'եկան նեղայնել զինքը: Ահա այսպէս տան հինգ տարի է որ կ'ապրէր փակուած իւր տան մէջ, բոլորին անհաղորդ հիւզակի մը մէջ առանձնացածին պէս...:

Բոլորովին մտազբաղ այս թշուառ կեցութեան վրայ, կը նայէի առջեւէս այս տարօրինակ զոյգին քայլելուն. մարդը նիհար, դողդոջ, երկայն, քիչ մը կորացած. կինը հաստոյր, քառակուսի, ուսերովը թոթուելով շալը որ կը նեղէր զինք, և այր մարդու անկախ քայլուածքով: Շատ զուարթ էր. բարձրաձայն կը խօսէր, և մերթ կը դառնար յետին՝ տեսնելու համար թէ կը հետեւինք. և Տիբերին վրայ նաւակ մը քաշող ձեռքարժուով ու ամենաբնտանի շէտով իրենց պարզ անուշով կը կանչէր մնղմէ անոնք որ ծանօթ էին իրեն: Երբ անոնց տունը հասանք, դռնապանը, տեսնելով մի ամբողջ ազմկալի խումբ այդ անսովոր ժամուն, կատաղած, չէր ուզէր թողուլ որ վեր ելլենք: Եւ իտալուհոյն և զոնապանին մէջ մի սոսկալի կոիւ բրդաւ սանդուխներուն վրայ: Մենք ամենս պարձող աստիճաններու վրան՝ մարելու վրայ եղող կապի լոյսէն կէս մը լուսաւորուած կարգով կեցել էինք դժուար կացութեան մը մէջ գժբալատ, չի գիտնալով թէ մնալու էինք, թէ իջնել տուներս գնալ:

«Եկէք, մենք կ'լլինք շուտ», յած ձայնով մը ըսաւ մեզ բանաստեղծը, և մենք լուռ հետեւեցանք անոր, մինչդեռ խտալուհին իւր անձին և զասումին բոլոր ծանրութեամբ կրթնած անձարգելին, հոռոմայեցու բացականչութեամբ և արտաքին պուլվառներու խառնուրդ մի ամբողջ շարք հայտանք հատկաւորով (égrenier) կը թափէր դռնապանին զխուռն: Ի՞նչ տուն վերադարձ սա բանաստեղծին որ դեռ քիչ մ'առաջ յուզել էր բովանդակ արուեստագէտ Բարիզը և որուն ջերմոտ աչքերուն մէջ էին դեռ իւր «առաջին» կամ առաջին ներկայացումի շրայմունքը, շողափայլութիւնները: Կհանքի ինչ որչ ստորացնող:

Միայն իւր փոքրիկ սրահի կրակարանին մօտ էր, որ այս յիմար արկածի պատճառած սառցական ցուրտը մոռցաւ, և առանց տիկնոջ բարձրաձայն քահքահին և ձարձատող ձայնին՝ որ

խոհանոցէն կուգար մեզ և ուր իւր սպասուհոյն կը պատմէր թէ ինչպէս բռնել ցնցել էր այն առնւտողը... ալ մոռացած պիտի ըլլայինք զէպքը: Սեղանը դրուած, ընթրիքը պատրաստած, նայիս և կաւ նստաւ մեր մէջ առանց շալի, առանց քօղի և գըլ-խարկի և ևս կրցայ այս անգամ լաւ մը, ուզածիս պէս նայել անոր: Ալ ևս գեղեցիկ չ'էր: Քառակուսի երեսը, լայն հաստցած դունչը, թանձր, ճերմկել սկսած մազերը, մանաւանդ բերնին հասարակ արտայայտութիւնը եզակի կերպով հակապատկեր մը կը կազմէին աչքերու յաւիտենական և բանական երազանութեան հետ: Երկու արմուճակները սեղանին կրթնած, ընտանի և կովացած, մեր խօսակցութեան կը խառնուէր առանց մի բողբոջ աչքէն փակցնելու իւր պջակը: Ծիշտ գլխուն վերիդին, սրահին մեղամաղձոտ հնութիւններու մէջ, հռչակաւոր անունի մը ստորագրած մի մեծ կենդանագիր շուքէն դուրս կ'ելլէր. Մասիա-Ստունթան էր ան 20 տարեկան: Խիստ վառ կարմիր է հագուստը. ծալիծալ շապկին կաթնաթոյր սպիտակութիւնը. առոտ և կեղծ զարդեղէններու փայլիփայլ ոսկին. հիանալի կերպով կ'արժէ որ հին արհակէզ դոյնի մը ցոլքը, ճակտին վրայ ցածուկ թանձր մազերուն թաւիչի մը նման շուքը, անզգալի ազուսամազ մը որ գրեթէ իրար կը կցէր յօնքերու սէզ ու շիտակ գիծերը: Ինչպէս գեղեցկութեան այնքան լրաւթիւն այնքան հասարակութեան հասել էր... Եւ մինչդեռ Թոանսթէվէոնիան կը խօսէր, ևս հետաքրքրութեամբ կը զննէի նկարին վրայ անոր գեղեցիկ ակնարկին խորութիւնն ու անուշութիւնը:

Սեղանին տաքութիւնը ուրախ տրամադրութեան մը մէջ դրած էր զանի: Բանաստեղծը, որուն գ'աջողութիւնը և փառքը միասին՝ կրկնակի կերպով կը սեղմէին սիրտը, ոգեւորելու համար, խոշոր ապտակներով կը զարնէր կրնակին և լիաբերան ծիծաղելով կ'ըսէր իւր անոնի ժարկոնով, որ, այնքան քիչ մը բանի համար չ'արժէր որ գլուխը առած վար նետուէր տաճարին գմբեթին վրայէն:

«Անանկ չէ՞ մի, փիտիկ» կը յարէր, դառնալով դէպի մի ծեր յօդախտաւոր անգամալոյժ կատու, որ կրակին դէմ նստած կը խոկար: Ապա մէկ մ'ալ յանկարծ շահեկան հակաճառութեան մը միջոցին, սքօթէթի մը յիմար և անասնական ձայնով մը կը կանչէր էրկանը,

Hé ! l'artiste, la lampe qui filo!

(Հէ՛ արուեստագէտ, լամպարը կը մխայ):

Դժբաղդը, աշխուժով մէկէն կ'ընդհատէր խօսքը, և տեղէն կ'ելլէր լամպարը շիտկելու, խոնարհ, ուշադիր, հպատակ և ու-

չաղիւր վախնալով որ բան մը չի բրդի նորէն և հակառակ ամեն զգուշութեան չի կրցաւ առաջըն առնել խաղկութեան:

Թատրոնէն վերագարծի միջոցին էր Մեգօնի ս'օն մտնելով բոպէ մը շիշ մը զինի տակ էինք ուսուցելու համար Էսքուֆարօն: Ճամբի տեւողութեան բովանդակ միջոցին Մասիա-Ասունթեան ինք իւր շալին տակ բռնած էր զաջն և սուռն հասած չի երկիւղածութեամբ դրած էր սեղանին վրայ և որուն վրայ խանդաղատ ակնարկներով կը գուրգուրար, վասն զի հոռոմայեցիք կը սիրեն լաւ զինին:

Երկու երեք անգամ արդէն անվտանգ էրխնը մոռացուցութենէն և երկար թևերէն անոր ըսել էր.

«Ուշադրութիւն, շիշին... պիտի կտարեա վախնամ»:

Վերջապէս, խոհանոց երթալով, համարաւաւոր Էսքուֆարօն անձամբ բերելու համար, մի անգամ ալ կանչեց անոր երեսին.

«Մանաւանդ շիշ չի կտարեա»:

Դժբաղդարար, կնիկը հեռանալուն պէս, բանաստեղծը օգտուելով, թատրոնի և արուեստի յաջողութեան վրայ խօսիլ սխաւ. այնպէս ազատութեամբ, և այնքան խանդով և առատութեամբ որ... Բատնարա... Մէկ ամենէն շատ պերճախօս չարժուամի մը միջոցին անա արմանք զարմանք շիշը սրահին մէջ հաղար կտորով փոռւեցաւ:

Երբէք չեմ յիշեր այդ կերպ պաղ ընկնել մը: Բանաստեղծը դիպ զեղին քար կարուեցաւ... Այդ միջոցին իսկ Ասունթեան քօնթուալթօ ձայնը որոտաց քովի սենեակէն, և իտալուհին նայիս դրան վրայ երևաց, հրացայտ աչքերով և պոկուները բարկութենէն սևոած, և խոհանոցին տաքութենէն բոլորովին կարմրած:

«Շիշը», կանչեց, սոսկալի ձայնով մը

Այն ատեն բանաստեղծը, երկչոտութեամբ ծոկով զէպ իմ ականջը.

«Ըսէ որ դուն ըրիր»...

Եւ խեղճ ողորմելին այնպէս կը վախնար որ սեղնին տակէն անոր երկար սրունդներուն զողալը կըզգայի:

ԵՐԴԻՉՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Ինչպէս հնար էր որ զիրար չը սիրէին: Երկուքն ալ գեղեցիկ և հուշահաւոր, միմեան խաղի մէջ երգելով, Աստուծու Մայիս, 1902.

իրիկունը ամբողջ հինգ արարուած միասին միննոյն արուեստական և եռանդալից կեանքը սպրեւելով: Կարելի չէ անպատիժ կերպով կրակի հետ խաղալ: Մարդ մի ամսոյ մէջ քսան անգամ չ'ըսիր «գրքեզ կը սիրեմ» սրինգի հառաչներու և վիճի թրթռումներու մէջ առանց վերջ ի վերջոյ իւր իսկ ձայնէն յուղուելու: Այս վիճակը տեւելով նայիք օր մ'ալ ներդաշնակութեան պարուարանքներու և յանկերգի անակնկալներու հանդերձայ պերճաւայելութեան և ֆոնի ընդհանուր զարդարանքի մէջ իսկական խանդավառ սէրը կրակ առել էր անոնց օրտէն մէջ: Այս սէրը անոնց եկաւ այն պատուհանէն զոր էլզա և Լօհէնկոին կոնկի բացած էին երգերով և լոյսերով թրթռուն գիշերին վրայ՝

«Արի շնչել յախրացուցիչ հոսաւեհուքիւնները»...

տարփանքը Գորիւլէներու պատշգամբին ճերմակ սինկրուն ընդ մէջէն—ուր Ռօմէօ և Ճիւլիէթթօ արչալոյսի շողափայլումներու տակ կը յապաղին—էր որ սպրտեցաւ.

«Ձէ, դեռ սուտն չէ, արտոյտը չէ»:

Օր մ'ալ Ֆաուսթ և Մարկէրէթ երբ փոքրիկ խցիկն կոչա նստարանին վրայ վարդի փթթումներու և բաղեղի պատուտանքներու տակ զրկախանն, զմայլանքի մէջ մոլորած են, և կոչա նստարանէն անդրադարձող լուսնի ճառագայթի ցլքին մէջ, կ'ըսէին,

«Թո՛ղ, բո՛ղ ինձ նայիլ դեմքիդ».

նայիս՝ սէրը՝ սրտադին, կամացուկ մը վրայ հասաւ և յանկարծակիի բերաւ զանոնք:

Իսկոյն ամբողջ Բարիզ գիացաւ անոնց սէրը և շահագրգռուեցաւ: Եւ անոնք եղանակին հետաքրքրութեան առարկայն զարձան: Բոլորը կը զային և օրերայի նուազային երկինքի մէջ այս երկու աստղերու միայն դէպի միւսը սլացումը տեսնելով կը հիանային:

Վերջապէս, իրիկուն մ'ալ, երբ կեցցէներու և վերստին կանչելներու ընդհանուր խանդավառութեան մը մէջ վարագոյրը իջնելով կը բաժնէր սրահին ծափերու ազմուկը փունջերով ողողուած բեմէն, ուր, Ժիլիէթթի ճերմակ շրջազգեստը քաշ կուգար սպիտակ քամելեաներու փետատ թերթերու վրայ, երկու երգիչները անդիմադրելի մղում մ'ունեցան, կարծես՝ իրենց այնպէս քիչ մը շինձու սէրը, այդպիսի մի յաղթանակի կըսպասէր պոսթիկալու համար: Նոցա ձեռները իրար փարեցան, երգումներ փոխանակուեցան, որոնց նուիրագործումը եղան սրահին հեռաւորութենէն եկող անխոնջ անվերջ կեցցէները: Երկու աստղերը միացել էին:

Ամուսնութենէն յետոյ ժամանակ մը մէջ տեղ չ'երեւային. ապա, արձակուրդի ժամանակը լրացած, նայիք նորէն հանդէս եկան միեւնոյն խաղի մէջ: Այս վերադարձը մի յայտնութիւն եղաւ: Մինչև այդ օրը երկու երգիչներէն մարդն էր որ գերազանցած էր: Աւելի տարուօք, հասարակութիւնը անոր սկարութիւններու և գերադասումներու գիտակից աւելի լաւ ճանչցող, ուղղակի սրահին և օթեակներու հետ կը խաղար: Մինչդեռ իրեն մօտ, կինը, սոսկ հիանալի կերպով ընդունակ աչակերտի մը, ապագայ հանճարի մը տպաւորութիւնը կը թողուր: Ձայնը շատ թարմ, զօղութիւններ, անկիւններ ունէր ճիշտ ինչպէս իւր ուտերը բարակ ու նիհար: Ատոր համար է որ վերագարձին, երբ առաջին անգամ բեմ դուրս եկաւ իւր երբեմնի գերերէ միոյն մէջ և յորդ, հարուստ ու պարարտ ձայնը ծաւալեցաւ առաջին նօթերու հետ, բխող ջրի պէս առատ և վճիտ, սրահին մէջ զարմանքի այնպիսի հիացում մ'առաջ եկաւ որ երեկոյթին բովանդակ շահեկանութիւնը նորա անձին շուրջը խտացաւ—Երրտասարդ կնոջ համար այդ եղաւ ճիշտ մին սա այն օրերէն՝ երբ ձեզ շրջապատող մթնոլորտը կը յստակի, կը թեթեւի, կը թրթռայ, ձեզ բերելու համար բոլոր ճառագայթները և յաջողութեան ամեն մարդահաճ պաշտումները:—Գալով էրկան, կարծես մոռցան ծափահարել զանի, և որովհետև ամեն շողափայլութիւն իւր քովի շուքը սաստիկ և թանձր կը ցուցնէ, նայիք բեմին ամենէն մութ մի անկիւնը մնաց—այն ոչ աւել ոչ պակաս, ինչպէս մի երեւորդ (compare) դերասան:

Ինչ և է. այս խանդավառութիւնը որ կերեւէր գերասանուհոյն խաղին քնքուշութեամբ և հրապոյրով պարուրուած ձայնին մէջ, նորէն մարդն էր որ կը ներշնչէր: Նա միայն, նա էր որ անոր խորահայեաց աչքերուն մէջ կը գնէր այն բոցը, բայց այս միտքը փոխանակ հպարտացնելու զինք՝ դերասանը, նայիք անոր ունայնասիրութիւնը հրահրել էր: Երրորդ արարուածին վերջը կանչեց թատրոնի կեղծ ծափահարութեանց գլխաւոր պաշտօնեայն և գէշ կերպով յանդիմանեց զանի. ամենքը մոռցել էին իւր մուտքը և քաշուելները. մոռացել երրորդ արարուածի վերջին կրկին դուրս կանչելը. և սպաննաց որ պիտի գանգատէր անօրէնին...

Աւանդ, չի նայած իւր գանգատին, չի նայած որ կեղծ ծափերը որոտացին միշտ բոպէին, հանդէսականներու համակրանքը կնոջ կողմ անցել էր և կինը վերջնապէս հասարակութեան միակ սիրելին մնաց: Նայիս անոր տաղանդի գեղեկութեան բոլորովին յարմար և չնորհրով գերեր ընարուեցան և որոնց մէջ դերասանուհին չքուած, զարդարուած իրեն վայելող գոյներով

անդիմակ պարահանդէսէ մը ներս մտնող աշխարհիկ կնոջ ծանր ու մեծ հանդիսաւորութեամբ, երբ բեմ գուրս կուզար, վստահ և բնական, խանդավառութիւնը ընդհանուր էր իւր համար:

Իւրաքանչիւր նոր յաջողութիւն մը դտնելուն, էրիկը աւելի ևս տխուր, ջղային և զրգոտած էր: Այս համբաւը, որ իր մէջ ելած միւսին կ'երթար անգարձ կերպով, դողցուածի մը տպաւորութիւնը կը թողուր: Երկար ատեն փորձեց պահել ամենէն՝ մանաւանդ կնոջմէն այս անխոտտովանելի տառապանքը, բայց իրիկուն մը, երբ երկու ձեռքը լիք փունջերով շրջազգեստը վեր բռնած դէպի օթեակ տանող սանդուխէն վեր կ'ելէր, և իւր յաղթանակէն բոլորովին արբշիտ և ծափերու ասթած յուզումէն դեռ ճշուած ձայնով մը կ'ըսէր Էրկան «Շատ զեղեցիկ հասարակութիւն մը ունինք այս իրիկուն»՝ սա պատասխանեց, «Իրան կ'ըսես»—ով մը, այնպէս հեղնակուն, այնքան դանտալի, որ երիտասարդ կնոջ աչքերը բացուեցան իսկոյն իրականութեան վրայ:

Էրիկը կը նախանձէր. ոչ սիրահարի մը պէս որ կ'ուզէ որ կինը գեղեցիկ ու միմիայն իրն ըլլայ, այլ արուեստագէտի պաղ, վայրենի, անողք նախանձով: Երբեմն դերասանուհին ստիպուած երբ կանգ կանէր նուազի մը վերջը և բոլոր դէպ ինք կարկառուած ձեռքերէն պաւօճներ կը թափթփէին դէպ ինք. էրիկը այնպէս կրեոյթ մը կանէր իբր թէ անտարբեր էր կամ այլուր, և իւր մտամոլոր ակնարկը կարծես ըսել կ'ուզէր հանդիսականներուն. «Երբ պիտի վերջացնէք ծափահարելը ևս պիտի երգեմ ալ»:

Օ՛հ, ծափերը, կարկուտի այն աղմուկը, որ այնքան քաղցրը արձագանքներով կը թնդայ նրբանցքի, սրահի, բեմակողմերու (coulisse) մէջ, անհնար է անկէ հրաժարիլ: Մեծ դերասանները կը մեռնին ոչ հիւանդութենէ և ոչ ծերութենէ. անոնք կը մեռնին այն ատեն, երբ մարդիկ չեն ծափահարեր զիրենք: Եւ մեր դերասանը հասարկութեան այս անտարբերութեան առաջ, յուսահատութեան մէջ ընկաւ: Նայիք կը նիհարնար. դժնէաբարոյ, խոհուն և չար կըլլար ամեն օր: Մնօգուտ, ինքնին գատեղները, իւր հիւանդութեան ուղիղ երեսին նայելները, և բեմ գուրս չելած ինքնին ըսելները «Սակայն ինչ ալ ըլլայ, սա իմ կինն է... եւ կը սիրեմ զինքը...»

Թատրոնի շինծուութեան մէջ, իսկական զգացումը նայիք իսկոյն կանհետանար: Իրաւ որ կը սիրէր դեռ կնիկը, բայց կ'ատէր երգչուհին: Կինը լաւ կը հասկնար զայս, եւ հիւանդ մը խնամելու պէս կը հսկէր այս շամբշութեան (manie) վրայ. իսկզբան, մտածեց որ ձայնին բոլոր ոյժ ու զեղէն ևւ առհասարակ բոլոր իր միջոցներէն կամովին բան մը պակսեցնելով

նուազեցնէ դատած յաջողութիւնը, բայց իւր առաջադիմութիւնները էրկանխներուն պէս բեմին անկարգելին առաջ չէին զիմանար: Իւր սաղմնողը ինքնիրմէ գրեթէ անկախ, կամքէն ուժով էր միշտ Այն ասեմն, խոնարհեցաւ, փոքրիկացաւ էրկանը առջեւ: Այնպէս մը կընէր որ իբր թէ խորհուրդ կը հարցնէր անոր եւ կըսէր, հէ՛, լաւ կը գտնէր մի այս. թէ չէ, գերը եթէ սա պէս ըլլար կը հասկընանք մի...:

Ինտիմաբար, մարդը երբէք գոհ չէր. սա առերևոյթս միամտութեամբ եւ կեղծ ընկերակցութեամբ որ դերասաններու յատուկ է, այն իրիկուն մանաւանդ երբ կինը համեմատարար շատ յաջողած էր.

«Արթուն կնոյ, փոքրիկս... այս վայրկենին չըլլար ազ... չիտակը դա առաջդիմութիւն չէ»:

Ուրիշ անգամներ ալ կուզէր արգիլել անոր երգելը:

«Ուշադրութիւն ըրէ, դուն զքեզ կը զոհես կոր գրեթէ... չափազանց չոսյութիւն է ըրածդ... նայէ որ չի ձանձրացնես բազրդ... Մտիկ ըրէ, գիտես մի որ ժամանակ է որ արձակուրդ մը առնես»:

Երբեմն մինչեւ ամենայնաբ պատրուակներ հնարելու կը ցածանար: Կ'ըսէր որ «կնիկ, դուն ասոր հարբուխ ունիս, ձայնը տեղը չէ»: Աս ալ չ'եղածին պէս ալ չըջիկ դերասանի կըտիւններ կընէր կնոջ հետ, օրինակ.

«Դու, այս անգամ «տուօ»ի վերջաւորութիւնը չուտով վերսկսար... դու սպանեցիր, ոչնչացուցիր իմ ընկիւք տպաւորութիւնս... չէ դու գիտամբ կընես կոր աս ամենը»: Դժբազդը, առանց տեսնելու որ ինքն էր որ կնիկը կը խանգարէր խաղին մէջ դահալէժ հապճեպով կը վերսկսէր կրկնութիւնները, որպէսզի արգելէ ծափահարութիւնները. եւ հասարակութիւնը վերստին գրաւելու իւր փափաքէն մղուած, բեմին բարձր ծայրին վրայ կը կենար թողնելով որ կինը երկրորդ, յետ, ցած ընկած դիրքի մը վրայ կանգնած երգէր: Դերասանուհին, զանի չափազանց սիրելուն համար չէր զանդատէր: Մնաց որ, յաղթանակը, բարեմիտ կ'ընէ դմարդ, եւ ամեն իրիկուն՝ չի նայած որ կը փորձէր շուքի մէջ սլլուիլ, կորսուիլ, հակառակը, յաջողութիւնը կ'ստիպէր զանի վերերևալ ըյսերու մէջ յաղթական կերպով: Թատրոնի մէջ շատ չի քաշեց ամենքը կռահեցին նախանձու այս եղական պարագայն եւ ընկերները մանաւանդ մատերնուն փաթթեցին զայս. նայիս ալ կնոջ մային անհասնում, չափազանց շտրհաւորութիւններով կը խեղդէին խեղճը: Մէկ մ'ալ երեկուան լրագրին յօդուածը, ուր մեծ դերասանուհոյն նուիրուած չորս մեծ սիւններ լեցնող զրուատա-

կաններէ ու հիացականներէ յետոյ, քննադատը բանի մը տող ալ շնորհ կ'ընէր էրկանը գրեթէ մոռացուած անհետացած համբաւին: Օր մը, նոր կարգացած այս կերպ մի յօգուած, մտաւ յանկարծ կնոջ օթեակը, լրացիրը բաց ձեռքը, կատաղած եւ բարկութենէն դունատած, եւ ըսաւ անոր.

«Աս ինչ է, այդ մարդը ուրեմն քու սիրահարդ է եղել:»

Այս աստիճան ստոր անարդանքի հասուցած էր մարդը գործը:

Եւ դժբաղդ կիւնը, տօնախմբուած, նախանձու առարկայ դարձած, սրուն անունը խոշոր տառերով տպուած ծանուցումներու վրայ, հիմի Բարիզի ամեն անկիւն կը կարդացուէր, նոյն իսկ խոնութներու մէջ զիղուած ապրանքներու վրայ կը գնէին իբր փորձ մը բաղդը քաշելու, ձեռքէ ձեռք խլլուած շաքարեղէնագործներէ, հոտանոյշներու խոնութներէ փոքր եւ սակեզօժ պատեանիկներու վրայ գրուելու համար, դժբաղդ կիւնը, այն, կեցութիւններու ամենէն ստորացածը եւ ամենատուրն էր որ ունէր: Ալ ոչ մի լրագիր ձեռք չ'էր առնէր. վախճալով որ մի գուցէ իր մասին գովեստի մը սլատահի, իրեն տըրուած ծաղիկներուն վրայ կույար եւ զայն կը թողուր օթեակին մի անկիւնը, որպէս զի տուն տանելով սեղի չի տայ յաւերժացնելու իր յաղթական երեկոյթներու անագորոյն յիշատակները: Վերջապէս ուղեց հրաժարիլ թատերաբեմէն, բայց էրիկը ընդդիմացաւ:

«Պիտի ըսնն որ ես եմ որ քեզ հանել տուի դուրս:»

Եւ ահուկի տանջանքը շարունակեց երկուսին համար ալ: Առաջին ներկայացումի իրիկուն մը, երբ դերասանուհին բեմ դուրս գնալու վրայ էր, մէկը անոր ըսաւ «Ինքզինքնիդ լաւ բոնեցէք... սրահին մէջ ձեզ դէմ գալտնի դաւադիրներու խումբ մը կայ»: Նա, ժպտեցաւ զարմանքով: Փաղտնի միաբանութիւն մը իրեն դէմ. եւ ինչ առթիւ, Աստուած ամենաբարի...: Ինքը որ՝ միմիայն համակրանքով չըջապատուած ամեն կողմնակցութիւններէ հեռու դուրս կապրէր: Սակայն տես որ ճիշտ էր ըսուածը: Արարուածի կիսուն մէջտեղ, երբ էրկանը հետ մի մեծ տուն կերգէր, ճիշտ այն բոպէին, յորում իւր սքանչելի ձայնը կարողութեան դագաթնակէտին հասած, հուսկ հունչը կը մարէր իրար յաջորդող եւ հաւատարագօր խաղերու վրայ, մաքուր այնպէս ինչպէս մանեակի մը կլորտակ մարդարիաները, սուլումներու մի տարապ կանգ առնել տուաւ զանի քարացած: Հանդիսականները դերասանուհոյն չափ անահնկալի եկած եւ յուզուած էին: Ասէք թէ մարդիկ շնչատութիւնները առկախ բոնեղ էին կուրծքերու մէջ բանտուած, նոյնպէս ինչպէս դերասա-

Նուհւոյն լմնցնիլ չի կրցած մասը: Մէկէն մի խենդ, զարհուրելի գաղափար անցաւ էրկան մտքէն... բեմին վրայ մենակ էր կնոջ հետ, կինը շեշտակի անոր նայեց եւ տեսաւ անոր աչքերուն մէջէն մի գէշ ժպտի փայլակին անոցքը: Խեղճ կինը հասկցաւ: Հեծկլաւանքը խեղդել սկսաւ: Ղրնք եւ ուրիշ բան չի կրցաւ: Ընել բայց կթէ, կուրացած, անհետանալ բեմակողմանոցներու ակզամէջին մէջ:

Էրիկն էր որ սուլել տուել էր կինը:

Թ Ի Ի Ր Ի Մ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Մ Ը

Կնոջ խօսքը

Ի՞նչ կայ, ի՞նչ բանի համար ոխ պահել է ինձ դէմ, չեմ հասկնար: Բայց Աստուած իմ... ես ամեն բան ըրի դանի կրջանկաշնկյու համար: Չեմ ըսեր թէ, փոխանակ բանաստեղծի կթէ նօտարի մը, հաւատարմատարի մը, վերջապէս աւելի ծանր բանի մը, աւելի նուազ օգային դրաղումով մէկու մը հետ ամուսնանալը չի պիտի սիրէի: Բայց եկ ու տես որ անանկ ինչպէս որ էր, ինձ հաճելի էր: Իրաւ որ քիչ մը տաք զլուխ էր, սակայն սիրուն ալ էր եւ գաստիարակուած. ապաքիչ մ'ալ հարուստ էր, եւ ես կը մտածէի որ մի անգամ կարգուելէ յետոյ, բանաստեղծութիւնը արգելք մը չի պիտի ըլլար որ նա լաւ պաշտօն մը փնտռէր, ինչ որ զմեզ բոլորովին մեր ուզածին պէս եւ գոհ պիտի կացուցանէր: Ինքն ալ այդ ժամանակները զիս իրեն դաղափարակից կը գտնէր: Երբ զիւղ կուգար հօրքրոջս տունը զիս անանկու, ալ բաւական բառ չէր կրնար գտնիլ ըսելու համար իր հիացումը մեր պզտիկ բնակարանին կարգ ու սարքին համար, որ վանքի մը պէս էր: «Չուարձալի է...» կ'ըսէր: Կը խնդար, եւ կարգացած վէպերու ու ստանաւորներու մէջ սովորած ամեն կերպ անուններով կը կանչէր զիս: Շիտակը, կը խոստովանիմ, որ ասի քիչ մ'անախորժ կուգար ինձ, ես կը ցանկայի որ քիչ մ'աւելի լուրջ ըլլար: Բայց միմիայն մեր ամուսնանալէ եւ Բարիզ հաստատուելէ յետոյ էր որ զգացի մեր երկուսի բնութիւններու տարբերութիւնը:

Ես որ կ'երազէի մի պզտիկ տուն, լաւ, լուսաւոր եւ մաքուր՝ նայիք մեր բնակարանը իսկոյն լեբլեցուն կաւ անօգուտ, նորաձեւութենէ ընկած, փոշեթաթախ կարասիներով եւ զունաւ գորգերով, եւ անպէս ալ հին որ... Վեր-

Չսպէս ամեն բանի համար այսպէս Երեւակայել կրնանք մի, որ, ամենքի յարկը հանել զնել տուաւ ինձ մի շատ սիրուն ժամացոյց, զոր ինձ նուիրել էր հօրաբոյրս եւ հիանալի կերպով շրջանակուած նկարներ, զոր ինձ տուել էին զիշերօթիկի ընկերներս: Այս բոլորը զգուցի է կ'ըսէր: Դեռ մինչև հիմա կը հարցնեմ ես ինձ, ինչո՞ւ. վասն զի վերջսպէս, իր աշխատութեան սենեակը հաւաքածու մ'էր հին, մուխէն սուցած (կտաւներու) նկարներու, արձաններու, որոնց նայել կ'ամաչէի, կտորտած հին ու մին բաներու, որոնք ոչինչի օգուտ մ'ունին, ժանգոտած աշտանակներու, ծակ, ջուր չի բռնող սափարներու, անզոյդ, նմանը չի գտնուող զաւաթներու. իմ ծիրանի փայտէ զեղեցիկ դաշնամուրիս կուշար զրուած էր մի ուրիշը, փոքր, սպիւղ, բոլորովին թափթփած, որուն լեզուակներուն կէսը չի կար, եւ այնքան մաշած, որ հազիւ ձայնը լսելի էր: Գալով ինձ, ես սկսայ ինձ ըսել «Ա՛հ, աս ալ, բայց արուեստագէտ ըսածնին, քիչ մը խնդուկ մ'է եղեր ուրեմն...» Ձի նայես, միայն սնօգուտ բաներ կը սիրէ եւ կ'ատէ ծառայութիւն մը մատուցանող ամեն բաները»:

Երբ որ իւր բարեկամները տեսայ՝ ընկերութիւնը զոր կ'ընդունէր, աւելի գէշ եղաւ: Երկար մաղերով, լիք մեծ մօրութիւնով, գէշ սանդղուած, գէշ հագուած մարդիկ, որ իմ մօտ ծխելէ չէին քաշուեր, եւ մօտիկ ընելով զանոնք գէշութիւն մը կուգար փրստ, այնքան անոնց ամեն մարքերը խմիններուս բոլորովին հակառակն էին:

Մեծ մեծ բաւեր, խոշոր խոշոր նախադասութիւններ, ոչինչ բնական, ոչինչ պարզ: Այսու հանդերձ պատշաճութիւններու մասին ոչ մի ծանօթութիւն: Կամենաս քսան անգամ ընթրիքի վար դրած եղիր զանոնք, փոխարէն ոչ մի այցելութիւն, ոչ մի քաղաքավարութիւն. եւ ոչ իսկ այցեստմա մը կամ շաքար մը նոր տարւոյն օրը: Ոչինչ... Այս պարոններէն ոմանք ամուսնացածներ էին եւ իրենց կիները միասին կը բերէին: Այ տեսնելու էր այս մարդոց տեսակը: Ամեն օր այնպէս պերճարդ ու զարդ որպիսին ես բնաւ կրելիք չ'ունիմ, փառք Աստուծու: Եւ այնքան գէշ չափուած, անկարգ, առանց մեթօզի: Ուսուցիկ, խօլ մաղեր, քարչ եկող շրջագրաստներ, ապա արատոց տաղանդներ զոր առանց քաշուելու կը ցուցնէին: Կային որ գերասանուէրներու պէս կ'երգէին եւ բոֆէստօններու պէս կը նուագէին. ամենն ալ կը շաղակրատէին կը շատախօսէին բոլորովին էրիկ մարդոցը պէս: Հիմի դուք ըսէք, ձեզ կը հարցնեմ. ասի շիտակ է մի: Միթէ լուրջ կիներու, կարգուելէ յետոյ, տան խնամքէն զատ ուրիշ բաներով զբաղել կը վայել:

Ահա սաի փորձեցի հասկցնել էրկանս, որ սրտացաւում էր տեսնելով որ նուագելը մէկդի թողել էի: Երաժշտութիւնը լաւ է երբ մարդ փոքրիկ է և ուրիշ բան չ'ունի ընկելք. բայց, շիտակ շիտակ շիտակ, կարծեմ թէ ծիծաղելի պիտի ըլլայի թէ ամեն օր դաշնամուրին առաջ նստէի:

Օհ, լաւ գիտեմ: Զուր ինձ դէմ ունեցած հակառակութեան պատճառը սա է որ, ես ուղեցի քաշել հանել զինքը սա տարօրինակ և իրեն համար խիստ վատնգաւոր միջավայրէն: «Բոլոր բարեկամներս ինձմէ պաղեցուցիր» ըսելով երեսիս կուտոյ ստէպ: Այն, շիտակ է, և այգպէս ըրածիս համար ալ չ'եմ ակսոսար: Այն մարդիկը վերջ ի վերջոյ պիտի խենթցնէին զինք և թողնէին վար: Կը պատահէր երբեմն անոնք մեզմէ հեռանալէ վերջը սա չէր պատկեր և զիշերն իրուն քերթաւելով վեր ու վար կը պատէր և բարձր-բարձր կը խօսէր ինքիրեն: Ինքնին արդէն բաւական տարօրինակ, հերիք այլանդակ էր, մէկ մ'ալ անոնց գալ գրգռելն աւելորդ էր: Ի՞նչ քմահաճոյքներուն, ի՞նչ խելքին փչածներուն համբերեցի: Նայիք յանկարծ սենեակս կը մտնէր. «Շուտ ըրէ, զլիարկ... գիւղ պիտի երթանք»: Հարկ կ'ըլլար թողնել տուն, տեղը, կարը, գործը, ելլել կառքի, երկաթուղու համար ստանի մտնել. միջնդեռ ես գրամ ինայելու վրայ կը մտածէի շարունակ, որովհետեւ, վերջապէս, համաձայնելու է որ 15000 ֆրանց հասոյթով մարդս հարուստ չի սեպուիր Փարիզի մէջ և տղոցը բան մը չի կրնար թողուլ: Սկիզբները կը ծիծաղէր իմ գիտօղութիւններուս վրայ, և կը ջանար զիս ալ խնդացնել: Բայց երբ տեսաւ որ ես իմ նպատակներու վրայ անդդուելի եմ, ալ թըշնամի դարձաւ իմ պարզասիրութեան և տնարարութեան մտտին ունեցած մասնաւոր ճաշակիս համար:

Իմ ի՞նչ յանցանքս է եթէ չ'եմ սիրեր թատրոն, նուագահանդէս, և ըոյր սա արուեստագիտական երեկոյթները, ուր կ'ուզէր քաշել տանել զիս, ու կը հանդիպէր իրեն նախկին ծանօթներուն՝ խել մը դատարկամիտ, ցոփակեաց և վատնիչ զբոսաւէրներ:

Պահ մը կարծեցի թէ աւելի խօսք հասկցող պիտի ըլլար: Յաջողել էի հանել զինքը այդ տղեկ ընկերութենէն և լուրջ, ծանրամիտ, խելացի մարդերով մեզ շրջան մը կազմել, անոր օգտակար յարաբերութիւններ... ստեղծել: Ի՞նչ ուրեմն, ոչ: Պարոնս կը ձանձրանար: Աւտուանէ մինչև իրիկուն կը ձանձրանար: Տեսնելու էիք ինչպէս դժկամակ թթուած երեսով կը կենար մեր պզտիկ երեկոյթներու միջոցին, երբ ես թէյ մը, փոքրիկ թղթախաղ մը կը հանէի մէջ տեղ: Երբ տունձին մնայի՞ք, միւսնոյն բանը դարձեալ: Սակայն ես շատ վափկանկատ էի: Անոր

կ'ըսէի. «քիչ մը կարգա ինձ սա գրածդ» և նա ինձ կարտասանէր ոտանաւորներ և հատուածներ, խորհրդածութիւններ, ոչ ինչ չ'էի հասկնար. բայց այնպէս կը ցուցնէի թէ կը շահազըրդըռիմ մինչև իսկ այստեղ այնտեղ փոքրիկ գիտողութիւններ ընել կը համարձակէի, որոնք միմիայն զսնի գրգռելու սրտնեղելու կը ծառայէին: Տարի մը գիշեր ցորեկ աշխատելով այս բոլոր ոտանաւորներով մէկ գէրքէ աւելի բան մը չի կրցաւ ընել, գիրք որ բնաւ չի ծախուեցաւ ալ: Անատեն անոր ըսի. «Ա՛հ... կը տեսնես... ահա», մտածելով որ կարելի է կը յաջողէի վերջապէս խելքի բերել զայն, որ աւելի հասկանալի, աւելի արտադրող բանի մը ձեռնարկել տալու համար: Ասոր վրայ, զարհուրելի ցատումով մը բռնկեցաւ, և այդ օրէն առջաւէրժ տիրութեան մը մէջէ ինչ որ շատ դժբաղդ ըրած է զիս: Բարեկամներս ինձ որքան լաւ խորհուրդ ունէին կուտային: «Կը տեսնես սիրելիս, ազի ձանձրոյթէն առաջ եկած է. զբաղում չ'ունեցող մարդուն գէշ տրամադրութիւնն է ադ... եթէ քիչ մ'աւելի աշխատէր, այդպէս տխուր չի պիտի ըլլար»:

Այն ատեն ես ինքս և բոլոր զիս շուրջս ձանաչողներս վրայ դրի անոր համար պաշտօն մը դորձ մը գտնելու: Երկինք, գեալին վեր վար ըրի. չեմ գիտեր ալ որքան ընդհանուր քարտուղարի և վարչապետներու կնիկներու այցելութիւններ ըրի. մինչև նախարարի մը պաշտօնատունը գնացի, և այս ամենը առանց իրեն իմաց տալու: Մի անակնկալ կ'ուզէի ընել: Ինքնին կ'ըսէի ընայինք թէ այս անգամ դո՛ւ պիտի ըլլայ մի»: Վերջապէս օր մ'ալ ստացայ հինգ կնիքով կնքուած ծրար մը, մէջը էրկանս նշանակուելուն թուղթը, ուրախութենէս խելացնորածի պէս վազեցի անոր մօտ, գրասեղանին վրայ դրի թուղթը. ալ ապագայն, հանգստաւէտութիւնը, աշխատանքի հանգարտութիւնը, ինքիմէ գո՛հ լինելը ապահովուած էր... Գիտէք թէ ի՞նչ ըսաւ ինձ: Ինձ ըսաւ որ «երբէք չի պիտի ներէր ինձ», և նախարարին նամակը առած հազար կտոր պատուեց, և դուռները զարնելով ելաւ գնաց: Օ՛հ, սա արուեստագէտները, սա ծաթած գլխով փախուկները որ կեանքը այսպէս խոտորնակ կ'ըմբռնեն: Ի՞նչ ընել այսպէս մարդու մը հետ, կը ցանկայի խօսիլ, խորհիլ: Բայց ոչ, շատ չիտակ ըսել էին ինձ. «սա խն մ'է»: Մնաց որ ինչ օգուտ անոր հետ խօսիլը քանի որ միևնոյն լեզուն չ'ունինք: Նա ինձ չի պիտի հասկնար և ոչ իսկ ես զինքը... Եւ հիմի աստեղ գէ՛մ գէ՛մի նստած իրար կը նայինք: Կզգամ որ աչքերուն մէջ ատելութիւնը կը վառի, բայց ինչ ընել կը սիրեմ զինքը... Շատ դառն է այս:

ԷՐԿԱՆՐ ԽՕՍՔՐ

Սմին բանի մասին մտածել էի. ամեն կերպ նախադգուշութիւն ըրել էի բարեղուհի մը չէի ուզեր. վասնզի բարեղուհիներէն կը վախնայի: Չ'էի ուզեր հարուստ կին՝ մտածելով որ սա ալ իւր դրամին հետ ամբողջ շարք մը պահանջներ պիտի ունենար: Ընտանիքէ ալ կը վախնայի, քաղքենի, համագրուող սիրոյ ու սոսկալի փաթտուքը որ կը բանտարկէ, կը փոքրացնէ, կը խեղդէ մարդը: Իմ կինը այն էր որ կերպէր: Իւրովի կ'ըսէի ճնա ամեն բան ինձ պիտի պարտի: Ի՞նչ ուրախութիւն պիտի ըլլար կը մտածէի, եթէ, կազմակերպել յաջողէի այն պարզուկ հողին ու միտքը, այն մաքուր հողին, իմ սղեւորումներուս իմ միտքերուս համեմատ, մի խօսքով եթէ կարենայի հողի ներշնչել արձանին:

Բանն այն է որ, իրաւ, կինն ալ արձանի երևոյթ ունէր, իր խոշոր հանդարտ ու լուրջ աչքերով, իւր յունական կիսադէմքին կանոնաւոր, որոշ ու ազնիւ գիծերով, բայց, մատաղատի գէմքերու փափկութեան սա վարդադոյնի թեթեւ նիւնստով մը եւ վեր վերցուած մազերուն շուքովը անուշցած: Աւելցուցէք ասոր վրայ, գաւառացուհւոյ պզտիկ շեշտ մը, որ սրտագին ուրախութիւն մը կառթէր ինձ, եւ զոր մտիկ կ'ընէի՝ աչքերս փակ, երեխայութեան, աէ հետուներու, բոլորովին մոտացուած հանդարտ կեանքի երանելի յիշատակի մը պէս: Եւ ըսել թէ այդ շեշտը հիմի ինձ համար անտանկի դարձած է... Բայց այն ժամանակը հաւատք ունէի: Կը սիրէի, երջանիկ էի եւ աւելի եւս երջանկանալու արամաղիր: Լի իրանդավառութեամբ եւ ջանասէր, այդպէս շուտով ամուսնացած, սկսած էի մի նոր բանաստեղծութիւն եւ ցորեկները շարայարած ստանաւորն իրիկունը կը կարգայի անոր: Կ'ուզէի զանի ամբողջովին իմ գոյութեան մէջ մտցնել: Առաջին անգամներուն ինձ կ'ըսէր: «Սիրուն է...» եւ անոր այս տղայական հաւանութեան համար երախտապարտ էի. յուսալով որ այսպէս երթալով, վերջսպէս, պիտի լաւ եւս հասկնար այն ինչ որ իմ կեանքն էր:

Խեղճ գփբաղքը, ինչպէս չարչարել կամ զանի: Իմ ստանաւորները անոր կարգալէ յետոյ անոնց բացատրութիւնները կուտայի, վնտռելով անոր զարմանքով լիք գեղեցիկ աչքերու մէջ սպասածս արտայտում մը եւ կարծելով միշտ, որ, իրաւ, կը տեսնեմ: Կ'ստիպէի զինքը, որ իւր գիտողութիւններն ընէ, խորհուրդ մը տայ եւ երբ յիմարութիւն մ'ըսէր, վրայէն կանցնէի միայն կանգ առնելու համար այն լաւ բանին:

վրայ, որ արկածը ըսել կուտար անոր մերթ: Որքան կը փափազէի զանի իմ իսկական կինս ընել, արուեստագէտի կինը... Բայց ոչ... նա չէր հասկընար: Միեւնոյն էր թէ ես անոր կը կարգայի մեծ բանաստեղծներէն, ամենէն զօրաւորներ ու ամենէն փափկազգամներէն հատուածներ ըսելի. սիրոյ քերթուածներու փոկեշար ստանաւորները անոր առջեւ կը թափէին տարազի մը պաղութեան եւ առթած ձանձրոյթին պէս: Անգամ մը, կը յիշեմ «Հոկտեմբերի գիտերը» կը կարգայինք: Կինս ընդամիջեց զիս եւ ըսաւ որ աւելի լուրջ բան մը կարգայի իրեն: Այն ժամանակ փորձեցի բացատրել անոր, որ ոչինչ այնպէս լուրջ չէ ինչպէս բանաստեղծութիւնը, որ կեանքի էութիւնն իսկ է, որ կը սաւառնի անոր վրայ, թրթռող լոյսի մը պէս, ուր բառերը, միտքերը կը բարձրանան եւ կ'այլակերպեն: Օհ, նրա սիրուն բերնին չ'արժեցնող ժպիտը, եւ ակնարկին խոնարհումը... կարծես թէ աղայ մը կամ խենդ մ'էր ոչ կը խօսէր անոր:

Այս կերպ որքան ոյժ, ինչ չափ պերճախօսութիւն որ մտնեցի անօդուտ անցաւ: Ոչ մի բան չէր կարելի: Չոր սրտերու, նեղ մաքերու յաւիտենական չքմեղանքը եղող սա անոր ողջմտութիւն, դատողութիւն ըսած բաներուն դէմ շարունակ կը հակառակէի: Եւ միայն բանաստեղծութիւնը չէր, որ կը ձանձրացնէր զանի: Մեր կարգուելէն առաջ կը կարծէի թէ նուազատէր մ'էր: Նուազած կտորները, ստորագծուած իւր գասատուին կողմէ, կարծես թէ կը հասկնար. հազիւ թէ ամուսնացած էինք, փակեց զաշնամուրը եւ վազ անցաւ երաժշտութիւնէ... Գիտէք բան մը, որ աւելի տխուր ըլլայ քան կ'ստիչ կողմէ լքումը սա այն բանին զոր մատաղ աղջկան մէջ հաճելի էր ձեզ: Դերասանը վերջին խօսքն ըսած, դերը կատարած, պարզամիտ աղջիկը կը հանէ հանդերձը: Այս ամեն ամուսնութեան համար եղած բաներ են եղել, պղտիկ տաղանդի մը կեղծ մակերեւոյթը, սիրուն ժպիտներ և անցողական պերճութիւն: Սորա մէջ, փոփոխութիւնը բույժական եղաւ: Իսկզբան յուսացել էի որ ճաշակը, արուեստին իմացականութիւնը, գեղեցիկ բաներու հասկցողութիւնը զոր շէի կրնար տալ անոր, մի անգամ Բարիդ հաստատուելէ յետոյ, ուզեր թէ չ'ուզէր վերջապէս պիտի ստանար ստոնք այն հիանալի քաղաքին մէջ, ուր աչքը և միտքը կը նրբանան աւանց մարդուս զգալուն: Բայց ինչ ընել կ'ստիչում մը որ գիրք մը բանալ, նկար մը գիտել չի գիտեր, որ ամեն բանէ կը ձանձրանայ և որ ոչ ինչ տեսնել կուզէ. հասկցայ որ պէտք է համակերպէի ինձ մօտ ունենալ սոսկապէս տնարար կինը մը խնայող, ճշ,

շատ խնայող: Կին մը ըստ Բոիւտօնի, ոչ ինչ աւելի. պէտք է հպատակէի: Քանի ուրիշ արուեստագէտներ իմ վիճակիս մէջ կը գտնուէին: Բայց այս համեստ դերը չի բաւականացուց դանի:

Տակաւ առ տակաւ, ծածկարար, լոբիկ մնջիկ այնպէս ըրաւ որ բոլոր բարեկամներս հեռացուց ինձմէ: Անոր առջև չէինք քաշուեր. անցեալին միջ կղածի պէս կը խօսէինք. և մեր արուեստագիտական չափազանցութիւններէն և խնդ ու խօշ ասածներէ, սա սրախօսութիւններէ ուր զայդափարը կը ծպտի ըաւ ևս ծաղրելու համար. ոչինչ չէր հասկնար, ոչ անոնց այլաբանութիւնը, ոչ անոնց հեղնութիւնը: Այս ամենը ուրիշ բանի չէին ծառայեր բայց եթէ զրգուել դանի և չփոթել: Սրահին մէկ փոքր անկիւնը նստած, առանց բան մ'ըսելու, մտիկ կ'ընէր, առաջադրելով՝ յետոյ մէկիկ մէկիկ ջնջել զորս նետել ինչ որ ակունջին այնպէս խիստ և անախորժ կուգար: Հակառակ իմ ակնարկ սիրալիք ընդունելութիւններու, բարեկամներս սկսել էին զգալ իմ տունը սա պզտիկ courand d'air պաղ հովը, որ ձեզ կազդարարէ թէ զուրը բաց է և թէ ալ ժամանակ է ելնել երթալու:

Բարեկամներս կարուելէ յետոյ, նայիք անոնց տեղ իրենները բերաւ: Նայելի որ դատարկ և դեղարուեստէն բոլորովին օտար, տաղակալի ընկերութենէ մը պաշարուած ևմ, ընկերութիւն որ խորապէս կ'ատէր բանաստեղծութիւնը, անոր համար որ «վատակցնող բան մը չէ»: Իմ մօտ դիտմամբ բարձր ձայնով անունը կուտային նորածնութեան համեմատ բան ընդգնբու, և Աստուծու օր թատերախաղեր, և հայել պէս ծախուող քշուող վէպերու:

«Այն ինչը շատ ստակ կը վաստկի»: Դրամ չահել, ահա այս հրէշներու բոլոր բովանդակ մտածողութիւնը և սիրտս կը ջաւէր տեսնելով կիներ և ալ անոնց պէս խորհիլը: Այս ծախսի չարաչուք միջավայրին մէջ, անոր գաւառացուհուոյ բոլոր յատկութիւնները իւր աննշան ջնջին և սահմանափակ հայեացքը խտացել էին մի անհաւատալի սգահութեան մէջ:

Տասն և՛ հինգ հազար ֆրանգ եկամուտն կարծեմ թէ մարդ կրտօղ է այսքանովս ապրել առանց վաղին հողը ունենալու: Է՛ն ուրեմն, ոչ, կինս միշտ կը գանդատէր, խնայողութեան և ստակը շահուող կերպով տեղ մը գնելու մասին կը խօսէր միշտ: Քանի նա այսպէս բռնի տիրանալ կ'ուզէր վրաս այս կերպ յիմար մանրամասնութիւններով, կ'զգայի որ աչխատանքի համն ու փափաքն ինձմէ կը հեռանար: Երբեմն կուգար գրասեղանիս ըսլ, մի չ'արժեցնող կերպով կը թղթատէր

իմ սկսած ոտանաւորներս, և հաշուելով այն փոքրիկ աննշան տողերը գրելու համար կորուսած ժամերս. հաշուելով կ'ըսէր «նա ինչ է»: Ան եթէ զանի մտիկ ըրած ըլլայի սա այնքան տարիներու վաստակովս ձեռք բերածս՝ քանաստեղծ գեղեցիկ անունս, չափազանցող գրականութեան արտադրութիւններու տիղմին մէջ քարշ պիտի գար... Եւ երբ կը մտածեմ որ այս կնոջ իսկ է որ ես նուիրել էի ամենէն առաջ իմ բոլոր սիրտս, ամեն երազներս. երբ կը մտածեմ սա անոր ինձ ցուցուցած անարգանքը՝ վասնզի ևս ստակ չեմ վաստիկր, ամուսնութեան առաջին րոպէներէն իսկ կըսկսի ձշմարիտը ևս թէ ինքս ինձ և թէ անոր համար կ'ամչնամ: Դրամ չ'եմ վաստիկր. անոր ակնարկին կշտամբանքը, արդիւնաշահ պանականութեանց համար անոր մասնաւոր հիացումը. մինչև սա դիմումը որ վերջերս գեռ ըրեր է ինձ համար ստանալու ալ չի գիտեմ ինչ պաշտօն մը նախարարութեան մէջ կը բացատրեն ըսածս:

Օրինակի համար, դէմ կեցայ: Ասկէ վերջ ինձ ուրիշ բան չի մնար բայց եթէ անխախտ կամք, պինդ կենալու համար ամեն համոզումներու, ամեն յարձակումներու դէմ: Թող նա ուզածին չափ, ժամերով խօսի, թող նա իւր ամենասասան ժրպիտի անձրեովը աշխատի պաղեցնել զիս, ևս միշտ ուշադրութիւն չի պիտի դարձնեմ, բնաւ ամենեւին...: Ահա մենք ուր ենք: Ամուսնացած, դատապարտուած միասին ապրելու, ամբողջ մղոններով իրարմէ հեռու և մենք չափազանց յոգնած, չափազանց վհատած ենք մէկ մ'ալ մէկզմէկու գնալու համար քայլ մ'ընելու:

Ահա քեզ կեանք... Նողկնլի:

Ֆրանսերէնից թարգմ.

Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆ

(Կը օտուցուկուի)

ԶՈՒԴԵՐՄԱՆԻ ՎԵՐՁԻՆ ԴՐԱՄԱՆ

Այս տարուայ սկզբում Զուգերմանը, լոյս ընծայեց իր նոր գրաման՝ «Կեցցէ կեանքը» (Es lebe das Leben):

Զուգերմանը Հաուպտմանից ոչ պակաս հռչակ է վայելում թէ իր հայրենիքում և թէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Եւ այդ հռչակի հիմքը կազմում են նրա գրամանները՝ «Պատիւ», «Հայրենական տուն», «Սօցումի կործանումը», «Թիթեոնիկների կտիւր», «Յովհաննէս» և այլն: Բայց միայն այդ ասպարէզում չէ գործել նրա տաղանդաւոր գրիչը: Զուգերման շնորհալի է և իբրև վիպասան ու նովելիստ: Նրա «Տիկին Նոգսը», «Կայենչտեգ» վէպերը այնքան բովանդակալից, այնքան հետաքրքրաշարժ են, որ ամենայն իրաւամբ կարող են մէկ-մէկ գրական զարդ համարուել: Նրա բաղմաթիւ մանրավէպերը (օր. «Օրինակիկ որդին», «Կերպարանափոխուած հովհարը», «Յանկութիւն», «Նա ժպտում է» և այլն) այնքան աշխոյժ են պարունակում իրանց մէջ, այնքան կենդանի ու գրաւիչ ձևով են շարադրուած, որ միշտ էլ կարող են ընթերցանութեան լաւ նիւթ լինել:

Իր գրամաներում Զուգերման պատկերացնում է քաղաքային ժամանակակից կեանքը, նրա հակադիր հոսանքներն ու պահանջները, ինչպէս օրինակ՝ պատիւ և հասարակական դիրք, անհատականութիւն և ծնողական իրաւունք, անձնական երջանկութիւն և բարոյազիտական կարգեր և այլն և այլն: Այդտեղ նա միշտ աշխատում է չը հեռանալ իրականութիւնից: Նոյնիսկ լեզուի ու առհասարակ դիլիցիայի վերաբերմամբ նկատուում է նրա այդ ձգտումը: Իբրև գրամատուրգ Զուգերմանը ըհալիստ է*), իսկ իբրև վիպասան նա իղէալիստ է բառիս բուն նշանակութեամբ: Նրա վէպերում տեսական տարրը

*) Յև'ս G. Brandes „Menschen und Werke“ եր. 535:

աւելի ուժեղ է, քան թէ իրականը, գաղափարականը աւելի ազդու է, քան թէ սովորականը:

Բայց թէ դրամաներում և թէ վէպերում կայ մի ընդհանուր դիժ, մի ընդհանուր առանձնայատկութիւն, որը միշտ ընտանեկան կեանքի շուրջն է պտտուում, միշտ կնոջ և մարդու, ծնողների և դաւակների, քոյրերի և եղբայրների յարաբերութիւնն է շօշափում: Պատահում է նոյնիսկ, որ վէպում արծարծուած գաղափարը նորից կրկնուում է դրամայում, ինչպէս օրինակ «Ճանկութիւն» վիպակն ու «Պատիւ» դրաման, «Օրինակելի սրբին» վիպակն ու «Սօզումի կործանումը» դրաման:

Այս վերջին—«Կեցցէ կեանքը» դրամայում էլ որոշ չափով կրկնուում է այն իդէան, որը այնքան չնորհալի ձեով արծարծուած է «Հայրենական տունը» դրամայում: Այստեղ էլ անհատական երջանութիւնը ընդհարուում է հասարակական կարգերի հետ, այստեղ էլ գլխաւոր գործողը կին է, մի կին, որը իր համոզմունքներով, իր ներքին աշխարհով նման է Մագդալին: Սակայն չը նայելով դրան, «Կեցցէ կեանքը» երբէք չի կարող համեմատուել «Հայրենական տունը» դրամայի հետ: Նա անհամեմատ թոյլ գրուածք է:

Կամսուհի Բէատէն է գլխաւոր հերոսուհին: Նրա շուրջն է կատարուում ամբողջ գործողութիւնը:

Ընարողական պայքարը իր ամենաբարձր ֆազիսումն է: Իւրաքանչիւր կուսակցութիւն աշխատում է իր թեկնածուին առաջ մղել, նրա ընտրութիւնն աջողեցնել: Դէպքը պատահում է Լեզինֆելդ գաւառամասում, որտեղ ուժեղ ազգեցութիւն ունեն սօցիալ-դեմօկրատները: Հէնց այս վերջին հանգամանքն է, որ ստիպել է ազգաբնակիչներին ամեն մի ձիգ թափել իրանց ընտրեալի—բարօն Րիխարդ Ֆիօլկերլինգի թեկնածութիւնը պաշտպանելու համար: Եւ իդուր չէ այդ ձիգը, քանի որ բարօն Ֆիօլկերլինգ միանգամայն համապատասխան է Բալխաստաղի պատգամաւորի կոչմանը, քանի որ նա իր ընդունակութեամբ ու պերճախօսութեամբ կարող է անազին ծառայութիւն մատուցանել ազգաբնակիչ կուսակցութեանը:

Բարօն Րիխարդը կամս Միխայիլ Կելլինգ Հաուզէնի մօտիկ ընկերն ու բարեկամն է: Երկար ու ձիգ տարիների ընթացքում շարունակուել է այդ բարեկամութիւնը, այդ փոխադարձ սէրն ու մտերմութիւնը: Սակայն բարօնական մի մեծ ոճիր է թագնուած այդ մտերմութեան տակ՝ Րիխարդը սիրում է իր ընկերի կնոջը—կամսուհի Բէատէին: Սէրը փոխադարձ է: Բէատէն էլ սիրում է Րիխարդին իր ամբողջ սրտով, իր ամբողջ

էութեամբ: Եւ սիրահար զոյգը մտերմութեան քօղի տակ թագ-
նուած ամբողջ տասն և հինգ տարիների ընթացքում անվրդով
կերպով ճաշակում է սիրոյ քաղցր պտուղները:

Խելացի ու ընդունակ կին է Բէատէն և գիտէ նպատա-
կայարմար ձևով օգտուել է իր առանձնայատկութիւններից: Նա
ամբողջապէս իր ազգեցեութեան տակ է գցել ամուսնուն—կոմս
Միխայիլին: Վերջինս միշտ պատրաստ է կնոջ խօսքը կատարե-
լու, նրա ցանկութիւնն իրագործելու: Եւ Բէատէն օգտուում է
իր այդ ազգեցեութիւնից, որպէս զի սիրեցեալ Ռիխարդի համար
փառք ու պատուի մի նոր ասպարէզ բաց անէ: Նա համոզում
է Միխայիլին, որ հրաժարուի Բայխտագի պատգամարութիւ-
նից և իրա փոխարէն տեղ տայ ընկերոջը—Ռիխարդին: Նա նոյն
ձևով համոզում է և ազնուականութեան միւս ներկայացուցիչ-
ներին, որ պաշտպանեն Ռիխարդի թեկնածութիւնը: Այդպիսով
Ռիխարդը դառնում է թեկնածու:

Նրա ընտրութիւնը աջողեցնելու համար կոմս Միխայիլը
աստուածաբանութեան դոկտօր Հօլցմանի հետ—որը Ռիխարդի
մասնաւոր քարտուղարն է—չըջաղայում է Լեզենֆելդ գաւա-
ռամասում և ազիտացիա անում սղգարնակութեան մէջ: Բայց
այդ միևնոյն չըջանում չըջագայում է և սօցիալ-դեմոկրատների
ներկայացուցիչը—Մայքսները, որը մի ժամանակ քարօն Ռի-
խարդի մասնաւոր քարտուղարն էր: Նա ծանօթ է Ռիխարդի
ամբողջ կեանքին, գիտէ նրա բարոյական արժանիքները, ուստի
և առիթից օգտուում է այդ ամենը ժողովրդին հազորդելու հա-
մար: Սակայն ապարդիւն են անցնում նրա ջանքերը: Չայնրի
մեծամասնութեամբ Բայխտագի պատգամաւոր է ընտրւում բա-
րօն Ռիխարդը: Փառնւոր յաղթանակ, բայց ինչպիսի դառն հե-
տեանքներով...

Նոյն իսկ ընտրութեան հետեանքը յայտնի լինելուց յետոյ
էլ Մայքսները չի դադարում իր սլաքներն ուղղել Ռիխարդի
դէմ: Մի մեծ ժողովում նա նորից առաջ է քաշում իր հակա-
ռակորդի բարոյական պատկերը:

—Աջակողմեան կուսակցութեան այդ պարոններին, ա-
սում է Մայքսներ, շատ սակաւ է աջողւում կուլիսների յետևը
թափանցել, թէև դրանք միշտ ճիգ են թափում հասարակական
բարոյականութեան պաշտօնական պաշտպանները հանդիսանալ:
Նրանք ոչինչ չը գիտեն, թէ ինչ է կատարւում իրանց ննջա-
րանների փառահեղ վարադոյրների յետևը: Բայց երբեմն մի որ
և է բարեալող զիպուած լոյս աշխարհ է հանում նրանց կեան-
քի գաղտնիքները: Եւ եթէ ես ինձ թոյլ տամ, այն ժամանակ

չատ պիկանտ բաներ պիտի պամեմ այն յարաբերութեան մասին, որ գոյութիւն ունի աջակողմեան կուսակցութեան թեկնածուի և նրա մտերիմ բարեկամի մէջ: Այդ մտերիմ բարեկամը փոխանակ իր ընտանեկան պատիւը պաշտպանելու թափառում էր տեղից-տեղ իր սանու բարեկամի օգտին ձայներ հաւաքելու համար»...

Հարուածը շատ ուժեղ էր, մանաւանդ որ «Lengensfelder Volkszeitung» վերնագրով սօցիալ-դեմօկրատիական թերթը իր էջերում զետեղում է այդ ամբողջ ճառը: Անսպասելի կերպով պատուում է կեղծիքի դիմակը և սկսում է ընտանեկան տրագեդիան...

Ընտրողական յաղթանակը տանկուց յետոյ կոմս Միխայիլը մի փարթամ երեկոյթ է սարքում իր տանը: Այդտեղ են ազնուականութեան ամենանշանաւոր ներկայացուցիչը, ամբողջ «աղն ու համեմը»: Այդտեղ են և պրինց Ուդրինգէնը և պետական քարտուղար բարօն Լիւդուիկը և ուրիշ շատ բարձրաստիճան անձինք: Եւ յանկարծ դրանցից մի քանիսի աչքովն է ընկնում սեղանի վրայ դրած «Lengenf. Volkszeitung» լրագիրը՝ ընդգծած առղերով: Ընդդածը յիշեալ ճառն էր, որ և մի խորհրդաւոր շուկ է առաջացնում հիւրերի մէջ: Վերջապէս գաղանիքը բացւում է և մինչև այդ ժամանակ միամիտ կոմս Միխայիլն էլ կարդում է սենսացիօն յօդուածը: Խանդն ու կասկածանքը այրում են նրա սիրտը: Նա վճռում է դատի միջոցով պատժել տալ անպատկառ Մաքքաներին: Իսկ Ռիխարդն ու Բէատէն դեռ աշխատում են խաբել Միխայիլին, դեռ փորձում են համոզել նրան, որ գրուածքը զրգարտութիւն է և թշնամութեան հետեանք...

Բայց հեռատես Բէատէն նախատեսում է անխուսափելի փոթորիկը և աշխատում է իր մի հատիկ դատեր—էլլէնի ապագան երջանկացնել: Էլլէնը սիրում է Ռիխարդի որդուն՝ Նօրբերտին ամենավառ սիրով: Նօրբերտն էլ սիրում է Էլլէնին: Այդ փոխադարձ սէրը յայտնի էր Բէատէլին, բայց սա սպասում էր, որ Էլլէնը աւելի հասունանայ և աւելի մեծ գիտակցութեամբ մտնի կեանքի նոր ասպարէզը: Իսկ կորստաբեր միջնադէպը պատահելուց յետոյ նա շտապեցնում է իր անելիքը: Չարաբաստիկ երեկոյթի հէնց հետեւեալ օրը նա կանչում է սիրահար զոյգին և տալիս իր համաձայնութիւնն ու օրհնութիւնը: Այդ մասին նա հաղորդում է նաև Ռիխարդին ու Միխայիլին:

Այդ միևնոյն ժամանակամիջոցում ազնուականութեան ներկայացուցիչները համոզում են Միխայիլին, որ նա այնպէս վարուի, այնպիսի համբերատարութիւն ու զգուշութիւն գործ

դնէ, որպէս զի անախորժ միջնադէպի պատճառով կուսակցութեան վարկը չընկնի, շահերը չը վնասուեն: Թերևս այդ պատճառով Միխայիլի կիրքը սանձահարուում է և նա ոչ մի վճռական քայլ չի անում նոյն իսկ այն ժամանակ, երբ Բէատէն ու Րիխարդը բացարձակապէս խոստովանում են, որ տասն և հինգ տարի շարունակ սիրել են միմեանց, ապրել են այդ սիրով:

Բայց հարցը գրանով չի վերջանում: Հէնց այդ օրերում սկսւում են Բայխտագի նիստերը և աջակողմեանները յանձնարարում են Րիխարդին, որ նա խօսի առաջին ճառը և պաշտպանէ ամուսնութեան սրբութիւնն ու անհրաժեշտութիւնը: Համաձայնում է Րիխարդը, սակայն խիղճը տանջում է նրան. նա տատանւում է.—ես ինչպէս կարող եմ պատասխանատու լինել Աստուծու և ամբողջ աշխարհի առաջ այն ամենի մասին, ինչ որ պիտի խօսեմ, ասում է նա Բէատէին, երբ իմ կեանքն ու վարմունքը պաշտպանածս դադարի կատարեալ հեղեանքն է: Ես ինչպէս կարող եմ ապացուցանել, թէ իւրաքանչիւր հասարակական կազմակերպութեան համար ամուսնական կապը մի անհրաժեշտ զէնք է, երբ այդ զէնքը հէնց իմ կողմից է ջախջախուած...

Սակայն այդ տատանումը երկար չի տևում: Նա արտասանում է ցանկալի ճառը և մի չը տևանուած ազդեցութիւն թողնում: Այդ կրակոտ ճառը իր խորիմաստ բովանդակութեամբ, իր պերճ արտայայտութեամբ այնպիսի ցնցող տպաւորութիւն է թողնում, որ նոյն իսկ Րիխարդի ամենառիտորիկ թըշնամին—Մայքսնըրը ընկճւում է և մոռանում է իր թշնամանքը: Հէնց նոյն օրը նա գալիս է Րիխարդի մօտ և յօժարակամ յանձնում է նրան այն երկու նամակները, որոնք իբրև զբաւար փաստ պիտի ծառայէին դատարանում Րիխարդի և կամուսնի Բէատէի սիրային կապակցութիւնը հաստատելու համար:

Այդ ամենը նոր ոյժ, նոր եռանդ են ներշնչում Րիխարդին: Նա ոգևորւած բացականչում է.

—Ապրել, ապրել, մի անգամ էլ ապրել...

Իսկ երբ ընկճուած ու վշտաբեկ Բէատէն գալիս է նրա մօտ, նա նոյնպիսի ոգևորութեամբ ասում է.

—Երդւում եմ, որ ևս երբէք այսպիսի պիճնդ կապ չեմ զգացել իմ և այս աշխարհի մէջ, ինչպէս այժմ, որովհետև հասկացայ, թէ ինչեր կարող եմ անել...

Այդ յուզիչ դէպքերից յետոյ անցնում են մի քանի օր ևս: Կոմս Միխայիլը որոշում է ամբողջ ընտանիքով հեռանալ իր բնակավայրից. բայց նախ քան հեռանալը մի մեծ հրաւերք է պատրաստում, որպէս զի մի անգամ էլ զուարճանայ իր բարե-

կամների հետ: Հաւաքուում են շատ ու շատ բարձրաստիճան հիւրեր, որոնց թւում և բարձր Ռիխարդը: Բոլորն էլ ուրախ են, բոլորն էլ գոհ են տանտիրոջ հիւրասիրութիւնից. բայց ամենից շատ գոհ է Ռիխարդը, որովհետև կոմսը մի առանձին մտերմութիւն է ցոյց տալիս դէպի նա: Կարծես մէջները ոչինչ չէ պատահել: Եւ կոմսը, ի հարկէ, որոշ նպատակով է այդպէս վարւում: Նա ուզում է այդպիսի վարմունքով մոռացութեան քօղի տակ քաշել մօտիկ անցեալը, ուզում է ուրիշներին հաւատացնել, որ իսկապէս միայն զրպարտութիւն էր ամբողջ պատմութիւնը:

Առաջարկում են կենայներ, խմում են և Ռիխարդի կենացը. բոլորից վերջը խօսում է կոմսուհին.

—Կեցցէ նա (իմա Ռիխարդը), ասում է նա. սիրելի բարեկամներ դուք միշտ կանչեցէք՝ կեցցէ նա, կեցցէ նա: Բայց ձվ է ապրում իսկապէս: Ո՞վ կը համարձակուի ապրել... Եւ միթէ դուք հաւատում էք, թէ ապրում էք: Կամ ես... իմ ամբողջ կեանքը հողուս և մարմնիս համար տանջանքների մի երկար շղթայ է եղել, բայց այնուամենայնիւ ես դեռ չեմ մոռացել ծիծաղելը, դեռ զգում եմ բախտաւորութիւն ու երախտագիտութիւն. այնուամենայնիւ վերցնում եմ բաժակս և ամբողջ հոգով բացականչում. «Կեցցէ կեանք»...

Այդ խօսքերից յետոյ նա թուլանում է և հեռանում սեղանից: Իսկ մի քանի րոպէից յետոյ հարեւան սենեակից լքուում է էլլէնի լացն ու ճիչը: Խնջոքս խանդարւում է: Հիւրերի մէջ սկսւում է խառնաչփոթութիւն ու իրարանցում: Դիմում են դէպի հարեւան սենեակը և Բէատէին անչնչացած գրտնում: Այդ իրողութիւնը ցնցող տպաւորութիւն է թողնում բոլորի վրայ: Ռիխարդը վազում է բժշկի յետևից, բայց արդէն ուշ է լինում: Բժշկի բացատրութիւնից պարզւում է, որ կոմսուհին թունաւորել է իրան և մեռել սրտի պայթիւնից:

Հիւրերը միմեանց յետեւից հեռանում են, իսկ Միխայիլը մօտենում է Ռիխարդին և կարդում Բէատէի թողած նամակը հետեւալ բովանդակութեամբ.

—Սիրելի Միխայիլ: Նոյն իսկ եթէ թոյնի հետքեր գտնեն մարմնիս մէջ, այն ժամանակ պիտի ենթադրեն, թէ ես անզգուշութիւնիցս եմ մեռել: Իմ զիտաւորութեան հետքերը բոլորովին անհետացնելու համար ես մահը կ'ընդունեմ մի ուրախ ինջոքի ընթացքում: Ես այդ քայլն անում եմ, որովհետև զգում եմ, որ անհրաժեշտ է մի գոհ: Աւելի լաւ է, որ ես լինեմ այդ գոհը, քան թէ նա, որովհետեւ նա գործ ունի վերջացնելու, իսկ ես կեանքս անցուցել եմ Դուք ինչ էլ որ անէք

—Եթէ միայն դու հրապարակ չը հանես այն, ինչ որ մինչև հիմա ամեն կերպ թաղցնել ես աշխատել—այնուամենայնիւ նրա մահը այժմ և դեռ երկար ժամանակ անհնարին կը դառնայ: Ես իմ ամբողջ կեանքում բախտ էի որոնում և այժմ մեռնում եմ նրա, քո և մեր զաւակների բախտի համար: Մոռացիր քեզ պատճառածս վիշաք և ընդունիր իմ շնորհակալութիւնը:

Բէատէ»:

Երկուսի վրայ էլ խոր ապաւորութիւն է թողնում նամակը և Բիխարզը վերջը մրմնջում է Միխայիլին.

—Տեսնում ես, ուրեմն, որ ես ոչ թէ ցանկանում եմ, այլ պարտաւոր եմ ապրել... Ապրել... որովհետեւ ես արդէն մեռած եմ... Մնաս բարով...

Ահա այդ խօսքերով էլ վերջանում է դրաման, որի իղէան մի մութ հանելուկ է մնում նոյն իսկ խորալնինն ականատեսի համար:

Եւ իսկապէս ինչ էր ուզում ցոյց տալ կոմսուէին իր մահով: Քաւել մեղքերը, բայց չէ որ նրա կարծիքով իր վարմունքը ոչ մի մեղք չէր, չէ որ ամուսնու հետ լացատրուելիս նա բացարձարապէս ստում է.

— ... Ես արել եմ ամենալաւը այն ամենից ինչ որ կարող էի անել իմ բնական պահանջների համամատ: Ես չեմ ուղեցել ձեր բարոյական օրէնքներից զատուել: Դա իմ ինքնապաշտպանութեան իրաւունք էր: Գուցէ և ինքնապանութիւն... Այդ միևնոյն է... Ես սիրել եմ իմ կեանքը և այն ամենը, ինչ որ չըջատուում է նրան, նոյնպէս քեզ—Միխայիլ...

Գուցէ նա մեռնում է, որ սրբէ ընտանեկան արատը, բայց չէ որ դա արդէն շատ ուշ էր, որովհետեւ երկար տարիների ընթացքում գոյութիւն ստացած արատը բաւական խոր արմատներ ունէր: Մնում է ենթադրել, թէ Բէատէն մահ է ընդունում, որ ապրելու իրաւունք տայ Բիխարզին: Սակայն այս դէպքում որքան անհրաժեշտ էր նրա մահը, քանի որ առանց դրան էլ Բիխարզը ոգեւորուած է ապրելու տենչով և առանց ճնշուելու, առանց խղճի խայթոյ դպալու Բէատէին յայտնում է, թէ ուզում է ապրել:

Այդպէս ուրեմն, «Կեցցէ կեանք», բացականչելով մեռնում է Բէատէն «Ես մեռած եմ»... մրմնջալով ապրում է Բիխարզը: Ծիշտ է, դրանք ապաւորութիւն թողնող, բեմական արժանիք ունեցող տեսարաններ են, բայց զուրկ ներքին իմաստից և բնական հիմքից:

Անբնական է և այն, որ Բէատէն իբրև մի ազնիւ անձնա-

ւորութիւն թոյլ է տալիս իրան խաբել հարազատ ամուսնուն
և տասն և հինգ տարի շարունակ թագցնել նրանից իր սէրը:

Չը նայելով այդ ամենին, «Կեցցէ կեանքը» բեմական աջո-
ղութիւն ունեցաւ և մինչև այժմ էլ իւրաքանչիւր օր բազմա-
թիւ հասարակութիւն է գրաւում Բերլինի «Deutsches Theater»:
Պատճառը հասկանալի է: Այդ դրաման միանգամայն ժամանա-
կակից բնաւորութիւն ունի, որովհետև շօշափում է ընթացիկ
կեանքի հրատապ հարցերը:—Կուսակցական պայքար, անհատա-
կան երջանկութիւն, ամուսնական անհաւատարմութիւն, մենա-
մարտութեան հարց, ինքնաթունաւորումն—բոլորն էլ ցնցող,
հետաքրքրաշարժ հարցեր:

Ե. Թ.

Գ Ո Ւ Թ Ա Ն Ի Շ Ո Ւ Ր Զ Ը *)

(Գիւղատեսչի յիշատակարանից)

III

Ութ օր էր անցել իմ Սարիխանլար (այսպէս էր կոչուում կալուածը) գալու օրից: Այս ութ օրուայ ընթացքում ինձ աջողուեց չըջել ողջ կալուածի սահմանները ամենայն մանրամասնութեամբ. այս շրջումի ժամանակ ես միջոց էի ունենում համեմատելու եւ ճշտելու ներկայ կալուածը իր իսկական սահմաններով՝ իմ ձեռքում եղած պլանի ցոյց տուած սահմանների հետ. տարբերութիւնը մեծ էր: Այնտեղ, ուր պլանում ցոյց էր տուած անտառ, այժմ շատ նոսր մացառներ էին միայն մնացել, այնտեղ, ուր վարելահողեր էին նշանակուած, այժմ անտանկի ճահիճներ էին, տեղ-տեղ կալուածի ներկայ սահմանները փոքրացել, ներս էին մտել, տեղ-տեղ ընդարձակուել էին և սուր եռանկիւնով մտել ուրիշ հողերի մէջ. այնտեղ, ուր պլանում բաց տարածութիւն էր միայն նշանակուած, այժմ տներ, բնակութիւն, ծառեր կային. մի ժամանակ գործող և ոռոգող առուները բոլորովին ցամաքած և հողի մակերևոյթին գրեթէ հաւասարուած էին. վարելահողերը առաջուայ համեմատութեամբ քչացել էին և դարձել արօտատեղիներ, որոնց վրայ ազատ արածում էին բազմաթիւ ոչխարներ, նորածին գառնուկներ: Բայց ամենից զգալի կորուստ էր ունեցել անտառը. ամենախոշոր ծառերը անխնայ կոտորուած էին և, ինչպէս երեւում էր, այդ աւերումը կատարուել էր պարբերաբար վերջին 6—7 տարիների ընթացքում: Մենք ինքներս անտառի մէջ բռնեցինք 5—6 սայլեր նոր կոտորած փայտերով ծանրաբեռնուած և երբ հարցրեցինք թէ ով է նրանց անտառը կոտորելու իրաւունք տուել, սայլատէրերը զարմայան.—ինչ իրա-

*) Ձե'ս «Մուրճ» № 3.

ւունք, ինչ թուղթ, աթաղան, բաբաղան մենք կոտորել ենք, բէզ, պատասխանեցին:

Այդ պատասխանը կատաղեցրեց ուղեկից թուրք ձիաւորիս—Սարիբէկին, որը մտրակների մի քանի հարուածներով ոտնատակ եղած իրաւունքներն էր ուզում վերականգնել, բայց իմ միջամտութիւնը վերջ դրեց այդ կոտորին, որը ակնյայտնի կերպով արհեստական և ձեւական մի խաղ էր. ինձ համար պարզ էր, որ անտառից անարգել օգտուել են բոլորը և գող սայլապանները և դրանց պատժող Սարիբէկը, մի խօզբով իւրաքանչիւր մարդ, ով որ կաղին, նղներ և մի հատ սայլ է ունեցել:

«Բանդուած օջախի» (այսպէս էր անուանում կալուածը Կարախանեանը) սահմանները պատելուց յետոյ ինձ մտում էր ձեռք բերել այն ծանօթութիւնները, որոնցից ես փախչել չէի կարող, որոնք սակայն ինձ կարող էին ամեն քայլափոխում պէտք գալ—եթէ մտադրութիւն ունէի մի բան անել այստեղ, այս մարդկանց հետ:

Պէտք էր այցելել գաւառական ջոջերին՝ գաւառապետին, հաշտարար դատաւորին, միջնորդին, բժշկին և այն իրանց աթուանիստում, որը մեզնից 12—15 վերստի վրայ էր միայն. ի հարկէ ինձ որպէս հարուստ կալուածատիրօջ ներկայացուցչի, աւելի յարմար էր փառաւոր տեսք տալ իմ այցելութեանը. այս կողմ այն կողմ ընկալ յուսալով նկուղներում, ծածկերի տակ կառքի նման մի բան գտնել, որովհետև գիտէի, որ հանդուցեալ գեներալը մի քանի կառքեր է պահելիս եղել կալուածում, բայց իմ ջանքս ի դուր անցաւ. մի տեղ դտայ փակ կառքի երկու անիւներ միայն, մի այլ անիւնում կառքի լապտերի մէկ հատը, ապա ամբարում ճանապարհորդական փառաւոր կառքի ետեւի երկու կաշուէպատ արկղեր, մի հին անղլիական թամբ և կառապանի փառաւոր մի գլխարկ՝ սիրամարզի մաշուած փետուրով զարդարուած. անցեալ կառքի այս բեկորներինց գծուար էր մի կառք կազմել, ուստի ես բաւականացայ այն ձեւով, որ իմ տրամադրութեան տակ էր դրել զայլու օրիցս ի վեր պ. Կարախանեանը և ահա ամենելով ինձ հետ երկու ձիաւորներ առաւօտեան ժամը 9-ին ես ճանապարհ ընկայ—Բարդուչէն:

Նկարագրեմ այն ճանապարհը որով անցնում էին: Ոչ. չարժէ. բաւական է ասել, որ ժամ և կէսից աւելի ես գնում էի և չը լսեցի ոչ մի ձայն, ոչ գութանի, ոչ արօրի, ոչ երկրագործի և ոչ խաչնարածի. չորս կողմս ոչ մի մարդկային բնակչութիւն—միայն հարուստ բնութիւն, առատ ջրեր, անմշակ հո-

ղեր, դաշտեր և ձիերի մի քանի երամակներ՝ անտէր, անտիրական արածելիս. ո՛ր էր մարդը, սրանց տէրը, այս բոլորից օգտուողը՝ չը գիտեմ. ես նրանց չը տեսայ և միայն այն ժամանակ, երբ մօտենում էի Բարգուշէնին ճանապարհին երեւացին մի քանի սայլեր, երեք-չորս ձիաւորներ և 60—70-ի չափ ոչխարներ ինձնից մի քանի վերստի վրայ արածելիս:

Բարգուշէնի տեղադրութիւնը գեղեցիկ է. գրեթէ լեռան լանջում, բուսականութեան մէջ թաղուած, որի միջից երեւում էր մզկիթի կանաչ մինարէի սուր ծայրը, մի քանի տների կառուրներ և ուրիշ ոչինչ: Ցածում վազում էր Բարգուշէն գետը, որից ջուր էին վերցնում ողջ գաւառի առուները. զրանք էին որ իրանց քըքըչոցով, ուրախ կըլկըլոցով խանդարում էին չորս կողմի մեռելային լուծիւնը:

Վերջապէս մտանք Բարգուշէն, անցանք զրա լայն փողոցով և տալով ձիս ձիաւորին, ես ուղեկից Սարիբէկիս հետ զընացի գէպի գաւառապետի տունը:

Նա տանը չէր այլ գաւառական ոստիկանատանը. ես ուղղուեցի ոստիկանատուն. դեռ ես 200 քայլի վրայ ոստիկանատունը աչքի ընկաւ այն ահագին ժողովրդի բազմութեամբ, որ ժողովուած էր նրա շուրջը. մի քանի կարմիր բաշլըղներով ձիաւորներ ընկած ամբոխի մէջ ծեծում, մտրակում էին սրան, նրան. զրանց մէջ աչքիս ընկան երկու սև գտակներով, մաքուր չուխներով մարդիկ, որոնցից մէկը իր շուրջը ժողոված մի քանի գիւղացիներ ինչ որ բացատրութիւն էր տալիս, իսկ միւսը նստած պատի տակին իր ծնկների վրայ մի ինչ որ բան էր կրում. զրանք, ինչպէս Սարիբէկը բացատրեց, գիւղական ազվօկատներն էին—յայտնի մարդիկ Բարգուշէնում և շրջակայքում...

Մտանք սրահ. ձիաւորներից մէկին յանձնեցի այցետոմսս գաւառապետին տալու. մի քանի բոպէից դուրս եկաւ թուրք ձիաւորը և ինձ ներս հրաւիրեց. ես մտայ: Դա մի մեծ սենեակ էր—մի քանի սեղաններով, որոնց վրայ թփուած էին թղթերի ծանր կապոյններ, իսկ զրանց քամակին նստած երկու երեք հոգի—զրագլիւներ պարապում էին. այստեղ էր և մեր պրիատաւ Հասան բէկը, որը մի ինչ որ թուղթ ձեռքին կարգում էր. տեսաւ ինձ թէ չէ ժպտաղէմ մօտեցաւ, հարցրեց քէֆս և ապա ցոյց տալով զիմացի դուռը ցածր ձայնով ասաց.

—Նա այնտեղ է.

Ես ներս մտայ:

Կարմիր մահուցով ծածկած մեծ սեղանի առաջ նստած էր

գաւառապետը—50-ի մօտ մի առողջ, թուխ, միջահասակ, թիկնաւէտ, փոքրիկ, շատ փոքրիկ բեխերով, զինուորական հագուստով թուրք աղամարդ, Ծանր, հանգիստ տեղից չարժուեց, ձեռք տուեց ինձ և յոյց տալով զիմացի աթոռը առաջարկեց նստել:

Ես նստեցի:

—Հասանքէկը—մեր պրիստաւը ինձ ասել է ձեր գալըստեան մասին. շատ ուրախ եմ, որ մեր գաւառը մի ինտելիգէնտ մարդ է մտնում—ասաց նա ոռւսերէն թրքական թանձր արտասանութեամբ—մանաւանդ ուրախ եմ, որ դուք զալիս էք մեր գաւառը որպէս հարուստ կալուածատէրերի ներկայացուցիչ—շատ ուրախ եմ. կրկնեց նա ժպտալով և ապա, չը թողնելով ինձ խօսել՝ շարունակեց.

—Անապատ, անապատ է մեր գաւառը. հողը հարուստ, ջուր շատ, միայն մարդ չը կայ, գործ կատարող մարդ:

—Ես լսել եմ, որ այս գաւառը հարուստ է յայտնի կալուածատէրերով, նկատեցի ես:

—Այո, բէգերով, աղաներով շատ հարուստ է, բայց ոչ մի «խօզեպիլն», շէշտեյ նա խօզեպիլն բառի վրայ:

—Իսկ ուր են խօզեպիլները, հարցրեցի ես:

—Ո՞ւր. ամեն տեղ, բայց ոչ իրանց կալուածներում—Թիֆլիսում, Բագու, Գանձակում, Պետերբուրգում, նոյն իսկ արտասահմանում, իսկ կալուածներում մնացել են միայն ծառաները և վերակացուները—ճիշտն ասած՝ բուն աւաղակներ. բայց ինձ հարկաւոր են իրանք-տէրերը ոչ որպէս բէդեր, աղաներ, խաներ, այլ որպէս աշխատող, գործող կալուածատէրեր-խօզեպիլներ:

Այս հոգացողութիւնը, այս ցաւակցական տոնը, որ գաւառը մնացել է անտէր, ինձ վրայ շատ լաւ սպաւորութիւն թողեց.—ևս նկատեցի.

—Իսրաֆիլ բէկ, դուք էլ թքէք գաւառից փախածների վրայ և զբաղուեցէք նրանցով, որոնք ապրում են գաւառում՝ զիւղացիներով, նրանք աւելի կարօտ են օգնութեան, կարեկցութեան:

Իսրաֆիլ բէկի երեսի քաղցր արտայայտութիւնը մի անգամից փոխուեց.

—Օյ, օյ, օյ—Աստուած հեռու տանի, բալորն էլ գող, աւազակ, խարդախ, ծոյլ, անպիտան, բալորը, բալորը... զիւղացի... այ դուք չուտով կը ճանաչէք զբանց. զբանք հօ մարդիկ չեն, գազաններ են, անասուններ. ինչ անես զբանց հետ, ինչ...

մտրակ, բանտ և Սիբիր—ահա այն միջոցները, որոնցով կարելի է դրանց հետ կռուել... Սիբիր, Սիբիր...

Գաւառապետը տաքացել էր, նա տեղից բարձրացաւ և մօտեցաւ ինձ.

—Օրական հարիւր յանդանք, հասկանում էք, հարիւր յանդանք, և որ զարմանալին է մէկ մարդ կարողանում է միաժամանակ երեք յանդանք գործել, լսել էք այդպիսի բան, կարդացել էք:

Ես միջամտեցի:

—Ինձ թւում է որ յանդանքների մեծ մասը կատարւում է անգիտակցաբար, չիմանալով, որ դա յանդանք է, այլ ինչպէս ինձ ամեն քայլափոխում բացատրում են «աթաղան, բաքաղան» տեսել են, սովորել և այժմ իրանք շարունակում են նոյնը, իսկ եթէ ինչէին դպրոցներ, դրքեր, լաւ աղաներ, մի խօսքով լաւ օրինակ, այն ժամանակ... նա թոյլ չը տուեց ինձ վերջացնել սակիքս:

—Ուսումնարան, ճիշտ էք ասում. բայց թարաքամին, շրջմոյիկին, թափառական խաշնարածին ինչ ուսումնարան. նրանք տուն չունեն, տեղ չունեն, մի հաստատուն բուն չունեն. այսօր այստեղ այս սարի վրայ, վաղը միւս լեռան, դեռի մօտ, անտառի մէջ և ապա նորից այստեղ, այնտեղ. ինչ ուսումնարան դրանց—նախ անհրաժեշտ է դրանց նստեցնել մի տեղ, մի հողի վրայ, կապել հողի հետ, տուն, օջախ շինել տալ, խըլիլ ձեռքներից ոչխարները, այն ժամանակ նրանք հաստատուն գիւղ կը կազմեն, կ'ունենան օրինաւոր վար, ցանքս, կ'ունենան մղկիթ, ուսումնարան, իսկ քանի որ մեր ժողովրդի գլխաւոր պարագմունքը կը մնայ իր խաշնարածութիւնը նա միշտ կը մնայ նոյն յիմարը, նոյն յանցաւորը, գողը, աւտգտիւր: Օրինակ հայերը. իմ գաւառում մի 10—15 հայ գիւղեր կան. այ մարդիկ, ինչ կասեմ. տուն ունեն, պարտէզ, այգի ունեն, եկեղեցի, ուսումնարան ունեն, վար, ցանք, հարստութիւն մի խօսքով ամեն ինչ, ապրում են մարդավայել, աշխատում են, քըրթիք են թափում և մարդ ուզես, չուզես յարգում է նրանց, սիրում, ուրախանում... ասենք նրանց մէջ էլ պատահում են յանցաւորներ. նու, դրանք ուրիշ տեսակի են—վաշխառուներ, բայց դրանց մատերով կարելի է համարել, իսկ մերոնց թուրքերին Աստուած սնիծէ...

—Խառըլանի հասարակութեանը ինչ ասենք, մեղմ ձայնով ասաց, ներս մտնելով մի քառասուն տարեկան, չիկահեր մարդ գաւառապետին:

—Թող սպասեն, ես դուրս կը դամ—պատասխանեց իսրաֆիլ բէկը:

—Ես բարձրացայ տեղիցս:

—Խնդրեմ այսօր երեկոյեան մեզ մօտ շնորհ բերէք, ինձ մօտ կը լինեն և ուրիշները:

Ես դուրս եկայ: Մեծ դանլիճում ինձ ներկայացաւ այն պարոնը, որ ներս մտաւ գաւառապետի մօտ.

—Սարգիս Եսայեան, այստեղ սեկրետար եմ, շատ ուրախ եմ որ դուք էք Ա.-ի կառավարիչը:

Նա զեռ խօսքը չէր վերջացրել, երբ ներս մտաւ գաւառապետը, խեղճ քարտուղարը հեռացաւ ինձանից:

Ես չապաղեցի դուրս գալ: Ոտտիկանական ծառայողները իսկոյն իրար գլխով դիպան. բէզը... նաչախիկը... անցաւ շրջուկը ամբօխի մէջ և բոլորը տեղերից կանգնեցին, ուղղուեցին:

Դուրս եկաւ գաւառապետը: Ես անցայ, իմ ետեւից ես լսեցի սարսափելի հայհոյանք, որին յաջորդեց իրարանցում, ապա շարժուեցին մտրակները և լսուեց աղիտղորմ ձայներ, հառաչանքներ. գաւառապետը գոռում էր «Տուր, տուր այդ աւազակներին... էլի... էլի...»

—Ա՛յ ջարդում է հա, բէզ, ասաց ինձ Սարիբէզը նայելով դէպի ոստիկանատուն:

—Ինչի համար է ջարդում—հարցրեցի ես:

—Է՛ն ո՞վ գիտէ, ասաց Սարիբէզը:

Մենք մտանք դատաւորի տունը:

Նա տանն էր, անային չորերսով: Ընդունեց, ներողութիւն ինզրեց. իմանալով իմ ուղ լինելս սկսեց.

—Լսել եմ կալուածի նոր տէրերի մասին. լաւ մարդիկ են, հարուստ, բարեգործ, ասում են որ մեծ ծրագիրներ ունեն նրանք, ցանկանում են զիւզամատեսական զարոյց հիմնել կալուածում. ճիշտ է:

Ես անորոշ պատասխան տուեցի, քանի որ ինձ յայտնի չէր կալուածատէրերի այդ դիտաւորութիւնը:

Մեր ականջին էին հասնում շառաչող մտրակների և յուսահատ ձայների բարձր մրոնչոյցը.

—Ի՞նչպէս էր անցնում ձեր ժամանակ այստեղ—դիմեցի ես դատաւորին:

—Ինչպէ՛ս, ժպտաց նա, бьемъ, судимъ, лечимъ, миримъ и играемъ, а иногда играемъ, миримъ, лечимъ, судимъ и бьемъ, а въ особенности бьемъ. Լսում չէք—գարձաւ նա գլխով յոյց տալով դէպի ոստիկանատուն:

—Ո՞ւմն էք ծեծում, հարցրեցի ես:

—Բողորին, բալորին. դա միակ և ամենաճիշտ միջոցն է այս երկրում. եթէ չես ծեծում նեղանում են, խռովում և անպատճառ այնպիսի բաներ են անում որ ծեծես:

—Իսկ ծեծողին ինչ պատիժ:

—Բայց միթէ ուրիշ ուղղիչ միջոցներ չը կան—հարցրեցի ես:

—Ինչու ուրիշ միջոցի կտեւից ընկնել, քանի որ ծեծը ամենակտրական միջոցն է.

—Իսկ յանցանքները գրանով քչանում են, հետաքրքրուեցի ես:

—Ոչ, ի հարկէ, ոչ. սակայն ինչ արած որ ուրիշ, մարդավայել միջոցները ծիծաղելի են ժողովրդի համար. օրինակ տուգանք, բանտարկութիւն կային. տուգանք կը նշանակես, նա ինքը ոչինչ չունենալով կը գնայ հարեւանից կը գողանայ և կը վճարի. կը բանտարկես—նա կ'ուրախանայ, որովհետեւ բանտը իր տնից լաւ է. բայց կը թողնես՝ նա կը գողանայ. Սլքբր կ'ուղարկես նա մի քանի ամիսից կը փախչի այնտեղից, կը վերադառնայ, կը սպանի էլի մի երկուսին և կը դառնայ փախուստական աւազակ. չէ, էլի ծեծը լաւ է:

Ներս մտաւ մի ծերունի զինուորական, սպիտակ մազերով, համալիրելի դէմքով. դատաւորը ներկայացրեց.

—Հաշտարար միջնորդ Դ.—բէկով:

—Գիւղատնտես էք, այո՛, շատ լաւ. այ կը տեսնենք ինչ կ'անէք, լաւ այգի ունէք. միայն զինի չը կայ, եղբայր, զինի չունէք. ի՞նչ ամօթ. զինին առնում էք, իւղը առնում, կանաչին առնում, պանիրը առնում. դա խայտառակութիւն է. տեսնենք, մի տարուց, երեւի, ձեր պատրաստած զինին կը խմենք, ձեր շինած իւղն ու պանիրը կ'ուտենք, տեսնենք. մենք ձեզից դեռ ևս շատ սպասելիքներ ունենք. կալուածը մեծ, տէրերը հարուստ, դուք մասնագետ. տեսնենք ձեր շնորքն էլ. մեր բանն ուրիշ է. հող ունենք—փող չունենք, միջոց չունենք գործ կատարելու—ակամայ թողնում ենք մեր կալուածները և ծառայութեան մտնում, էլի բան է. մի կտոր հաց ենք աշխատում, տուն ընտանիք կառավարում...

Նկաւ և տեղական բժիշկը, մի երիտասարդ պարոն. ուրախ, զուարթ, ժպտաղէմ:

Հետաքրքիր էր նրա պատմածները:

Բարգոնչէնում կար մի բուժարան. միջոցները սուղ, գեղատունը աղքատ. օրական 100-ից աւելի հիւանդներ պաւառի

հետաւոր անկիւններէից թափոււմ են այդտեղ և օգնութիւն, գեղ, բիշկութիւն հայցում. գալիս են ոտով, ձիերով, սայլերով, ձիերով ամենամանտանելի ճանապարհներով, գալիս են և թափոււմ բուժարանի բայը. այդքանին մի օրում և նոյն իսկ երկու օրում քննելու, տեսնելու ոչ մի հնար չը կայ և հաւ խեղձերը, չը գտնելով ոչ մի ապաստարան, ուր գիշերէին, ստիպուած են լինում բացօդեայ անցնել—այս ու այն անկիւնում—այնպիսի պայմաններում, երբ ոչ մի հնար չը կայ դրանց օգնել—կեղտոտ, սոված, ամենամանտանելի անողջապահական զբրութիւն, ազիտութիւն գեղերի գործածութեան վերաբերմամբ, օրինակ տալիս են այս մի գեղ քսելու, նրանք տանում են տուն և ուտում են, տալիս են խմելու՝ նրանք քսում ենք. այս կամ այն չափն ես առաջարկում, նրանք ազիտութիւնից կըրկնակի դողաներ են գործ ածում և դեղը փոխանակ օգնելու վնասում, նոյն իսկ մահացնում է—աւելացրէք դրա վրայ սարսափելի չքաւորութիւնը, նախադաշարմունքը կային կայլն և դուք կը համոզուէք թէ որքան թոյլ և անկօր են այս բուժարանները կռուելու ազգաբնակչութեան հիւանդութիւնների դէմ, մի օգուտ տալու նրանց. սակայն, յաւալի է, այդ մանաւանդ, երբ նկատում ես որ զիւզացին հաւատով է վերաբերում եղօխաուրին և դարմանին»...

Նրկար խօսում էր բժիշկը այս նիւթի մասին:

Արդէն ժամը 1-ն էր, ևս բարձրացայ և մնայք բարև ասելով բոլորին դուրս գնացի:

Նոյն օրը ևս վերադարձայ կալուած:

IV

Մարտ ամիսն էր. գարունը իր սղջ արգ ու զարգով, ողջ քնքշութեամբ ու հրապուրիչ շքեղութեամբ հրապարակ էր դուրս եկել. ծառերը սկսել էին ծաղկել և ամենից շուտ նշննին էր իր բաց-վարդագոյն ծաղկալինջերով բացուել, ուռճացել: Ուր նայում ես կանաչ, ուր նայում ես թարմութիւն, շքեղութիւն նորատի, նորաբողբոջ կեանք իր ապրելու ոյժով, եռանդով, պահանջով. կենսատու հողը ևս սկսել էր ևս զալ, ուռչել. դարնան ջերմ արեգակի տակ, գոլորչին սպիտակ, հազիւ նկատելի շղարչի նման, դուրս դալով հողի ծակոտիներից ու ճեղքերից հանդարտ օրօրուելով բարձրանում էր աջ ու ձախ մեղմ ոլորուելով, խազազ հեռանում սև հողից և գնում նստում էր ծառերի, տունկերի, ծաղիկների վրայ:

Իայց որքան ետուն էր դարունը, նոյնքան մեռած էին մարդիկ, դուրս ես գալիս դաշտ, այն ընդարձակ դաշտը, ուր հողի իւրաքանչիւր մի կտոր քեզ դէպի ինքն է կանչում և կարծես, ստում «արի ճեղքիր ինձ մի փոքր, շատ փոքր ճեղքիր, պահ տուր ինձ մի հունտ, մի հատիկ հունտ և ես մի քանի ամսից քեզ հարիւրապատիկը կը տամ», բայց մարդը անտարբերութեամբ անցնում է նրա մօտով, կոխում, արորում է ոտով նրան և հեռանում գնում է. դիտէք ուր, նա գնում է գողանալու հարեւանի ուլը, գառը, հաւը, ձին, մի հատիկ հորդը...

Ամբողջ դաշտի վրայ չորս հինգ տեղ միայն երեւում էին մարդիկ իրանց կզներով, գոմէշներով, արօրով և այնպիսի մի ձանձրոյթով էին վարում, կարծես, այդ հողը, այդ կզները, այդ արօրը չէ որ նրան, նրա ընտանիքը պահող կերակրողը... Գիւղացիների մեծ մասը այժմ զբաղուած էր տուններ մաքրելով, խորացնելով, խոտհարքներ ջրելու ժամանակն եկել էր, մի երկու ամսից մօտենում էր քոչի ժամանակը, իսկ մինչև այդ պէտք էր արտերը ջրել, խոտը հնձել, փողովել, արտերը քաղել և չուել դէպի լեռները, սառը ազբիւրները: Ահա թէ ինչու գութանաւորների տեղ բահաւորներն էին երեւում. ոտները քշտած, բոկոսն, ձեռքերը քշտած բորորը շատպում են դէպի տունները. ջուրը արդէն շատանում է. պէտք էր օգտուել օր առաջ:

Ութ, ինը մշակներ ձեռք ու ոտները քշտած մի կողմից մաքրում, միւս կողմից ջուր էին թողնում մեր ընդարձակ խոտատեղի վրայ, երբ ինձ մօտեցաւ հարեւան կալուածատէր Իսմայիլ բէկը:

— Ես ձեզ մօտ էի գալիս, սասայ նա բռնելով ձեռքս:

— Ես ձեզ սպասում էի, պատասխանեցի ևս:

— Ինչ անենք, տասցէք, դարուն է, աշխատանքի ժամանակ, խորհուրդ տուէք, ինչ սկսենք:

— Եղներ ունէք:

— Ութ զոյգ:

— Գութան:

— Մի երկաթէ գութան ունեմ, չորս տարի առաջ գնած, բանի պէտք կը գայ:

— Եթէ կտրած տեղ չունի:

— Ոչ, անգործութիւնից ժանդոտուած է միայն, ինչպէս բերել եմ այնպէս էլ մնացել է:

— Եթէ այդպէս է, Իսմայիլ բէկ, վաղը իսկ դուրս քաշիր

գութանը, վարձիր մի քանի մշակներ և սկսիր տանդ մօտ մի ընդարձակ, խամ հողում վարը:

—Բայց ո՞վ կը վարի, իմ ծառաներիցս գութան բանեցնող չի լինիլ:

—Այսօր իսկ մարդ ուղարկիր մեր հարեւան Բաջոնց հայաբնակ գիւղը և այնտեղից մի լաւ ուղարար բերել տուր. նրանք գութան բանեցնելում վարպետ են:

Իսմայիլ բէկը տատանւում էր:

—Իսկ ի՞նչ ենք ցանելու:

—Բամբակ:

—Լաւ, ի՞նչ պայմաններով տամ հայերին վարելու:

—Եզները քեզնից, հողը քոնը, սերմը քոնը, ջուրը քոնը, գութանը քոնը:

—Իսկ նրանց, նրանց ի՞նչ մնաց:

—Ամենազլխաւորը՝ աշխատանք. նրանք կը վարեն, կը ցանեն, կը ջրեն, քաղճան կ'անեն, ապա, երբ բամբակը հասնի, քեզ հետ կ'իստովի կը ժողովն և դու նրանց կը տաս բամբակի կէսը:

Իսմայիլ բէկի բերանը բաց մնաց:

—Կէսը:

—Այդ կէսը, չէ որ դու մինչև օրս ունէիր և հող, և ջուր, և գութան և եզներ, բայց գիւղացիներից ստացած բահրից բացի ոչինչ չունէիր, որովհետեւ այդ բոլորի հետ չը կար ամենազլխաւորը—աշխատանքը. ահա այդ աշխատանքը կը գնի հայ գիւղացին և դու շահուած կը լինես:

Իսմայիլ բէկը գլուխը շարժեց:

—Դուք շատ երես էք տալիս գիւղացիներին. այդպէս գնահատելով նրա աշխատանքը, դուք նրանց մեր գլխի տէր կը չինէք և դա կը դառնայ սովորութիւն, լաւ չի լինի, եթէ մենք փողով անենք այդ բոլորը, հարցրեց նա լրջօրէն:

—Փորձեցէք, բայց դա ձեզ կրկնակի թանգ կը նստի:

—Չէ, էժան կը նստեցնեմ. հէնց այսօր հայերին բերել կը տամ և կը խօսեմ հետները:

Նա ձեռքը մեկնեց ինձ, մնաս բարև ստեց և նախ քան հեռանալը խնդրեց:

—Վաղը դուք էլ եկէք, տեսէք գութանը, ցոյց տուէք ինչ հարկաւոր է. ես շատ շնորհակալ կը լինեմ:

Ես յայտնեցի իմ պատրաստակամութիւնը:

Նա դո՛հ սրտով հեռացաւ ինձնից:

Յաջարդ օրը առաւօտեան ես մի տոմս ստացայ Իսմայիլ-

բէկից. գրում էր «Յիէք և ինքներդ պայմանաւորուեցէք». ուղարկել էր մի լաւ ձի և երկու ձիաւորներ—ուղեկցելու ինձ:

Ես իսկոյն գնացի. մի ժամից ես Իսմայիլ բէկի խղճուկ բնակարանումն էի, մեծ սենեակի յատակը, պատերը ծածկուած էին տեղական խալիներով, կապերտներով, փալասներով. մի սեղան անկիւնում. մեծ պատին չորս-հինգ զանազան սիստէմաների հրացաններ, պատրօնտաշներ, սուրեր, խէնջարներ. ինքը նստած տախտի վրայ, առաջին վեց եօթ թուրքեր, խօսում էր. նկատելով ինձ իսկոյն բարձրացաւ տեղից.

—Գիտէք ինչ ուղեց անպիտան հայը իր աշխատանքի համար. երեք հարիւր ուրբի, որ մի ամիս վարի գուլթանով և անի այն բոլորը ինչ որ դուք երէկ առացիք ինձ, ես գժուեցի լսելով այդ, քիչ էր մնում ծեծէի անպիտանին, երեք հարիւր ուրբի... բարկացած պատմում էր ինձ Իսմայիլ բէկը:

—Իսկ կիսովի համաձայն է:

—Ես այնքան բարկացայ, որ իսկի չը հարցրեցի էլ. դուք խօսէք խնդրեմ, ես անկարող եմ այդ լրբերի հետ հանգիստ խօսել. կանչիր այստեղ հային—գարձաւ նա թուրք ծառաներից մէկին:

Հայը եկաւ. դա մի երեսուն հինգ տարեկան, թուխ դէմքով, բաւական մաքուր հագնուած հայ գիւղացի էր—Աբրահամ անունով:

—Աբրահամ, բամբակ վարել ես իսկի:

—Ձէզ, բէզ, բամբակ մեզնում չեն վարում:

—Իսմայիլ բէզը ուզում է բամբակ ցանել իր հողերում:

—Լաւ, ինչ կը լինի, թող ցանի: Պատասխանեց նա անտարբեր եղանակով:

—Այսինքն դու պէտք է նրա համար ցանես, ես քեզ կը սովորեցնեմ թէ ինչպէս անել, կարող ես:

—Բէզ, էչ հօ չեմ, որ սովորեցնես կ'անեմ էլի:

—Մի ամիս մի գուլթանով ինչքան անել կը վարես:

—Բէզ, գուլթանը, եղները գիտի, լաւ եղներով մի ամսում 20 չուալ անել կը վարեմ:

—Կիսովի կը վարես—հարցրեցի ես և ապա բացատրեցի բամբակի մշակութեան եղանակը. նա լաւ ու մտնջ լսում էր. առեց մի քանի հարցեր ջրելու, քաղհանի, ցանելու, եկամտի, բամբակի գնի մասին և համաձայնուեց:

—Բէզ, գարձաւ ինձ Աբրահամը, բամբակի գործը մեզ համար նոր է, թող Իսմայիլ բէզը ինձ խօսք սայ, որ եթէ քո

ասածի նման անելուց յետոյ, եկամուտ չը լինի՝ նա ինձ տաս չուալ ցորեն տայ, որ ես էլ զրկուած չը լինեմ, որովհետեւ այդտեղ աշխատելու ենք ես, իմ երկու եղբայրները, երեք աղաներս— վեց հոգի:

Իսմայիլ բէզը համաձայնուեց միայն այն ժամանակ, երբ ես նրան ապահովեցրեցի գործի աջողութիւնը:

— Բէզ, ինչդրեմ ասեա որ գութանը դուրս բերեն, եղները լծենք մի փորձ անելու, դարձաւ նա Իսմայիլ բէզին:

— Հայ, ինչ ես շտապում, էգուց արի:

— Ձէ, բէզ, ժամանակը թանգ է, քանի որ այստեղ եմ սկսենք, լաւ կը լինի:

Իսմայիլ բէզը հրամայեց դուրս բերել գութանը և տալ եզները:

Մենք նախաձաշեցինք, ապա դուրս եկանք նրա գեղեցիկ նժոյգները նայելու և երբ մտանք փոքրիկ անտառը ազմուկի ձայն լսեցինք, ուղղուեցինք գէպի այն կողմը. մի խումբ թուրքերի մէջ տեսանք Աբրահամին, որը արդէն գործի էր անցել, չորս զոյգ եզներ լծած երկաթէ գութանին աշխատում էր. մօտեցանք:

— Այ անտէրի եզներ, տեղներից չեն շարժոււմ. իսկի գութան վարել են որ իմանան աշխատելն ինչ բան է. դրանցով բան չի լինի. ես մի երկու օր կը բերեմ իմ մի ջուլտ եզները. նրանց կը լծեմ առաջին և նրանք այս թամբախներին աշխատել կը սովորեցնեն— դարձաւ ինձ Աբրահամը:

Թուրքերը շրջապատած նրան աւելի հայհոյ էին անում քան օգնում.

— Բէզ, դարձաւ Աբրահամը Իսմայիլ բէզին, եզներդ քո ծառաների նման ծոյլ են, նրանց որ տեսնում են լուծը վզից դէն են գցում. ինչդրեմ ասեա որ, երբ մենք վար անելու կը լինենք, ծառաներիցդ ոչ ոք չը մօտենայ մեզ:

Իսմայիլ բէզը բարկացաւ, բայց չարտայայտեց խօսքերով:

— Լաւ, հպարտ հայ, կասեմ— դու քո գործն արա. ապա դառնալով ինձ.

— Տեսնում էք ինչպէս ծաղրում են մեզ. տեղն է. ճիշտ է ասում. սրանցից ոչ մէկն էլ գութանի մած բռնելու ձեռ չը գիտեն, իսկ այժմ գութանն է, որ հաց է տալիս, ժամանակները փոխուել են:

Դա գութանի յաղթանակն էր. ես մի առանձին ներքին բաւականութեամբ էի լսում այս խոստովանքը, մանաւանդ, երբ այդ անում էր Իսմայիլ բէզի նման մի կալուածատէր:

Մենք հեռացանք Աբրահամից և մի կէս ժամից ձի նստելով գնացի այցելութեան հարեան կալուածատէր Աղալար-բէզի մօտ:

—Խնդրեմ ձեր խորհուրդներով օգնէք մեր գործին—գիմեցին ձ գնաս բարեկին Իսմայիլ բէզը:

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

ԱՇԽԱՏԵ՛Ղ ԵՍ ԳՈՒ...

(Աղա ներքից)

Յափշտակուած դու ինձանով, կրքոտ սիրով տողորուած,
Ջերմ համբոյրներ, գրկախառնումն սպասում ես փո-
խադարձ.

Փափակում ես գուրգուրուելու, տիրանալու իմ սրտին,
Կարօտում ես թարմ, կուսական մատաղ սիրոյ թովչանքին:

Բայց ասն ինձ՝ ծանօթ ես դու վշտերի հետ դարաւոր,
Մաքառել ես հերոսի պէս վիճակիդ դէմ բռնաւոր,
Եւ որպէս մի վախկոտ ստրուկ չե՞ս վհատել նեղ ժամին,
Չե՞ս խուսափել հաս վտանգից, որ զո՞հ չը տաս դու
կեանքին:

Անդուլ գործից առաջացած ցոյց տուր ձեռքիդ
կոշտերը,
Ես կ'իմանամ՝ սիրում ես դու արդեօք ազնիւ աշխատանք.
Ասն գտնէ, տանջուել ես դու մինչև սրտիդ խորքերը
Չարքաչ, թշուառ մարդկանց համար—և ի՞նչ է բո՞
նպատակ:

Դու լռում ես... հեռն ուրեմն մաքուր սիրուց կանացի,
Աշխարհային վայելքների գնն կրկին նորոգիր.
Սիրիւր ընկած ժպիւրհ կանանց առանց խղճի խայթոցի,
Գծուծ ոսկին ինձ տիրանալ անկարող է, իմացիր:

Օ՛ր, եթէ ես երբ և իցէ ըս ձեռքերը տեսնէի
 Քերուած, հիւժուած արիւնլուայ—այդ վիճակից ինք-
 նագոհ,
 Թէ ինձանից, որպէս պարգև, փոխարէն լուռ տան-
 ջանքի
 Պահանջէիր սէր, փայփայանք, պահանջէիր անգամ զոհ,

Թէ տեսնէի, որ հեզնանքով դու ատում ես ժանգ
 ոսկին
 Սուրբ վաստակով ոգևորուած վերադառնում այլ կեանքի,
 Տեսնէի քեզ՝ վերածնուած կամենում ես մաքառել
 Վիճակիդ դէմ և նոր կեանքի արշալոյսը ողջունել,

Այն ժամանակ ես քեզանով հպարտացած բաջարի
 Քո զրկանքով, տառապանքով իմ կոյս կուրծքը կ'այրէի,
 Կը ջանայի թեթևացնել վիշտ ու հոգսըդ վիթխարի
 Եւ հոգեմաշ դարդիդ համար քեզ իմ կեանքը կը տայի:

Բայց դու մեղսոտ կեանքի զաւակ—հաճոյքների սի-
 բահար
 Ձեռն աշխատել... ապրում ես զուր—կեանքը օտար քեզ
 համար,
 Դու այնպէս էլ փայփայուած ես, բախտախնդիր ստահակ,
 Կորիք անարգ... քեզ պատասխան ունեմ միայն՝ իմ
 զգուանք...

Թարգմ. ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԵԱՆ

Հ Է Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն *)

Իրսէն և իր հակառակորդները. — «Ժողովրդի քցումիւն» (Գոկտօր Շտօկմանի գիւտը. — Հաուշտագ և Քօմսէն. — «Սերա մեծամասնութիւնը». — Շտօկմանի հացկատակ սկոլմնակիցները. — Հրտարակական ժողովը. — Շտօկմանի ճառը. — Ժողովրդի թշնամին. — Շտօկմանի իղէալիզմը. — Շտօկման և Իրսէն. Իրսէնի ինդիվիդուալիզմը). — «Աւայրի բողբոջ» (Իրսէնի յոռետեսութիւնը. — Վալուածատէր Վէրլէն և իր որդին. — Քրէզէրսի միամիտ իղէալիզմը. — Հիւլմար Եկզալ. — Վայրի բողբոջ. — Ռէլլինգ և Քրէզէրս. — Հէզվիզ. — Քրէզէրսի հրատժտութիւնը. — Ռէլլինգի փրիստիպալութիւնը. — Իրսէն հակաիղէալիստ):

X

«Նօրայի» և «Ուրուակահանների» մէջ Իրսէն հասարակական կարգերի անխնայ քննադատն էր. իր խիստ ճշմարտասէր վերաբերմունքը, ինչպէս նկատեցինք, զանազան շրջաններում յուզմունքի և զայրոյթի փոթորիկ տառաջացրեց: Ծանծաղամիտ և անհետատես ձեւապաշտների համար նա «անբարոյական» էր ընտանեկան և հասարակական սրբութիւններ արատաւորող Բայց շատ քչերն էին ընդունակ ըմբռնել «անբարոյական» դրամատուրգի մէջ մարմնացած խորին բարոյականութիւնը, զգալ նրա սիրան պնդած ող անհուն տառապանքի փղձկոցը և այն օրինակելի նախանձախնդրութիւնը, որ նա տածում էր զէպի հասարակական իսկական սրբութիւնները, որոնք իրանց ներքին արժանաւորութիւնը և վսեմ իմաստը կորցնելով դարձել էին անկենդան, վտանգաւոր և մեռելաչունչ: Սակայն անհասկացողների յամառ ընդդիմադրութիւնը, պարսաւանքը և թըշնամութիւնը անկարող էին նրան մազաչափ անգամ շեղել իր նպատակից. ընդհակառակը՝ ճշմարտութեան, մաքուր բարոյականութեան և անխարդախ իղէալիզմի պրօպագանդան նա ա-

*) Յի'ս «Մուրճ» № 4.

ւելի վառվռուն և բարձրակոչ ոգեւորութեամբ էր առաջ տանում, և թէ անգամ դա «ձայն բարբառոյ յանապատի» մնար: Ապացոյց այն դրաման, որ լոյս տեսաւ «Ռւրուականներից» մի տարի յետոյ՝ 1882-ին»—Դօկտօր Շտօկման» կամ «Ժողովրդի թրեմամին» («En Folkefjende»): Լինելով մի ընտիր ստեղծագործութիւն՝ սա միաժամանակ մի նոր նետ էր, մի ուժգին հարուած, որ բղիտում էր անխոնջ և քաղմարդիւն դրամատուրգի գրչի տակից:

Բժիշկ Օտտօ Շտօկման իր հայրենի քաղաքի վարկը և նշանակութիւնը բարձրացնելու համար մի մեծ ծրագիր է յղանում—այդտեղ հանքային ջրերի մի բուժարան հիմնել: Իր եղբայրը՝ Հանզ, որ քաղաքագլուխ էր այդ նոյն քաղաքում, ըմբռնելով Օտտօյի ծրագրի գործնական խոշոր նշանակութիւնը՝ իսկոյն ձեռնարկում է դրա իրագործմանը—հիմնում է բաժնետերական մի ընկերութիւն, որ և ժամանակին գլուխ է բերում բուժարանի խնդիրը: Քաղաքագլուխը ընտրւում է նորահաստատ հիմնարկութեան վերատեսուչ, իսկ իր եղբայրը՝ նրա գլխաւոր բժիշկ: Այսպիսով բուժարանը չուտով դառնում է քաղաքի «առաջնակարգ կենսական մի ֆակտօր»—որովհետեւ օրըստօրէ մեծանում է օտարականների ու եկուոր հիւանդների հոսանքը, բարձրանում է թէ սների և թէ կալուածների գինը:

Քաղաքագլուխը իր մտերիմ համայնքի մէջ իրան շատ երջանիկ է գգում—«Ընդհանրապէս մեր քաղաքում տիրապետում է մի առողջ ոգի, իրար հետ վարուելու, յարմարուելու ընդունակութիւն»—իսկական քաղաքացիական զգացմունքը, և այս նրանից է առաջ գալիս, որովհետեւ մի մեծ, ընդհանուր գործ, որ հաւատարաշափ չահեկան է բոլոր լաւ տրամագրուած քաղաքացիների համար» (խօսքը բուժարանի մասին է):

Սակայն ի մեծ դժբախտութիւն թէ բաժնետէրերի և թէ ընդհանրապէս ամբողջ քաղաքի՝ դօկտօր Շտօկման տարիներից յետոյ մի «մեծ գիւտ» է անում—այն չքեղ, մեծածախս բուժարանը, որ քաղաքի «կենսական նետրոն» էր համարւում՝ «թոքերը», «արլունաբաշխ երակը»—նա այժմ յայտարարում է «ժանտախտի մի բոյն», «թունաւորուած մի որջ» և «լիբին աստիճանի վատառողջ», որովհետեւ իր անյարմար գիւրքի պատճառով վարակուել էր միլիօնաւոր «բացիլներով»: Մի նշանաւոր քիմիկոսի հաստատութեամբ համոզուելով իր այս գիւտի մէջ՝ նա վճռում է այդ երեւան հանել: Շտօկման այն կարծիքի է, որ բացիլները անհետացնելու և բուժարանը նորից պիտանի դարձնելու համար ամբողջ ջրաբաշխական գիւրքը պէտք է փոխուի: Նրա կիսը՝ Եօհաննան և անդրանիկ գուտարը՝ Պետրան

լսելով այս անակնկալ գիւտի մասին՝ մի կողմից զարմանքի, միւս կողմից երկիւղի մէջ են և անընդունակ են բժշկի սրտագին ուրախութեանը մասնակից լինել:

Տեղական ազատամիտ թերթի խմբագիր Հաուչտադ և գլխաւոր աշխատակից Բիլլինգ, որոնք Շտոկհոլմի մօտ ճաշի էին եկել, լսելով բժշկի այս նշանաւոր յայտնագործութեան մասին՝ մտածում են իսկոյն օգուտ քաղել զէպքից: Խմբագիրը խնդրում է նրանից թոյլ տալ իր թերթում մի լուր տպել այդ մասին, որպէս զի «ճասարակութիւնը որքան կարելի է շուտ իրազեկ լինի դրա վերաբերմամբ»: Իսկ գլխաւոր աշխատակիցը նկատում է—«Պարոն բժիշկ, այժմ դուք միանգամից քաղաքի առաջին մարդը դարձաք»—«Ա՛խ, ի՞նչ էք ասում. իսկպէս ես իմ պարտականութիւնն եմ միայն կատարել. ես մի լախտաւոր գանձ գտնող եմ և ուրիշ ոչինչ»—պատասխանում է Շտոկհոլմն:

Բայց մի փոքր յետոյ Հաուչտադը աւելի է առաջ գնում—«Ձեզ իբրեւ մի բժշկի և գիտնականի՝ ջրային ձեռնարկութեան այս զէպքը թւում է իբրեւ բացատրիկ մի երեւոյթ: Ես կարծում եմ, որ ձեր մտքովն անգամ չէ կարող անցնել, որ սա մի օղակն է միայն զանցատութիւնների մի ամբողջ շղթայի... Երէկ դուք նկատեցիք, որ ջուրը հողի տակ գտնուող զանազան փոսած նիւթերից ապականուել է»:

—«Այն, դրա պատճառն անկասկած վերելի թունաւորուած ճահիճն է»:

—«Ներեցէք, պարոն բժիշկ, ես հաւատացած եմ, որ դա առաջ է գալիս մի բոլորովին ուրիշ ճահճից»:

—«Այդ ի՞նչ ուրիշ ճահիճ է»:

—«Այն ճահիճը, որի մէջ ընկղմած է մեր ամբողջ հասարակական կեանքը»:

—«Բայց, պարոն Հաուչտադ, այդ ի՞նչ խօսքեր են»:

—«Բոլոր քաղաքային գործերը հետզհետէ կենդրոնացել են բացառապէս մի խումբ աստիճանաւորների և մոլեռանդ բիրօսկրատների ձեռք»:

—«Բայց դրանք բոլորը աստիճանաւորներ չեն»:

—«Կամ աստիճանաւորներ են կամ թէ նրանց բարեկամներ և կուսակիցներ: Միայն հարուստները, միայն հին նշանաւոր անուն ունեցողներն են վարում ղեկը... Երբ ես ձեռք բերի իմ թերթը՝ միտքս էի դրել ջարդել այս հին, յամառ սուղերի ոյժը... Ինձ նման՝ ժողովրդական ուղղութեան պատկանող մի խմբագիր այսպիսի յարմար առիթ չը պէտք է ձեռքից բաց թողնէ: Ժամանակ է տիրապետողների անսխալականութեան

առակին վերջ տալու... Գաղաքագլխին ես չէի ուղենայ դիպչել, որովհետեւ նա ձեր եղբայրն է. բայց գիտեք ի հարկէ, որ ճշմարտութիւնը զանազան նկատումներից հետու է...

—Անտարտիոյս, ինքնըստինքեան հասկանալի է... բայց... բայց...

—Դուք չը պէտք է իմ մասին վատ մտածէք: Ես ոչ աւելի ետական եմ և ոչ փառասէր քան թէ ուրիշ շատ մարդիկ... Ինչպէս գիտեք ևս ժողովրդից եմ դուրս եկել և այսպիսով աւերթ եմ ունեցել դիտելու թէ հասարակ մարդուն ինչն է ամենից աւելի պակասում—որ նա հասարակական գործերի ղեկավարութեան մէջ մասնակցութիւն պէտք է ունենայ, պարոն բժիշկ: Միայն սրանով կը զարգանան նրա ընդունակութիւնները, նրա ինքնագիտակցութիւնը և պարտաճանաչութեան զգայմունքը... Այո, մի հրապարակախօս իրան ծանր պատասխանատուութեան է ենթարկում եթէ ամբոխին, «փոքրերին», ճշուումներին սլնակեցնելու առիթը ձեռքից բաց է թողնում: Մեծերի բանակը ինչ ուզում է թող մտածէ... բաւական է, որ իմ խիղճը մաքուր լինի»:

—Ճիշտ է, ճիշտ է, սիրելի Հաուշտադ, միայն թէ մեր սրտերը մաքուր լինին...»:

Այս «ժողովրդասէր» հրապարակախօսի իսկական գոյնը մենք չատով առիթ կ'ունենանք տեսնելու:

Համարեա նոյն ոճն է բանեցնում նաև տպարանատէր, «Տոնաէրերի ընկերութեան» նախագահ և «Չափաւորութեան ընկերութեան» գործակալ Թոմսէն: Նա էլ է իր ինքնակամ աջակցութիւնն առաջարկում Շտոկոլմանին—«Դուք ոչ մի վնաս չէք անի, եթէ մեզ՝ փոքրիկ քաղաքացիներին իբրև պահեստի ոյժ ձեր յետեւն ունենաք: Այստեղ, քաղաքում մենք որոշ չափով կազմում ենք մի սեռս մեծամասնութիւն»: Նա յայտնապէս խոստովանում է, որ «փոքրիկ քաղաքացիների» համար բուժարանի հարցը կենսական մեծ նշանակութիւն ունի: Բայց Թոմսէն, ինչպէս ամեն դէպքում, հետեւաբար և դիմադրական ոյժ կազմելիս չափաւորութեան կողմնակից է, որովհետև «չափը պահպանել—սա քաղաքացիական առաջին առաքինութիւնն է»: Այս նոյն հետեւողականութեամբ նա խորհուրդ է տալիս Հաուշտադին հետու մնալ իր թերթում «ուժեղ հարուածներ» տալուց—«լսէք ինձ», ասում է նա, «որովհետև կեանքի դպրոցից ես բաւական փորձառութիւն եմ ձեռք բերել»: Այն ինչ Հաուշտադ իր ապագայ արժանաւոր դաշնակցին՝ Թոմսէնին դասում է նոյնպէս այն մարդկանց շարքը, որոնք «ճահճումն են ընկղզմած», որովհետև նա մեղկ է և անհամարձակ:

Երբ Պետրան խորհրդաւոր կերպով հարցնում է—«Հայրիկ, այժմ ի՞նչ է ասելու հօրեղբայր Հանդը» —այն ժամանակ Շտոկման միամտութեամբ պատասխանում է—«Ի՞նչ պէտք է ասէ, սրտանց պիտի ուրախանայ, որ մի այսպիսի կարեւոր ճշմարտութիւն հրապարակ հանուեց»:

Սակայն բարեմիտ բժիշկը չափազանց սխալում էր: Քաղաքագլուխ-եղբայրը այն տեսակ տիպերից չէր, որի սիրտը ճշմարտութեան արեւից հրճուէր: Տեսնուելով իր հոգքօր հետ՝ նա մի կողմից կասկած է յայտնում թէ բուժարանի գրութիւնը այնպէս վտանգաւոր լինի, ինչպէս Օտտօն է նկարագրում, միւս կողմից մասնաշոյոյց է անում այն ահագին ծախսերը— մի քանի 100,000 քրօն—որոնց պէտք է ենթարկուի քաղաքը բուժարանի գիրքը փոխելիս: Բայց դժուար Շտոկմանն թափանցում է իր եղբոր հոգին, զգում է թէ ինչն է նրան վախեցնում—բուժարանի ներկայ գրութեան իսկական հեղինակը նա էր, իսկ այս տեսակ մի ծանր, պատասխանատու սխալ նա չէր կամենում իր վրայ վերցնել: Բայց և այնպէս քաղաքագլուխը բաւական բացօթի կերպով խոստովանում է—«Եթէ հէնց այդպէս լինէր, եթէ ես մի յայտնի վախկոտութեամբ իմ գիրքը պաշտպանէի—դա յամենայն դէպս տեղի է ունենում քաղաքի շահերի համար: Առանց բարոյական հեղինակութեան ես անկարող եմ գործերը այնպէս վարել, ինչպէս դա անհրաժեշտ է ընդհանուր բարեկեցութեան համար: Այս և ուրիշ շատ պատճառներով ես այն կարծիքի եմ, որ քս գրութիւնը չը պէտք է ներկայացուի բուժարանի վարչութեանը: Ընդհանրութեան շահի համար գործը պէտք է մեր մէջ մնայ, յետոյ ես դա զբաղմունքի առարկայ կը դարձնեմ և ծածուկ կերպով ինչ ջանք որ հարկաւոր է գործ կը դնեմք, բայց այս անախորժ պէպքի առիթով ոչինչ, ոչինչ չը պէտք է հրապարակ հանուի»:

—Սակայն դա այլևս չի կարելի արգելել, սիրելի Հանդ:

—Պէտք է արգելուի:

—Անկարելի է, ասում եմ, արդէն շատեր տեղեակ են այդ բանին... Ազատամիտ, անկախ մամուլը կը մտածէ այդ մասին իր պարտականութիւնը կատարել:

—...Ինչ մի անհանգիստ, կուռասէր և խոտվարար բնաւորութիւն ունես, բացի դրանից մի վատ սովորութիւն հրապարակով զանազան հնարաւոր և անհնարին բաների մասին գրել: Հազիւ մէջը մի յանկարծակի միտք է յղացել և ահա իսկոյն լրագրական յօդուածի կամ մի ամբողջ բրօշուրի նիւթ պէտք է դարձնես»:

—Այո, բայց միթէ իւրաքանչիւր քաղաքացու պարտակա-

նութիւնը չէ մի նոր միտք ունեցած դէպքում այդ բանը հարողել հասարակութեան:

—Ա՛խ, հասարակութիւնն ի՞նչ կարիք ունի նոր մտքերի. հին, ընդունուած մտքեր արդէն նրան կատարելապէս բաւական են:

Այնուհետեւ քաղաքագլուխն այնքան առաջ է գնում, որ յայտնապէս պահանջում է իր եղբորից «վարչութեան գաղտնիքի» առիթով տարածուած լուրերը հրապարակով հերքել եւ նոյն իսկ ջուրը երկրորդ անգամ հետազօտելիս «մի ուրիշ հետեւանքի հասնել»: Իսկ կրք Շտօկմանը իր զայրոյթն է յայտնում և իր «համոզմունքիցն» է խօսում՝ այն ժամանակ քաղաքագլուխը նկատում է.

—«Իբրեւ պաշտօնեայ դու իրաւունք չունես մասնաւոր համոզմունք ունենալ»:

—Ես իրաւունք չունեմ...

—Իբրեւ պաշտօնեայ, ասում եմ ես. իբրեւ մասնաւոր մարդ՝ դա ուրիշ հարց է: Բայց իբրեւ բուժարանի ստորագրեալ պաշտօնեայ դու իրաւունք չունես արտայայտել մի այնպիսի կարծիք, որին քո մեծաւորները համամիտ չեն»:

—Արդէն շատ հեռու ես գնում: Իբրեւ բժիշկ, իբրեւ գիտնական ես իրաւունք չը պէտք է ունենամ...

—Խնդիրն այստեղ գուցա գիտնական չէ, այլ աւելի բարդ. դա մի տեխնիքական-տնտեսական հարց է:

—Սատանան տանի, ինձ համար բոլորովին մի և նոյն է: Ես ազատ եմ ամեն հարցի մասին արտայայտուելու բոլորի առաջ:

—Խնդրեմ, սակայն բուժարանի նկատմամբ—երբէք, այդ ես արգելում եմ քեզ:

—Դուք արգելում էք ինձ... ձեզ պէս մարդիկ, սրճք...

—Ես արգելում եմ քեզ—ես քո բարձրագոյն մեծաւորը, և եթէ ես քեզ արգելում եմ՝ դու պէտք է հնազանդուես:

—Հանգ, ճշմարիտ, եթէ եղբայրս չը լինէիր...

Այս ընդհարումից յետոյ գօկտօր Շտօկմանն վճռում է արդէն հրապարակ գուրս գալ: Ես պատրաստում է մի կրակոտ յօդուած, որ և անյապազ պէտք է լոյս տեսնէր Հաուշտադի օրդանում: Բայց քաղաքագլուխը սրա դէմն էլ է աւնում. նա անձամբ գնում է տպարան և գործին միանգամայն ուրիշ ընթացք է տալիս: Նրան յաջողում է ոչ միայն յօդուածի լոյս տեսնելն արգելել, այլ և Թօմսէնին և Հաուշտադին իր կողմը դրաւել: Թէ մէկը և թէ միւսը միայն անձնական շահերից դրդուած խոստացել էր իր աջակցութիւնը գօկտօր Շտօկմանին: Թօմսէն

երբ տեղեկանում է քաղաքագլխից թէ ըստարանի վերաշինութիւնը խոշոր ծախսեր է պահանջում և որ այդ ծախսերի մի մասը տանտէրերի վրայ պէտք է ծանրանայ—բոլորովին փոխում է իր գոյնը: Այս անախորժ տեղեկութիւնից տուաջ նա արդէն ուղղակի խոստովանում էր—«թէն սիրտս զեռ ժողովրդին է պատկանում, բայց խելքս, խոստովանում եմ, հակուած է դէպի իշխանաւորները»: Իսկ Հաուչտադ նոր հովերի ազդեցութեան տակ՝ ահա թէ ինչ է ասում Շտոկմանին—«Պարոն բժիշկ, դուք ձեր գործը սխալ կերպով էիք ինձ ներկայացրել, այս պատճառով էլ ես չեմ կարող ձեզ օգնել»: Եւ նա իր թերթում քաղաքագլխի «մեղմագնող» բացատրութիւններին է միայն տեղ տալիս:

Գոկտօր Շտոկման իր նենգամիտ կողմնակիցների այս վարմունքը տեսնելիս՝ վճռում է հրապարակական մի ժողովում բերանացի յայտնել իր ասելիքը: Բայց ժողովի նախագահը՝ Թօմսէն հէնց ինքն է առաջարկում արգելել Շտոկմանին ըստարանի վերաբերմամբ որևէ խօսք ասել—«... Ես էլ այն կարծիքի եմ, որ բժիշկ Շտոկմանի ադիտացիան մի յետին միտք ունի: Նա խօսում է բաղանիքի մասին, բայց նրա իսկական նպատակը տեղական յեղափոխութիւն առաջացնելն է—նա կամենում է քաղաքային վարչութիւնը ուրիշներին յանձնել: Բայց որովհետև Թօմսէնի կարծիքով «չափաւորութիւնը քաղաքացիական առաջին առաքինութիւնն է»—այդ պատճառով նա իսկոյն աւելաջնում է—«Պարոն բժիշկ ազնուութեանը ոչ ոք չէ կասկածում—այս մասին բոլոր ներկայ եղողները մի կարծիքի պէտք է լինեն: Ես էլ ինքնավարութեան բարեկամն եմ, բայց խնդիրը այնպէս չը պէտք է դրուի, որ հարկ վճարող քաղաքացիները մեծ ծախսերի ենթարկուեն»:

Այնուհետև խօսում է Թօմսէնի դաշնակիցը՝ խմբագիր Հաուչտադ—«... Բոլորովին անկասկած է, որ ներկայ հարցում պարոն բժիշկը դէմ է ընդհանուր կամքին և հասարակաց կարծիքին: Բայց, պարոններ, ինչ է մի խմբագրի առաջին և զլիսաւոր պարտականութիւնը—միթէ դա նրանում չէ կայանում՝ միշտ իր ընթերցողների հետ համերաշխութեամբ գործել, միթէ նա մի, այսպէս ասած, լուռ յանձնարարական չէ ստացել անդադար և անվատ կերպով իր համախոհների բարեկեցութեան մասին մտածել, Կամ գուցէ ես սխալուում եմ»:—«Ո՛չ, ո՛չ, ո՛չ, խմբագիր Հաուչտադ իրաւունք ունի»—պատասխանում են բազմաթիւ ձայներ:

Վերջապէս խօսքը արւում է զօկտօր Շտոկմանին: Նա սկզբից յայտնում է, որ մտադիր չէ բաղանիքի կեղտոտութիւն-

ների մասին խօսել, այլ աւելի կարևոր հարցերի, աւելի մեծ գիւտերի մասին: Վեր հոգեկան կեանքի բոլոր ազբւրները թունաւորուած են, մեր ամբողջ քաղաքացիական հասարակութիւնը ստուծեան ժանտածին հիմքի վրայ է կանգնած»—անա Շտոկմանի «մեծ գիւտը»:

Նա խօսում է պաշտօնեաների «ծայրայեղ բթամտութեան» մասին: Բայց այն կարծիքի է, որ այս դասակարգը դեռ չէ հասարակութեան ամենամեծ թշնամին—«ճշմարտութեան և ազատութեան ամենավտանգաւոր սողիւր սեբս մեծամասնութիւնն է»: Իսկ երբ Հաուչտադ նկատում է թէ՛ «Իրաւունքը մեծամասնութեան կողմն է» և Իրլլինգը՝ «նոյնպէս ճշմարտութիւնը»—այն ժամանակ Շտոկման պատասխանում է «Իրաւունքը երբէք մեծամասնութեան կողմը չէ... և ո՛վ է կազմում մի երկրի մեծամասնութիւնը—խելօքները թէ յիմարները: Կարծեմ բոլորս համակարծիք ենք այն բանում, որ ամբողջ երկրագնդի վրայ մեզ չըջապատող գերազանց մեծամասնութիւնը յիմարներից է բաղկացած: Սակայն երբէք չէ կարող արդարացի լինել, որ յիմարները խելօքների վրայ իշխեն (ազմուկ, ազազակ): Այն, այն, աղաղակել կարող էք, բայց ինձ հերքել—երբէք: Մեծամասնութիւնը ոյժ ունի—տարաբախտաբար—բայց ո՛չ իրաւունք: Ես և մի քանի սակաւաթիւ սնհասներ ունենք իրաւունք, փոքրամասնութիւնն ունի միշտ իրաւունք (Հաուչտադը նկատում է—«եթէ բժիշկը արիստօկրատ չէ, այն ժամանակ մի յեղափոխական է»): Այո... ես մտադիր եմ կռիւ մղել այն ստուծեան դէմ թէ մեծամասնութիւնը ճշմարտութեան տէրն է: Ի՞նչ են այն ճշմարտութիւնները, որոնց շուրջը սիրում է համախմբուել մեծամասնութիւնը: Դրանք շատ վաղեմի և արդէն հնացած ճշմարտութիւններ են: Իսկ երբ մի ճշմարտութիւն շատ է հնանում՝ արդէն առաջնորդում է դէպի ստուծեան շաւիղը...»: Եւ նա այս հնացած, «ժառանգական» ճշմարտութիւններից ի միջի այլոց մատնանիչ է անում այն վարդապետութիւնը թէ ամբօխը, խուժանն է ժողովրդի կորիզը—նոյն իսկ հէնց ինքը ժողովուրդը:

Այնուհետեւ նա իր նետերն ուղղում է հասարակութեան բարձր խաւերի դէմ և առանձնապէս մերկացնում է իր եղբոր դէմքը, որի մէջ նա «չատ քիչ ազնիւ և ազատամիտ» գծեր է տեսնում:

—«Ուրեմն ընտրեալներն են իսկական ալատամիտները»
—նկատում է Հաուչտադ՝ համարելով դա մի բոլորովին նոր գիւտ:

—Այն, դա էլ իմ նոր գիւտերից մէկն է: Բայց էլի մի

ուրիշ բան—այդ այն է, որ ազատամտութիւնը համարեա նոյնա-
նիշ է բարոյականութեան հետ»—պատասխանում է Շատկման
և աններելի է գտնում Հաուշտադի թերթի այն ամենօրեայ
քարոզը թէ՛ «Ամբոխը, «սերտ մեծամասնութիւնն է» միայն,
որ ազատամտութիւնը և բարոյականութիւնը կապալով է
վերցրել և որ ապականութիւնն ու հոգեկան կեղտը միայն
կուլտուրայի թարախն է»—ծիշտ այնպէս ինչպէս կաշեգործա-
րաններից հաւաքուած կեղտը բազանիբում—«բարեբաղդաբար
մի հին, ժողովրդական ստութիւն է թէ՛ կուլտուրան անբարոյ-
ականացնում է: Ո՛չ, բթամտութիւն, աղքատութիւն և զըր-
կանք, մի խօսքով կեանքի ամբողջ թշուառութիւնը—սրանք են
բոլոր ապականութիւնների պատճառը... թթուածնի պակա-
սութիւնը թուլացնում է խիղճը. և մեր քաղաքի շատ և շատ
տներում թթուածնի պակասը չափազանց է, որովհետև ամ-
բողջ սերտ մեծամասնութիւնը այնքան սնիխիղճ է, որ քաղաքի
բարգաւաճումը կամենում է ստութեան և խաբեբայութեան
ճախճախուտի վրայ կառուցանել»:

—Քաղաքացիներից կազմուած մի ժողովի չէ կարելի
այսպիսի վիրաւորանք հասցնել»—նկատում է նախագահը՝
Թօմսէն:

—Ես առաջարկում եմ ճառախօսին զրկել ձայնի իրա-
ւունքից—վրայ է բերում մի պարոն:

—Այո, այո, դա ամենալաւը կը լինի. ձայնից զրկել—տը-
ձադանք են տալիս շատերը:

—Այն ժամանակ ես հրապարակներում կը բարձրացնեմ
ճշմարտութեան ազադակը, օտար թերթերին կը հասցնեմ և
թող ամբողջ երկիրն իմանայ թէ ինչ է տիրում մեզանում—
խօսում է դօկտօր Շատկման:

—Այնպէս է երեւում, կարծես պարոն բժիշկը կամենայ
մեր քաղաքը կործանել—նկատում է Հաուշտադ:

—Ես այնքան եմ սիրում իմ հայրենի քաղաքը, որ աւելի
չուտ կուզենայի նրան կործանել քան թէ տկանատես լինել,
որ նա ստութեան ճանապարհով յառաջադիմէ:

—Սա արդէն չափազանց է—նկատում է Թօմսէն:

—Ով որ մի ամբողջ քաղաքացիական համայնք կործանել
է կամենում, նա այդ համայնքի թշնամին է—բարձրաձայն ա-
ղաղակում է Հաուշտադ:

—Ո՛չ—պատասխանում է Շատկման աւելի տաքացած—
նրանք, ովքեր ստութեան մէջն են ապրում պէտք է բնաջինջ
լինեն՝ ինչպէս վլաստակար կենդանիներ: Դուք վերջուպէս կա-
պականէք մեր ամբողջ հայրենիքը և այն դրութեան կը հա-

յնէք, որ արժանի կը լինի կործանուելու: Իսկ եթէ խնդիրն այդտեղ հասնի՝ այն ժամանակ ես բոլոր սրտովս կասեմ—Թող կործանուի ամբողջ հայրենիքը, թող այս ամբողջ ժողովուրդը բնաջինջ լինի»:

—Սա նշանակում է խօսել իբրեւ ժողովրդի մի քեւամի— նկատում է ամբոյսի միջից մէկը:

—Լսէք, լսէք, այսպէս է խօսում ժողովրդի ձայնը—հրր- ճուանքով մատնանիչ է սեւում ազատամիտ թերթի գլխաւոր աշխատակիցը:

—Այո, այո, նա ժողովրդի թշնամին է, նա ատում է իր հայրենի քաղաքը, իր ամբողջ ժողովուրդը—աղաղակում է ամբողջ բազմութիւնը:

Եւ նախագահի առաջարկութեամբ ժողովը ղօկտօր Շտօկ- մանին պաշտօնապէս յայտարարում է «ժողովրդի քեւամի»:

Բայց կատաղի ամբոյսը սրանով չէ բաւականանում: Նոյն գիշերը բժշկի տան առաջ խմբուած՝ քարեր են արձակում նրա վրայ: Այս քարերը նա իբրեւ սրբութիւն կամենում է պահել, որպէս զի իր մահուանից յետոյ նրա Ֆրիգերիկ և Վալդէր որդիները ժառանգեն:

Հայրածանքը «ժողովրդի թշնամու» դժուար աւելի և աւելի է սաստկանում: Նրան հրաժարեցնում են իր պաշտօնից, որդի- ներին արձակում են դպրոցից, մինչև սկի շատերը հրաժար- ւում են նրան բնակարան տալ քաղաքում:

Այս դրութեան մէջ Շտօկման երբեմն մտածում էր զաղ- թել իր հայրենի քաղաքից, բայց յետոյ վճռականապէս թող- նում է այդ միտքը, որովհետև նա այժմ իրան զգում է «քա- ղաքի ամենատեւեղ մարդը»: Նա մնում է նոյն աեղը ոչ միայն ապացուցանելու իր ոյժը, այլ և հաստատելու այն անկեղծ սէ- րը, որ նա տածում էր դէպի իր հայրենի քաղաքը: Նա դառ- նում է աղքատների բժիշկը, և հէնց այն դահլիճում, ուր կա- տաղի ամբոյսը նրան «ժողովրդի թշնամի» յայտարարեց, նա իր աննշան հարստութեամբ հիմնում է մի դպրոց—որբանոց, որի հոգատարութիւնը նա իր կնոջ և բարեկիրթ զաւակների հետ է բաժանում:

Ինչպէս տեսանք, ղօկտօր Շտօկման ամբողջ դրամայի ըն- թացքում մի քանի «պիւտեր» է սնում. սակայն իր դէմ յա- բուցուած ընդհանուր հալածանքի բովից նա խլում է ամենա- նշանաւոր գիւտը.—«Աւելարհիս ամենաուժեղ մարդը նա է, ով որ մեռակ է»:

Իրսէն Շտօկմանի սիրտով ճշմարտութեան պաշտամունքը գազաթնակէտին է հասցնում: Շտօկման մի իդէալիստ է բառի

բուն նշանակութեամբ, յանուն ճշմարտութեան նա չէ խուսափում և ոչ մի գոհարարութիւնից: Թէ նա սրբան մոլեռանդ էր իր իդէալիզմի մէջ՝ սա երեւում է այն նշանաւոր փորձից, որին նա ենթարկում է վերջին գործողութեան մէջ: Շտովմանի աները՝ կաշեգործ Նիլս Վորգէն, որ մի քանի անձնական հաշիւների պատճառով սկզբում դէմ էր քաղաքագլխին և խորախուսում էր իր փեսային—լսելով վերջինիս ճառում ակնարկների «կաշեգործարանների» մասին՝ վերաւորում է և Շտովմանի սկսած արշաւանքին վերջ տալու համար մի խորամանկ հնարագիտութեան է դիմում—նա իր աղջկան՝ Շտովմանի կնոջը՝ հասնելիք ամբողջ հարստութեամբ գնում է բուժարանի բաժնեթղթերը և յայտնում է Շտովմանին, որ կթէ նա բուժարանի մասին տարածուած աննպաստ լուրերը չը հերքէ՝ այն ժամանակ այդ թղթերը կը կորցնեն իրանց նշանակութիւնը, իսկ եթէ հերքէ՝ ինքը կը դառնայ բուժարանի տէրը: Հաուշտադ և Թոմսէն լսելով այս պատմութիւնը շտապում են բժշկի մօտ, որովհետեւ ըստ նրանց տրամաբանութեան՝ վերջինս շատ «գործնական» է եղել, ճշմարտութեան քողի տակ բուժարանին տիրանալու ինդիքն է յաջողեցրել—նրանք կատարելապէս համոզուած էին, որ բժիշկը ընդունելու է իր աներոջ առաջարկը: Սակայն Շտովման այս ծանր փորձին էլ է դիմանում և պնակալէզ խմբագրին ու նրա գաշնակիցին փայտի հարուածներով դուրս է չպրտում իր անից:

Գօկտօր Շտովման մի մոլեռանդ ճշմարտասէր է, բայց նա ճշմարտութեան դատը հզօր կամքով և անսոկան ոյժով է պաշտպանում: նա հաւատում է այս մեծ սկզբունքի յաղթանակին: Անկասկած է, որ ամեն մի իդէալիստ իր խանդավառ զգայմունքով, իր հաւատացող ոգու ջերմութեամբ որոշ չափով մի մեծ երախայի տպաւորութիւն է թողնում: Այսպէս է (մանաւանդ դրամայի սկզբում) գօկտօր Շտովման, մասամբ այսպէս էր նաև պատօր Մանդէրս («Ուրուականներ») իր թէկուզ բացասական, բայց միամիտ իդէալիզմով, «Ինչպէս բաղդաւոր եմ զգում ինձ ամբողջ սրտով, այն, մի հիանալի զգացմունք է՝ երբ մարդ գիտակցում է թէ յիրաւի մի ծառայութիւն է մատուցել իր հայրենիքին, իր համաքաղաքայիներին»—Շտովմանի այս միամիտ և երախայական ոգևորութիւնը կարծես անհասկանալի է թւում Լիցմանին և յարդեղի պրօֆէսօրը բուն դերմանական քաղաքայու տրամաբանութեամբ այսպիսի մի տարօրինակ նկատողութիւն է անում: «Շտովման պէտք է ամենից առաջ մի նախահաշիւ կազմէր» (բուժարանի վերաշինութեան համար): Այս տեսակ «նախահաշիւ» չէր նսև-

մացնի արդեօք Շտօկմանի բարձր իղէալիզմը, չէ որ նա պահանջում էր անպայման ճշմարտութիւն առանց կողմնակի նկատումների: Իսկ Ա. Հանգշտայն Շտօկմանի բնաւորութեան մէջ նկատում է մի տեսակ փառասիրութիւն: Բայց այս փառասիրութիւնը դատարկ, անբովանդակ չէ և ոչ էլ դիտաւորեալ. դա այն անարուեստ ինքնաբաւականութիւնն է, այն խանդավառ, երախայական յնձուրթիւնը, որով պաշարում է ամեն մի իղէալիստ իր գաղափարական նուաճումների ընթացքում:

Դօկտօր Շտօկմանը Իբսէնի ստեղծած ամենահամակրելի աննական տիպերից մէկն է—նրա գրուածներում առհասարակ դրական տղամարդիկ հազուադիւտ են: Պարզ է, որ հեղինակը Շտօկմանի մէջ գրել է իր բնաւորութիւնից և անձնական կեանքից շատ գծեր: Նա էլ իր հերոսի նման տարիների ընթացքում անյողողղ հետեւականութեամբ մաքառում է յանուն ճշմարտութեան: Նա էլ է անխնայ կերպով մերկացնում իր հայրենակիցների քարայած և վտանգաւոր նախապաշարումները: Նա էլ է ատում ճերտ մեծամասնութիւնը, ոչխարական տրամադրութեամբ համակուած, ինքնուրոյնութիւնից զուրկ ամբոխին, որ իր ծանծաղ միջակութեամբ և հոգեկան դանդաղաշարժութեամբ ամեն մի նոր և կենսունակ ոյժ խեղդամահ է անում, «չափաւորութեան» անգոյն կաղապարին է ենթարկում, որպէս զի նրանից բարձր չը կանգնի և նրա ստաջ հայելի չը պահի... Նա էլ է անուղղակի կերպով յայտարարուել «ժողովրդի թշնամի»: Նա էլ անշուշտ իր առանձնութեան մէջ շատ անգամ խորհած կը լինի—«ամենատեղ մարդը նա է, ով որ մենակ է»:

Իբսէն անտարակոյս ինդիվիդուալիստ է: Թէև նրա տենչանքն է, որ «մենակ»-ների թիւը աճէ, գիտակցական ինդիվիդուալիստների շարքը բազմանայ—այնուամենայնիւ այն նշանաւոր խօսքերը, որ նա զնում է Շտօկմանի բերանը՝ կեանքի դառն փորձերի և յախուռն դիպուածների հետեւանք են: Յայտարարելով իրան անհատականութեան կողմնակից՝ նա Նիցշէի նման «ստրուկներին» և «տէրերին» բարոյականութիւն չէ տարբերում: Ընդհակառակը՝ մենք տեսնում ենք, որ նրա հերոսը հէնց «ստրուկներին», զրկուածներին և ճնշուածներին է նուիրում իր անհատականութիւնը: Իբսէնի ինդիվիդուալիզմը ասող է, կենսունակ. նա չէ սաւառնում գէպի առանձնութեան ցրտաշունչ բարձունքները և ոչ էլ բոմանտիկների նման «եսի» ինքնապատկերացման մէջն է որոնում իր հաճոյքը: Նա էլ շատ

լաւ է զիտակցում, որ «հանճարը եթէ միայնակ է՝ մի ապուշ է —եթէ անգամ նրա անունը Նապօլէօն լինի»:

Ինչպէս ատհասարակ, այնպէս էլ ներկայ գրամայում գրաւիչ են կանացի տիպերը—Յօհաննան և Պետրան: Վերջինս որոշ աշխարհահայեացքի և ինքնուրոյն համոզմունքների տէր մի վարժուհի է, emancipirt, բայց ոչ թեթևաօլիկ: Իսկ առաջինը թէև այնքան լայն հայեացքներով աչքի չէ ընկնում՝ այնուամենայնիւ դոնէ ընթռնում է իր ամուսնուն: Նա սկզբում «ընտանեկան» գիտումների պատճառով դէմ էր Շտօկմանի յանդուգն քայլերին, բայց հետզհետէ յարմարւում և նոյն իսկ աջակցում, խրախուսում է նրան:

Հաուչտագի, Բէլլինգի և Թօմսէնի դէմքերը գրամայի վեր լուծման ընթացքում մենք աշխատեցինք արդէն բաւականաչափ պարզել: Սրանք ևրեքն էլ իրանց ցինիզմով, հայկատակ և փոփոխական բնաւորութեամբ բոլորովին նման են Շաայնհօֆին և Բալմանին («Երիտասարդութեան միութիւնը»):

Այս պարզ, բայց ուժեղ գրամայով Իբսէն կարծես մի տեսակ հաշիւ տեսաւ իր ապերախտ հայրենակիցների հետ, որոնք նրան հալածել և օտարութեան գիրկն էին մղել: Նա արտաթափեց տարիների ընթացքում իր մէջ ամբարուած ամբողջ լեզին:

XI

Առաջին երեք սօցիալական գրամաների մէջ Իբսէն իբրև անգրգուռելի իդէալիստ ճշմարտութեան յաղթանակն էր տօնում: Վերջին գրամայում նա թէև ըստ էութեան մնում է նոյն իդէալիստը՝ այնուամենայնիւ պէտք է նկատել, որ նրա վերջաբանից մի սքօղուած պէսսիմիզմի հով է փչում: Մենք տեսնում ենք զաղափարապաշտ մի անձնաւորութիւն և ամբողջ մի ժողովուրդ դէմադէմ կանգնած—հետեւաբար և դօկտօր Շտօկմանի խրոխտ եզրակացութիւնը՝ «ամենաուժեղ մարդը նա է, ով սր մենակ է»: 1884-ին Իբսէն գրում է մի նոր գրամա—«Վայրի Բադը» («Vildanden»), որի մէջ նրա պէսսիմիզմը արդէն աւելի լայն չափեր է ընդունում: Խախտուած հաւատքի և անյուստութեան արձագանքն է, որ հնչում է այստեղ, կեանքի և իրականութեան անողորմ ճնշման ներքոյ նա այլ ևս վարդադոյն տկոյցներով չէ նայում իդէալիզմի վրայ: Ընդհանրապէս մտայլ է և յուսաբեկ գրամայի ներշնչած ամբողջ տրամադրութիւնը:

Գրէգէրս Վերլէն մի մեծ վաճառականի որդի է: Ընտա-

նեկան յարկում նա ակննատես է լինում իր հօր անպատկառ արարքներին: Նա զգում է, որ իր մօր վաղաժամ մահուան պատճառը հայրն է՝ իր կեանքի անբարոյական և անվայել ընթացքով: Նա շատ լաւ տեղեակ էր նաև թէ իր հայրը ինչ միջոցներով է հարստութիւն դիզել—«Երբ ես յիշում եմ քս բոլոր ձեռնարկութիւնները՝ ինձ թւում է թէ պատերազմի մի դաշտ եմ տեսնում լի մարդկային խորտակուած ճակատագիրներով»:

Այս «խորտակուած ճակատագիրներից» մէկի ներկայացուցիչն է նախկին լէյտնանտ Էլիզալ, որ մի ժամանակ առեւտրական ասպարէզում Վէրլէի ընկերն էր, բայց միամիտ կերպով զոհ է դառնում վերջինիս մեքենայութիւններին—մի քանի ապօրինի արարքների պատճառով խիստ պատժի է ենթարկուում և վերջը զրկուում է թէ իր դիրքից և թէ պաշտօնից: Իբրև մի թշուառ և ողորմելի ծերունի նա այժմ Վէրլէի շնորհիւ արտագրութիւններով է պարապում: Բայց Վէրլէն առանձին «չնորք» է ցոյց տալիս դէպի ծերունի Էլիզալի ողբին՝ Հիւլմար, Նա իր ծախսով լուսանկարչական մի արհեստանոց է կազմում Հիւլմարի համար. այդ դեռ բաւական չէ՝ Վէրլէն հող է տանում նոյն իսկ նրա ընտանեկան բախտաւորութեան մասին— Հիւլմարին ամուսնացնում է իր նախկին անտեսուհի Գինա Հէստէլի հետ, որի հետ Վէրլէն դեռ իր կնոջ կենդանութեան ժամանակ մտերիմ կապեր էր ունեցել: Անբախտ կիրք մահուան անկողնում ամուսնու այս անբարոյական արարքը պատում է Գրէգէրսին: Վերջինս մօր մահուանից յետոյ հեռանում է իր հօր մօտից և լեռներում նրա հանքային գործերն է կառավարում: Նա ամբողջ 16 տարի մնում է լեռնային առանձնութեան մէջ և ահա այսքան երկար ժամանակից յետոյ հայրը նրան յետ է կանչում: Որդին գալիս է, առանց իմանալու թէ ինչու: Հայրը առաջարկում է նրան իբրև բաժնետէր մտնել իր գործերի մէջ, բայց նա հրաժարւում է, որովհետև տեղեկանում է Հիւլմարին արած նրա «չնորքի» մասին և միւս կողմից լսում է, որ իր հայրը մտազիր է երկրորդ անգամ ամուսնանալ՝ իր նոր անտեսուհի տիկին Սէօրբիի հետ: Գրէգէրս երեսուիւ է տալիս իր հօր ամբողջ արարմունքը և հրաժարւում է ոչ միայն նրա ժառանգութիւնից, այլև այդպիսի հօր հետ միասին միևնոյն յարկի տակն ապրելուց: Նա հեռանում, դնում է Հիւլմար Էլիզալի մօտ, որպէս զի իր հօր մեղքերը քաւէ:

Բայց ինչո՞վ էր նա այս մեղքերը քաւելու: Գրէգէրս «արդարասիրութեան տենդով» բռնուած մի իդէալիստ էր. նրա կարծիքով Հիւլմարի ընտանեկան կեանքը «ստուրթեան վրայ է

հիմնուած և նա իր նուիրական նպատակն է համարում փարատել այդ ստուծիւնը, լոյս սփռել իր մանկութեան ընկերոջ՝ Հիւլմարի ընտանեկան կեանքի վրայ: Նա խորապէս համոզուած էր, որ այս լոյսի հետ միասին կը բացուի և նրա ընտանեկան բախտաւորութեան արեւը: Թէ՛ սրբան սխալուած էր լեռնեւորում կազմակերպուած այս միամիտ, անփորձ իղէպլիսաը—սա մենք չուտով կը տեսնենք:

Հիւլմար ծոյլ, անգործունեայ և վերին աստիճանի ետական մի անձնաւորութիւն է: Լուսանկարչական արհեստանոցը ձեռք բերելու համար նա երբէք քրտինք չէր թափել. ամեն ինչ ծերունի Վէրլէի փողովը էր գլուխ եկել: Վերջինս շարունակում էր մինչեւ իսկ ծածուկ կերպով օգնել նրա կնոջ՝ Գլինային: Իսկ արհեստանոցի համարեա ամբողջ գրադմունքը ծանրացած էր իր կնոջ և միակ աղջկայ՝ Հէդվիգի ուսերին: Շարունակ ծուլութեան մէջ թաղուած՝ նա միայն մի ցնորքով էր ապրում—թէ նա մի մեծ գիւտ է անելու: Այս հիւանդոտ երեւակայութեան աղբիւրը այն ինքնավստահութիւնն էր, որ նա տածում էր դէպի իր անձը. ինքը իր աչքին մի մեծութիւն էր թւում, որովհետեւ չըջապատողները նրան նոյնպէս մի մեծութիւն էին համարում. ինչպէս մօտիկ ազգականների, այնպէս էլ իր կնոջ և աղջկայ առաջ նա իբրեւ տղամարդ մի կատարելութիւն էր ներկայացնում, որովհետեւ այս միամիտների առաջ նա գիտէր իր դատարկութիւնը պօզդել—նրա միակ շնորքն էր «ոտանաւորներ և ուրիշների մտքերը սիրուն կերպով արտասանել»: Իսկ մասնաւորապէս կանանց ոչ մի բանով հեշտ չէր գրաւել ինչքան այս առաւելութեամբ: Չը մոռանանք նկատել, որ սրա հետ միասին նա ունէր էլի մի առաւելութիւն՝ նոյնքան գրաւիչ և կանանց չըջանում յաջողութեան ճանապարհ հարթող—արտաքին գեղեցկութիւն:

Իր անգործունէութեամբ և ոչ այնքան նախանձելի բարեկեցութեամբ հանդերձ՝ Հիւլմարը իրան բաւական երջանիկ էր զգում: Նրան մեծ գոհունակութիւն էր պատճառում մանաւանդ այն հանգամանքը, որ «դատարկ սենեակը վարձուեց»—նրա մօտ բացի Գրէգէրսից ապրում էին նաև երկու ուրիշ մարդիկ՝ աստուածաբան Մօլլիգ, որ «միշտ հարբած էր» և բժիշկ Բէլլինգ: Բայց նա անտեղեակ էր թէ այս «սենեակ վարձողը» ինչ դիտաւորութեամբ էր եկել իր մօտ և թէ ինչպէս կարճ ժամանակուայ ընթացքում նրա ընտանեկան երջանկութիւնը պէտք է վրդովուէր:

Հիւլմարի մօտն էր ապրում և նրա ծերունի հայրը՝ Էկդալ, որի անցեալի և դժբախտ ճակատագրի մասին մենք վե-

րեւը արդէն ակնարկեցինք, Իբրեւ նախկին զինուորական նա այժմ դարձեալ «որսորդութեամբ» էր պարապում, բայց սա իսկական որսորդութիւն չէր, այլ երախայական մի խաղ: Վերնայարկի մի ողորմելի սենեակում նա Մննդեան տօնի ծառերից մի փոքրիկ անտառ էր կառուցել, իսկ անտառի «բնակիչներն» էին մի քանի հաւեր, աղանւխներ և ճագարներ: Բայց կենդանական այս փոքրիկ ընտանիքի ամենահետաքրքիր անդամն էր մի թեւաղուրկ վայրի բաղ, որին մի ժամանակ վիրաւորել էր կալուածատէր Վէրլէի որսորդական գնտալը և որը մի կերպ ազատուելով այժմ Հէդվիգի սեփականութիւնն էր կազմում: Եւ փոքրիկ Հէդվիգը պարծենում էր իր այս «սեփականութեամբ» ու մի առանձին խնամքով էր վերաբերում դէպի այդ կենդանին:

Ինչպէս նկատեցինք, Գրէգէրսի նպատակն էր լոյս սփռել Հիալմարի ընտանեկան կեանքի վրայ, փարատել այն մթութիւնը, որ սքողուած էր նրա աչքերից և առաջնորդել նրան դէպի ճշմարտութեան ճանապարհը: Հէնց այս դիտաւորութեամբ էլ նա մուտք գործեց Հիալմարի տունը: Եւ ահա ինչ ենք տեսնում—միևնոյն յարկի տակ՝ կեանքի փորձառութեամբ դեռ չը պատուաստուած իդէալիզմը և նոյն կեանքի անողոք ճնշման տակ կազմակերպուած իդէալիզմը դէմ առ դէմ կանգնած: Այս ներհակ սկզբունքները մարմնացած են երկու անձնաւորութիւնների մէջ—Գրէգէրսի և դօկտօր Բէլլինգ, որոնք ներկայանում են իբրեւ մի-մի տարբեր աշխարհահայեացքի բեւեռներ: Առաջինը դեռ օղային բարձունքներումն է սաւառնում, հօր անվայել արարքներից զուլած, բայց ոչ հիասթափուած, իդէալիզմի խանդավառութեամբ զինուած: Երկրորդը ճանաչում էր կեանքը իր ահարկու ծանրութեամբ և անողոքութեամբ. նա ըմբռնում էր այն խոշոր և անխորտակելի անդունդը, որ գոյութիւն ունի կեանքի և իդէալիզմի վարդագոյն հեռանկարի մէջ: Ինչպէս շուտով կը տեսնենք, գործնականութեան փիլիսոփայութիւնն է, որ մարմնացած է այս տարօրինակ, բայց հետաքրքիր բժշկի մէջ: Սրանցից ամեն մէկը իր տեսակէտից է ճանաչում և գնահատում Հիալմարին: Գրէգէրսի կարծիքով նա մի ընտիր դաստիարակութիւն է ստացել՝ հետեւաբար «իդէալական պահանջը երբէք չէ կարող մոռացութեան տալ»—այն ինչ Բէլլինգի կարծիքով նա կրթուել է երկու «անպէտք, հիստերիկ օրիորդ մօրաքոյրերի ձեռքով», որոնք իբրեւ նրա «հոգեմայրեր» մեծ ապագայ էին գուշակում իրանց սանիկին:

Դրամայի ամբողջ ընթացքը անուղղակի կերպով այս երկու աշխարհահայեացքի ընդհարման պատմութիւնն է, որ և առաջնորդում է դէպի իդէալիստ Գրէգէրսի ցաւալի պարտու-

թիւնը—զազափարականութեան անզօրութիւնը և միջակ մարդկանց ու գործնական աշխարհահայեացքի յաղթանակը:

Գրէգէրս փայլուն յոյսերով և մեծամեծ ակնկալութիւններով սկսում է իր «միսիան»—«Դու մի թունաւորուած ճահճի մէջ ես ընկել, դու տառապում ես մի յամբընթաց հիւանդութեամբ և արդէն հասել ես մթութեան մէջ մեռնելու աստիճանին»—նկատում է նա իր միամիտ բարեկամին: Վերջապէս նա ուղղակի յայտնում է Հիալմարին նրա կնոջ անցեալի մութ պատմութիւնը: Գրէգէրս կատարելապէս համոզուած էր, որ Հիալմարը ներողամտութեամբ կը վերաբերուի զէպի իր կինը և կսկսէ նրա հետ ընտանեկան մի նոր կենակցութիւն՝ «ճշմարտութեամբ և առանց որ և է գազանիքի»: Սակայն այս անփորձ իդէալիստին վիճակուած էր մի ողբերգական յուսախաբութիւն: Զայրոյթից նա սկսում է անկանոն կեանք վարել և վճռում է նոյն իսկ հեռանալ իր կնոջ մօտից: Այս դեռ բաւական չէ՝ «էկզալեան անուան և արժանապատուութեան նախանձախնդիր» Հիալմարը այժմ կասկածում է իր միակ ազջկայ՝ Հէդվիդի օրինաւոր ծագման մասին—այն Հէդվիդի, որ այնքան մաքուր և անկեղծ զգայմունքով սիրում էր իր հօրը: Բայց այս անմեղ, նորափթիթ և վերին աստիճանի զգայուն ազջիկը ամենաանողորմ կերպով պէտք է զոհուէր իր անարժան հօր քմահաճոյքներին: Հէդվիդը ոչ միայն այս վերջինի անհասկացողութեան զոհն է, այլ և մաքուր, անխարդախ զգայմունքի և իսկական իդէալիզմի ողբերգական էմբլեման:

Հէդվիդ 14 տարեկան էր, հետեալաբար զանուում էր իր մատաղ հասակի փոխանցիկ շրջանում, որ շատ «փափուկ է և վտանգաւոր» և երբ «ձայնը փոխւում է»: Այս վտանգաւոր շրջանի սիմբօլիքական արտայայտութիւնն այն է, որ ըստ իր մօր վիայութեան՝ նա սկսել էր խոհանոցում «կրակի հետ խաղալ»: Մայրը այս տեսակ խաղի առաջ կարող էր առնել, այն ինչ իսկական կրակի առկայծուելու և անակնկալ հրդեհի բռնկման մասին ոչ ոք հոգ չէր տանում. միայն հեռատես դօկտօր Բէլլինգն էր, որ նախզգում էր Հէդվիդի տխուր ճակատագիրը:

Այս զգայուն և խորաթափանց ազջիկը մեծ տխրութեամբ նկատելով, որ իր հայրը իրան այլ ևս չէ սիրում՝ իբրև գրաւական իր անփոփոխ զգայմունքի՝ պատրաստ է սպանել նոյն իսկ իր սիրած վայրի բաղին—այս «զարմանալի» կենդանուն, որին «ոչ ոք չէր ճանաչում և ոչ ոք չը դիտէր թէ որտեղից է գալիս», բայց որը իր առանձնութեան մէջ փոքրիկ Հէդվիդի քրոջ խնամատարութիւնն էր վայելում:

Վայրի բաղն սպանելու միտքը պատկանում էր Գրէգէր-

սին, որ Հիալմարի վրայ ազդելու և դառն յուսախաբութեան չենթարկուելու համար՝ ցանկանում էր այս վերջին միջոցն էլ գործ գնել: Իսկ Ռէլլինզը, որ ճանաչում էր «անուզղիկ» Հիալմարին՝ նախազգուշացնում է Գրէգէրսին և խորհուրդ է տալիս ի նկատի առնել և Հէդվիգի զգայնութիւնը: Սակայն վերջինս Գրէգէրսի ազդեցութեան ենթարկուած՝ յանուն պէպի իր հայրը տածած զգացմունքի՝ յանձն է առնում խոշոր զոհաբերութիւնը — փնդակը ձեռքին նա մտնում է ներքնասնկակը վայրի բաղին սպանելու հայց ահա այստեղ նա կողքի սենեակից լսում է Գրէգէրսի և իր հօր մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը, որ և անմիջապէս իր համար ճակատագրական պէտք է լինէր: Նա տեղեկանում է, որ իր հայրը ոչ միայն իրան այլևս չէ սիրում, բայց և չէ հաւատում իր սիրոյ և զգացմունքի անկեղծութեանը: Սակայն ամենաանտանելին Հէդվիգի համար այն էր, որ նա լսում է իր ծագման մասին կասկածներ իր հօրից: Այս բոլորից յետոյ գժրաղզ Հէդվիգը իր ձեռքի գնդակով փոխանակ վայրի բաղին՝ իր սեփական կեանքին է վերջ տալիս—և այս հէնց այն բոպէին, երբ Հիալմարը հեղինական կերպով հարցնում էր—«... եթէ ուրիշները գալու լինէին և լիառատ ձեռներով առաջարկէին երախային (Հէդվիգին)՝ հեռացիր նրանից (հօրից), մեզ մօտ դու կը վայելես կեանքի հաճօքը—և եթէ ես ասէի—Հէդվիգ պատրանտ ես կեանքդ լինձ համար զոհելու (ծիծաղում է հեգնօրէն): Այո, շատ շնորհակալ եմ, գիտեմ թէ ինչ պատասխան պէտք է ստանայի»:

Եւ խստասիրտ հայրը նոյն ակնթարթում «պատասխանն» ստանում է—կողքի սենեակից լսում է ատրճանակի ձայնը:

Գրէգէրս զգալով իր ծանր պատասխանատուութիւնը՝ մխիթարուում էր գոնէ նրանով, որ «Հէդվիգի մահը իզուր չէ անցնելու», որ իր «կեանքի նպատակը» պսակուելու է, որ «վիշտը բարձրացնելու է Հիալմարին»: Սակայն զօկտօր Ռէլլինզը իրաւամբ պատասխանում է—«Մարդիկ սովորաբար բարձրանում են, երբ վշտով լի խմբուում են մի դիակի շուրջ. բայց գիտէ՞ք դա մինչև երբ է տեւելու»:

—«Միթէ դա մինչև կեանքի վերջը չէ տեւելու»—հարցնում է միամիտ Գրիգէրսը:

—«Երեք քատօրդ տարուց յետոյ փոքրիկ Հէդվիգը նրա (Հիալմարի) համար ուրիշ բան չէ, բայց եթէ մի սիրուն պէկամացիայի նիւթ»:

—Եւ այդ ասում էք Հիալմար էկզալի մասին»:

—«Մենք կը խօսենք դեռ՝ երբ նրա գերեզմանի վրայ թա-

ոամած կը լինի առաջին խոտը: Դուք կը լսէք զեռ թէ ինչպէս նա պիտի հեկեկայ «հայրական գրկից վաղաժամ խլուած դաւակի մասին...»:

—Եթէ դուք իրաւունք ունէք և ոչ թէ ես, այն ժամանակ կեանքը այլևս կեանքի գին չունի»:

Եւ յուսարեկ իղէալիստը գնում է իր ճակատագիրը վայելելու—«սեղանի վրայ տասերեքերորդը լինելու»:

Այս բնորոշ վերջաբանով կարծէք իղէալիզմի սնանկութիւնն է յայտարարուում: Այս սնանկութիւնը վաղուց պարզուած էր Ռէլլինգի համար: Նա շատ լաւ էր ճանաչում այն «աստուածապատկերը», որի առաջ երգրագուում էր Գրէգէրս: «Դուք մի հիւանդ մարդ էք»—նկատում է նա վերջինիս—«Եւ ձեր հիւանդութիւնը բարդ է. առաջին այն խիստ ճշմարտութեան տենդը և երկրորդ, որ աւելի վատթար է, մի պաշտամունքի խելագարութեամբ բռնուած՝ շարունակ երեւակայութեամբ էք ապրում. ձեր շրջապատից դուքս միշտ հիացմունքի մի առարկայ էք որոնում»:

—«Այդ առարկան ի հարկէ ես իմ շրջապատից դուքս պէտք է միտում»—պատասխանում է Գրէգէրս:

—Բայց դուք չափազանց սխալուում էք այն հրաշքների վերաբերմամբ, որոնք կարծում էք թէ տեսնում և լսում էք ձեր շուրջը: Դուք ձեր իղէալական պահանջով նորից մի խրճիթ էք մուտք գործել. այս ամենը սակայն բացակայում են վնասող մարդիկ»:

—«Եթէ դուք Հիւլմար էկզալի մասին աւելի լաւ կարծիք չունէք, այն ժամանակ ի՞նչ հաճոյք էք զգում շարունակ նրա հետ լինելուց»:

—Տէր Աստուած. ես պէտք է ակնածութեամբ նկատեմ, որ մի տեսակ բժիշկ եմ. այս պատճառով պէտք է հոգ տանեմ այն խեղճ հիւանդի մասին, որի հետ միևնոյն տանն եմ ապրում»:

—Ի՞նչ էք ասում. Հիւլմար էկզալ հիւանդ է»:

—Մարդիկ դժբախտաբար բոլորն էլ մի քիչ հիւանդ են:

—«Եւ ի՞նչ բուժիչ միջոց էք գործ դնում Հիւլմարի համար»:

«Իմ սովորական միջոցը. ես հոգ եմ տանում նրա կենսաստուութիւնը հաստատ պահել»:

—Կենսաստուութիւն. թէ դուցէ ես լաւ չը լսեցի»:

—Այո, ես ասացի կենսաստուութիւն, որովհետեւ, տեսնում էք, կենսաստուութիւնը մի գրաւիչ սկզբունք է»:

Եւ երբ Գրէգէրս խօսում է լէյտենանտ Վէրլէի որսորդա-

կան «իդէալներից»՝ այն ժամանակ զօկտօր Բէլլինգ ահա թէ ինչ է նկատում—«A propos, պարոն Վէրլէ, իզուր էք գործածում օտար խօսքը—«իդէալներ»։ չէ որ մենք ունենք նօրվէզական սիրուն խօսքը—«ստույթիւններ»։—«Կարծում էք այս երկուսը միմեանց նման են»—չուարած հարցնում է Գրէգէրս։

—Մօտաւորապէս այնպէս, ինչպէս տիֆը և բորբոսային ջերմը»։

—Պարոն բժիշկ, մինչև Հիպոկրատին չաղատեմ ձեր ձեռքերից՝ ես չեմ կարող ինձ հանգիստ զգալ»։

—Դա շատ աւելի վատ կը լինի քան համար։ Եթէ դուք խլե՛ք մի միջակ մարդուց կենսասուրբիւնը՝ այն ժամանակ խլած կը լինե՛ք եւ քան թախաւորութիւնը։

Այս վերջին խորիմաստ հրահանգի հետ, մի շարք ոգրերգական փորձառութիւններից յետոյ, ահամայ հաշտուեց և Գրէգէրս, որի իդէալիզմը, վերացական յափշտակութիւնը հանդիպելով «միջակութեան» ապստամբին՝ ջախջախուեց։ Հիասթափութեան թախիծը ճակատին նա ստիպուած էր հրաժարուել ոչ միայն իր իդէալներից, այլ և կեանքից—տասերեքերորդ ճակատագրական թիւը նրան էր վիճակուել։ Այս հետեւանքն անխուսափելի էր, որովհետեւ, ինչպէս սրամիտ կերպով նկատում է կին զրոգ Լու Անդրէաս Սալօմէն, նա համոզուեց, որ միջակ մարդկանց մօտ «ճշմարտութիւնը անհրաժեշտ կերպով երեւան է զալիս իբրեւ մի աւազակ, որ միշտ աւելի է պահանջում քան թէ տալիս է»։ Իսկ ներկայ դէպքում պահանջը, ստանալիքը շատ ծանր էր, իսկ տուրքը համարեա ոչինչ։ Այս «ստանալիքներից», Գրէգէրսի իդէալիզմի զոհերից ամենաողորմագականը անշուշտ մատաղահաս Հէրլիգն է, այս տարաբախտ, անմեղ և վերին աստիճանի նրբազգած աղջիկը, որ շարունակ անհուն սէր և վստահութիւն էր տածում դէպի իր անարժան հայրը և որը սակայն իր «աչքերը պէտք է բաց անէր»՝ իսկոյն և յաւիտեան փակելու համար։ Վայրի բազը թշուառ Հէրլիգի սիմբօլիկական պատկերն է։ Ինչպէս կենդանիների փոքրիկ ընտանիքում՝ հաւերի, աղաւնիների և ճագարների մէջ՝ այս վիրաւորուած կենդանին քաջ էր տալիս իր առանձնութեան օրերը, այնպէս էլ էլիպալի խայտառակ ընտանիքում Հէրլիգը մի վայրի բազ էր. միայն այն տարբերութեամբ, որ բազը թեւաղուրկ լինելուց յետոյ շարունակում էր դեռ ապրել, իսկ Հէրլիգի հոգեկան գնդակահարութիւնը ճակատագրական էր, անվերականգնելի։ Անտոյրով հայրը փչրել էր նրա զգայուն սիրտը, այդ պատճառով առանց մի ակնթարթ անգամ դանդաղելու ոչէպէ է փչրուէր և նրա կեանքը։

Որ Գրէգէրսի պարտութիւնը, նրա տխուր հիասթափութիւնը իրէալիզմի անդօրութիւնն է արտայայտում—սա անհերքելի է: Սակայն միանգամայն սխալ կը լինէր մտածել, որ Իրսէն առհասարակ իրէալիզմի մնանկութիւնն է յայտարարում, չէ հաւատում գաղտփարականութեան յաղթանակին: «Վայրի բաղի» մասը բովանդակութիւնից այս տեսակ եզրակացութիւն հանել՝ նշանակում է բոլորովին խեղաթիւրել Իրսէնի ոգին: Մեծ դրամատուրգը այս ծանրաշունչ ստեղծագործութեամբ երբէք չը շեղուեց իր գաղափարապաշտ ուղղութիւնից, այլ հայկացքը դէպի իրականութեան հետանկարը յառած՝ մտայլ, բայց ճշգրիտ գոյներով մի անգամ էլ նկարագրեց այն ընդհարումը, ուժեղ հակասութիւնը, որ գոյութիւն ունի կեանքի և իրէալի մէջ: Հիւլմարի կամ աւելի ճիշտ՝ Ռէլիքի անձնաւորութեամբ նա պատկերացնում է առօրեայ «միջակութիւնը» իր գաղափարամարտ ոյժով. իսկ Գրէգէրս Վէրլէն վերարտագրում է կեանքից կտրուած, իրականութեան հողից զուրկ իրէալիզմը, որը աւելի շուտ օգային է քան թէ առողջ, բովանդակալից: Այնպէս որ Իրսէն անուղղակի կերպով երեւան է գալիս իբրև կենսունակ, գործնական իրէալիզմի քարոզիչ:

Թէ նրա հաւատքը զիպի իրէալիզմը անխախտ էր, սրա ապացոյցը այն այսպէս թէ այնպէս լաւատես տրամադրութեամբ համակուած դրաման, որ լոյս տեսաւ «Վայրի բաղից» յետոյ—«Րօսիէրսիօլ»:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Կը շարունակուի)

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՔԷԼ ԱՐՔԵՊ.

ՄԽԻԹԱՐԵԱՆԻՆ ^{*)}

I

Նոյեմբերի 27-ին. 1858, Մոսկվա

Բանազէտ, ազգասէր բարեկամ

Աքէլ վարդապետ.

Ձեր զեղեցկախօս նամակը այս տարու ապրիլի 30 թուա-
կանից իւր ծրարով հանդերձ անկորուստ հասաւ ինձ և մեծ
ուրախութիւն պատճառեց ինձ որպէս մի քաղցր բարեկամա-

*) Յայտնի է, թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունին նշանաւոր հասա-
րակական գործիչների մասնաւոր նամակները նրանց գործունէութեան
կամ կեանքի այս ու այն հանգամանքները պարզարանելու համար. հրա-
պարակապէս մարդ շատ անգամ գանաղան պատճառով անկարող է լի-
նում իր մտքերն արտայայտել այնպէս, ինչպէս մասնաւոր նամակում:
Մեր յայտնի հրապարակախօս Ստեփաննոս Նալբարեանցը ունէր ընդարձակ
նամակագրութիւն բազմաթիւ անձանց հետ, որոնցից շատերը նրա ժա-
մանակակից յայտնի հասարակական գործիչներ էին: Այդ նամակներից
մինչև այժմ հրատարակուած են 40—50 հատ «Առումայո հանդիսում» (Թիֆ.
1896—1901), «Պարականական եւ պատ. հանդիսում» (Մոսկ. 1888—1896),
պ. Ս. Շահազիզի «Նալբարեանցի կենսագրութեան» (Մոսկ. 1897) և
Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի «Յով. եպ. Շահիս. կեն-
սագրութեան» մէջ (Ս. Պետեր. 1898): Այժմ մենք, լեզուն և ուղղա-
պրութիւնն անխփփոք պահելով, հրատարակում ենք Ս. Նալբարեանցի նա-
մակներից ութը հատ, որոնք մինչև այժմ, որչափ մեզ յայտնի է, ոչ մի
տեղ հրատարակուած չեն: Սրանք գրուած են Էջմիածնի միտրան ու-
սումնասէր Աքէլ վարդապետ և ապա արքեպիսկոպոս Մխիթարեանին, որ
Նալբարեանցի մտերիմ բարեկամներից մինն էր:

Սոյն նամակների բնագիրները գտնուած են մի տետրակում, որի
երեսն ունի հետեւեալ մակագրութիւնը—«Նամականիք գանաղան անձանց,
ուղղեալ առ Աքէլ Արքեպիսկոպոս Մխիթարեանց»: Այս տետրակը պատ-
կանում է Սահակ վարդապետ Սամատունուն, որ բարեկամարար թոյլ տուեց
մեզ օգտուել նրանից:

Մխիթար վարդապետ

կան ողջունի ձայն դէպի մեր ազգային ձեռնարկութիւնը, որ է Հիւսիսափայլի հրատարակումը: Եթէ մի կերպով ես ինքս չեմ կարող իմ անձը ձեր առաջեւ անդատապարտ կացուցանել իմ լուծեանս պատճառով, բայց միւս կերպով և ձեր և իմ համար աւելի շոտաւէտ է գրել Ձեզ այս միջոցիս, երբ դուք արդէն Հայաստանի հողի վերայ էք: Դուք հեշտ կ'իմաստասիրէք իմ ասածի խորհուրդը: Այժմ կարող են մեր ձեռքը և սիրտը աւելի ընտանեւոր մտեանալ միմեանց և հասկանալ միմեանց: Շատ բաներ կան այս բոլորէս գրելու ձեզ, մասնաւանդ որ դուք այժմ այնքան մօտ էք էջմիածնու Սինհոգոսին, բայց մի փոքր պիտոյ է դեռ եւս սպասել մինչև հասունանան այդ բաները որ դեր եւս խակ և պղտոր դրութեան մէջ են, և Հիւսիսափայլի հրատարակողը ունի այժմուս, թէպէտ զինուորված ու զրահաւորված, հանդէպ գնալու մի փոթորիկի. տեսանե՛ք խաւարը կը յաղթէ լուսին, թէ լոյսը խաւարին, միայն թէ մեր ազգի մարդիկը ունենային այնքան բարոյականութիւն և ազնիւ պատուասիրութիւն (moralité et une noble ambition), որ չկամէին պատերազմել իմ հետ բռնակալութեան ճանապարհներով, այլ պատուաւոր զէնքով. բայց պապականք ու Ասիացիք այս գործի մէջ միապէս սովոր են ընթանալ, ուր պակաս է պատուաւոր զէնքը որ միայն տեղիք ու հանդէս ունէր լիտերատուրայի մէջ, այնտեղ կամին գործ դնել մի կողմտ բռնակալութիւն (un despotisme brutal): Եթէ դեռ ես չէք հասկանում իմ ասածը, գուցէ շուտով կը լսէք մեր բերանից: Բայց արթնն կացէք և հսկեցէք իբրև բարեկամ և ձեր ազգի, իբրև պահապան հայկական լուսաւորութեան Սիօնի. թշնամին մօտեցել է, առէք և դուք ձեր զէնքը և ճշմարտութեան դրօշակը, և հանդէս եկեցէք: Պատերազմել պիտոյ է, և միաբանութեամբ, այնուհետև յաղթութիւնը կը լինի ձեր և մեր բաժին:

Ձայն կայ, որ ժողովուրդը աւելի բազմութեամբ կամենում է մասնակից լինել գալոց 1859 թուականի Հիւսիսափայլին. թող և Ձեր հոգեւոր ուխտը յետ չը մնայ, այլ լուսաւորութեան տապանակի առաջև նախընթաց լինի ժողովրդին, բարի խրախոյս ու օրինակ լինի միւսերին: Այդ հարկաւոր է, մասնաւանդ այս ներկայ միջոցիս: Ազգն ու եկեղեցին, ինչպէս դորա մի են, թող նոյնպէս և զուգընթաց գտանվեն լուսաւորութեան և ազգասիրութեան հանդէսի մէջ: Ազգն ու եկեղեցին պիտոյ է ունենան մի հասարակաց օգուտ, ուրեմն թող և գործով պաշտեն ու յառաջ տանեն այդ օգուտը:

Ձը կամիմ երկարացնել իմ նամակը, որովհետև Հիւսի-

սափայլի 12 տետրակի տպագրական սրբազրութիւնը զրած է սեղանիս վերայ, և ժամը կէս գիշեր է:

Ուրեմն ողջունելով Ձեզ ամենայն յարգութեամբ, թող մաղթեմ և ձեզ և ինձ բարի գիշեր, բարի հանգիստ և բարի առաւօտ:

Ձեզ յարգող

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ

II

Փետրվարի 11 ին. 1859

Մոսկվա

Մեծապատիւ ազգասէր բարեկամ

Աբէլ վարդապետ Մխիթարեանց.

Ձեր յարգելի նամակը անցեալ տարու դեկտ. 27 թուականից, երեք մասնակցութեան ծրարով (28 մ. 50 կոպ.) ստացայ անկորուստ իւր ժամանակին, և շտապում եմ այս նամակովս միամիտ կացուցանել ձեզ, որ ուղարկելի բաժինքը իւրեանց հասցէով կը հոգացվին իմ կողմից, երբ որ Հիւսիսափայլի ամաստետարակը պատրաստ կը լինին: Առաջինը այս օրերուամս դուրս կելանէ տպագրական մամուլի տակից, և աւելի փառաւոր ու յատակ քան թէ անցեալ տարունը. բովանդակութիւնքը նոյնպէս արժանի մեր ազգային պարծանքին: Թող ինդան աջակողմանքը և տրտմին ու պատասովին ձախակողմանքը: Շատ սխալվում է մեր թշնամին, կամենալով յաղթահարել լուսաւորութեան յառաջագիմութիւնը. բայց մեք պիտոյ է առանձին գոհութեամբ աղօթենք առ Աստուած, ըստ որում մեր թշնամին աւելի օգտակար պիտի լինի մեզ քան թէ վնասակար: Դրանով շատ մտքեր ու սրտեր զարթած են և յատկապէս դէպ ի մեր կողմը. ճշմարտութիւնը սովոր է աճել և տարածվել հալածանքով միայն, և առանց մարտիրոսների արիւնին կարող չէր երբէք նոյն իսկ քրիստոնէութիւնը այնքան յաղթող հանդիսանալ և տիրապետել աշխարհին: Վաղուց գիտէի ևս և իմ բարեկամքը, որ մի փոթորիկ կը բարձրանայ պապական աբեղաների կողմից, որ եկաւորել էին դէպ ի մեզ. այդ բանը իսկոյն մարդարէացած է հոգիս, երբ այդ օրհնածը

ուսք կոխեց Ռուսաստանի հողի վերայ, պատճառ որ միշտ մըտածել եմ և մտածում եմ թէ մեք ու պապականքը, լինելով ամենեւին այլ ու միւս հոգու որդիք, երբէք կարող չենք խաղաղութեամբ ապրել միմեանց հետ և ինչպէս մարգարէացել էր հոգիս, կատարվեցաւ և ճշմարտութեամբ: Ես և իմ բարեկամքը սուրբ ձեռքերիս կանգնած ենք անշարժ ու հաստատ. թշնամին տեսանելու չէ մեր քամակը. ունի նա զօրութիւն, թող հանդէս գայ պատուաւոր ղէնքով և չափէ իւր զօրութիւնը մերի հետ. բայց պապականները սովոր չեն պատուաւոր ղէնքով գործ կատարել որովհետեւ չունին. նոցա ծանօթ է միայն բռնակալութեան ճանապարհը: Բայց հասարակաց կարծիքը. ահա մի դայթակղութեան քար, որ դժուար թէ կարողանային նոքա վերացնել մէջ տեղից: Հայոց ազգը արդարեւ բաղկանում է ըստ մեծի մասին սոգէտ և դանդաղ մարդերից. բայց փառք Աստուծոյ, զորա մէջ կան և բանազէտ ու ճշմարտասէր մարդիկ, և սորանց խաբել ու մոլորեցնել մեր օրերումը անհնարին է. թէպէտ մեր թշնամին այլպէս է տեսանում բանը: Բայց թող տեսանէ, ինչպէս կամի, և մարդիկ և ժամանակը՝ դատախազ են և կը լինին նրան միշտ և հանապազ:

Յաւում եմ, որ Հիւսիսարեւելի մասնակիցների թուի մէջ չէ և էջմիածնի Սիւնհոգոսը: Իմ նամակը առ Սիւնհոգոսը և առ տեղակալ Ղուկաս արքեպիսկոպոսը թէ ինչ հետեւանք է ունեցել, դեռ եւս ոչինչ չեմ լսում, յոյս ունիմ, որ շուտով մի բան լսեմ ձեզանից: Մեր լուսաւոր բարեկամքը Պետերբուրգի մէջ անգործ չեն. ամենեքեան, բացի մի քանի ողորմելի օբսկուրանտներից պաշտպան են ազգային օգտին և խօսքով և գործով. այս առաքինութիւնից թող յետ չմնայ և մեր լուսաւորչական աթոռի սուրբ ուխտը. այս հարկաւոր է նորա պարծանքի համար:

Սրբազան Մատթէոսին գրած եմ և ես ձեր դէպ ի այն տեղ փոխադրութեան մասին, հարկաւոր ծանօթաբանութեամբք իմ կողմից: Չգիտեմ, արդեօք Սիւնհոգոսն կամի թէ ոչ, թոյլ տալ Հաշտարխանու վիճակաւորին գործ դնել եկեղեցական արծաթի տարեկան տոկոսիքը Հոգեւոր Սեմինարիայի համար. պատճառ, առանց օրինաւոր եկամուտքի կարելի չէ պահպանել Սեմինարիայ: Յանկալի է, որ մի օր առաջ պարզվէր այդ բանը. և անհասկանալի է ինձ, թէ ինչ միւս աւելի օգտակար գործի վերայ կարելի էր պէտք ածել եկեղեցական գրամը. քան թէ եկեղեցական օգտի ու բարեկարգութեան համար, որ անկարելի

է առանց բարեկարգելու իմանալի եկեղեցին, կրթելու և դաստիարակելու եկեղեցական պաշտօնեայք ազգի համար:

Հասուցանելով ձեզ իմ ազդեւոր, որ է

Его Высочородіо

Степану Исаевичу

Назарьянцу

Г. статскому совѣтнику и кавалеру

На Черногрявкѣ, въ

Въ Москвѣ

собственномъ домѣ.

Մնամ Ձեր

Պատրաստական բարեկամ

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

III

Մոսկվա. Մայիսի 11. 1859

Մեծապատիւ բարեկամ

Արէլ վարդապետ.

Ձեր նամակը անցեալ ամսի 10 թուականից ծրարով հանդերձ ստացայ անկորուստ եւ շտապում եմ յայտնել Ձեզ իմ առ ի սրտէ շնորհակալութիւնը, որ գոնեայ մի անձն, հոգևորների կարգից կամէր պաշտպան դուրս գալ ճշմարտութեան, մինչ, որպէս եղած է մինչև օրս, դորա և ազգի թշնամիք եղած են միշտ, ի հարկէ տգիտութեան և վայրենաբարոյութեան պատճառով, մեր հոգևորները: Ձեր ծրարն իսկոյն ուղարկեցի դէպի Պետերբուրգ ցենսուրային, ամենեին անփութիս թողնելով լեզուն և ոճը, ինչպէս պատուիրած էիք, բայց մեծ խնդիրը այն է, որ ես սաստիկ տարակուսանք ունիմ այդ գրուածի տպագրութեան թոյլտուութենի մասին, պատճառ, մի նմանապիսի շատ գեղեցիկ պատասխանատուութիւն պ. Նալբանդեանի գրչից և կողմից ընդդէմ Պալասանեանին, այս օրերումս յետ դարձուց ինձ ցենսուրեան կոմիտէտը, պահանջելով որ սուսերէն թարգմանած գորան ուղարկէի նորան. ըստ որում այլապէս կարող չէր ցենսուրեան կոմիտէտը վճռել գրչագրի տպագրութիւնը: Ասել է, թէ անկարելի էր մեզ պաշտպանել մեզ, երբ որ միւսերը գազանաբար յարձակվում էին մեր վերայ: Եւ Նալբանդեանցի գրուածը լինելով մի մեծապարունակ ճառ, համարեան թէ հինգ քերք սպած, անկարելի էր ինձ ձեռնամուկս լինել այդ

գործի ուսերէն թարգմանութեանը, որ պիտոյ է յափշտակէր ձեռքբիցս մի ամիս ժամանակ և ամենեկին խառնակէր իմ գործակատարութեան ընթացքը: Հեղինակը լինելով այժմուս Թէմզի վերայ Լօնդօնումը, յետ ուղարկեցի նորան իւր գրուածը, խընդրելով տակի նորան Արեւուտք օրագրի մէջ որ Փարիզումը հրատարակվում է պ. Ոսկանեանցի ձեռքով: Այդ օրագրի մարտ ամսի համարը կ'ուղարկեմ Ձեզ շուտով Թիֆլիզի վերայով, ուր կարող էք տեսանել մեր պատուելի Այվազեանի բոլոր դարանագործութեան հանդէսը, և իմաստասիրել իսկոյն, որ այդ մարդը մի հին փորձառու զինուոր է պապական խաւարի դրօշակի տակ. և նորա արարքը ընդդէմ մեր են միայն շարունակութիւնն նոյն ընթացքի, որ նա ունեցել է Փարիզի մէջ հայերի հետ, բայց այն զանազանութեամբ, որ այժմուս բռնակալական հոգին Փրանսիական կառավարութեան յաջողութիւն է տուել նորան, բայց Ռուսաստանի առողջամիտ ազատութիւնը դպրութեան հանդէսի մէջ կարող չէր այն շնորհը գրկել մեր ուսահայ հեղինակներէ, ինչ շնորհ վայելում են ընդհանրապէս բուն ուսազգի հեղինակքը: Օրէնքը մի է. և այն է օրէնք, ինչ որ հարկի տակ է կացուցանում ամենայն անձն, առանց բացառութեան: Բայց այժմուս Թրանսիան բարոյական նեխութեան մէջ է, ինչպէս կը տեղեկանաք մեր գրուածից «Փարիզեան հասարակութիւնքը և Փարիզեան կանայք» 4 համարի մէջ, որ արդէն արձակված է դէպ ի ձեզ: Ինչ որ մեր պատուելին փորձել է և յառաջ է տարել Փարիզի մէջ, նոյն բանը փորձեց և Ռուսաստանի մէջ, բայց մինչև այժմ յառաջ տանել տկարանում է և խայտառակվեցան արդէն նորա զարանագործութեան մեքենայքը: Փառք և պատիւ Ռուսաստանի և նրա հպատակ հայերի ողջմտութեանը: Եւ Հիւսիսափայլը յառաջ է դնում առաջաստաները պարզած և թիակներովը ձեղքելով ալիքները: Ինչ որ կարելի է խօսքի զօրութեամբ և թոյլ տուած ազատութեամբ կատարել, կատարել է մինչև այժմ Հիւսիսափայլը, և կը կատարէ այսուհետև, միայն թէ կամէր հայկական հասարակութեանը ձեռնտու լինել հրատարակողին աշխատութեամբ և արծաթով:

Շատ ուրախ եմ որ մեր վարդապետների մէջ գտնվում են մարդիկ, որ ունենին սիրտ և հոգի զգալ և ճանաչել և պաշտպանել ճշմարտութիւնը. բայց թէ ո՞վ էին այդ արժանապատիւ անձինքը, չէք գրում ինձ յատկապէս, որ կարողանայի գրել նոցա. ուրեմն այս բոպէիս կարող եմ միայն ձեր միջնորդութեամբ բարեկամական ողջունի համբոյր ուղարկել նոցա, և յանձնել նոցա անտեսութեանը ոչ իմ գործը, այլ ճշմարտութեան գործը և Աւետարանի սպասաւորութիւնը, որ պարտա-

կանութիւն է ամենայն մարդու, հոգևորի ևս առաւել քան թէ մարմնաւորի: Խնդրում եմ միայն աւանդել այդ արժանապատիւ եղբարքը ի Քրիստոս, իմ հոգուս կաակը որ այսպէս է. թող քաջութեամբ գտնուորին դոքա իւրեանց մէջքը: Թող զբահաւորին իւրեանց բազուկը ճշմարտութեան վահանով, թող աներկիւղ ասպարէզ մտաննն, պատերազմելու խաւարի սպասուոր զինուորներին հետ. թող վերջապէս հասկանան, որ մեր կեանքը պատերազմ է ոչ թէ ունայն աշխարհական բաների պատճառով, այլ լուսաւորութիւն, ճշմարտութիւն, ազգ ու եկեղեցի յառաջադէմ կոչուցանելու, և ինչքան շատ աշխատելու և քրտնելու էր մեր մէջ ամեն մինը, այնքան ևս մեծ և հոյակապ ասվելու է նորա վաստակը մարդկութեան այգևատանի մէջ: Ասացէք այդ արժանապատիւ վարդապետներին իմ անունով, ասացէք ոչ թէ լեզուով միայն, այլ և հոգով և սրտով, թէ մեր ժամանակը պատերազմ է և կարօտ է անձնազիր նահատակների, ով տղամարդ է, ով զգում է իւր մէջ այրակոն հոգի, որի համար զեռ ևս կենդանի է հայրենիք ասած բանը, թող ժողովէ և ամիովի է իւր զօրութիւնքը հանդէս մտանելու և վճռաբար դործ կատարելու, ամենևին անխտիր, անզգայ մնալ անկարելի է. հարկաւոր է կուսակցութիւն կամ աջակողմեան կամ ձախակողմեան դասի հետ. լինել ոչ այս և ոչ այն, ոչ միս և ոչ ձուկն, ինչպէս ասում է առածը, կորուստ կը բերէ մեզ, ինչպէս մինչև այժմ բերել է բազում մասնով և օրինակով: Հայրենասիրական եղբայրսիրութիւն հիմնեալ առաքինութեան և ճշմարտութեան զազափարների վերայ—անձ մեր դրօշակը, որի հովանաւորութեան ներքոյ պարտական ենք մեք ամենեքեան պատերազմել և յաղթել, կամ, եթէ անկարելի է յաղթութիւնը, քաջութեամբը, սուրը ձեռքին, արժանապէս դուրս փչել մեր հոգին:

Շատ ցաւելի եղաւ մեզ—այս խօսքը ասում եմ մեծարանքի պատճառով, ըստ որում կարող եմ ես և արհամարհել—որ Ղուկաս արքեպիսկոպոս տեղակալը այնքան նամակներ ստանալով ինձանից, ոչ մինին մինչև այժմ պատասխան չէ տուել: Իմ գրածքը հասարակ ու թեթեւ բաներ չէին, այլ ազգային, եկեղեցական և մեծակշիւ. միթէ այդպէս արժան էր նորան ընթանալ իմ հետ այնպիսի ժամանակում, ուր հարկ էր, և պահանջում էր նորա արժանաւորութիւնը որ ասէ իւր վճռողական կարծիքը, կամ հաստատութիւն տայ ինձ կամ թէ թուլացնէ իմ ջիւերը: Բայց ոչ. պատուելի ձերուսին աւելի լաւ համարեց լուսութեամբ պատասխանել այն տեղ, ուր հարկաւոր էր

խօսք և յայտնարարառ խօսք: Չեմ հաւան դորան և ոչ ևս գովասանող: Բայց դուցէ ունին դոքա իւրեանց ասիական պատճառը լուռ մնալու միշտ և անօգուտ կրօնաւորականութեամբ համբերելու անհամբերելի ազգային աղէտքների, որ և այդ լուռութեամբը ոչ թէ բժշկվիլ կարող են, այլ միայն ևս առաւել ճարակվիլ և ծովանալ. դա ընդունելի չէ ինձ:

Սրբազան Մատթէոս մեր հայրական բարեկամը, կարծեմ, այժմուս պիտոյ է լինի ձեր մօտ: Խնդրեմ ողջունել Նորա Սբբազնութիւնը իմ կողմից և մատուցանել նորան իմ չնորհակալութիւնը նորա նամակի և ծրարի մասին անցեալ Ապրիլին 22 թուականից:

Ողջունելով Ձեզ և բոլոր ձեր ազգասէր բարեկամքը,
Մնամ

Ձեր միշտ հարազատ
եղբայրակից Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

 IV

Պատուական բարեկամ
Հարէլ վարդապետ.

Ձեր յարգելի նամակը ապրիլի 18 թուականից հանդերձ 9^{1/2} ման. ծրարով անկորուստ ստացայ և շտապում եմ պատասխանել Ձեզ, իսկոյն և անյապաղ, որ մի փոքր ջերմանայ մեր մէջ գրաւոր հաղորդակցութիւնը և ճանապարհ բանայ մեզ աւելի բարւոք ճանաչելու միմեանց սիրտը և հոգին: Եւ այս հարկաւոր է մեզ հայերիս մէջ մտնաւանդ, միտ զնելով մեր վայրենացեալ գրութեանը:

Ցաւեցաւ սիրտս այն մեռեալ հոգիների վերայ, որոնց մասին գրած էիք ինձ. բայց Ս. մինչեւ այն աստիճան թշուառ աղքատութիւնը կամ անարգ ժլատութիւնը այն հանդէսի մէջ, ուր խօսք էր ազգային լուսաւորութեան վերայ, ուղիղը ասեմ, զգուանք բերեց իմ վերայ, և այդպիսի մեռեալ հոգիքը պիտոյ է օրինակ ու առաջնորդ լինին ազգի համար. ուրեմն ուղիղ են իմ բոլոր ասածը ու գրածները մեր աբեղաների համար. և ահա այդ է ողբալի պատճառը, որ հայերի մէջ կարող է մի վատթար Այվազեան դուրս գալ, որպէս թէ մի անապատի մէջ ամենայն ձայն և թնդիւն և շաղիազիւնք կարելի էր անպատիժ դուրս ժայթքել բերանից: Վայ դոցա:

Ձեր ուղարկած ճառը ընդդէմ Բալասանեանցին իսկոյն ուղարկեցի քննողական ատեանը, բայց չուտով յետ դարձուցին ինձ ասելով, թէ նա ատանց ոռուսերէն թարգմանութեանը չը կամի վճռահատել հայերէն տպագրութիւնը, ըստ որում ճառը վերարեբում էր Նախիջևանու եկեղեցական արծաթին: Անցեալ նամակումս գրեցի Ձեզ արդէն իմ տարակուսանքս այս մասին, և այնպէս ճշմարտվեցաւ: Բայց որովհետեւ փոքրիկ բան էր Ձեր ճառը, ևս յանձն ատայ իսկոյն թարգմանել նորան և կրկին ուղարկել քննողական ատենին: Տեսանենք ինչո՞վ կը վերջանայ գործը. արդեօք դուք աւելի բազդաւոր կը լինիք թէ մեր Մ. Նալբանդեանցը: Սրա ուր լինելը գրած եմ Ձեզ արդէն. այսինքն Անգլիայում: Յոյս ունեմ, որ նա իր գեղեցիկ և զօրաւոր ճառը չուտով կը տպէ մի այլ տեղ, և մենք կը կարդանք դորան ուր և իցէ տպագրած: Այս բանը գրեցի Միքայէլի հոգու վերայ:

Հիւսիսափայլի 5 համարը այս օրերումս ճանապարհ կը ձգվի, ցաւելի է միայն որ այնպիսի գրուածների պատճառով, որպիսի Ձերն ու Նալբանդեանցինն էին մինչեւ այժմ յետացան, թէպէտ և ամենեւին անօգուտ. և եթէ քննողական ատեանը Պետերբուրգի թոյլ տայ տպել Ձեր գրուածը, կը տպվի ու կը հրատարակվի դա Յուսիսի տետրակի մէջ, ըստ որում Մայիսինը եղբափակված է արդէն: Ահա իմ տառապանքս, որ արագաՎազ գրչով ծանուցանեմ Ձեզ, և ինչո՞ւ այդպէս է մեր գործի ընթացքը, կամի՞ք գիտել. ահա ասեմ ձեզ, որովհետեւ ճշմարտութեան բերանը փոքրաթիւ են, և Հայոց ազգը մինչեւ այժմ անասունի պէս լուռ ու մունջ է մնացել. ինչ բեռն որ դրել են նորս վերայ, համբերելով և բթամտաբար համբերելով տարել է, և այժմ ևս այնպէս է շարժվում տեղից որպէս մի դանդաղ և ամենածանրաշարժ փիլ, թէպէտ այլապէս կը պահանջէ: մեր վաղող ժամանակը: Ինչո՞ւ պիտոյ է Հայերը ունենային Ռուսաստանի մէջ մի հատ Հիւսիսափայլ, սպասաւորող առաքիւնութեան և ճշմարտութեան բանին, նոքա կարող էին ունենալ մի այնպիսի օրագիր շատ տեղ, բայց ինչ եմ ասում, մինը ևս հազիւ թէ կարող է յառաջ ընթանալ, սզգի և նորա արեւդաների, ագէտ և հոգեմեռ ու հոգեմեռոյց արեղանների հազար տեսակ դարանագործութեամբը: Ձեզ յայտնի պիտոյ է լինին Սարգիս Զարլանի և Այվաղեանի ընթացքը, նոյա խաչակիր պատերազմախառութիւնը ընդդէմ իմ բոլոր վաստակներին, թէ գրով, թէ բերանով և թէ քարոզութեամբ: Դուք պիտոյ է շատ բան մտախոյ աւելի լաւ իմանաք, քան թէ հետուից: Այս բաներս հով կամի ձեզանից հասկացնել նորընտիր կաթողիկոսին, կամ

Թէ ամենեւին արժան էր այդպէս ընթանալ ընդդէմ աղգային գիտնական հեղինակներին, և թոյլ տալ, որ մի տգէտ և լիրք քահանայ իր փսխածներով ապականէր դոցա պատիւը:

Ես չգիտեմ թէ ինչ պիտոյ է լինի Ձեր և մեր վերջը այսպիսի հանգամանքների մէջ. այն հողը, որի վերայ պիտոյ էր մեզ ոտք ամրացնել և դորձ գործել, չկայ դեռ ես. մեր վարած ու ցանածը ամեն օր ապականում են չար աղուէսները և որոմնացանքը, խնդրեմ մտածել այս ինչորի վերայ և խորհրդակցել մեր բարեկամների և ձայն տալ շուտով: Ես իմ գործս կը կատարեմ, ինչքան որ կարող եմ. յետ մի մնաք և դուք. ձեր կեանքի ամեն մի օրը վաստակեցէք արժանապէս և այրաբար. մի մոռացէք որ կայ մի գալոց ժամանակ, և անաչառ դատաւորներ արդար կչոով հատուցանելու են ձեզ և մեզ, միտ դնելով մեր գործերին:

Խնդրեմ շուտով ուղարկել ինձ Ձեր «Անուշաւան» անուշուով գրուածը, որ տպագրել հոգամ Հիւսիսափայլի մէջ, որ աւելի ձեռնտու կը լինէր ձեզ, քան թէ առանձին տպել. միայն թէ լեզուն և խօսելու ոճը լինէր ոչ տաճկաստանի հայերէն, այլ փոքր ի շատէ յստակ, և Հիւսիսափայլի բարբառին մօտաւոր. այս տեղ խօսքը ձեր յատուկ հեղինակական առանձնութեան վերայ չէ, որ միշտ մնալու է անմերձենալի, այլ ընդհանուրի վերայ: Եւ այս մասին ի հարկէ կարող չեմ գովել Տաճկաստանի հայոց բարբառը, որ տաճկերէն է աւելի, քան թէ հայերէն, ամենեւին միացրած և անչնչայրած տաճկական լեզուի հոգու մամուլի տակ:

Եթէ կամէիք ձեր «Անուշաւանը» դուցէ թէ գրած Տաճկաստանի բարբառով, տպել առանձնապէս, և կամիք գիտել թէ որքան ծախքի կարօտ էր տպագրութիւնը, հաշուելով 5 թերթի և 1000 օրինակի վերայ, այս է ահա հաշիւը.

| | | | |
|---|--|---|---------------|
| Թուղթ . . . | պրակը 3 ¹ / ₂ ման. | = | 38 մ. 50 կոպ. |
| Տպագրութիւն . | թերթը 14 » | = | 70 մ. |
| Պատեան . . . | մի պրակ. 8 » | = | 8 մ. |
| Կաղմարարի կիսակաղմ ամրացնելու ամեն մի տետրակին 5 կոպ. | | } | = 25 մ. |

Ուրեմն = 141 մ. 50 կոպ.

Խնդրեմ ողջունել ինձանից շատ և շատ իմ հոգեհարազատ Հայր և բարեկամ Մատթէոս Սրբազանը եւ ասել նորան իմ անունով, որ յանձնում եմ Ձեզ նորա հայրական սիրուն և հովանաւորութեանը և քաջայոյս եմ, որ դուք ամենայն ջանք

գործ կը զնէք պիտանի կայուցանել ձեր անձը թէ Սրբազանին և թէ մեր տառապէսալ ազգին Հաշտարխանու մէջ:

Մայիսի 27-ին 1859.

Մոսկվայի մէջ

Յարդանօք

Ձեր

պատրաստակամ բարեկամ

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Վ

Մեծապատիւ բարեացակամ բարեկամ

Աբէլ վարդապետ Մխիթարեանց.

Այս նոյեմբերի 2 թուականից արձակած յարգելի նամակդ ստացայ, որի մէջ գանգատաւոր էք իմ անփոյթութեան վերայ զանազան պատճառներով: Ուրախ եմ, որ կարող եմ թէ այդ գանգատները, և թէ դոցա պատճառքը ամենեւին անտեղի կայուցանել: Նախ և առաջ Ձեր գրուածի մասին ընդդէմ Բալասանեանցին, որ արդարեւ խոստացել էի տպել յուլիսի Հիւսիսափայլի մէջ—բայց այն պայմանով որ ցենսօրը, այսինքն տպելի գրուածքների գատաքննողը թոյլ տայ, և արդարեւ տպած կը լինէի անպատճառ, եթէ իմ բաղձանքս կատարվէր, այսինքն թոյլ տար ցենսօրը: Բայց իմ բոլոր աշխատութիւնքը, կրկին և դարձեալ, առանց թարգմանութեան և թարգմանութեամբ հանդերձ ուղարկելու ձեր գրուածը զէպի Պետերբուրգ անպտուղ մնացին, և դա յետ դարձուցվեցաւ ինձ և ուսերէն թարգմանութեամբ: Վերջերունս ձեր գրչագիրը ընկաւ Միքայէլի ձեռք, որ և մտում է մինչև օրս. եթէ կամիք, կարող էք ստանալ: Ահա մեզ իմ փութաւորութեան բայց ոչ անփոյթութեան սպաքցոյցը: Այժմ ձեր Անուշաւանի մասին, զրան վաղուց ուղարկած եմ ցենսուրային քննելու, ուստի և վերադարձել է, թոյլտուութեամբ տպելու, ինչպէս կը տեսանէք մի օր. բայց տպել մինչեւ այժմ անկարելի եղաւ, պատճառ այն ուսաց տպարանը, ուր գտնուում է Հիւսիսափայլը, հաղիւ հաղիւ կարողանում է ներկայումս պատրաստել ամսու մէջ 5 թերթ, և Լազարեանց տպարանում ինձ ախորժելի չէր գործ կատարել: Գանի որ մեր հայոց գրաչարը (Յովհաննէս Տէր-Սրբաճառեանց) այս տեղ էր, ևս չստացայ ձեր գրչագիրը, որ նա մի քանի շաբաթի մէջ կլանէր շարելով, բայց յետոյ,

կրք այդ օրհնածը, որ Հիւսիսափայլի արծաթով բերած էր Պետերբուրգից, մեզ թողեց երեսի վերայ և վազեց դէպի Այվազեանը Թէոդոսիա, այնուհետեւ անկարելի էր ոռւս գրաչարին պարագել այդպիսի երկրորդական աշխատութիւններ, մանաւանդ որ Հիւսիսափայլը անգամ կարող չէր յառաջ տանել օրինաւոր կերպով, և դա եւս յետ է մնացել քանի մի ամիսներով: Ես չեմ ներում ինձ ոչինչ դատողութիւն գործել ձեր գրուածի վերայ. դորան կարող էք միշտ տպել, ուր և կամիք և ինչպէս կամիք, այդ ձեր խոհականութեան կամքն է: Եթէ հաճոյ է ձեզ, կարելի է դեռ եւս աիս տալ նորան Լազարեան տպարանի մէջ, և ես կը հոգայի ձեր համար սրբագրութիւնը և այլ պատրաստութիւնքը: Միայն հարկաւոր չէր ձեզ յարակցութեան պատճառ տալ ինձ պարոն Մալէնցովի հետ, ասելով թէ նորանից կը ստանայի կամ թէ պահանջելու էի տպագրութեան ծախքը. այդ անպատշաճ է ինձ, մանաւանդ որ նորա նամակը շատ անախօրթ թուեցաւ ինձ, համարելով և քարոզելով իւր անձը ազգասէր, որովհետև Տ մանէթ գործ էր դրած Հիւսիսափայլը ստանալու համար: Ծախքը տպագրութեան հաշուելով վեց թերթի վրայ և 1000 օրինակի պատենով և կազմապնդութեամբ կը հասանին մինչեւ 230 մանէթ. իմ սրբագրութիւնը և հոդաբարձութիւնը ձեզ բարեկամական առ ի սրտէ յօժարակամ նուէր: Եթէ կամիք այսպէս ընթանալ և տպել ձեր գործը, ուրեմն կարող էք ուղարկել դուք յասկապէս արծաթը և յառաջ տանել ձեր խորհուրդը: Ես կարող էի ինչդրել Լազարեանց տպարանում ամենայն ջանք գործ դնել և աւարտել տպագրութիւնը մինչեւ գալոց տարու Յունվարի վերջը. եթէ հաճոյ է ձեզ, և կարծեմ թէ պիտոյ է հաճոյ լինի Ձեզ. պատճառ, որ կարելի էր այնպէս ստակ և վայելուչ տպել, ինչպէս Մոսկովայի մէջ: Թիֆլիզի ալտոտ ու տղմոտ աիսը յայտնի է. ձեր էջմիածնի տպարանը—աւազ—անգործ: Ուրեմն խնդրեմ գրել ինձ անյապազ, թէ ինչպէս ցանկալի է ձեզ, եթէ ամենեւին անհաճոյ է ձեզ տպել Մոսկովայում, այնուհետեւ կը վերադարձուցանեմ ձեզ ձեր զրչագիրը:

Ձեր գրած լուրերը ինձ ամենեւին հին էին. ևս դորանց վաղուց լսած էի: Այվազեանի չեպիսկոսանալը և անտես լինելը մեր Հայրապետից սլ չդիտէ. իմ տեղեկութիւնս այդ լուրերին համարեմ թէ ամենեւին ընթացակից են կղած նորա ճանապարհորդութեանը Թիֆլիզից էջմիածին և էջմիածնից դէպի Թիֆլիզ և Թէոդոսիա: Մատթէոս սրբազանը գրած էր ինձ վրադիկավկասից նամակ, մի թեթեւ նամակ, յայտնելով որ բերել է իւր հետ էջմիածնից երկու վարդապետի Մկրտիչ Բարա-

մեանց և Սիմէօն Մուշեղեան, ըստ որում Նորին Վեհափառութիւնը չի հասնել արձակել ձեզ, այլ պահել իւր մօտ որպէս դպիր: Բայց ձեր դրածից պիտոյ է իմաստասիրել այլ բան: Ուրախ եմ, որ իմ բարեկամութիւնը ազատ է ամենայն կաշառանքից և կարող էր դատել անաշտապէս, միայն թէ յայտնի լինէին ինձ Մատթէոսի խորհուրդները: Ի հարկէ Ձեզ ևս շատ փոքր եմ ճանաչում, և ձեր մինչև այժմ գրուածներից դատելով Ձեզ, ունէի շատ բան ասելու ձեզ: Բայց իմ սովորութիւնից արտաքոյ բան է ասել ճշմարիտը մի այլ մարդու, քան թէ իմ մտեք ըրիմ բարեկամիս, որ ստացել էր իմ վստահութիւնը և կարող էր մարտել իւր ստամոքսի մէջ իմ բարեկամական կծուութիւնքը և դառնութիւնքը: Խնդրեմ ներել իմ գուցէ թէ այլանդակ խօսակցութեանս ձեր հետ, բայց ևս շատ յարգում եմ բարեկամութիւնը, քան թէ կարող էի քաղցրախօս լինել աղաւաղելով ճշմարտութիւնը, և այդպէս քանդելով բարեկամութեան հիմքը:

Ինչ որ դրած էիք ինձ մեր վեհապատիւ տիրոջ մասին, այդ ևս վաղուց յայտնի է եղած ինձ արդէն այս միջոցից, երբ նա դեռ ևս Տաճկաստանումն էր և ունէր ձեռքումը իմ գրուածքը: Բայց ոչ այն ստաճին և ոչ այդ, որպէս թէ նոր լուրերի վերայ կամիմ ևս մի բան հիմնել, դոքա աւաղ են իմ համար: Ինձ ապացոյց չեն դոքա, մեր ժամանակը պահանջում է գործ, գործ և ոչ լուի խօսք ու զրոյց: Ես արդէն վաղուց դրած եմ մի մասնաւոր մեծախորհուրդ նամակ Նորին Վեհափառութեանը, բայց մինչև այժմ վեհափառ տէրը արժան չէ համարել իւր վեհափառ քաղաքալարութեան պարտիքը լցուցանելու զէպ ի ինձ մի քանի տողերով: Ես գրել եմ այն հոյակապ ճառը Հիւսիսասիայի մէջ, այնքան պատուելով և մեծարելով Նորին Սըրբութիւնը, այնքան զեղեցիկ յոյսեր և ակնկալութիւնք նորանից, որպէս աղգի սրտի թարգման, հրատարակելով բոլոր ազգի մէջ, բայց Սըրբազնակատար Հայրապետը մինչև այժմ ժամանակ չէ գտել մատուցանելու ինձ իւր պարտական շնորհակալութիւնը, որպէս մի խելացի մտածող մարդ, մի խելացի մտածող մարդու: Եւ ինչ էք կարծում Գուք, պատուական վարդապետ, որպէս են բարոյական յարակցութիւնքը մարդերի մէջ: Գիտէք դուք, որ բարոյականութիւնը զուգաւորում է քաղաքացին նոյն իսկ հրամայող թաղաւորի և կայսրի յետ, և այդ տեղ պիտոյ է պահվի նոյնպէս կարգ ու օրէնք: Բայց արհամարհութիւնը մի անտեղի բան է և խելքի պակասութիւն:

Այս բոպէիս Այվալի եղբայրը Պետերբուրգումն է, որ գործ կատարէ իւր սիրելի եղբօր համար, այսինքն զհարգ և իցէ հը-

նարաւորութիւն գտանելու եպիսկոպոսայնել նորան. այսպէս են խօսում լուրքը: Այս և սոյն բոպէիս Պետերբուրգումն է և Նալբանդեանցը, որին շուտով կը հասուցանեմ ձեր բարեկամական ողջոյնը: Հիւսիսափայլը շուտով կ'աւարտէ իւր այս տարու ասպարէզը, որովհետեւ երկու ամսատետրակքը տպւում են միասին (մի և նոյն միջոցում), և մեծ նեղութեան մէջ եմ ամենայն կողմից յապաղանք և յետաձգութիւնք տեսանելով: Հիւսիսափայլի գալոց տարումը յառաջտարութեան մասին եղել է արդէն ծանուցումն, բայց դեռ անյայտ է ինձ, թէ ինչպէս լինելու էր գորա ընթացքը. կամ ուղիղ ևս ասել յայտնի է ինձ արդէն յառաջուց և շատ յայտնի, մանաւանդ որ ամենայն մարդ մեր մէջ ազգասէր է առանց գործ կատարելու. նա որ պիտոյ է լինէր մեր առաջին պաշտպանը և օգնականը և յառաջ տանողը, մեր լուսաւորութեան պարագլուխը, ըստ որում կարողութիւն ունի ձեռքումը, պատասխանում է մեզ միայն իւր անգործ լուծեամբ, շատ շատ, չլինասելով մեզ բունկալաբար: Եւ այդ մեծ շնորհ է մի այնպիսի ազգի մէջ, որի մէջ գրել է մեզ Նախախնամութիւնը, գուցէ իւր երկնային իմաստութեամբ կամելով ևս առաւել պայծառայնել մեր պարծանքը յետոյ գալոց օրերի մէջ:

Ահա տեսանում էք, որ ոչ թէ միայն կամիմ ձեզանից լսել, այլև ակորժելով տալիս եմ ձեզ լսելու ինձանից: Բայց ևս կարծում էի մինչև այժմ, որ բաւական էր իմ գրչի բաղմամասնեայ խօսուածքը մեր ազգին, առանց մասնաւորապէս խօսելու իմ առանձին բարեկամների հետ, մանաւանդ որ սոքա վաղուց խնդրած էին ինձանից չգրել նոցա յաճախ, ըստ որում բաւական արդէն գրում էի ընդհանուրի համար, և սորանից գողանալ թանկագին ժամերը մասնաւորի համար, անտեղի էր:

Յանկանալով Ձեզ ողջ լինել հագով և մարմնով

Մնամ

Ձեզ յարգող և բարեացակամ

Նոյեմբերի 19. 1859

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ

Մոսկվա

VI

Մայիսի 7 ին. 1860. Մոսկվա.

Ազնիւ բարեկամ.

Ի հարկէ Դուք շատ կը զարմանաք, որ մինչև այժմ ոչինչ նամակ չունիք ինձանից. բայց այդ զարմանքը խսկոյն կը բացատրուի, եթէ տեսմ Ձեզ, որ մի անարդ ազգի հետ, որպիսի Հայոց ազգն է, գործ կատարելով, և իմ միայնակ զրութեան մէջ, արգարև անկարելի է ամենայն նամակի պատասխան գրել: Եւ իմ գործը մի վերամարդկային գործ է, որ—թէ հասկանան և թէ չհասկանան մեր Հայերը, բայց սնրաններից ինչ տեղիք կայ բան պահանջելու—այնու ամենայնիւ մնում է մի անօրինակ հանգէս թէ եւրոպական և թէ բանաւոր դատաստանի առաջև: Հիւսիսափայլի բոլոր ծանրութիւնը իմ ուսերի վերայ ունելով և ազգի վատթարութիւնը և ամենայն քայլափոխում ճնշելով, կապելով և կաշկանդելով ինձ և այդպէս հազարաւոր անկարգութիւնք յառաջացնելով գործի մէջ, ևս, այն ևս միայն գիտեմ թէ ինչ ասել է մտած լինել մի մատենագրական հանդէսի մէջ, որ նուիրած էր այդպիսի ազգի դատարարակութեան:

Իմ զրաւոր լուսթիւնս եղել է միայն լոկ լուսթիւն: Բայց ձեր ինձ յանձնած գործը յառաջ է գնացել իւր կարգով, և ուրախ եմ այժմ տեղեկութիւն տալ ձեզ, որ Ձեր «Անուշաւանք» այս օրերնս դուրս կը գայ տպագրութեան մամուլից, շատ փառահեղ տպած ու պատուական թղթի վերայ: Այդ գործի տպագրութեան յապաղանքի պատճառը եղաւ Հայոց ազգի անկարգութիւնը վերաբերութեամբ դէսլ ի Հիւսիսափայլը, որ երկար ժամանակ անհոգ մնալով, և ժամանակը կորնչելով, հարկաւոր եղաւ ապա բոլոր ոյժը թափել Հիւսիսափայլի վերայ և յետ ձգել Անուշաւանք. բայց երկուքը միայն յառաջ տանել անկարելի էր. որովհետև մեր հայկական անմխիթար չքաւորութեան մէջ, մի մարդ միայն կարող է գործ կատարել որպէս հեղինակ, սրբադրող, հրատարակող և տնտես. և այդ մի մարդը բաց ի գորանից ունի և ընտանեկան հոգսեր և ուսուցչական պաշտօններ, որ նորա ապրուստի հնարքն են, որովհետև Հիւսիսափայլը եղել է նորան մինչև այժմ մի լոկ խաչափայտ: Բայց կարծեմ թէ աւելորդ էր այսպիսի բաների վերայ խօսել Ձեր հետ, որովհետև դժբա պիտի անհասկանալի լինեն մի ասիական մարդու հայկական տեսութեան հորիզոնի մէջ: Պիտոյ

է անհատկանալի լինին, ասում եմ, որովհետեւ դուք բազում անգամ գայթաղուած էք իմ լուծիւնից, որպէս թէ դա մի կամաւոր, կամ ամբարհաւած ինքնապաշտուծիւն էր, և ոչ թէ մի անմխիթար ստիպանքի ծնունդ այս մեր ամենեւին անբանացած ազգի մէջ:

Ձեր ուղարկած զրամը 116 ման, և նամակները հասած են ինձ. ինչպէս ցանկութիւն ունիք, կազմել կը տամ ձեր գրքոյկը թեթեւ թղթակազմով և բոլոր ծախքերի հաշիւը կը հասուցանեմ ձեզ կամ պ. Մալինցովին իւր ժամանակին:

Գրուածը լինելով սակաւամասնեայ բան, հրամայեցի տպել նորան 12 ամալ գրութեամբ, որ շատ գեղեցիկ է և մի փոքր չափ և հասակ է ստացել. 8 ամալ գրութիւնը պիտոյ է շատ փոքրայնէր գիրքը: Յուսով եմ որ թէ Մոլենցովը և թէ դուք հաւան կը լինիք իմ հոգաբարձութեանը: Գոնեայ այդպիսի գեղեցիկ, փառաւոր և մաքուր ոչինչ տեղ Ռուսաստանում կարելի չէր տպել, մեր Մոսկվայական տիպքը այն առաւել վայելուչ են քան թէ Վենետիկանը և Վիեննականը, ինչպէս վերահասու կը լինիք խսկոյն, տեսանելով աչքի առաջն ձեր Անուշաւանը: Եւ շուտով կը հասուցանեմ ձեզ մի օրինակ, մինչև հնար լինի հասուցանել Մալինցովին բոլոր 500 օրինակքը:

Մի խնդիր ունեմ ձեզանից: Կուտ եմ որ Մովսէս վարդապետը որ յառաջուց եղած էր Շամախու առաջնորդ, որ և ժողովրդի պահանջելով հեռացուցած էր այդ վիճակից, դարձեալ, անիրաւ ճանապարհներով ձեռք է բերել այդ վիճակը, և արձակ համարձակ քարոզում է, թէ կամը նահատակվիլ ընդդէմ Շամախու պրօտեստանտներին, որոնցից մի քանիսը հաւաքուում են մի տեղ, սուրբ գիրքը կարդալու և մխիթարվելու Այսպէս ուրեմն սուրբ գիրք կարգացողքը պրօտեստականք դարձան. և սուրբ գիրքը զոցանն է միայն, բայց Հայոց Քրիստոնէսներին ոչ: Այս ինչ բարբարոսութիւն է: Կուտ եմ, որ Սարգիս Համբարձումեանին նորա ընկերների հետ միասին տարել են պօլիցիա, Մովսէս վարդապետի սատրոզութեամբ, և պատուիրված է նոցա, միւս անգամ չհաւաքվիլ միասին, սուրբ գրքի ընթերցանութեան պարագելու: Եթէ մահմեդականք կարող են կարդալ իւրեանց Աւրանը, ապա միթէ յանցանք է Քրիստոնէսներին կարդալ իւրեանց քրիստոսական կրօնի գրեանքը: Այդ ինչ նորանչան ամարդութիւն է: Խնդրեմ, բան հասկացնել մեր վեհափառ տիրոջ պաշաճաւոր ճանապարհներով և դադարեցնել այդ ամօթ ու խայտառակութիւնը. ապա թէ ոչ, ամենեւին վատ ընթացք կ'առնու գործը: Ես չկամիմ գրել կաթողիկոսին,

որովհետև նա մինչև այժմ արժան չէ տեսել պատասխանել իմ ոչ մասնաւոր և ոչ հրապարակական նամակներին:

Հիւսիսափայլի 1, 2, 3 և 4 համարքը տպած են արդէն երեքը ճանապարհ ձգած, չորրորդը մնում է դեռ ևս ցենսուրայում: Հիւսիսափայլը տրորվելով, քերվելով, սղոցվելով պիտոյ է անու ամենայնիւ յառաջ գնայ, ազգի թշնամիքը զայրացնելու և ճայթեցնելու համար: Այս մի փորձաքար է, որով պիտոյ է փորձվին մեր ազգի ընտիրքը և վատթարքը. և շատ ցաւում եմ, որ վերջիններին կարգում շատ բազմաթիւ երեւում են մարդիկ հոգեւորական զասուց. մինչև. այժմ ոչինչ բարևոցակամութեան և ազգասիրութեան նշոյլը յոյց տալով դէպի հեղինակի անօրինակ ճգնողութիւնը: Ուրեմն թող անունն դռա իւրեանց արժանի հատուցումը աշխարհի հրապարակի մէջ. մութ անկիւններում խօսել սիրում չէ Հիւսիսափայլը, որովհետև նորա խիղճը անարատ է:

Մեծարողապէս

Ձեր պատրաստական Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

VII

30-ին Մայիսի 1860.

Մոսկւա.

Մեծապատիւ Արքեպիսկոպոս,

խոհական բարեկամ.

Գաջայոյս եմ որ մինչև այժմ հասած լինի Ձեզ պարոն Մալենցովի ձեռամբ իմ նամակս, որով տեղեկութիւն էի գրել Ձեզ, որ Ձեր Անուշաւանի պատմութիւնը արդէն տպագրած է, որպէս և խնդրած էի պարոն Մալենցովից հոգաբարձութիւն դորձել ստանալ ինձանից տպագրած օրինակքը, որ ինչպէս դուք որոշած էիք պիտի լինէին 500, բայց տպարանի սխալմամբ երեւում են 1200 օրինակ: Այս ոչ Ձեր և ոչ իմ ցաւս է. միայն թէ ընդհանուր վնասը վերաբերվում է այստեղ թղթին միայն. բայց զբաւրութեան և տպի արծաթը մնում է նոյն և անփոփոխ: Ուրեմն ինչպէս կամիրք. կարող էք ընթանալ. կամ ընդունել աւելորդ տպածքը, վճարելով աւելորդ թողթը, կամ թէ թողուլ նորան տպարանի մէջ: Անուշաւանը տպուել է, ինչպէս գրեցի Ձեզ երկտասան ծալքով և ընդ ամենը բաղկայնում է $3\frac{3}{4}$ թերթ. որպէս ահա տեսնում էք ձեզ ուղար-

կամ օրինակից, Ուրախ եմ, որ լցուցանելով իմ բարեկամական յանձնառութիւնը, չը կայ ինձ տեղիք պատասխան տալու Ձեր նամակի բովանդակութեանը ամսուս 12 թուականից: Մանաւանդ որ արդէն իմ նամակի մէջ որ ստացած էք կամ պիտի անշուշտ լինիք Մալենցովի ձեռամբ, մանրամասնաբար բացայայտած կան այն տրտում պարագայքը, որ մինչև այժմ ակամայ խափանարկու էին ձեր Անուշաւանի տպագրութեանը: 1860 Հիւսիսափայլի ամսատետրակքը 1—4 արձակված են արդէն վաղուց, բայց ոչ մինը դէպի Թալրիզ, Տրովհետեւ ոչ որ ստացող չը կայ այդ տեղ, պարոն Շերմազանեանցն չէ գրված այս տարու համար ընկերագիր, և ոչ ևս դուք, ուրեմն և իրաւունք ևս չունիք Դուք ստանալու: Եւ Հիւսիսափայլի հրատարակողի սովորութեանը ամիսներն ընդդէմ է ծանրաբեռնել մի ոք, առանց օրինաւոր կամայական ընկերագրութեան, ուղարկելով նորան իւր Օրագրի տետրակքը:

Ինչպէս գրեցի, գրում եմ կրկին, որ Ձեր Անուշաւանը պատրաստ է դեղեցիկ և վայելուչ տպած: Հոգ արեցէք միայն, ստանալու ինձանից օրինակքը, և ինչպէս կամիք, կամ 500 կամ թէ բոլոր 1200, հատուցանելով աւելորդ թղթի ծախքը, որ ի հարկէ իւր ժամանակին կը դրեմ Ձեզ, եթէ կամիք բոլորը ընդունել:

Մեծապատիւ Արքեպիսկոպոս
Ձեր պատրաստական

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ

VIII

29 ին մարտի 1861 թուականի
Մոսկվա

Մեծապատիւ Սրբազան Հայր,
Ազնիւ բարեկամ.

Վաղուց արդէն, անցեալ տարու յունիսի 4-ին ուղարկելով Ձեզ Ձեր քաղցրիկ Անուշաւանը, յայտնելով նոյնպէս թէ տպարանի կառավարութիւնը փոխանակ 500 օրինակի սխալմամբ տպել է 1000 օրինակ, խնդրեցի նախ ևւ յառաջ հոգաբարձութիւն գործել ստանալու ինձանից պայմանեալ 500 օրինակքը, այլ և տեղեկութիւն տալ Ձեզ, թէ ինչպէս պիտոյ էր ընթանալ միւս 500 օրինակների մասին, եթէ դուք կամ պարոն

Մալենցուլը կամէր ստանալ և յետինքս: Պ. Մալենցուլի հոգաբարձութիւնը, զրեմ Ձեզ ճշմարիտը առանց վարազուբիւու, շատ թոյլ և անյաջող եղաւ, մինչև վերջապէս այս տարուս մուտքին պատուէր ստացայ ուղարկել գրեանը Թիֆլիզ կամ Հայոց Հոգեւոր Դպրոցի, կամ թէ պարոն էնֆիաջեանցի (Համբարձումի) անուամբ. ևս վերջինս նախապատիւ համարելով, Հ. էնֆիաջեանցի գործակատարի ձեռքով ուղարկեցի դէպի Թիֆլիզ պայմանեալ 500 օրինակքը և թղթակազմ: Այժմ հասանում է ինձ եկաւորի ձեռքով մի նամակ Ձեզանից, արձակված անցեալ տարու յուլիսի 7-ից, որի մէջ գրում էք ինձ պատուիրելով ուղարկել Ձեզ և աւելորդ տպած օրինակքը 500 թուով, և առաջարկում էք ինձ դոցա համար 70 մանկթ, որ և այգբան արժէ, ինչպէս գրած եմ Ձեզ յառաջուց: Այսօր իսկ յանձնեցի Մոսկվայում յիշեալ 500 օրինակքը ստացող Մելլոն Դանդուբեանցին, բայց առանց կազմի, գեղեցիկ մաքուր և կոկ թերթերով և ամենայն բարեկարգութեամբ, այնպէս որ Թիֆլիզում կազմարարը կարող էր Ձեզ կազմել, ինչպէս կամէիք և կը ցանկանայիք: Ինչպէս ծանուցած էիք Ձեր նամակի մէջ ցանկութիւն անցեալ տարու Հիւսիսափայլը և այդ պատճառով Ձեր հատուցման վերայ յաւերացուցած էիք 9¹/₂ մանկթ, նոյնպէս այս նամակիս յետ ուղարկում եմ Ձեզ Հիւսիսափայլի ծրարը, յաւերացանելով դորա վերայ և ներկայ տարուս հրատարակութեան 1—2 ամսատետր, յուսալով անյապաղ հատուցանել Ձեզ և Յ.ը: Այս տարու Հիւսիսափայլը շատ անյաջող է, ըստ որում ընկերապիւրքը շատ նուազ են թուով, և հազիւ հազ կարելի է ծախքը հատուցանել: Չգիտեմ ինչպէս պիտոյ է վերջանայ գործը. շատ դժուար է մեր Հայերին բան հասկացնել: Այս երեք տարիս Հայոց անկարգութեամբ ջարդ ու փշուր եղանք և մի վաստակ արած չենք, բացի մեր ազնիւ և բարոյական կամքից և անձնազոհ հայրենասիրութիւնից. թէպէտ բացի Հայրենիքից իրաւունք ունի մեր վերայ և գերզատանը: Ինչ և իցէ, այս նիւթի վերայ չը կամիմ ևս երկար խօսել. բայց ինձ երեւում է, որ հարկաւոր էր փոխել ասպարէզը և փորձ փորձել այլ կերպով արդիւնակատար լինելու Հայոց անդատանի մէջ, ուր բանակահան կարգով կարելի չէ գործել, ի հարկէ այն տեղ դժուար, կամ բնաւ իսկ անհնարին է ինձ անասնանալ անասունների հետ միասին: Բայց իմ կարծիքը այսպէս է, որ մեզ, ազգի բարեմիտներիս պիտոյ է միասին մնալ, զրով ու սրտով, աւելի մօտենալ միմեանց և գործակից լինել մեր հասարակաց յաղթութեանը մեր բազմաթիւ թշնամատէր ամբոխի վերայ: Նալբանդեանցը այս

բուսակառուցման և, ոչինչ չուր չունեմ նրանից և ոչինչ գործակցութիւն Հիւսիսափայլին. նա դնացել է այնտեղ Նախիջեւանցոց յանձնարարութեամբ, որ գործ կատարէ, Հնդկաստանի մէջ կառակած արծաթը ձեռք բերելու Նախիջեւանու օգտի համար: Նա և ինձ մոռացել է, ուրեմն ևս առաւել հետաւորքը: Երբէք չհամարէք զանգատ, եթէ ասէի Ձեզ, թէ ինչպէս անպատշաճաբար ընթացաւ իմ հետ Վեհափառ Տէրը, մի կծու կոնդակ արձակելով իմ վերայ արդարի մի փոքր կծու Հիւսիսափայլի մասին, և ինչպէս երևում է տեղիք տալով դարանագործ թըշնամիների թելադրութեան. ևս պատասխանեցի Նորին Վեհափառութեանը իմ պատասխանելիքը ամենայն պատշաճաւորութեամբ. կը ցանկայի որ դուք իմ նամակս կարդայիք, որովհետև, իմ կարծիքով, բաւական արժանայիշատակ է դա, իւր մանրամասն բանախօսութեամբ. այժմուս եւրոպական մատենագրութեան պայմանների և հոգու մասին, եթէ դա պիտոյ է լինէր մարդկութեան ցաւերի և դոցա բժշկութեան հնարների անաչառ թարգման: Վեհափառ տէրը մինչև օրս պատասխանել չէ ինձ. բայց ինչպէս հաճոյ է նորան, կարող է ընթանալ. միայն դժուար է մեր ժամանակներում աքացիլ ընդդէմ խթանի. թագաւորները անգամ անբաւական են այդ մասին, և խոնարհում են ժամանակի պիտոյքի և պահանջմունքի առաջ: Քանզի հեշտ էր, բայց չինելն է դժուար:

Յուսով եմ շուտով աւելի բան լսել Ձեզանից:

Ձեր

Հարազատ Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ա Ղ Զ Ի Կ^{*)}

(Առողջապահական և բարոյագիտական էսիւզ):

V

ԱԿՆԱՆԿ ՀՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ- ԹԵԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Կրթութեան նպատակը.—Ֆիզիկական կրթութիւն և դաստիարակութիւն.—Նորածին երեխայի մտաւոր ու Ֆիզիկական անգործութիւնը.—Հաւի ճուշդ և նորածին երեխան Ֆիզիկական և բանիմացական տեսակէտից.—Կրթութիւնը վայրենի ցեղերի մէջ.—Կրթութիւնը ինն խաղաղակիրք ազգերի մէջ.—Ֆիզիկական կրթական սխալները կլասիկ երկրներում.—Յունաց փիլիսոփաների հայեացքը կրթութեան վրայ.—Սամիոփումն դասական կրթութեան սխալներ:

«Մեծ գործեր կատարելու համար, ասում է մի փիլիսոփայ, մարդ պէտք է այնպէս ապրի, իբր թէ երբէք մեռնելու չէ»: Այն մեծ էգօրիտը, որ արտասանում էր—«ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ» (après moi le déluge) մի անսիրտ և անմիտ խօսք էր ասում:

Աշխարհը ոչ սկսուել է մեղանով, ոչ էլ կը վերջանայ մեղ հետ:

Մենք չարունակութիւն ենք մեր նախնիքների և ապագայ սերունդները մեր չարունակութիւնը պիտի լինեն:

Մարդս բնազդաբար ձգտում է, այսպէս ասած, տարունակուել որդոց մէջ:

^{*)} Տե՛ս «Մուրճ» № 4.

Ամեն կրթութիւն նպատակ ունի մեծացնել մանկան իրան—մանկան համար, զարգացնելով նրա մէջ բոլոր այն յատկութիւնները, որոնք նրան իսկական մարդ պիտի դարձնեն: «Իսկ այդ նշանակում է հասարակութեան տալ մի պիտանի անդամ, այդ նշանակում է պատրաստել մի աւելի լաւ հասարակութիւն, մի աւելի լաւ ազգ, մի աւելի լաւ մարդկութիւն», ասում է Մարիօն:

Գիզօն ասում է. «Կրթել—նշանակում է այնպէս պատրաստել մարդուն, որ նա ինքը կարողանայ կատարելագործուել, երբ ուրիշները դադարում են նրան կրթելուց»:

Կրթութիւնը լինում է Ֆիզիկական և մտաւոր, որը կոչվում է նոյնպէս մի խօսքով դաստիարակութիւն:

Մարդկութեան պատմութեան սկզբներում մտաւոր կրթութիւնը բացակայ էր:—Երեխան ինքնիրան էր կրթվում, նմանուելով իր մեծերին. գոյութիւն ունէր միայն ֆիզիկական կրթութիւնը, այն էլ ամենատարրական ձևով, այն է. իբրև խնամք դէպի զաւակը, ամեն մայր, նոյնիսկ վայրենի ցեղերի մէջ, նոյնիսկ կենդանիների մէջ խնամում է իր զաւակին մինչև նրա հասունանալը, այսինքն, մինչև այն ժամանակ, երբ երեխան կարող կը լինի արդէն ինքն իր գլուխը պահել: Եւ այդ բնական է:

Ո՛չ մի կենդանի էակ այնչափ կարօտ չէ կանոնաւոր կրթութեան և դաստիարակութեան, որքան մարդկային էակը:

Մինչդեռ կենդանիների ձագիկները ծնվում են արդէն համարեա պատրաստ ինքնուրոյն կեանքի համար, երեխան աշխարհ է գալիս բոլորովին անզէն, իբրև մի շնչաւոր կոյտ, որին պիտի խնամքով պահել մինչև որոշ հասակ, որ նա զօհ չգնայ շրջապատող բիւրաւոր վնասակար ազդեցութիւններին և քաղցին:

Աշխարհ եկած երեխան, ասում է Միկորսկին, համարեա զուրկ է մտածելու և հասկանալու որևէ

ընդունակութիւնից, զուրկ է նմանապէս և ամեն տեսակ զգացմունքից.— ոչ սիրել գիտէ, ոչ զուարճանալ, ոչ վախենալ, ոչ համբերել ու սպասել: Այդ դեռ ոչինչ—նա ոչ լսողութիւն ունի, ոչ տեսողութիւն և ոչ մի հասկացողութիւն ձայների, առարկաների ձևի, գոյնի, ոչ էլ տարածութեան ու ժամանակի մասին: Այս պատճառով նորածին երեխան բոլորովին անզէն է և, առանց մեծերի խնամքի, նա անխուսափելի կերպով կը մեռնի, քանի որ անկարող է մինչեւ անգամ տեղից շարժուելու: Երեխայի հետ համեմատելով, նորածին կենդանին զինուած է աւելի մեծ մտաւոր ընդունակութիւններով և ինքնապաշտպանութեան ընդունակութիւնով: Չուրից նոր դուրս եկած հաւի ճուղը միջանի ժամից յետոյ կարող է արդէն շարժուել, վազել, հաստատ կանգնում է օտերի վրայ և կանգնած զարմանալի մաթեմատիկական ճշտութեամբ կտցահարում է փթռուկը... Նրա վազելը, նրա ուտելու եղանակը, բոլոր շարժումները ցոյց են տալիս, թէ ինչ ճշտութեամբ սրուչուում են նրա փոքրիկ ուղեղի մէջ առարկաների մեծութիւնը, նրանց միջի տարածութիւնը և թէ ինչ մեծ հմտութիւնով կձկեցնում է իր փոքրիկ մկանները: Ճուտիկը ճանաչում է իր մօրը, լսում է և կարծես հասկանում է նրա ձայնը: Նա ընդունակ է վախենալու և վտանգից փախչելու, եթէ մօր ձայնի մէջ վտանգալից հնչիւններ է լսում: Երկու-երեք օրուայ ճուղը արդէն ծնողներին հաւասար իտէք և իմացականութիւն է ցոյց տալիս!

Որչափ անկատար է երեւում մեզ երեխան, երբ համեմատում ենք նրան այն փոքրիկ ձագիկի հետ: Երեխան չի ճանաչում իր մօրը, չի լսում նրա ձայնը, ոչ ահ ունի, ոչ երկիւղ: Այս տարբերութեան պատճառը բացատրում է մեզ գիտութիւնը, որ ուսուցանում է, թէ նորածին երեխայի ուղեղն այնքան կատարեալ չէ, որքան կենդանիներինը:

Առհասարակ քանի բարդ է կենդանու անատոմիական կազմը, այնչափ անզէն է ծնուում նրա սերունդը: Մարդը, իբրեւ ամենաբարդ կենդանական էակ, արտադրում է ողորմելի, նուազ և թոյլ սերունդ, որ մօր արգանդից դուրս դալիս, մի հաւի ճուտից հազար անգամ անկատար է և թոյլ:

Եւ վայրենի մարդը, երբ նա կամենում էր պահպանել զաւակի կեանքը, պիտի պահպանէր նրան, ինչպէս մի նորաբողբոջ տունկ, կորստից, տալով նրան ուտելիք և հագուստ:

Այս է իսկապէս տարրական կրթութիւնը: Այնուհետեւ, քանի աւելանում է մանկան հասակը, այնքան էլ բազմակողմանի ու բարդ է դառնում կրթութիւնը և ծնողները, խնամքի հետ միասին, աշխատում են սովորեցնել իրանց զաւակներին լողալ, ծառ բարձրանալ, որսալ, սովորեցնում են ցրաի, բաղջի ու զանազան զրկանքների դիմանալ:

Աֆրիկայի կաֆրների մէջ թէ տղաները և թէ աղջիկները որոշ սիստեմի կրթութիւն են ստանում, որ մօտեցնում է նրանց Սպարտայում թագաւորող մեթօզին: Որոշ հասակում տղաներն ու աղջիկները հաւաքւում են հմուտ դաստիարակչի կամ դաստիարակչուհու շուրջը և սովորում ինչ որ անհրաժեշտ է կեանքի համար: Աղջիկները, հմուտ կանանց ղեկավարութեամբ, շատ գործնական բաներ են սովորում: Եւ այս գիտելիքները շատ ընդարձակ են, որովհետեւ գլխաւոր աշխատանքը կնոջ վրայ է ընկած: Աղջիկների մէջ հաստատամտութիւն, կամք, աոկունութիւն զարգացնելու համար, նրանց ենթարկում են զանազան զրկանքների ու տառապանքների, որոնց միջոցին նրանք չպէտք է ցաւ արտայայտեն*):

Կաֆր կանանց նման, կարմրամորթների կանայք էլ աշխատում են տոկուն ու դիմացկուն երեխաներ

*) Լրտուրնօ. Կրթութեան էվօլուցիան:

արտադրել: Մինչեւ 3--4 տարեկան հասակը աղջիկը մօր կաթով է կերակրւում և օրուայ մեծ մասը մօր մէջքի վրայ է անցկացնում, իսկ այս տարիքից սկսած, նա արդէն իր մօր օգնականն է: Սակայն աշխատանքը յարմարացրած է երեխայի հասակին և ոյժերին: Այսպէս, մինչեւ 8 տարեկան հասակը աղջիկները ծանր իրեր չեն վերցնում: Ութ տարեկանից միայն սկսած, աղջկան սովորեցնում են մէջքին ցախ կրել, իսկ մի քիչ յետոյ նոյնպէս և փայտ կոտորել ու եգիպտացորեն մշակել: Զարմանալի չէ ուրեմն, որ այստեղ պատիժը դոյութիւն չունի. որովհետեւ նա հակասում է նրանց կրթութեան սկզբունքին, այն է, ինքնուրոյնութիւն մշակել մանկան մէջ:

Բոլոր հին քաղակրթուած ազգերի մէջ (Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հրէաստան, Պարսկաստան) աղջկայ կրթութիւնը փոքր հասակում ոչնչով չէր զանազանւում տղայի կրթութիւնից. անայի կրթութիւնը կայանում էր նրանում, որ աղջիկներին սովորեցնում էին տնայնագործութիւն:

Յունաց հանրապետութիւնների մէջ կրթութեան նպատակն էր պատրաստել առողջ սերունդ. ֆիզիկական մարզութիւնները ստիպողական էին ոչ միայն տղաների, այլև աղջիկների համար:

Եւ այս միջոցով զարգացնում էին աղջկայ մէջ ոյժ, գրացիա, աշխոյժ և, որ գլխաւորն է, վճռականութիւն և ինքնուրոյնութիւն:

Ընդհանուր կրթութիւնը, ինչպէս ասել ենք, հանրապետութիւնն իր ձեռն էր առել: Յունաց երկրի մեծագոյն փիլիսոփաները—Պլատօն և Արիստոտել պաշտպանում էին այն թէօրիան, թէ «մարդը հասարակապատկան կենդանի է»:

Առհասարակ մայրը ինքն էր կերակրում իր զաւակներին, միայն ունևոր մայրերը ծծմայրեր էին պահում, և ծծմայրեր վերցնում էին կամ ստրկուհիներից կամ սպարտացի կանանցից. սպարտացի կինը ամենալաւ

Ժժմօր համբաւ ունէր: Մինչև 7 տարեկան հասակը աղջիկներն ու տղաները միասին էին կրթութիւն առնում, այնուհետև աղջիկները մօր մօտ սովորում էին տնային գործեր:

Անտարակոյս դասական կրթական կեանքում ամենախոշոր ու նշանաւոր տեղը բռնում էր մարզութիւնները: Յոյն երեխան միշտ մեծ քանակութեամբ խաղալիքներ ունէր և մեր ժամանակուայ բոլոր մանկական խաղերը յայտնի էին նրան: Մեծերը իրանց օրինակով բաջալերում էին փոքրերին մարզուելու և խաղալու մէջ: Աղջիկները մրցում էին տղաների հետ հասարակական մարզական հրապարակների վրայ, որովհետև նրանցից ևս պահանջում էր «մարմնի գեղեցկութիւն»:

Հին փիլիսոփաներն ու մանկավարժները զարմանալի հմտութիւնով են խօսում մանկավարժական խընդիրների մասին: Նրանց լուրջ հայեացքները մարմնական կրթութեան վրայ ազդեցնում է մեզ:

Կամենալով աւելի երկար կանգ առնել կրթութեան ձևերի վրայ կլասիկ հնութեան դարերում, իբրև եզրափակումն, առաջ եմ բերում Կապտերեվի արած ամփոփումն.

1) Հների մանկավարժութիւնը, որ սերտ կապուած էր հասարակագիտութեան և բարոյագիտութեան հետ, չէր հիմնուած հոգեբանութեան վրայ:

2) Հների մանկավարժական հայեացքների մէջ պարզ կերպով արտափայլում էր միջանի չափազանց կարեւոր կէտեր, այն է. ա. ժառանգական յատկութիւնների ներգործութիւնը երեխաների զարգացման վրայ, բ. երեխային մօր կաթով կերակրելու անհրաժեշտութիւնը, գ. մանկական խաղերի և բազմատեսակ մարզումների ու շարժումների կարեւորութիւնը, դ. լուրջայեակի—ծժմօր և դաստիարակի ու վարժապետի անհրաժեշտութիւնը, ե. պատիժների վլասը և գովասանքի ու պարսաւի ազդեցութիւնը մանկան վրայ,

զ. կրթութեան շատ վաղ սկսելու կարեւորութիւնը և նրա կանոնաւոր ընթացքը և է. կրթութիւնը մանկան առանձնայատկութիւններին յարմարացնելու անհրաժեշտութիւնը:

VI

ԱՂՋԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

Աղջկայ կրթութիւնն ու դաստիարակութիւնը միջին դարերում.—Քրիստոնէական ուսման ազդեցութիւնը.—Ֆիզիկական կրթութիւնը մոռացում է.—Մօսէէնի և Ճենըլօնի հայեացքները աղջկայ կրթութեան վրայ.—Տիկին Մէնսընօն.—Ժան Ժակ-Բուսսօի մտքերը.—Կոնգրուէի յեղափոխիչ հայեացքները աղջկայ մտւոր զարգացման վրայ.—XIX դարու գիտութեան ազդեցութիւնը մտկավարձական սխրեմների վրայ.—Անգլիական սխրեմը և նրա ազդեցութիւնը Եւրոպայի վրայ:

«Երբ հետևում ենք աղջկայ դաստիարակութեան ու կրթութեան զարգացմանը, տեսնում ենք, որ նա զուգընդաբար է ընթանում կնոջ հասարակական դիրքի զարգացմանը», ասում է մի յայտնի մանկավարժ:

Քանի կինը գտնւում էր ստոր, ստրկացած դրութեան մէջ, քանի նա տղամարդու առաջ աղախնի դեր էր խաղում, աղջկայ կրթութիւնն էլ արհամարհուած էր:

Բայց փոխւում են հայեացքները քաղաքակրթութեան և կրօնական ուսմունքների ազդեցութեան ներքոյ, և աղջկայ կրթութիւնը սկսում է գրաւել հասարակութեան ուշադրութիւնը: Սյուպէս կլասիկ երկրներում, որտեղ կինը որոշ իրաւաբանական անհատ էր, աղջիկները յարգի էին և նրանց ֆիզիկական կրթութեան վրայ գոնէ ուշադրութիւն էր դարձնւում:

Յաւակցաբար քրիստոնէական ուսմունքը, որ քարոզում էր մարմնի նուաճումն ու ճնշումն, ի փառս հոգու, միանգամայն ետ մղեց աղջկայ ֆիզիկական զար-

գացման խնդիրը և առաջ քաշեց հոգեւոր դաստիարակութիւնը:

Այս մի մեծ հարուած էր աղջկայ ֆիզիկական զարգացմանը, որ, ինչպէս կը տեսնենք, միակ գրաւականն է կամքի կազմութեան:

Միջին դարերի երկար շրջանը ծանրացաւ աղկջայ ֆիզիկական ու մտաւոր զարգացման վրայ: Մոռացուեց դասական երկրների սքանչելի կրթական սիստեմը, աղջիկները կամ փակուեցին տանը կամ մենաստանների փակ դպրոցներում, որտեղ տարիների ընթացքում, ծնողներից, ազգականներից անջատուած, կրդղիացած աշխարհային զարգացնող կեանքից, զրկուած մանկական շրջանից, անհրաժեշտ ազատութիւնից, մանկական խաղերից, նրանք ամենաքնքոյշ պատանեկութեան տարիներն անց էին կացնում վանքերի մռայլ մամուռապատ պատերի մէջ, զրկուած ազատ շարժուելու հաճոյքից, ազատ քրքիջի թարմացնող հրապոյրից, սեւածածկ կոյսերի և հոգեւորականների սգաւոր հովանու տակ: Երեխայի և պատանուհու ամեն մի ժամը նախօրօք որոշուած էր. ոչ մի աւելորդ խօսք ու շարժում թոյլ չէր տրուում խեղճ աղջիկներին: Խստիւ արգելուած էր կամքի, ինքնուրոյնութեան ամենաթոյլ արտայայտութիւն անգամ: Բանական էակը վերածուած էր մանրէնի, որ շարժուում էր, խորհում, խօսում ուրիշի թելադրութեամբ, այնպէս, ինչպէս պահանջում էին բարստացած, կամ իրանց բռնի կուսութիւնից զայրացած ու մենակեցութիւնից տաղտկացած կոյսերը: Միայն Ս.-Պրքի ընթերցանութիւնն էր թոյլ տրուում այդ խեղճերին, ամեն գեղարուեստ վանուած էր վանական դպրոցներից: «Պատանուհին երբէք չպէտք է լսի երաժշտութեան ձայնը, նա չպիտի գիտենայ, թէ ինչի համար են ջութակն ու արփան». այս էր միջնադարեան հայեացքները:

Տասնուվեցերորդ և տասնուեօթերորդ դարերում

աղջկայ դաստիարակութիւնը դեռ դուրս չէր եկել այդ ընկճուած դրութիւնից և Մօնտէնը, որ ապրում էր 16-րդ դարի վերջին կիսում, այն կարծիքին էր, թէ կինը կարիք չունի զարգանալու, «որպէս զի չազաւազուեն նրա բնածին հրապոյրներն ու գրաւչութիւնը»։ Նա թոյլ էր տալիս նրանց միայն զբաղուել բանաստեղծութիւնով, որ «նրանց կարիքներին մօտ մի զուարճալիք է»։ Փենըլօնը, 17-րդ դարու այս յեղափոխիչ մանկավարժը, ցաւով սրտի ընդդէմ է աղջկայ դաստիարակութեան այս յետամնացութիւնը։ Ահա նրա խօսքերը.

«Ասում են, թէ հարկ չկայ, որ աղջիկները գիտուն լինեն, որովհետեւ հետաքրքրութիւնը նրանց դարձնում է սնտոխի և ունայնապաշտ. բաւական է նրանց տուն կառավարել սովորել և ուսանել հնազանդ լինել իրանց ամուսնուն։ Անմահ Մօլիէրը իր դրամայի մէջ («Գիտուն կանայք») այս խօսքերն է դնում՝ Կրեզալի բերանը. «Ազնիւ գործ չէ, որ կինը այսքան բաներ ուսանի ու գիտենայ. նրա ամբողջ գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը այն պիտի լինի, որ նա կարող լինի կրթել իր զաւակներին, տուն կառավարել, հսկել ծառաների վրայ և խնայողութիւն անել ծախսերի մէջ»։

Եւ այլապէս չէր էլ կարող լինել, քանի որ «ամենակարողը միրուքի տէրն էր։ Թէեւ մարդ ու կին հասարակութեան երկու կէսերն են, բայց կէսերը հաւասար չեն,—մէկը իշխում է, իսկ միւսը հպատակում և ևայլն *):

Աղջկայ կրթութեան խնդրում ահագին դեր խաղաց 17-րդ դարում Փենըլօնի «Աղջիկների կրթութիւն» վերնագրով գիրքը **): Այդ առաջին լուրջ գրուածքն էր այս խնդրի մասին, և հէնց իր լրջութիւնով էլ մեծ յեղափոխիչ զօրութիւն ունեցաւ աղջկայ կրթական սիստեմի վրայ։

*) Molière, Femmes Savantes.

**) Fenelon. De l' Education des filles.

Փենըլօնը բողոքեց աղջիկների փակ, վանական կրթութեան դէմ, ուսուցման սահմանափակման դէմ, ֆիզիկական կրթութեան արհամարհման դէմ:

Սակայն Փենըլօնը երկրպագու չէ աղջկայ լայն զարգացման:

Այս դարում մեծ հռչակ ստացած տիկին Մէնտընօնը (որ ղեկավարում էր Սեան-Սիրի կանանց ինստիտուտը), 17-րդ դարի ամենալուսաւոր կանանցից մէկը, համաձայնում էր Փենըլօնի հետ և կարծում էր, թէ աղջիկը պիտի «չափաւոր լինի կարգալու մէջ և ընթերցումն փոխարինի ձեռքի աշխատանքի»:

Հետեւեալ 18-րդ դարում Ժ. Ժ. Ռուսօն իր հըռչակաւոր «էմիլի» մէջ բարոյական դաստիարակութիւնը անխցելի կերպով կապում է ֆիզիկական կրթութեան հետ և ասում է, թէ մարմնի թուլութիւնը հոգեկան խանգարումների աղբիւրն է: Նրա իրաւացի կարծիքով, առողջութիւնն ու ոյժը զօրեղ նեցուկ են բարոյական կամքի: Նա քարոզում է սաների ազատութիւն, պէտք է խուսափել առժամանակեայ և մշտական հովանաւորութիւնից, կօնսորից, ոչ էլ չափազանց փափկասէր դարձնել նրանց: Երեխայի հետ չպէտք է վարուել ոչ այնպէս, որ նա միշտ զգայ իր գլխին խնամատարութիւն և պաշտպանութիւն, ոչ էլ այնքան խստապահանջ, ճնշող ղեկավար լինել, որ նա հարկ համարի խորամանկութեան, ստի ու կեղծաւորութեան դիմելու:

Յատկապէս աղջկայ դաստիարակութեան վրայ նրա հայեացքները շատ չէին տարբերում ժամանակակից հասկացողութիւնից: Երկրպագու լինելով բնական կրթութեան, Ռուսօն աղջկան ամբողջովին մօրն էր յանձնում, որ նրանից պիտի իդէալական ամուսին, մայր և տանտիկին պատրաստէր:

Այս դրութեան մէջ էր աղջկայ կրթութիւնն ու դաստիարակութիւնը մինչեւ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը: Այս ժամանակամիջոցին յայտնի Կոնդորսէն իր զօրեղ ձայնը բարձրացրեց աղջկայ կրթութեան օգ-

տին: նա պահանջում էր լայն ծրագրով կրթել աղջկան.
 1. որպէսզի նա կարող լինի լաւ դաստիարակել իր
 զաւակներին, քանի որ նա է իր երեխաների բնական
 կրթողը. 2. որպէսզի արժանաւոր և հաւասար ընկեր
 ու ուղեկից դառնայ ամուսնուն, մասնակցի նրա աշ-
 խատանքներին ու հոգսերին, մի խօսքով ապրի նոյն
 կեանքով. 3. որպէսզի անզարգացած մնալով, հանգցնի
 ամուսնու մէջ նրա սրտի ու մտքի կայծը, որ զարգա-
 ցրել է սրա մէջ ուսումը, այլ ընդհակառակը, պահպանի
 այդ կրակը, մասնակցելով նրա ընթերցումներին և խօ-
 սակցելով նրան զբաղեցնող խնդիրների մասին. 4. վեր-
 ջապէս աղջկայ կրթութիւնը անհրաժեշտ է, որովհետև
 այդ ուղղակի մի արդար պահանջ է, քանի որ երկու
 սեռերն էլ հաւասար իրաւունք ունեն ուսում առնելու
 և զարգանալու»:

Այս էին մեծ գիտնականի և քաղաքական անձի
 հայեացքները: Սակայն նրանց իրագործումն ժամանակ
 էր պահանջում, և Եւրոպայի մէջ, յատկապէս Ֆրանսի-
 սիայում, աղջկայ կրթութիւնը գեռ մինչև վերջին ժա-
 մանակներս հնացած մեթոդով էր տարւում:

Տասնիններորդ դարը, գիտութիւնների զօրեղ զար-
 գացմամբ, յեղափոխեց դաստիարակութեան գործը և
 նոր հիմունքների վրայ գրեց աղջկայ կրթութեան մե-
 թոդը:

Աղջկայ ֆիզիօլօգիայի և հոգեբանութեան ու-
 սումնասիրութիւնը նոր կանոններ տուեց մեզ նրա
 առողջապահութեան համար, ուստի նրա ֆիզիկական
 կրթութիւնն էլ յարմարեցրին այս կանոններին:

Գիտութիւնը ցոյց տուեց, որ, որոշ հասակից սկը-
 սած, աղջկայ օրգանիզմը սկսում է շեղուել տղայինից,
 և ուրեմն այս երկուսի կրթութեան ու դաստիարակու-
 թեան ձևերն էլ պիտի տարբերուեն:

Հասկացուեց աղջկայ մարմինը խնամելու անհրա-
 ժեշտութիւնը, ապացուցուեց, որ կինը իր վսեմ պար-

տականութիւնները կատարելու համար պէտք է նպատակայարմար ֆիզիկական դարգացումն ստանայ, քանի որ մօր առողջակազմութիւնից է կախուած սերնդի առողջութիւնն ու կենսունակութիւնը:

Ծնորհիւ այս ուսման, ֆիզիկական կրթութիւնը, որ, ինչպէս ասեցինք, միջին դարերից վեր բարձի թողի էր արուած, նորից կենսական պահանջ է դառնում, և մենք տեսնում ենք, որ նա կամաց-կամաց տնային—ընտանեկան կրթութեան հիմնաքարն է դառնում:

Անգլիան իրաւամբ կրում է այս ուղղութեան պարագլխի մեծ պատիւը: Անգլիացու մէջ վերածնել է հին հռովմայեցու ոգին, նոյն ոգեւորութիւնը մարզութիւններով, նոյն ձգտումն դէպի մատաղ սերնդի մարմնի բարելաւումն, և այսօր վստահ կարելի է ասել, որ եւրոպացի օրիորդը կարող է մրցել հռովմուհու հետ իր ֆիզիկական դարգացմամբ:

Այս ազատ երկրից—ֆիզիկական կրթութեան սկզբունքները անցան եւրոպա և կօնտինենտի բոլոր երկրներում թէ պետութիւնները, թէ մասնաւոր հիմնարկութիւնները առանձին ուշադրութեան են արժանացրել աղջկայ մարմնի մարզումները: Վերածնուեց մարմնի կուլտը: Մարդիկ յիշեցին հին, վաղուց մոռացուած, սկզբունքը—«առողջ միտք առողջ մարմնի մէջ» ու ձգտեցին կազդուրել, ամրապնդել աղջկայ մարմինը ևս: Միւս կողմից Պետալոցցայի և Փրեօրէլի կրթական և ուսումնատուութեան մեթօդները թարմացրին մանկան կրթութեան հնացած ու փտած գործը:

Աղջկան լաւ կրթելու պահանջը քանի դնաց աճեց և հասարակական կեանքի ամենակարեւոր և ամենախոշոր խնդիրների շարքն անցաւ: Ստորակարգ և միջնակարգ դպրոցների խիտ ցանցը ծածկեց քաղաքակիրթ երկրները և միլիօնաւոր մանուկ-աղջիկներ խրոնուեցան կրթութեան այս տաճարների մէջ: Աղջիկը ձգտեց դէպի բարձրագոյն ուսումն և շատ երկրներում

բացուեցին նրանց առջև համալսարանի և ուրիշ բարձրագոյն կրթական հիմնարկութիւնների դռները:

Միջնակարգ և բարձրագոյն ուսում ստացած օրիորդները մայր դառնալով, մտցրին ընտանիքների մէջ նոր կրթական ձեւեր և այսպիսով, կրթութիւնն ու դաստիարակութիւնը արեւի ճառագայթների պէս տարածուեցին ընտանիքի վրայ:

Խղճուկ հայ աղջիկը ևս ձգտեց զէպի լոյս, բացուեց արեւին, ինչպէս մի թարմ կոկոն՝ Բայց մի օր յանկարծ մթնեցին հայ մանկիկի աչքերը և երբ սա բարձրացրեց իր հայեացքը զէպի երկինք, տեսաւ մի սև ամպ, որ չարագուշակ ու վիթխարի վիշապի նման ծածկել էր լոյս արեւը...

ԲԺՊ. Վ. ԱՐՇՐՈՒՆԻ

(Կը ճարտասակուի)

ՀՈՍՀՈՄՆ ՈՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԸ

(Ռուսաւորդական կեանք)

Մեղիք-Քեալարաշեան ինք ալ ճշտիւ չէր կրնար ըսել թէ՛ փրկչական ո՞ր թուականէն ի վեր հաստատուած էր Լայպցիգի Դիւֆուր փողոցին թիւ 6 տան այդ բարձունքը: Այսքանը միայն կը յիշէր, որ նոր եկած ատենները տանախիկնոջը մէկհատիկ որդին, որ հիմայ ամուսնացած և տղու մըն ալ տէր էր՝ իր բացակայութեանը յաճախ սենեակը մանելով իրեղէնները տախու՛վրայ կ'ընէր: Իսկ Ֆրաու Այզըլէ (այսպէս կը կոչուէր տանտիկինը) այդ անյիշատակ ժամանակներէն ի վեր իր սիրական կատուներուն բազմաթիւ սերունդները փայփայելու երջանկութիւնը վայելած էր: Վաղեմի այս ուսանողը ինչ որ պատմէր միջոցը միշտ տարիներով կը հաշուէր, ժամանակի միւս պզտիկ չափերը կարծես գոյութիւն չունէին իրեն համար:

Շուշեցի էր պարոնը. տեղին ըէալակոն զպրոցը աւարտելուն պէս վճռած էր արտասահման անցնիլ «մտաւոր պաշար ձեռք բերելու և ապագայում մեր հասարակական խաւար ասպարիզում լուսաւորութեան զամբար հանդիսանալու»: Նիւթական միջոցները կը պահսէին, բայց ազոր ալ ճարը գտնուեցաւ: Բագուի մէջ ունեցած քանի մը բարեկամներուն միջնորդութեամբը յաջողեցաւ բարերար մը գտնել և հասաւ Լայպցիգ: Քանի մը ամիս պանսիօնի մը մէջ ապրելով դերմաներէնը քիչ մը սորվելէ յետոյ՝ երբ կարգը եկաւ համալսարան մտնելու, դժուարին ու տանջող հարց մը բոյն դրաւ անփորձ երիտասարդին զլիսուն մէջ—ինչ մասնագիտութիւն ընտրել: Դասախօսութիւններու ցանկը ձեռքը՝ ժամերով կը մտմտար: Նրեւակայեցէք երեխայ մը, մէկը միւսէն աւելի հրապուրիչ զանազան պտուղներով բեռնաւորուած սեղանի մը առջև՝ աղոնյմէ մէկնումէկը ընտրելու կաշկանդումէն շուարուն: Ճիշդ նոյնն էր Մեղիք-Քեալարաշեանին ալ վիճակը. վիճակ մը սակայն ուրկէ՛

արդար լինելու համար պէտք է ըսենք՝ անցած են ու պիտի անցնին բոլոր ուսանողները գրեթէ առանց բացառութեան: Ինք բացառապէս մտադրած էր բնական գիտութիւններու հետեւել, լսւ. բայց միթէ նուազ հետաքրքրական էր զորօրինակ պատմութիւնը, իսկ գրականութիւնը, մաթեմատիկը, բժշկութիւնը, որ փայլուն ապագայ կը խոստանար, հապա հասարակական գիտութիւնը, որ անհրաժեշտ էր իւրաքանչիւր հասարակական գործիչի համար, իայն իայն: Երկար մտատանջութենէ ետքը՝ ժամանակ չկորսնցնելու փութկոտութիւնը ստիպեց զինք ընական գիտութիւններու արձանագրուել, մինչև յաջորդ կիսամեակ վերջնական ընտրողութիւն մը ընելու վերապահութեամբ: Յաջորդ կիսամեակին գործը բժշկութեան շրջեց, սակայն ազ ալ հոգեկան անդորրութիւն մը չբերաւ իրեն, հետեւաբար զինք տանջող հակամարտ ախորժակներու մղումին անձնատուր՝ շարունակեց տաժանելի տևողափոխութիւնը, մինչև որ բոլոր ֆակուլտէտներու շրջանը ընելէ յետոյ՝ շնչասպառ եկաւ թառեցաւ հասարակական գիտութիւններու վրայ ու հոն ալ մնաց: Այս երկար շրջանին մէջ արդէն քանի մը բարերարներ յուսահատաբար դադրեցուցած էին ուղղւիներու առաքումը, սակայն Մելիք-Ֆեալաբաշեան ամէն անգամին ալ արշաւանք մը կատարելով գէպի Բագու, վերադարձած էր ստիպեցնողիայի նոր աւարով մը: Եւ ամէն անգամ որ այս կարգի գրամական տաղնապներու—կամ իր իսկ բացատրութեամբը «փողային կրիդիսների»—մատնուէր, չէր կրնար զսպել զայրոյթի քանի մը բացակահալութիւններ իր հանգուցեալ հօրը հասցէին: Անհետատեա մարդը, ելեր իր գրամները վատներ էր Շուշի շրջակայքը կալուածներ գնելու, որոնց հասոյթը հաղիւ կը գոցէր իրենց տան տարեկան ծախքը: Մինչդեռ եթէ այդ գումարով Բագուի մէջ հողեր գնած ըլլար, այսօր հոն քանի մը փոս փորել տալով պիտի կրնային կնեազի պէս ապրիլ, առանց «բուրժուա շանորդիներին» բերան ծոկելու:

Սակայն ճշմարտութեան դէմ մեծ մնգանչում մը ըրած պիտի ըլլայի, եթէ իր կենսագրութեան այս համառօտ դրութիւնը փակէի, առանց չեչտելու որ Մելիք-Ֆեալաբաշեան ծոյլ մը չէ: Չէր կրնար գտնել խօսակցութեան նիւթ մը, որ զինք լուսթեան դատապարտէ: Ամէն քանի կը հետաքրքրուի և ամէն ձիւլէ ալ կը կարգայ, թէ և հասա հատորներէն շատ չի ախորժիր և աւելի կը սիրէ բրօշիւրները, որոնք անչափ շուտ կը վերջանան և անչափ ալ ճոխ մթերք կը հայթայթեն վիճաբանութեան ու թղթակցութիւններ գրելու:

Եթէ կար բան մը, որ բնաւ չէր վրադեցներ Շուշեցի այս ինտելիգենտին միտքը՝ ան ալ ապահովաբար իր սեփական կեանքն էր, իր ուրիշ գալը և ուր երթալը։ Ուստի շատ կը սխալիք եթէ կը կարծէք թէ այս պահուս իր սենեակին մէջ ձեռնկով այդ ջուլիս մը անախորժ հարցումներու մասին կը մտածէր ան։ Մարդուն մտածումը արդէն վաղուց սկսած էր խրատչիլ իր անցեալին մթուժիւններուն մէջ խորատուզուելէ, իսկ ապագային մէջ աչքերը ալ ուրիշ բան չէին ջոկեր, բայց եթէ ազօտ ու սրտատուչ հեռապատկերը գիտութեան պարսպաներուն վրայ վերջին շունչը փչող ուսանողի մը։ Մանաւանդ որ գլուխն ալ առհասարակ մտածելու փճակի մէջ չէր այսօր գիշերը ուչ ստեղծ վերադարձած էր Ռուս ուսանողութեան երեկոյթէն և այդ պատճառով բաւական ուչ արթնցած, այսինքն ժամը 12 ին։

Ճաշի տեղ նախաճաշով դոհանալէ հտքը՝ սենեակին մէջ վերվար կը քալէր «մի օպերա շուաջնելով»։ Տարատը և ժակէտը միայն հագած ըլլալով՝ օձիքին բացուածքէն կուրծքի թաւ անտուփն մուտքը կ'երեւնար։ Այդ անխնամ փիճակին մէջ աւելի աչքի կը գարնէր Ղարաբաղցի Հայու իր անխարդախ տիպը։ Հասակը չէր կրնար երկարութեամբը պարծենալ, բայց լայն թիկունքն ու մկանուտ թեւերը անթերի առողջութիւն մը կ'աւետէին։ Դէմքին մազերը՝ կարծես բնութենէն իրենց յատկացուած սահմանները նեղ գտնելով՝ սկսեր էին ռանձգութիւններ ընել դէպի դրացի խոպան մասերը։ Գլխուն ծամերը մանաւանդ՝ վայրենի գեղեցկութիւն մը կը ցուցադրէին իրենց խենթ աճումովը, լերան գաղաթը բուսած մացառքին նման, որուն դպած չէ բնաւ պարտիզպանին յատուցը։ Իսկ սենեակը իրեն հակապատկեր մը չէ որ կը պարզէր այդ պահուն։ Սեղանին վրայ՝ դրքերու շեղջակոյտին ստորտը կը հանգչէր նախաճաշի ափսէն, սենեակին չորս կողմը ցիրուցան աթոռներէն մէկուն կռնակէն կախուած էր շապիկ մը, միւսին վրայ ազտոտ վարդիք մը, երրորդին վրայ սեցած օձիք մը։ Գործածութենէ նոր ելած զոյգ մը գուլպաներ յատակին վրայ կը սողային, բազմոցին վրայ զգեստին դեռ չը հագնուած մասերը կըսպասէին, թեւնոյներէն մէկը սեղանի գրքերուն բարձունքէն՝ միւսը սեղանին տակ, կարծես զիրար կը փնտռէին։ Անկողինը իր արտատուփը տակնուվրայութեամբ գիշերուան յուզումները կը պատմէր։ Դրան ետև կախուած էին երկու վերարկու և բազմաթիւ մաշած տաբափներ, զանազան կիսամեակներու փառքին անփառունակ վկաները։

Մեկը-Քեալարաչեան այս շքեղութիւններու մէջ անտար-

բեր՝ իր ձեռքը կը շարունակէր, երբ յանկարծ սենեակին դուռը բաղխուեցաւ:

— Հէոայն (մտէք) — պոռայ Շուշեցին քնատութենէ աւելի խոպոտած ձայնովը:

Սակայն բաղխումը կրկնուեցաւ և ինք սրտնեղած՝ դէպի դուռը կ'ուղղուէր բանալու, երբ լսեց տանտիկնոջ ձայնը, որ կէս ֆրանսերէն կէս գերմաներէն՝ կ'ըսէր.

— Մտէք, մտէք, ներսն է պարոնը:

Դուռը բացուեցաւ. երիտասարդ մըն էր եկողը, մաքուր սև գլխասներ հագած՝ խնամոտ արդուզարդով մը. իսկ դէմքը առաջին ակնարկին կը յիշեցնէր սափրիչներու խանութները կախուած յայտարարութիւններու պատկերները: Գլխու արագ հակուններու ընկերացած ժպիտով մը՝ տանտիկնոջ «Մէքսի, մազամ, մէքսի» մը ուղղելէ յետոյ՝ ներս մտաւ: Նոյն անոյշ ժպիտը երեսին, եղբէքէ ձեռնափայտն ու սիլիկոն գլխարկը ձեռքը, նուրբ մէջքը ուղղանկիւն մը կազմելու աստիճան ձկնով բարեկեց Մելիք-Քեալլաբաշևանը:

— Պատիւ ունիմ ինքզինքս ներկայացնելու Ձեզ. Սուրէն Շաւարշ, շրջանաւարտ կենդրոնական վարժարանէն, Հոս եկած եմ ուսանելու: Ժընէվէն անցնելու՝ Ձեր ազնիւ բարեկամներէն պարոն Լիլալեան, որուն հետ ծանօթանալու հաճոյքը ունեցայ՝ հաճեցաւ ազնուօրէն Ձեր հասցէն և Ձեզի ուղղուած յանձնարարական նամակ մըն ալ տալ ինձի: Արդ՝ կը խնդրեմ որ կարողաք զայն և զլղանաք ինձի Ձեր թանկագին աջակցութիւնը, որուն համար յաւիտեան երախտապարտ պիտի մնամ Ձեզի:

Եւ այս ամբողջը գրէթէ մէկ շունչով արտասանելէ ետքը՝ նամակը տուաւ Մելիք-Քեալլաբաշևանին, որ բերանն ու աչքերը խոշոր խոշոր բացած՝ շլմորած մնացած էր այս մուտքի ճառին սպաւորութեան տակ: Քիչ մը սթափեցաւ երբ նամակը ձեռքն առաւ:

— Խնդրեմ նստէք — ըսաւ իր անհաւատալի հիւրին գասնալով և շուարուն արտօրանքով մը՝ աթոռները գրաւող իրերը հաւաքեց ու պահարանին մէջ փակեց — ներողութիւն, սպիտակեղէնս փոխել եմ, այդ պատճառով սենեակս մի քիչ անկարգ զրութեան մէջ է:

— Ո՛հ կ'աղաչեմ — յարեց քաղաքավարի հիւրը աթոռ մը անկող — ընդհակառակը ես պէտք է ներողութիւն խնդրեմ որ ասանկ անպատեհ ժամանակ մը Ձեզ անհանդիստ ըրի, սակայն ուրիշ կերպ չէի կրնար ընել, որովհետև ըստրոլին անձանօթ եմ քաղաքիս:

Մելիք-Քեալլաբաշևան յանձնարարական նամակը կարգալէ

ետքը, ինք ալ իր կողմէն քաղաքավարի ըլլալու ճիգով մը խօսակցութիւնը բացաւ:

—Թոյլ տուէք հարցնել, որտեղից էք:

—Բնիկ մայրաքաղաքացի եմ—պատասխանեց նորեկը ինզնագոհ չեչտով մը:

—Ասինքն Կոստանդնուպոլսից:

—Այո, այո, Պոլիսէն:

—Ի՞նչ էք ուզում սովորել:

—Գլխաւորաբար գրականութիւն—պատասխանեց Սուրէն Շաւարշ ու ձայնը խորհրդաւոր կերպով մը ցածցնելով աւելցուց—և քիչ մըն ալ սօսիալիսթութիւն:

—Ուրեմն հասարական գիտութիւններ էլ էք ուզում լսել:

—Ո՛չ, ո՛չ—գոչեց մայրաքաղաքացին վերաւորուած ձեով մը, սխալ հասկնալով հասարակական բառին իմաստը, որ Պոլիս գործածական չէ—հասարակ գիտութիւնները արդէն Պոլիս Կենդրոնականին մէջ սորված եմ, իսկ հոս եկած եմ բարձր գիտութիւններ սորվելու:

Ու կրցածին չափ շեշտեց «բարձր» բառը:

Ղարաբաղցին, որ «հոսհոսների լեզուին» այնչափ ալ ծանօթ չէր՝ շատ բան մը չհասկնալով այս թիւրիմացութենէն՝ չծանրացաւ վրան ու իր հարցումները շարունակեց:

—Ուղիղ Պոլսից էի գալիս:

—Այո, սակայն ճամբան բաւական ուշացայ, ամիսի չափ ստիպուեցայ Մարտէյլ մնալ զանազան կարևոր գործերու համար, չարաթ մըն ալ ժընէվ նախկին դպրոցական ընկերներս վար գրին, անպիտանները այնչափ կարօտցեր էին զիս, որ դես երկար կ'ուզէին քովերնին պահել, բայց ես չկեցայ, ըսելով որ որ մը առաջ աշխատութիւններուս պէտք է սկսիմ:

—Գերմաներէն իմանում էք արդէն:

—Շատ քիչ բան մը, գրեթէ չեմ գիտեր, Պոլսոյ գերմանական վարժարանը յաճախող բարեկամներէս ստնկ քանի մը բառեր սորված եմ. ֆրոյլայն, ֆրաու, քուս, մուլըր, լիպէ, թօխթըր. բայց կարծեմ դժուար չպիտի ըլլայ սորվիլը:

—Ասերը էնքան էլ հեշտ չի, բայց վերջապէս կարելի է սովորել, մանաւանդ որ Տաճկահայերը լեզուներ հեշտ էք սովորում:

—Այո, այո, աղէկ ըսիք—հաստատեց տաճկահայը մեծ հրճուանքով—գորօրինակ ես հայերէնէ զատ գիտեմ ֆրանսե-

րէն, թիւրքերէն, անգլիերէն եւ քիչ մըն ալ յունարէն ու շատ գիւրութեամբ սորված եմ:

—Ուրեմն կը մնաք այստեղ—հարցուց ուսանալը, խօսակցութիւնը իր բուն նպատակին դարձնելու գիտումով:

—Այն, այն, առնուազն կիսամեակ մը պիտի անցընեմ հոս, թէն մտագիր եմ Պերլին ալ երթալ, սակայն յետոյ երբ լեզուն լաւ մը սորված ըլլամ: Անշուշտ ինծի համար աւելի գիւրին էր Փարիզ ուսանիլ, որովհետեւ Ֆրանսերէնի մէջ շատ զօրաւոր եմ, սակայն ես կ'ուզեմ գերմանական կրթութիւն առնել. գերմանական կրթութիւնը այսօր աշխարհի մէջ առաջինն է. անանկ չէ:

—Անշուշտ այդպէս է. ուրեմն սենեակ պիտի վարձէք թէ ուզում էք պանսիօն մտնել, լեզու սովորելու համար:

—Լեզուն փանսիօնին մէջ կը սորվեցնեն:

—Դրսում էլ կարելի է սովորել, բայց ի հարկէ աւելի հեշտ կը լինի պանսիօնում, էնտեղ առիթ ունէք խօսելու, իսկ դրսում դա մի քիչ դժուար կը լինի:

—Անանկ է նէ փանսիօն կը մտնամ. սակայն դրամական տեսակէտով տարբերութիւն մը կ'ընէ:

—Ինչպէս:

—Ըսել կ'ուզեմ փանսիօն մտնալը աժան կը նստի, թէ սենեակ վարձելը:

—Նն, ասե՛ք տարբերութիւնը էնքան էլ մեծ չէ, բայց լաւ պանսիօնը ի հարկէ մի քիչ թանկ կը լինի, ամսեկան գոնէ մի 100 մարկ կը պահանջեն:

—Ի՞նչ կ'ըսէք եղբայր, ատիկա ահագին գումար մըն է

—գոչեց Սուրէն այլալա՛ծ—հարիւր մարքով Պոլիս տուն մը կ'ապրի. չէ սիրելիս, ես աղչափ ստակ չեմ կրնար տալ:

—Բայց դրսում էլ դրանից պակասով հաղիւ թէ կարողանաք ապրել, ի հարկէ եթէ չէք ուզում վատ ապրել:

—Ի՞նչ կ'ըլլայ եղբայր, ուսման սիրուն քիչ մըն ալ գէշ կ'ապրիմ. Փարիզ ընկերներ ունիմ, որոնք առանց ստակի կ'ապրին, ես նորէն ամսական 60—70 ֆրանկ մը ստանալու յոյս ունիմ:

—Նն, դա ջոկ հարց է, եղ զէպքում շատ էժան սենեակ պէտք է վարձէք:

—Այն, այն, կարելի եղածին չափ աժան. կ'աղաչեմ մի խնայէք Ձեր աշակցութիւնը, որովհետեւ ես իմ գլխուս բան մը չեմ կրնար ընել, ոչ լեզու գիտեմ, ոչ ալ քաղաքին ծանօթ եմ:

—Ես սիրով կ'անեմ. միայն թէ էսօր էզուց չէ կարելի մի այլպիսի սենեակ ճարել, պէտք է կրկար ման գալ և կամ լրագրում յայտարարութիւն տալ:

—Ա՛լ դուք գիտէք, կ'աղաչեմ ինչպէս որ պէտք է անանկ ալ կարգադրեցէք, շնորհապարտ կը կացուցանէք զիս:

—Դուք յորչափ ժամանակէ ի վեր Եւրոպա էք—խօսակցութեան նիւթը փոխեց Պոլսեցին, իր գործը արդէն կարգադրուած համարելով:

—Ես... բաւական ժամանակ է ինչ այստեղ եմ—պատասխանեց յաւիտենական ուսանողը, խօսակցութեան այս փոփոխումէն զգալապէս սրտնեղած—բայց սկզբում զանազան առարկաներ եմ լսել. էնպէս, ընդհանուր կրթութեան համար, այնպէս որ իսկապէս մասնագիտութեամբ պարապուելս հազիւ մի քանի տարի կը լինի:

Ու այս անախորժ հարցուփորձին շարունակութիւնը իսպիանելու համար, անմիջապէս տեղէն ելնելով հարցուց.

—Թէյ խմում էք:

—Կ'աղաչեմ, չափազանց աղնիւ էք, ինչո՞ւ աւելորդ յոգնութիւն կը քաշէք, արդէն առանց աղոր ալ բաւական նեղութիւն բարդեցի վրաննիդ:

—Ոչինչ, նեղութեան բան չկայ, ես ինքս էլ եմ ուզում խմել—ըսաւ Մելիք-Քեալլարաչեան ու սկսաւ թէյի պատրաստութիւն տեսնել:

Սյդ առիթէն օգտուելով Սուրէն Շաւարշ թերթերու ծրար մը հանեց զբպանէն ու սկսաւ աչքէ անցընել:

Երբ հիւրասէր Ղարաբաղցին թէյը վրայ դնելով կրկին իր տեղը նստաւ, շատ ուրախացաւ տեսնելով որ իր անխորհուրդ հիւրը զբաղում մը գտած էր և փութաց ընդհատուած խօսակցութիւնը այդ նիւթին վրայ դարձնել:

—Պոլսական թերթեր էք կարդում:

—Ո՛հ կը ներէք անքաղաքավարութեանս—գոչեց Սուրէն թերթերը ժողովելու շարժում մը ընելով—չեմ կարդար, միայն հարեւանցի կերպով մը կը նայիմ թէ զրական ինչ նորութիւններ կան: Մարտէյէն մեկնելու օրերս Լայփցիկ poste restante հասցէ տուած էի, հոս հասնելուս պէս նամակատուն հանդիպեցայ առի, սակայն դեռ չէի բացած:

—Ոչինչ, ոչինչ, ինդրեմ կարգացէք—քաջալերեց Մելիք-Քեալլարաչեան: Հոսհոսին ուզածն ալ ադ էր. անմիջապէս թերթերէն մէկը երկնցուց անոր:

—Եթէ կը հետաքրքրուիք մէկ հասն ալ Դուք աչքէ անցուցէք, զորօրինակ սա յօդուածը գէշ չէ:

Ղարաբաղցին ակնարկ մը նեակեց ցոյց տրուած յօդուածին վրայ, որ ճամբու ոթեր վերնագիրը և Ֆանթագիօ ստորագրութիւնը կը կրէր:

— Ինչացու է էդ Ֆանթագիօն, Պոլսում յայտնի գրող է:

— Բաւական յայտնի—ըսաւ հոսնոսը և պահ մը խորհրդաւոր կերպով ժպտելէ յետոյ աւելցուց— Ձեզի պէս բարեկամէ մը ինչ պահեմ. ատիկա իմ գրական անունն է. աղւոր ծածկանունն է չէ. սակայն պիտի աղաչէի որ մարդու չըսէք, որովհետեւ ընդհանրապէս յօդուածներս մեծ աղմուկ հանած են, ամէն ոք կը հետաքրքրուի իմանալու թէ ով է գրողը. բայց ես չեմ ուզեր որ ես ըլլալս զիտնան, ասանկ աւելի խորհրդաւոր կ'ըլլայ: Կ'աղաչեմ եթէ կը հաճիք Դուք ալ կարդայէք և Ձեր հեղինակաւոր կարծիքը յայտնեցէք. թէն ասիկա աղւոր գրութիւններէս չէ, մէկ մասը շոգեկտորքին մէջ և միւս մասն ալ Մարսէլ գրուած թռուցիկ բաներ են: Այսինս որ լաւագոյն յօդուածներս հիմա քովս չեն, պայուսակիս մէջ են. սակայն անգամ մը տեղաւորուիմ նէ անոնք ալ կը բերեմ Ձեզի:

Տարաբախտ Շուշեցին քաղաքավարութեան համար ստիպուած էր կամ կարդալ և կամ կարդալ ձեւացնել: Մինչդեռ հարեւանցի ակնարկով մը յօդուածին երկարութիւնը չափելու վրայ էր, հանդիպեցաւ նախագասութեան մը, որ կարծես աչքերն ու ուղեղը միանգամայն վիրաւորեց: Շշված դէմքով մը քանի մը անգամ կարդալէ յետոյ, դարձաւ հեղինակին:

— Ախր սա ինչ է նշանակում, ինչ էք կամեցել ասել էս Ֆրագով Ու դարեջուրի գաւաթները իրենց բիւրեղի հնչուն շաինդովը եղբայրօրէն իրարու զարնուելով անհուն տքամութիւնով մը հառաչեցին:

— Այն, իրաւունք ունիք հարցնելու—բացատրեց Սուրէն ուսուցանողի լրջութիւն մը հաղնելով— որովհետեւ ատիկա չափազանց գրական նկարագրութիւն մըն է, ատիկա պէտք եղածին պէս հասկնալու համար, պէտք է որ ներկայ ըլլայիք մեր այդ հաւաքումին: Մարսէլէն մեկնելուս նախընթօրը բարեկամներս ինծի ողջերթ մաղթելու համար սրճարանի մը առանձնասենեակը ժողովուած էին, անոնցմէ մէկը իր աղւոր, հնչական ձայնովը վերհարէնի մէկ նոր պահնելի կտորը կը կարգար և այդ հոգեզմայլ տողերուն հեշտօրօր տպաւորութեանը տակ՝ մեր հիացումի ընդարմացումը գարեջուրով կը գողգղայնէինք: Բաժակները անընդհատ իրարու կը յաշորդէին ու կ'երեւակայէք, որ այդ բաժակները իրարու զարնուելով սանկ հառաչանքի պէս ձայներ մը կը հանէին: Սանկ պահ մը երեւակայեցէք ու անտուն պիտի հասկնաք, անանկ չէ:

—Ննւ, չորտ ելօ զնայետ հասկանալի է—մոմոայ Մելիք-Քեալլարաշեան թաւ յօնքերը կիտելով:

Եւ քիչ մըն ալ յօղուածին պոչէն ծայրէն կարգալէ յետոյ՝ թերթը սեղանին վրայ դրաւ, քթին տակէն խնդալով:

—Ինտոր է, հաւնեցա՞ք—հարցուց անմիջապէս Յանտաղիօ:

— ... Վատ չի, միայն թէ, Տաճկահայերդ խօսքեր շատ էք գործածում, գրանով գրուածքի էներգիան կորչում է. այ, օրինակ այստեղ մի խօսք կար, որը ես մինչև անգամ չկարողացայ կարդալ:

Եւ թերթը կրկին ձեռքն առնելով յիշեալ բառը գտաւ ու ծիծաղը հազիւ զսպած՝ զոչուց յօղուածագրին:

—Ասիկա չկրցա՞ք կարդալ—բայագանչեց Սուրէն դարմայած—սակայն շատ պարզ է տպուած, խոյանք:

—Ի՞նչ է նշանակում դա:

—Խոյանք. կը նշանակէ խոյի պէս վրայ վազել. ատիկա խոյանալ, խոյ, (այսինքն արու ոչխար) բառերէն կը ծագի և ֆրանսերէն élan, élanement բառերուն կը համապատասխանէ:

—Որ էդպէս է, ասէք ոչխարի նման վազ տալ պրծնի գնաց, էլ ի՞նչ էք այդպիսի տգեղ խօսքեր թխում. մեր լեզուն արդէն առանց այն էլ բաւական տգեղ է, իսկ այդպիսով դուք նրան աւելի էք տգեղացնում: Այ օրինակ մի սւրիչ խօսք—եղէմքի սոսկալի ծամածոթեամբ մը արտասանեց—ժողովրդա-կան. ֆո՛ւյ, ի՞նչ վատ խօսք է, այդ մեր անպիտան կօնսօնանաները երբեմն մի այնպիսի դիսօնանցիա կն առաջ բերում, որ կրթուած ակամօջները չեն կարողանում տանել. ինչո՞ւ գործ չածել ուղղակի պապուէր խօսքը, որը բոլոր կուլտուրական լեզուներում ընդունուած է և վեր կենալ էդ տեսակ սարսափելի խօսքեր թխել:

—Ի՞նչ խօսք պէտք է գործածել ըսիք—հարցուց խեղճ հոսիսը, որ ապշած մտիկ կ'ընէր դժբախտ հայ լեզուի այս տարօրինակ բարենորոգչին քննադատութիւնները:

—Պ, օ, պ, ս, լ, է, բ—հեգեց Մելիք-Քեալլարաշեան, զուցամատովը օղին մէջ գրելով—դա անպայման աւելի սիրուն խօսք է, քան թէ մեր էդ անիծած ժողովրդականը:

—Հա՛, փօփիւլէր ըսել կ'ուզէք—գոչեց Պոլսեցին պահիկ մը մտմտալէ ետքը—բայց եղբայր ատիկա ֆրանսերէն է..... Ուրեմն կ'ուզէիք որ յօղուածս ֆրանսերէն գրէի—աւելցուց, մտքէն իսկ չկրնալով անցընել թէ լեզու մը գեղեցկացնելու համար կարելի է սեփականը վտարելով օտարէն բառեր մու-

բալ—Ֆրանսերէն ալ նոյնչափ յաջող կրնամ գրել, սակայն «Արևելիք» ը ֆրանսերէն յօդուածներ չի տպեր:

Այս միջոցին Մելիք-Քեալլաբաշեան թէյ լեցնելու զբաղած ըլլալով, ուշադրութիւն չդարձուց վերջին խօսքերուն վրայ: Իսկ հոսնոսը՝ թէյէն քանի մը ումպ խմելով կոկորդը կազդուրելէ և միջանկեալօրէն ուստական թէյին հակիրճ ներբողեան մը կարդալէ ետքը՝ աւելի ոգևորուած շարունակեց:

—Ինչ կ'ըսէք եղբայր, սրտերնիս հրաբուխի մը կը նմանի, որ սակայն բռնութեան կափարիչներուն սակ ճնշուած՝ չի կրնար կոր ժայթքել: Պոլիս անանկ խըյախ գրիչի տէր տղաք ունինք որ, սակայն խեղճերը չեն կրնար կոր գրել, տաղանդնին խորշակահար ծաղիկի նման կը ցամքի կ'երթայ... ազատութիւն չկայ, ազատութիւն, ապա թէ ոչ սանկ երկուտող գրէին նէ ամբողջ հայ ազգը ոտքի կը հանէին:

—Բայց միթէ ձեզ արգելում են հասկանալի լեզուով գրել. ես կարծում եմ որ մեղաւորը մենակ Տաճկաց ցեղուրը չէ. ձեզ փճացրել է ֆրանսիական գրականական խոհանոցը, ձեր ամբողջ բնութարիստիկան մի ինչ որ ֆանտաստիկական անօրմալ բան է, ձեր հէնց ամենալաւ գրողները սեփական ինիցիատիվա չունեն, իրանց իմպուլսները ստանում են Պարիզի ժողովներէրից, ինքներգ ձեզ համար թիւել էք մի տեսակ՝ էսպէս ասած՝ գրականական ժարգօն, որից խեղճ ժողովուրդը ի հարկէ ոչինչ չի հասկանում. էլ ում համար էք գրոտում. պէտք է աշխատել պարզ գրել, որքան կարելի է պարզ, էնքան պարզ որ մինչև անգամ... կարդալ չիմացողը կարդայ և հասկանայ:

—Կ'ողաչեմ բարեկամ, ինչ կ'սէք, ատիկա կարելի բան չէ, ժողովուրդը ինչ կը հասկնայ բարձր գրականութիւնէն. գորօրինակ կօշիակար մը անշուշտ բան մը չի կրնար հասկնալ վերլէնէն, սակայն ազոր համար կ'ուզէիք որ վերլէն արտադրած չըլլար իր անմահ էջերը: Բանաստեղծութիւնը երկնային բան մըն է, իրենց ամբողջ էութիւնովը ամպերէն ալ վեր սաւառնող էակները միայն կրնան ըմբռնինել անոր գեղեցկութիւնները:

—Այ, ձեր սխալը հէնց էդտեղ է—ըսաւ զրգուած Մելիք-Քեալլաբաշեան, որուն Ղարաբաղցիի յամառութիւնը բռնած էր —բոլոր գրականութիւնների մէջ իսկական պօէզիայի աղբիւրը, էսպէս ասած՝ գլխաւոր ֆակտորը հէնց ինքը ժողովուրդն է եղել: Այսպէս՝ գրականութեան պատմութեան մէջ մենք տեսնում ենք, որ զանազան էպօխաներում ստեղծուած բոլոր չկօլաներն էլ իրանց հիմք են ունեցել պօպուլէր՝ կամ ինչպէս զուք էք ասում՝ ժողովրդական պօէզիան: Օրինակ մեզանում

էս վերջերս մի նոր պօէտ է գուրս եկել, մի ջահէլ տղայ՝ Աւետիք Իսահակեան՝ գուցէ ծանօթ է Ձեզ, ես ունեմ մօտս նրա բրօշիւրը, եթէ ուզում էք կարող էք վերցնել կարգաւ, ժողովրդական մօտիվներ է գրում, բայց անպիտանը է՛նքան կենդանի է գրում, որ կարծէք հէնց կեանքից խլած լինի:

—Այո, այո, անկէ քանի մը ոտանաւորներ կարգացած ըլլալս կը յիշեմ, սանկ տողեր մը ունի, որոնք շատ ազուր են — և պոլսական ձեռով սկսաւ արտասանել—

Ով կեսնք ունի, քարք էլ ունի,
Թարթին քարման եար էլ ունի,
Մինակ ես եմ քամփախտ ծներ,
Սիրտս քարթոս ու ճար չունի:

Սակայն ատոնք գրական մեծ արժէք մը չունին, համեմատութեան իսկ չեն կրնար գրուիլ Վերլէնի կամ Վերհարէնի հետ:

Մեղիք-Քեալլաբաշեանին գլուխը պէտք եղածէն աւելի ուսած և ջիղերն ալ բաւական գրգռուած ըլլալով՝ ալ չկրցաւ կենալ քաղաքավարութեան նեղ սահմանին մէջ.

—Հէնց էդ Վերլէնների նման պսիխօպատները չեն ձեր տունը քանդողները, նրանց վայել տեղը ոչ թէ գրականական կարիէրան է, այլ գժատունը:

Հոսհոսը՝ իր պաշտած բանաստեղծին հասցէին ուղղուած այս նախատինքէն վիրաւոր՝ ալ չչարունակեց:

Պահ մը լռութիւն տիրեց, որ Ղարաբաղցիին ձանձրոյթ արտայայտող ն ս է, դ ս երովը կը խանգարուէր: Սակայն՝ ինչպէս հին փիլիսոփաները ըսած են հոսհոսութիւնն ու յարատեւութիւնը իրարու բոլորովին հակառակ առաքինութիւններ են: Ուստի շատ չանցած մեր հոսհոսին ալ լռութեան համբերութիւնը հատնելով, խօսակցութեան խզուած թելը հանգուցեց:

—Պարսն Մեղիք-Քեալլաբաշեան, կարծեմ Դուք ալ կը գրէք, կը ներէք համարձակութեանս, կրնամ Ձեր կեղծանունը հարցնել:

—Ո՛չ, ես պսեվդօնիմ չեմ գործածում—պատասխանեց Շուշեցին նկատելի դժկամակութեամբ մը, մանաւանդ տեսնելով որ խօսակցութիւնը կրկին իր վրայ կը շրջուէր:

—Սակայն կը գրէք, չէ:

—Երբեմն թղթակցութիւններ եմ գրում, իսկ յօդուածներ աւելի սակաւ. էս վերջերս իմ մի երկար յօդուածը գուրս եկաւ «Մշակ»ում, կօնսուսփէրայնների մասին:

—Կը նէրէք, ինչի՞ մասին:

—Կօն-սոււմ-ֆէրայնների:

—Դժբաղդարար ուսերէն չեմ հասկնար, կը հաճիք թարգմանել:

—Դա ուսէրէն չէ, դա մի գերմանական խօսք է, նշանակում է... էսպէս ասած... դրա համար հայերէն խօսք չկայ, ինչպէս թարգմանել... նո՛ւ ասկնք, ուտելիղէնների և այլ կեանքի պիտոյքների մագաղինների ֆէրայններ... ընկերութիւններ:

—Այո՛, այո՛, հիմա կը յիշեմ կոր—վրայ բերաւ հոսհոսը, որ ոչ բան մը կը յիշէր և ոչ ալ տրուած քաղատութենէն բան մը հասկացած էր—չատ աղւոր գրած էիք և կարծեմ սանկ պարագային յարմար ակնարկութիւն մըն ալ ըրած էիք ապագայ Հայաստանի մասին: Դուք Ռուսահայերդ աւելի գիտական գրիչ մը ունիք, իսկ մենք աւելի գրական: Ժընէյլ իմացայ որ Ձեր բարեկամ պարոն Լիլավեանն լուրջ գրող մըն է, շիտակ է, Ձեզմէ աղէկ չըլլայ, սակայն շատ ազնիւ երիտասարդ մըն էր:

—Այո՛, նա մշտական դրում է և մեր լաւ տղերանցից մին է, մեր ինտելիգենցիային պատիւ է բերում:

—Ղարաբաղցի չէ ուրեմն:

—Այո՛, ինչպէ՛ս չէ:

—Հապա ըսիք թէ ինտելիգիացի է—ըսաւ Սուրէն Շաւարշ մտմտութիւն մը գլուխը վեր տնկելով—ուրեմն Ղարաբաղի քաղաքներէն մէկն է ատիկա. հա՛ իրաւ որ աշխարհագրութենէն ատանկ քաղաք մը կը յիշեմ Ղարաբաղի մէջ. ինտելիգիս ըսիք թէ ինտելիգիս:

—Ինտելիգենցիա միթէ չէք հասկանում—ըսաւ զարմացած ինտելիգենտը, որ բան մը չէր հասկացած այդ խօսքերէն—իսկ Դուք էդ ինչ քաղաքի մասին էիք հարցնում:

—Իչտէ ադ ինտելիգենցիա քաղաքի մասին:

Մելիք-Քալլաբաշեան շոտաչուն քրքիչ մը վրցուց.

—Ախր էդ ինչեր էք ասում, Ղարաբաղում էդպէս քաղաք չկայ, մենք երկուսս էլ Շուշեցի ենք. ես ասացի որ նա մեր ինտելիգենցիային պատիւ է բերում, իսկ Դուք՝ ինչպէ՛ս երեւում է՝ կարծել էք թէ դա մեր քաղաքի անունն է. Ինտելիգենցիա նշանակում է ինտելիգենտ մարդիկ, Քրանսերէն կարծեմ ասում են ինտելիժանտ...:

—Ա՛խ, այո՛ հիմա հասկցայ. էն թէ լիժան ըսել կ'ուղէք—բացականչեց հոսհոսը ձեռքը ճակատին զարնելով ու սաստիկ կարմրած—Քրանսերէն բառերը Դուք միշտ ուսերէնի ձեռով կ'արտասանէք այդ պատճառով աղէկ չեմ հասկնար:

Եւ երկուքն ալ բաւական խնդացին այս զուարճալի թիւրիմացութեան վրայ, բայց Պոլսեցին շուտով նոր հարցում մը մէջտեղ գլորեց, իր ամօթահարութիւնը ծածկելու համար:

—Անվայել չըլլայ հարցնելը, սակայն կարծեմ Ղարաբաղի հայ մելիքներուն ցեղէն էք Դուք, ինչպէս արդէն Ձեր մականունն ալ ցոյց կուտայ:

—Ո՛չ, ո՛չ, —պատասխանեց Ղարաբաղցին, որ դեռ կը շարունակէր խնդար:

—Խնդրեմ, ի՞նչ կը պահէք ինձմէ, թէև ցարդ զիրար ճանչնալու բարեբախտութիւնը չենք ունեցած, սակայն կրնաք վրստահ ըլլալ, որ մատնիչ մը չեմ ես. և մանաւանդ որ հիմա ազատ երկրի մը մէջ ենք փառք Աստուծոյ, ալ ի՞նչ կը վախնաք:

—Վախենալու ոչինչ չկայ, դա խօսմ մի փասնաւոր բան չէ, որ ուղիղ լինէր կ'ասէի էլի:

—Պահեցէք, եղբայր, պահեցէք վրաս չունի—ըսաւ հոս հոսը գլուխը շարժելով—խոհեմութիւնը ատանկ կը պահանջէ, սակայն վստահ եմ, որ քիչ ատենէն երբ աւելի մտերմանանք՝ սրտերնիդ համարձակօրէն պիտի բանաք ինծի:

—Ինտելիգենտի հոգին բերանն էր հասեր, ակնոտին վրայ անհանդիստ շարժումներ կ'ընէր, կը յօրանջէր, կը փնջէր, ժամացոյցը կը նայէր և մէկ խօսքով միտքն ինկած ամէն անուղղակի միջոց գործի կը դնէր իր ձանձրոյթն ու սրտնեղութիւնը հասկցնելու համար: Սակայն գիմացիներ տեղէն շարժուելու ամենադոյզն հաւանականութիւն մը անգամ չէր ընծայեր, ուստի ալ ճարահատ ինք օտքի ելաւ.

—Կը ներէք, ամենայն սիրով դեռ կը նստէի Ձեզ հետ, բայց դժբաղդաբար երկու ժամ միմեանց ետեից դասախօսութիւն ունեմ, այնպէս որ կը ներէք.....

—Ո՛հ կ'աղաչեմ, կ'աղաչեմ, —ըսաւ հոսհոսը տեղէն ցատկելով—արդելք չըլլամ Ձեր գործին. արդէն ես ալ կ'ուզէի երթալ կայարանէն պայուսակներս առնելու, կրնամ հոս բերել զանոնք, մինչև որ սենեակ մը վարձենք:

—Խնդրեմ, ի հարկէ կարող էք, միայն թէ երկու ժամից յետոյ բերէք, երբ ես տանը կը լինեմ, որպէսզի..... տանտիկինը դժուարութիւն չհանի:

—Շատ աղէկ, իսկ սենեակին խնդիրը չէք մոռնար, անանկ չէ:

—Ո՛չ, ո՛չ:

—Սանկ աղւոր, մաքուր, կոկիկ, աժան սենեակ մը—և խնդալով աւելցուց—եթէ տունին մէջ աղւոր աղջիկ մըն ալ ըլլայ նէ, ալ ուրիշ բան չեմ ուզեր, որովհետև գիտէք օրիորդ

ներուն հետ խօսակցելով մարդ աւելի շուտ կը սորվի լեզուն:

—Շատ լաւ, շատ լաւ, էգուց կը տեսնենք.

Սուրէն-Շաւարշ-Պանթաղիօ գլխարկն ու ձեռնափայտը առաւ, Մելիք-Քեալլաբաշխանին ձեռքը սեղմեց սրտագին չնորհակալութիւններ յայտնելով, մէջքի նոյն ճկունութեամբ խոնարհութիւն մը ըրաւ և արդէն սենեակին դռնէն դուրս կ'ելնէր, երբ Ռուսահայի ցը' ն ականջներուն հասաւ:

—Ի՞նչպէս, ի՞նչ ըսիք—հարցուց ետ դառնալով:

—Ոչինչ, բան չասացի—պատասխանեց Մելիք-Քեալլաբաշխան, որուն սիրտը դող ինկաւ այս վերադարձէն:

—Չէ հիմա բան մը կ'ըսէիք ցի էր, ի՞նչ էր:

—Ցը'. միթէ Ձեզ մօտ գործածական չէ, ցտեսութիւնն է կրճատած:

—Յտեսութիւնն ին կրճատումն է ուրեմն. սէ ինչ աղւոր գիւտ. ասկէ վերջ ես ալ ատիկա կը գործածեմ անպատճառ. ուրեմն ցը' սիրելի բարեկամ:

Ու կրկին ձեռքը սեղմելով մեկնեցաւ:

—Ս'յ ես քո հէրն անիծած, հոսնս շանորդի—պտտաց ինտելիգենտը երկար շունչ մը առնելով—հողիս հանեց էլի. սա որ էստեղ մնայ կըսպանի ինձ:

Եւ բացմոցին վրայ փռուեցաւ այնպէս ուժասպառ, որ կարծես եղան սայլ մը քաշած ըլլար:

ԱՌՍՆՁԱՐ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի

19) Dr. Max Nordau: „Der Zionismus“ verlag der „Jüdischen Volksstimme“ Brünn, 1902.—Դ-ր Մաքս Նորդաու. „Սիօնիզմ“:

Սիօնիստների հսկայական կազմակերպութեանը անդամ է և գրքոյկիս հեղինակը՝ յայտնի հրապարակախօս-փիլիսոփայ Մ. Նորդաուն, որը իր ներկայ աշխատութեամբ հակիրճ ձեւով պատկերացնում է սիօնիզմի պատմական զարգացումը և ընդգծած նպատակը: Ահա նրա համառոտութիւնը.

—Միայն վերջին երկու տասնամեակումն է զարգացել իսկական քաղաքական սիօնիզմը: Բայց մինչև այդ, նա ունեցել է իր նախապատրաստական հոսանքները, հակառակ կարծիքների փոխանակութիւնն ու ազդեցութիւնը:

Առաջ քայլերով առաջագիմում էր մարդկութեան տնտեսական-հասարակական կեանքը, իր հետ առաջ մղելով թէ անհատների և թէ ազգերի զարգացումը: Հրէաներն էլ այդ առաջագիմական շարժման մէջն էին: Բայց նրանք առաջագիմում էին միայն իբրև անհատներ և ոչ իբրև ազգ: Ազգային զաղափարը դեռ հեռու էր նրանցից:

Ժամանակի ընթացքում առաջ եկաւ հրէական մի երիտասարդութիւն, որին տարօրինակ էին թւում Մենդելսօնի գաղափարը, որի համար աւելի քան տարօրինակ էր այն կարծիքը, թէ հրէաները պարտաւոր են թափառել երկրից-երկիր՝ մինչ որ աշխարհաքաղաքացիութիւն (kosmopolitismus) քարոզելու ցանկութեամբ:

Այդ երիտասարդութիւնը տեսնում էր հրէաների կրած հալածանքն ու անարգանքը և անկարող էր անտարբեր մնալ: Անկարող էր, որովհետեւ իրան էլ հասնում էին այդ անարգանքի սուր սլաքները, որովհետեւ զուրկ չէր ազգային դիտակցութիւնից: Եւ միթէ նա կարող էր չունենալ այդ զգայմունքը, երբ տեղի էին ունենում պատերազմներ ու խոչոր քա-

ղաքական անցքեր՝ միմիայն ազգային արժանապատուութիւնից ու շահերից առաջացած:

Ինչո՞ւ յոյնն ու բուլղարը, սերբն ու իտալացին, ռուսն ու լեհացին, գերմանացին ու ֆրանսիացին կարող էին ազգային ընդհանուր շահերն ունենալ և այդ շահերի համար նոյն իսկ արիւն թափել, իսկ հրէաները—նչ: Դա անբնական էր և անհասկանալի:

Վերջին ժամանակներս հրէաների դէմ ձեռք առած քաղաքական խստութիւնները և օրէցօր աճող հակասեմիտական շարժումը մի առանձին զարկ տուին հրէական ազգային գաղափարին և կենդանացրին սեփական հայրենիք ունենալու ցանկութիւնը:

Առաջին անգամ պարզ կերպով այդ ցանկութիւնն արտայայտեց գերմանահպատակ մի հրէայ, որը երկիւղից դրդուած իր անունը չէր դրել զրբի վրայ: Բայց այնուամենայնիւ անսունուն հեղինակի զիրքը արժանացաւ ուշադրութեան, որովհետեւ իր մէջ պարունակում էր մի օրիգինալ միտք, այն է՝ ձեռք բերել Պաղեստինը և գաղթել այնտեղ: Այդ զիրքը քառասնական թուականներին լոյս տեսաւ: Մօտ քսան տարի յետոյ հրապարակ եկաւ նոյնանման մի զիրք, որը աւելի ուժեղ ցնցում, աւելի մեծ խլրտում առաջ բերեց մտածող հրէաների մէջ: Դա Մովսէս Հեսսի «Rom und Jerusalem» խորագրով աշխատութիւնն էր:

Սակայն այդ ցնցումն աւելի մեծ ծաւալ ընդունեց, աւելի որոշ արտայայտութիւն ստացաւ ութսունական թուականների սկզբում, երբ լոյս տեսաւ Դ-ր 1. Պինսկերի «Auto-Emancipation» վերնագրով գրքոյկը: Այդ գրքոյկի մէջ արծարծած էր այն միտքը, թէ հրէաները նչ թէ մի կրօնական համայնք են, այլ մի ազգութիւն, որը ունի իր պատմութիւնն ու լեզուն, իր ազգային շահերն ու առանձնայատկութիւնները և որը իրաւունք ունի ձգտելու դէպի իր հայրենիքը, դէպի Սիօն: Հրէաների այդ վերածնութիւնը պիտի կատարուի միաժամանակ սնտեսական, ֆիզիկական, հոգեկան և կրօնական ասպարէզներում:

Ահա այդ գաղափարները դարձան խթան հրէական երիտասարդութեան համար: Գիմնազիստներ ու ուսանողներ, բանուորներ ու մանրավաճառներ—բոլորն էլ հետաքրքրուած էին, բոլորն էլ աշխատում էին կազմել մանր-մանր ընկերութիւններ, տարածել հրէական լեզուն ու առանձնայատկութիւնները, ստեղծել փոխադարձ օգնութիւն՝ մի խօսքով հարթել—նախապատրաստել հրէական ազգի փրկութեան ճանապարհը: Շատե-

րի ոգևորութիւնն համուժ էր այն աստիճանի, որ ստիպուժ էր թողնել գործ ու ընտանիք, զոհել փող ու ժամանակ և գնալ Պաղեստին՝ Սիօնի նուիրական հողը տեսնելու, նրա օգով շնչելու:

Ահա այդ ընդհանուր ոգևորութեան ժամանակ հարկաւոր էր մի ուժեղ մարդ, որը օգտուէր բարեբաստիկ հանգամանքներից և ցանկալի ուղղութիւնը տար սկսուած հոսանքին: Այդ մարդը եղաւ Դ-ր Թ. Հերցլը իր «Der Indenstaat» (Հրէական թագաւորութիւնը) վերնագրով աշխատութեամբ, որը լոյս տեսաւ 1896 թուականին:

Մի առանձին նորութիւն չէր պարունակում այդ գիրքը: Նրա մէջ աւելի հիմնաւոր, աւելի սիստեմատիկ կերպով կրկնուած էին այն մտքերը, որոնց մասին խօսել էին ուրիշ հեղինակներ և որոնք արդէն մտածողութեան ու խօսակցութեան նիւթ չեն դարձել հրէական ամբողջ ժողովրդի համար: Այդպէս ուրեմն Հերցլի աշխատութեան ուղուծուծը կազմում էր այն գաղափարը, թէ հրէաները մի ազգ են և արժանի են իրանց սեփական հայրենիքն ու անկախ թագաւորութիւնն ունենալու:

«Հրէական թագաւորութիւնը» դարձաւ սիօնիստների գլխաւոր յենակէտը, նրանց մտքերի ընդհանուր արտայայտիչը, այսպէս ասած նրանց «հաւատոյ հանգանակը»: Սակայն դա միայն մի անհատական աշխատութիւն էր և ոչ մշակուած ծրագիր, վերացական առաջարկութիւն էր և ոչ կօնկրէտ գործունէութիւն:

Հարկաւոր էր այդ վճռական քայլն էլ անել՝ անմիջական գործունէութեան մի ծրագիր կազմել և առանց գանդաղելու սկսել կենդանի գործ: Այս հարցում էլ նախաձեռնող հանդիսացաւ Հերցլը: 1897 թ. նա հրատարակեց մի կոչ սիօնիստների անունով, որով հրաւիրում էր նրանց պատգամաւորներ ուղարկել ընդհանուր գործունէութեան մասին խորհրդակցելու համար: Մինչեւ օգուստոսի վերջը Զուրիցարիայի Բազել քաղաքում հաւաքուեցին 204 պատգամաւորներ: Համագումարի մի այդպիսի բազմամարդութիւնը մի ազգու յոյց էր յօգուտ սիօնիզմի, պերճախօս պատասխան էր այն հակառակորդներին, որոնք պնդում էին թէ «սիօնիզմը» մի քանի անհատների գործ է և ոչ ժողովրդական ընդհանուր ցանկութիւն:

Այդ առաջին համագումարը մշակեց գործունէութեան ծրագիրը, որը մինչ օրս էլ ընդհանուր առմամբ մնում է անփոփոխ: Ահա այդ ծրագրի գլխաւոր կէտերը.

—Սիօնիզմը աշխատում է հրէական ազգի համար Պաղես-

տինսում ձևոք բերել հայրենի բնակավայրեր, որտեղ լինի կեսանքի, գոյքի և իրաւունքի ազատութիւն:

Այդ նպատակին հասնելու համար նա միջոց է ընտրում հետևեալ 4 կէտերը.

1. Նպատակայարմար պահանջ անել գէպի Պաղեստին հրէայ երկրագործներ, արհեստաւորներ և բանուորներ գաղթեցնելու մասին:

2. Ընդհանուր կապ ու համերաշխութիւն հաստատել բոլոր հրէաների մէջ, իւրաքանչիւր երկրում—տեղական օրէնքների համեմատ—ընկերութիւններ ու կազմակերպութիւններ առաջ բերելով:

3. Ուժեղացնել հրէական ինքնաձանաչութեան և ազգային ինքնագիտակցութեան զգացմունքները:

4. Նախապարաստական քայլեր անել, որպէս զի ձեռք բերուի պետութիւնների հաւանութիւնը սիօնիզմի նպատակն իրագործելու համար:

Ահա այդ 4 կէտերն են սիօնիստների գործունէութեան ղեկավարն ու ուղեցոյցը:

Պարզ է, որ մշակուած ծրագիրը և նրանից յետոյ սկսուած նոանդուն ազիտացիան պիտի աւելացնէին սիօնիստների թիւը: Այդ բանին ապացոյց է հետևեալ համագումարների կազմը, Առաջինից յետոյ մինչև օրս տեղի են ունեցել սիօնիստների չորս կօնգրէս, այն է.

1898 թ. Բաղելում, 280 հոգու մասնակցութեամբ.

1899 » Բաղելում, 370 » »

1900 » Լօղօնում, 420 » »

և 1901 » Բաղելում, որտեղ մասնակցում էին պատգամաւորներ 180,000 ընտրողների կողմից:

Փալով ընդհանուր կազմակերպութեանը, պէտք է ասել, որ այժմ սիօնիստներն ունին տեղական ընկերութիւններ բոլոր այն երկրներում, որտեղ հրէաներ կան: Այդ ընկերութիւնների թիւը հասնում է 600-ի: Սիօնիզմի կենդրոնական մարմին է համարւում այն սեկրետարիատը, որը գտնւում է Վիեննայում: Նրա վարչական բոլոր ծախսերը հողացւում են անդամավճարներով: Իւրաքանչիւր սիօնիստ տալիս է տարեկան 1 մարկ=1 ֆրանկ=1 շիլլինգ = 50 կոպէկ անդամավճար, որը կոչւում է «Շեկել»:

Այդ միևնոյն կենդրոնական մարմնի ղեկավարութեամբ Վիեննայում հրատարակւում է սիօնիզմի պաշտօնական օրգանը—«Die Welt» (Աշխարհ) շաբաթաթերթը: Բացի դրանից կան մօտ 40 ուրիշ պարբերական հրատարակութիւններ—(հրէաերէն,

լեհերէն, գերմաներէն, ռուսերէն, իտալերէն, անգլիերէն, ֆրանսերէն, ռումիներէն և սպաներէն) — որոնք մեծ կամ փոքր չափով համակրում և իրենց էջերում արժարժում են սիօնիստական գաղափարները:

Սիօնիստները յոյս ունեն փողով գնել Պաղեստինը: Նրանք գիտեն, որ սուլթան Համիդի կառավարութիւնը շատ է սիրում փող և այդ պատճառով էլ համոզուած են, որ նրանց պիտի աջողուի ցանկայի նպատակի հասնել: Սակայն այդ գործը զրուխ բերելու համար հարկաւոր էր բանակցող մի մարմին, առևտրական մի հաստատութիւն՝ ուժեղ պետութեան հովանաւորութեամբ ապահովուած:

Ահա այդ անհրաժեշտութիւնից զրգուած Բազելի համագումարը (1898) որոշեց Լօնդօնում հիմնել հրէական ազգային բանկ — (Jewish Colonial Trust): Հարուստ սիօնիստների աջակցութեան շնորհիւ այդ որոշումն այժմ իրագործուած կարող է համարուել: Բանկի ակցիաների գումարը հասնում է 2,000,000 ֆունտ ստերլինգի: Ըստ կանոնադրութեան բանկը իր գործունէութիւնը կարող է սկսել միայն այն ժամանակ, երբ այդ գումարի $\frac{1}{8}$ = 250,000 ֆունտ ստերլինգի արդէն հաւաքած կը լինի: Այժմ այդ գումարը պատրաստ է, ուստի և հրէական ազգային բանկը կարող է սկսել իր ձեռնարկութիւնները:

Սակայն զրամական այգպիսի մեծ հիմնարկութիւնն էլ բաւական չը համարեցին սիօնիստները, ուստի և անցեալ հասնագումարում — (Բազել 1901 թ.) որոշեցին հիմնել ազգային ֆոնդ՝ 200,000 ֆունտ ստերլինգ քանակութեամբ: Այդ գումարի կէսը պիտի ծառայէ Պաղեստինում հողեր գնելու համար, իսկ մնացած կէսը պիտի զառնայ ազգային անձեռնմխելի սեփականութիւն: Միայն զրա տոկոսները կարող են գործադրուել ազգային անյետաձգելի կարիքների համար:

Ինչպէս տեսնում ենք, սիօնիզմը բաւական խոշոր ու պատկառելի կազմակերպութիւն է ներկայացնում. թէ իր զրամական միջոցներով և թէ անդամների թուով:

Ձը նայելով զրան, նա ունի ըստմութիւ հակառակորդներ հրէաների միջից: Սօսելով զրանց մասին, Նորդաու նկատում է, որ զրանցից շատերը հակառակուում են, որովհետև սովորութիւն են դարձրել ամեն բանի հակառակել: Շատերը սիօնիզմի ղեկավարների անձնական թշնամիներն են և աշխատում են զրպարտութեամբ և չարախօսութեամբ խանդարել նրանց: Վերջապէս մնացածածներն էլ հակառակուում են, որովհետև չեն հասկանում սիօնիզմի էութիւնն ու հիմունքները:

Չարմանալին այն է, որ պ. Նորդաու ոչինչ չի ասում

սիօնիզմի ամենագլխաւոր հակառակորդի մասին: Դա հրէական լաւագոյն երիտասարդութեան մի մասն է, որը շատ լաւ հասկանում է նոր շարժման էութիւնը, բայց նա չի համակրում մանաւանդ գործունէութեան տակտիկան: Նա դատաւարաւորում է սիօնիստներին, որ միայն մեծ մեծ ծրագիրներ են կազմում առանց անմիջական օգնութեան հասցնելու թշուառ հրէաներին, որ ամբողջ յոյսը դրել են սպառաշի վրայ և ոգևորում են կարմիր գազանի—սուլթան Համիդի հետ բանակցութիւններ վարելով, բանակցութիւններ, որոնք, երեւի, վերջ է վերջոյ ոչ մի դրական հետևանք ունենալու չեն:

Ահա այդ հրէայ երիտասարդներից շատերն էին, որ միացան հայ, ռուս, բուլղար վրացի ուսանողների հետ և բողոքեցին սիօնիստների վերջին համագումարի ժամանակ՝ Համիդին չնորհաւորական հեռագիր ուղարկելու առթիւ:

Ե. Թ.

ՁՕ) ՌԺԿ. Վ. ԱՐՇՐՈՒՆՆԻ, «Թոփախ կամ Բարակացու», պատկերազարդ, Թիֆլիս, 1902 թ., դինն է 10 կ.:

Յարգելի հեղինակը մեծ եռանդով շարունակում է հրատարակել իր «Բժշկի Զրոյցները»: Նրա գրելու ձեւի մասին արդէն քանիցս առիթ ենք ունեցել խօսելու: Այս չորրորդ «զրոյցը» վերաբերում է այն սարսափելի դաւին, որից գլխաւորապէս զոհւում են մարդիկ իրանց ծաղիկ հասակում:

«Եթէ հաշուելու լինենք 20-ից մինչև 40 տարեկան հասակում մեռնողների թիւը, ասում է հեղինակը, կը տեսնենք, որ երեք մեռնողներից մէկը բարակացուից է»:

Ահա այդ գրքի բովանդակութիւնը.

Թոքախտաւորը.—Թոքախտը վարակիչ հիւանդութիւն է.—Թոքախտի թոյնը.—Զգոյշ եղէք թոքախտաւորի թքից, որովհետեւ նրա մէջն է թոյնը.—Սփքեր ևն հիւանդանում թոքախտով.—Ի՞նչպէս պէտք է պահպանուել վարակումից.—Ի՞նչպէս պէտք է պահել թոքախտաւոր ծնողների դաւակներին.—Ի՞նչպէս պէտք է խնամել հիւանդին.—Թոքախտը բուժելի հիւանդութիւն է.—Թոքախտաւորները կարող են ամուսնանալ, թէ ոչ:

Այս համառօտ վերնադիրներից պարզ է, որ հարցը ամեն կողմից լուսաբանուած է և ընթերցողը կարող է ոչ միայն

լիակատար դադարիար կազմել այդ զարհուրելի ցաւի մասին, այլ և իրան պահպանել վարակումներէց: Յանկալի է որ այս գրքոյկը տարածուի և դպրոցներում:

Լ. Ս.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Ա. Ա. Պոյիթոյ, Ներոն, ողբերգութիւն 5 արար., թարգմ. Հ. Ա. Ղազարեան, Վենետիկ, 1902, գինն է 75 սանտիմ:
- 2) Բժ. Ա. Բուզուզեան. Խնչ է կաշուի հիւանդութիւնը, Պետերբուրգ, 1902, գինն է 15 կոպ.:
- 3) » » » Վերաբուժական հիւանդութիւն և օպերացիա, Պետերբուրգ, 1902, գինն է 5 կոպ.:
- 4) Գր. Բազ.-Աղաջանեան, բանաստեղծութիւններ, Բագու, 1902, գինն է 10 կոպ.:
- 5) Լէօ, Յովսէփ Կաթողիկոս Արղութեան, չորս պատկերով, Թիֆլիս, 1902, գինն է 60 կոպ.:
- 6) Ա. քահանայ Բագրատունի, Հոգեւոր ընթրիք, Վաղարշապատ, 1901, գինն է 40 կոպ.:
- 7) Ե. Թ. Հաուպոման, (պատկերով) հրատ. Յ. Աղամեանի, Պետերբուրգ, 1902, գինն է 15 կոպ.:
- 8) Սուքիաս Պարոնեան. Քաղկեդոնեան ժողով և Հայաստանեայց եկեղեցի, Պարիս, 1902 թ. գինն է 2,50 ֆր.:
- 9) Н. Адонцъ, „Начальная исторія Арменіа“ у Себеоса въ ея отношеніяхъ къ трудамъ Моисея Хоренскаго и Фауста Византійскаго (оттискъ изъ VIII тома, № 1 и 2 „Византійскаго Временника“, 1901 г.)
- 10) А. К. Дживелеговъ, Средневѣковыя города въ западной Европѣ, С.-Петербургъ, 1902, цѣна 1 руб.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԳՆԱՅԻ ԵՒ ԱՍԻԱՅԻ ՆԱԻԹԱԳՈՐԾԸ

Արդէն մի քանի ամիս է, որ անգլիական «The Shell Transport and Trading Co» ընկ.-թիւնը շրջաբերականներ է ուղարկել՝ Հեռաւոր արեւելքի հետ հաղորդակցութիւն ունեցող բոլոր շոգենաւային ընկ.-երին, առաջարկելով նրանց ձեռնառու պայմանով հեղուկ վառելիք: Այդ գրութիչ առաջարկութիւնից օգտուել ցանկացողը պիտի պարտաւորուի իր շոգենաւաններից մի քանիսը (թիւր պիտի սրոշուի) յարմարեցնել հեղուկ վառելիքի, և որոշ ժամանակից պիտի սկսի այդ վառելիքը բանայնել, որ իրաւունք չը պիտի ունենայ մի ուրիշից գնելու մինչև պայմանաժամի լրանալը: Իսկ «Շելը» (վերոյիշեալ անգլիական ընկ.-ը) պարտաւորուում է հեղուկ վառելիք տալ պայմանաւորուած նաւերին համաշխարհային համարեա բոլոր նշանաւոր նաւահանգստներում (այստեղ նա 15 նաւահանգիստ է թւում և վառելիքի զինը նշանակում նրանցից ամեն մէկում) և այդ վառելիքը նաւը խփել, մի ժամում ոչ պակաս քան 100 տոնն (տոննը 61 պուղ է): «Շելը» խոստանում է այդ տասնհինգ նաւահանգստին (ուր նա արդէն կազմակերպել է գործը) աւելալանել էլի նոր նաւահանգիստներ, ուր գործը կազմակերպուելու վրայ է, կամ պիտի կալմակերպուի մօտ ապագայում:

Անկասկած մի հսկայական գործ է այս, որ ձեռնարկում է «Շելը»: Հեշտ բան չէ երկրագնդիս ամեն կողմը վառելիքի ահագին պահեստներ ունենալ և մի այնպիսի կազմակերպութիւն, որ ամեն մի նաւահանգիստը մտնող նաւ մի-երկու ժամում իր վառելիքը ստանայ ու ճանապարհուի... Սակայն անկարելի բան չէ այդ մի ընկերութեան համար, որ արդէն 40-ից աւելի շոգենաւանի մասնաւորապէս նաւթ տեղափոխելու համար յարմարեցրած և զեռ 14-ն էլ նորերս է պատուիրել:

Քարածուխը իրրի վառելիք շատ ու շատ անյարմարու-

Թիւններ ունի և երբէք չի կարող մրցել հեղուկ վառելիքի (նաւթի կամ մազուտի) հետ, եթէ վերջինիս գները շատ չեն թանգ: Եթէ մինչև օրս շողենաւերը գեռ քարածուխ ևն գործ ածում, դրա միակ պատճառն այն է, որ չէր դուրս գալիս մէկը, որ մի սրոշ ժամանակով (ասենք հէնց 3 տարով) պարտաւորուէր հայթայթել այդ վառելիքը, ինչպէս այսօր «Շեխ» է պարտաւորում: Քարածուխը ահագին տեղ է բռնում շողենաւերում, նրա բեռնելը բաւականին ժամանակ է պահանջում, քարածուխ այրելիս ամեն մի շողենաւ մինչև 150—160 մարդ է պահում մասնաւորապէս վառելիք տանող, բերող, այրող, մոխիրը դուրս տուող և այն, որոնց գործն էլ մի տաժանելի բան է: Իսկ հեղուկ վառելիքը տեղ շատ քիչ է բռնում, բեռնելը հեշտ ու արագ է, մոխիր չի տալիս և նաւի վրայ՝ փոխանակ 150—160 մարդու բաւական է 24—25 մարդ, որոնց գործը անհամեմատ հեշտ ու մաքուր էլ է:

Անգրկովկասեան Երկաթուղին մինչև չը վերջայնի Բագուից-Բաթում անընդհատ կերտինանցքը (керосинопрободь)—անկարող է վառելիք փոխադրել Սև ծովի ափերը, Միակ ելքը առ այժմ Պետրովսկ-Նովորոսիյսկ ճանապարհն է մնում (մինչև Պետրովսկ է ժամուրթեան պատճառով, ի հարկէ ծովով պիտի տանել վառելիքը): Բագուի նաւթարդինա բերողների «Ժողովի» Պետերբուրգի ներկայացուցիչ Ն. Ն. Իզնարը «Торг. Пром. Газ.» լրագրի ապրիլի համարներում մանրամասն հաշիւներով ապացուցում է, որ նոյն իսկ այդ անքնական-երկար ու թանգ ճանապարհով, նոյն իսկ այժմեան թանգ ճանապարհածախսով, մեր նաւթը կարող է մինչև Պորտ-Սայիզ և Ալէքսանդրեա մրցել քարածուխի հետ: Բայց պէտք է յուսալ, ասում է Իզնարը, որ Վլադիկավկազեան Երկաթուղու վարչութիւնը նոյն իսկ 2—2½ կոպ. պուղին կը պակսեցնի քրահը, եթէ վառելիքի արտահանութեան գործը կազմակերպուի Բագում:

Առ այժմ Իզնարը առաջարկում է մի փոքրիկ փորձ անել. մինչև անընդհատ Բագու-Բաթում կերտինանցքի բացուելը, գործը սահմանափակել երեք կէտում. Նովորոսիյսկ, Ալէքսանդրեա, Պետերբուրգ: Հեղուկ վառելիքը Պետերբուրգ պիտի ուղարկուի, ի հարկէ, կասպից ծովով, Վոլգայով մինչև Ռէրբինսկ կամ Եարոսլավլ և ապա Երկաթուղով—Պետերբուրգ, ուր պուղը 30 կոպ. կը նստի, եթէ Բագում 10 կոպ. հաշուենք նաւթը: Այսքանս բաւական է, Իզնարի ասելով, որ Ռուսաց շողենաւային ընկ.-ը պայմանաւորուի տարին մինչև 7 միլիոն պուղ վառելիք վերցնել, եթէ նախօրոք

որոշ գին նշանակուի ամեն մի նաւահանգստի համար, ինչպէս «Շեղն» է անում: Ապագայում, երբ արդէն կերտսխնանցքը պատրաստ կը լինի և Սնդրկովկասեան երկաթուղին հնարաւորութիւն կ'ունենայ մեծ քանակութեամբ վառելիք փոխադրել ձեռնառ զնով Բաթում, կարելի կը լինի գործը լայնացնել:

Այս բոլորը, ի հարկէ, հնարաւոր է միայն ընդհանուր, հաւաքական ուժերով: Կազմակերպութիւն է հարկաւոր մի այդպիսի հսկայական նախագիծ իրագործելու համար... Իսկ մեր նաւթագործները ամեն մի գործ կռիւովի սայլի օրն են գցում, որ իր տեղն է մնացել մինչև օրս, որովհետև կարապը երկինքն է թռչում, ձուկը դէպ ծովը է քաշում, իսկ խնցղետինը յետյետ է գնում...

Նաւթագործների վերջին ժողովը միաձայն վճռեց, որ պէտք է կազմակերպել կերտսխնի արտահանութեան գործը, կոնսուլիդէտի ձիրաններից ազատուելու համար, սակայն մինչև օրս խօսքից գործի դեռ չենք անցել... Քիչ չէ խօսուել ամբարների անհրաժեշտութեան մասին: Վերջերս նոյն իսկ յոյս կար կարևոր փոխառնութիւնը երկրագործութեան մինիստրութիւնից ստանալ (նաւթագործների դրաւականներից), սակայն, երբ խնդիրքը արդէն պատրաստ էր, Նորէլի և Կասպեան-Սի ծովեան ընկ. (Ռոտշիլդ) ներկայացուցիչները հրաժարուեցան ստորագրելուց... որովհետև իրանք ահագին ամբարներ ունեն արդէն և նաւթը շատանալուն պէս հաւաքում են իրանց ուղած էժան զներով, որ ի հարկէ, անկարելի կը դառնայ, երբ ուրիշ ամբարներ էլ շինուեն Բազուի շրջակայքում:

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

† Բողոքատ վ. Փաւաքալեան.—Վեղարատը իղէալիստներ.—Մենք չը զիտենք օգտուել եղած ոչմերից.—Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների նախապատրաստութիւններ.—Մնկախութիւն պահպանելու դժուարութիւնը.—Սրբունական հողատրամիւններ ձեռք բերելու նոր կանոններ.—Մի խորհուրդ մեր երիտասարդներին.—Մխիթարական երեսօթ մեր հասարակական կեանքում:

Պ ա շ տ օ ն ա կ ա ն . հ ա ղ ո Ր Ղ ա գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր .

Որոշ հանգամանքների պատճառով հայերիս մէջ, մասնաւանդ առաջ, շատ իղէալիստ երիտասարդներ՝ ժողովրդին ծառայելու նպատակով կուսակրօնի սքեմ էին հազնուում: Հէնց ուսանայելիս կեանքից յայտնի են Սորէն Սանփանէի, Վահան Բաստամեանի, Լեւոն Սօջայեանի և, միայն մի քանի շաբաթ առաջ (մայիսի 12-ին) Բագուում վախճանուած, Բագրատ Փաւաքալեանի օրինակները:

Մեր թէ կեանքը և թէ ինքը այն դասակարգը, որի անդամն էին դառնում այս վեղարատը իղէալիստները, շատ շուտ դրանց առաջն էին դնում ամեն տեսակ խոչընդոտներ: Մեր եկեղեցական կազմակերպութիւնը ոչ մի դիւրութիւն չէր տալիս այդ ոգեւորուած գործիչներին. ընդհակառակը, կղերական նեղարտութիւնը և անշարժութիւնը ամեն ջանք էին գործ դնում սառցնելու դրանց ջերմ ոգեւորութիւնը, չբացնելու դրանց խիզախ էներգիան: Զարմանալի չէ եթէ այդպիսի անպիտան միջնավայրի երկարատեւ ազդեցութիւնը յաճախ վախկատութեան չափ դուշուոր էր դարձնում նախկին անվեհեր աշխարհական երիտասարդին կամ, ընկճելով ու հիասթափեցնելով, վաղաժամ գերեզման էր իջեցնում նրան:

Դէպի կուսակրօնութիւնը տանող հոսանքը վերջերում արդէն կորցրեց մեզանում իր գաղափարականութիւնը և դառաւ շատերի համար միայն մի դիւրին ճանապարհ՝ իշխանութիւն և ապահով դիրք ձեռք բերելու համար: Գաղափարական երիտասարգու-

Թիւնը, մանաւանդ ուս-թրքական պատերազմից յետոյ, իր ուշքը սկսեց գարձնել Թիւրքաց Հայաստանի վրայ: Սկսուեց մի նոր շարժումս Այդ վերջին շարժման առաջին ներկայացուցիչներին մէկն էլ Բագրատ վարդապետ Թաւաքալեանն էր, որ իբրև աշխարհական՝ Ալէքսանդր Թաւաքալեան կամ Զաքի անունով էր յայտնի երիտասարդ շրջաններում:

Գիւղական ուսուցչի համեստ գերով սկսեց դերբենդցի այդ երիտասարդը իր գործունէութիւնը Վասպուրականում: Պտտելով Հայաստանի զանազան գաւառներում նա տեղն ու տեղը ծանօթացաւ թիւրքահայ ժողովրդի գրութեան հետ, միաժամանակ դալով այն եզրակացութեան, որ իր ժողովրդասիրական նպատակներին հասնելու համար աւելի յարմար է զլինի վեղար ծածկել: Եւ նա 1889 թ., Ալաշկերտի Ս. Յովհաննու վանքում, վարդապետ է ձեռնադրուում: Մի քանի ժամանակից յետոյ՝ ստիպուած լինելով վերագտնալ Կովկաս, նա չէր կարողանում հաշտուել փափուկ բարձերի մէջ բազմած զԱՅՏԻ—գործունէութեան հետ, ուստի ուրախութեամբ յանձն առաւ 1891 թ. գնալ թիւրք-պարսկական սահմանագլխում, վայրենի բնութեան մէջ գտնուող և աւազակաբարոյ քիւրդ հրոսակներով պաշարուած, մի աւերակ ու ամայի վանքում հաստատել իր գործունէութիւնը: Եւ, արգարև, կարճ միջոցում գարեբից ի վեր աւերակ Դերեկի վանքը վերակենդանութիւն ստացաւ և դառաւ ճամբորդների համար զօրավիգ և ապաստան: Բայց երկարատև չկաւ աւերակների միջից կանգնած այդ վանքի գոյութիւնը, և դրա պատճառը, մասամբ, և Ատրպատականի առաջնորդարանի ապիկարութիւնն էր... «Դերեկի հերոսը» 1893 թ. վերադարձաւ Էջմիածին լի յոյսերով, որ կ'իրագործի իր բաղձանքները, կը վերադառնայ կրկին Սալմաստ. բայց այնուհետև նա այլ ևս չը տեսաւ սահմանի միւս կողմը և ստիպուած եղաւ աւելի խաղաղ գործունէութեամբ բաւականանալ: Բոլորիս յայտնի է թէ իբրև Ալեքսանդրօպօլի և Գանձակի յաջորդ ինչ մեծ համակրանք գտաւ Բագրատ վարդապետը այդ տեղերի հայ ժողովրդի սրտում:

Աւելի աննշան էր նրա գերը Թիֆլիսում, ուր նա սկսել էր իրան չափազանց զգոյշ պահել, նոյն իսկ երբեմն համակերպել առաջնորդի մի քանի պահանջներին: Այնուհետև ընտրուելով Էջմիածնի սինօզի անդամ, նա միջոց չունեցաւ յոյց տալ իր ընդունակութիւնները այդ ասպարէզում և վախճանուեց դեռ 50 տարեկան հասակին չը հասած, արդէն յուսախաբութեան և թախիծի դրոշմը կրելով իր խոշոր զիմազծի վրայ: Իր ոյժերի մեծագոյն մասը վերջերում թաւ կորցրեց կօնսիստօրիա

կան չնչին գործերի վրայ, էջմփածինը չիմացաւ ինչպէս հարկն է օգտուել այդպիսի հաղուագիւա գործիչից:

Ասեմք էջմփածինը այդ կողմից բացառութիւն չէ կազմում հայկական կեանքում. նա միայն աւելի տիպիկական ձեւով է արտայայտում մեր այդ բնորոշ գիծը: Մենք, առհասարակ, չենք գնահատում, չենք շահագործում մեր ոյժերը ինչպէս հարկն է. մենք վատնում ենք եղած ոյժերը, թէև չենք կարող պարծենալ զրանց առանձին առատութեամբ: Մենք հետացնում ենք ասպարիզից, ջլատում ենք մեր ոյժերը, չորացնում ենք ու թունաւորում զրանց անձնուէր ոգևորութեան աղբիւրը: Մենք գրաւելու փոխարէն հետացնում ենք հասարակական ասպարէզ դիմող ոյժերին:

Համոզուելու համար մեր ասածների մէջ, եթէ կամիք, դիտէք մեր դպրոցական, թատրոնական, գրական և եկեղեցական-վարչական կարգերը:

Այդպէս, օրինակ, հայ ուսուցիչը միշտ գողում է իր ապագայի համար. նա չը գիտէ միւս տարի լինելու է ինքը թէ դէն է չարաուսուլու դպրոցից, առանց այլ և այլութեան, լոկ սրտ-նրա քմահաճութեամբ: Ամառնային տօթերին ինտրիգները, խոտովութիւնները մեր դպրոցական կեանքում հասնում են իրանց դադարեցնելու: Էջմփածին և թեմական դպրոցների վարչութիւնների մէջ հեռագիրն ու պոստը անվերջ գանգատներ, ինտրիգներ, հակասական կարգադրութիւններ է որ տանում ու բերում են: Այդպիսի իրարանցման մէջ անցնում է ամառը, վրայ է հասնում աշունը, և միայն սարսափելի կազ ու կոտից յետոյ է սկսում մեզանում իւրաքանչիւր ուսումնական տարին... Այդ պայմաններում դժուար է գրաւել լաւ պատրաստուած ոյժեր մեր դպրոցական ասպարէզի համար:

Նոյն անորոշութիւնը և իրարանցումն է տիրում և մեր ղերաստանական աշխարհում: Թիֆլիսի և Բագուի թատրոնական կոմիտէաները մինչև այժմ չեն կարողանում միանալ և մի խելացի կազմակերպութիւն տալ թատրոնական գործին, համախմբել լաւագոյն մեր ոյժերը: Զանազան մանր-մունր, անձնական բժախնդրութիւններ, նախանձ, ինտրիգներ ջլատում են եղած ոյժերը և, բաժան-բաժան անելով մեր ղերաստանական խումբը, ցրում են նրա բեկորները զանազան քաղաքներում...

Աւելի մխիթարական չէ գրութիւնը մեր գրական, եկեղեցական-վարչական ասպարէզներում... Կարծես հայը հայի հետ անկարող է միասին գործ կատարել, մինչդեռ օտարների հետ շփուելիս նա գիտէ խելացի կազմակերպուել որոշ գործ կատարելու համար: Այդպէս, օրինակ, Թիֆլիսում լինում են ապա-

գայ քաղաքային ընտրութիւնների համար նախապատրաստական ժողովներ, ուր հայը վրայու և ուստի հետ միասին ոչ միայն հանդիստ կերպով ընտրողական ցուցակներ է կազմում, այլ և ապագայ գործունէութեան պրօգրամներ պատրաստում...

Անցեալ տարուայ մեր մի տեսութեան մէջ (№ 4) մենք արդէն ասիթ ենք ունեցել պարզել մեր տեսակէտը քաղաքային ինքնավարութեան գործերի մասին: Անշուշտ ցանկալի է որ ապագայ դուման կազմուած լինի այնպիսի ընդունակ և շիտակ ձայնաւորներէց, որոնք միակերպ հոգ տանեն Թիֆլիսի բոլոր բնակիչների շահերի մասին, ամենեւին խտրութիւն չը դնելով գրանց ծագման և կրօնի մէջ. ցանկալի է որ քաղաքային ինքնավարութեան միջոցները հաւասարապէս գործադրուեն քաղաքի բոլոր մասերի, առաւելապէս ծայրերի, կարիքների վրայ. ցանկալի է աւելի մեծ չափերով հոգալ լուսաւորութեան և առողջապահական հաստատութիւնների մասին. ցանկալի է քաղաքային տնտեսութեան շրանազան ճիւղերը մասնաւոր անհատներից վերցնել և պցել մունիցիպալիտետի ձեռքը, կայն կայն: Սակայն, չը պէտք է մոռանալ, որ ամեն պրօգրամ պահանջում է աւելի մեծ նորոք իրագործելու, քան գրուելու համար: Շատ ցանկութիւններ միայն այն ժամանակ կարող են իրագործուել, երբ քաղաքային ընտրողական իրաւունքը չը սահմանափակուի միայն տնտեսքերի և խոշոր բուրժուազիայի ձեռքում: Չքաւոր, սեփականազուրկ դասակարգերը, ինչպէս յայտնի է, այժմ ձայն չունեն քաղաքային ինքնավարութեան մէջ. հետեւապէս շատ հարցեր, որոնք մօտ են գրանց սրտին, չեն էլ շօշափուում նոյն իսկ այդ պրօգրամներում. ուրեմն, էլ ինչ սպասել գրանց իրագործման մասին... Այդպէս է, օրինակ, էժան բնակարանների հարցը, որ կարելի էր նոյնպէս աջողութեամբ կազմակերպել, օգտուելով արեւմտեան Եւրոպայի փորձերից, ինչ աջողութեամբ, օրինակ, իրագործուեց քաղաքային մասշտաբական խանութների բացումը...

Քաղաքիս չքաւոր դասակարգերը, սեփական ներկայացուցիչներ չունենալով, իրանց դատի պաշտպանութիւնը յանձնում են աւելի երիտասարդ ինտելիգենտ-բուրժուաներին... Յամենայն դէպս չի կարելի չողջունել ընտրողական նախապատրաստութեան այն նոր ձեւը, որ այժմ է գործադրուում. նախկին «Իլօրցօվեան կուսակցութեան» գաղտնապահ սիստեմով՝ քաղաքի աէր էին դառնում մի քանի խոշոր գրամատէրեր իրանց հլու գործակիցներով և ազգականներով: Նոր եղանակով աւելի հնարաւորութիւն ունեն մուտք գործել քաղաքային խորհրդարանի մէջ կապիտալիստներից անկախ ոյժեր, որոնք, գուցէ, աւելի ընդու-

նակ լինեն մտածել ամբողջ քաղաքի բարեկարգութեան, քաղաքացիների մեծագոյն մասի՝ բուն ժողովրդի կարիքների մասին, քան մեր բանկային փոքրիկ նապօլէտները իրանց համախոհներով...

Չը կարծէք թէ հեշտ բան է ներկայ տնտեսական պայմաններում անհատական անկախութիւն պահպանելը, և volens nolens մեր ինտելիգենտը քաւում է փողի իշխաններին, որովհետև առանց դրամի և վարկի ոչ միայն զիւղացին, արհեստաւորը, այլ և գիւղատնտեսը, ինժեները անկարող է սեփական գործ սկսել: Այդ է պատճառը, որ մեր գիւղատնտեսների և ինժեներների մեծագոյն մասը ծառայութեան են մտնում և չեն սկսում սեփական ձեռնարկութիւններ: Կախումը հասկանալի է...

Մանաւանդ մեր գիւղատնտեսները պէտք ունեն վարկի՝ սեփական գործ սկսելու համար: Այլապէս շատ դժուար է որ դրանք ինչպէս հարկն է օգտուեն, օրինակ, հէնց այն նոր Բարձրագոյն հրամանից, որով հաստատուում են մասնաւոր անձանց արջունական հողերից կտորներ տալու կանոնները—այն նպատակով որ բուսցնուեն այդ բաժինների վրայ խաղողի, պտղատու և այլ ծառերի այգիներ:

Այդ հողաբաժինների տարածութիւնը չը պէտք անցնի 25 գեւեսաւտինից: Հողաբաժինները տրւում են բացառապէս ուսասնապատակներին՝ հինգ տարի ժամանակամիջոցում կապալով օգտուելու պայմանով և յետոյ ի սեփականութիւն գնելու իրաւունքով: Հրատարակած կանոնները, որոնց մանրամասնութիւնների հետ ընթերցողը կարող է ծանօթանալ լրագրներից, բաւական զիւրութիւններ են տալիս հողաբաժիններ վերցնողներին: Չը նայած դրան, ի հարկէ, մեր գիւղացիների մեծագոյն մասը անկարող կը լինի օգտուել այդ կարգադրութիւնից, թէ իրանց ազիտութեան և թէ վարկագործի լինելու պատճառով:

Աւելի հեշտ կը լինէր այդ անել մեր այն ինտելիգենտ կամ կիսաինտելիգենտ երիտասարդներին, որոնք քիչ միչ փող ունեն իրանց ձեռքում: Եւ դրանց մեծամասնութեան համար անկասկած աւելի լաւ կը լինի դառնալ սեփական մի կտոր հողի անկախ տէր, քան շարունակ ծառայել Բալախանի կամ Բագուէ «խօղէյիներին», որոնք առանց տատանուելու ամենրոպէ պատրաստ կը լինեն փողոց շարակ դրանց, հէնց որ «կրիզիսի» ուրուականը երեւայ...

Իսկապէս, արժէ որ լուրջ մտածեն մեր երիտասարդները վերև յիշած կանոններից օգտուելու մասին:

Ամեն բան լաւ է համեմատական չափով վերցնել. այդ չափով ապագայում քսան և հինգ դեռեատին սեփական այգի ունենալու հուսանկարը, յամենայն դէպս, աւելի գրաւիչ է իր սնկախութեամբ, քան զանազան առեւտրական գրասենեակներում մշտապէս ուրիշից կախուած կեանք մաշելը...

Վատ չէ, առհասարակ, համեմատական չափերով քննել հասարակական երեւոյթները. այդ եղանակով մարդ աւելի հեշտութեամբ է նկատում մխիթարական կողմեր, քան բացարձակ չափերի գիմելով: Այդ համեմատական չափերով նոյն իսկ մեր ինքնաճանաչութեան մէջ առաջագիմութեան նշոյլներ կարելի է նկատել... Համեմատեցէք, օրինակ, «Մուրճի» այս համարում Ստ. Նազարեանցի նամակներում դուրս բերուած «անասնացած» հայութիւնը այժմեան հայութեան հետ, և կը տեսնէք որ անշարժ չէ մնացել մեր ազգը այս 40 տարիների ընթացքում, թէև, անշուշտ, միայն կրիսոյի քայլերով է շարժուել նա իր սեղից:

Ղ. Աղայեանի յօրեղեանը լաւ ապացոյց է մեր այդ առաջագիմութեան: Հայը չը բաւականացաւ լոկ վերոն խօսքերով, շատ անգամ չափազանցած դրուատումների տարափով, այլ և իմացաւ շօշափելի ձեւով արտայայտել իր կրախտագիտութիւնը դէպի ծերունի գործիչը... Եւ եթէ մեր չուրջը նայելու լինենք, կը տեսնենք որ վերջին տասնամեակում կարելի է արդէն յիշել մի քանի գէղքեր, երբ այս կամ այն մեր հաստատութիւնը կենսաթոշակ է սահմանել իր մի երկու բազմամեայ աշխատաւորներին: Ճիշտ է, դեռ ես շատ սակաւաթիւ են այդ ուշադրութեան արժանացած գործիչները և մի մեծ բան չէ ինքն ըստ ինքեան այդ կենսաթոշակների չափը (400—600 ուրբլի), բայց երեւոյթը, իր սաղմային գրութեան մէջ անգամ, յամենայն դէպս, նոր է և կարող է աւելի եւ գորգանալ...

Անհրաժեշտ է, ի հարկէ, ամենախիստ մտրակումներով միշտ ցոյց տալ հասարակութեան իր հիւանդոտ, այլանդակ և յետամնաց կողմերը, սակայն, որպէս զի այդ հասարակութիւնը չը կորցնի կատարելագործուելու յոյսը, լաւ է նրան ցոյց տալ երբեմն և նրա կեանքի մխիթարական կողմերը, նրա առաջագիմութեան նոյն իսկ չնչին առհաւատչեաները: Թող այդ լինի մի խրախոյս, որ ընդունակ է, ինքնավստահութիւն ներշնչելով, արագացնել նրա առաջագիմութիւնը...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մայիսի 25.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правит. Вѣсти.»-ում տպուած է հետեւեալը.—Այս մայիսի 5-ին Վիլնո քաղաքում, Երեկոյեան ժամը 12-ին, տեղական նահանգապետ գեներալ-լէյտենանտ Ֆոն-Վալի վրայ յարձակում է գործուած, սկիւպայտնի է, քաղաղական միտումով: Գեներալը թեթեւ կերպով վիրաւորուած է բեւօլվերի երկու հարուածով ձեռքից և ոտից: Չարագործը կալանաւորուած է յանցանքի տեղում և և կը յանձնուի զինուորական դատի:

Մամուլի գործերի զլխաւոր վարչութեան պետ, իշխան Ն. Վ. Շախօվսկոյի փոխարէն, նշանակուեց Մոսկուայի համալսարանի նախկին պրոֆէսոր և բեկտօր, լուսաւորութեան միջնատրի նախկին օգնական, սենատօր պաղտնի խորհրդական Ն. Ա. Զվէրեւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կուրան անկախ.—Մարտինիկայի աղէտը.—Ֆրանս-ուսական զինակցութեան նոր ցոյց.—Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը.—Նոր կառավարութիւնը.—Ելզաս-Լօթարինգում բացառիկ օրէնքների վերացումը.—Պուստիայի քաղաքականութիւնը լեհական պատճեններում.—Համեմատութիւն Անգլիայի հետ.—Խաղաղութեան դաշն անգլիացիների և բօէրների մէջ.—Անգլիայի և Ռուսաստանի մրցումը մերձաւոր Արեւելքում.—Պարսից Շահի նոր ճանապարհորդութիւնը և Պարսկաստանի բարենորոգման հարցը:

Կիլիկիայի կաթողիկոսական հարցը.—Սանասարեան դպրոցը:

Նոր Աշխարհի Մեծ Անտիլեան կղզիների ազոհարչ Կուրան, որի բնակիչների հերոսական մաքսառումը սպանական բռնութեան դէմ մի քանի տարի առաջ աշխարհ էր զարմացնում, ինչպէս յայտնի է, ազատուեց եանկիների միջամտութեամբ և սկզբում կառավարուում էր այդ ազատարարների ձեռքով: Միայնակ-Նահանգների կառավարութիւնը այժմ արդէն իր միասիան կատարած է համարում. ամերիկական զինուորական նահանգապետ Վուդը յանձնեց կղզու կառավարութիւնը և ու լ ա կ ա ն հ ա ն Ր ա պ ե տ ու թ ե ա ն ն ախագահին և իր զօրքերի հետ հեռացաւ խաղաղած կղզուց...

Եթէ մի ժամանակ տմարդ չարագործութիւններից առաջացած աղէտն էր դարձրել աշխարհի ուշադրութիւնը Անտիլեան կղզիների վրայ, այժմ բնութեան ահեղ մի երեւոյթ է բեւեռել մարդկութեան ուշքը դէպի այդ կղզիների այն խումբը, որ կոչուում է Փոքր Անտիլեան, որոնցից է և ֆրանսիապատկան Մարտինիկան:

Մի դժբախտ առաւօտ (ապրիլի 26) այդ կղզու Սեն-Պիեռ քաղաքը, հին Սօդոմ և Գօմօրի նման, կործանուեց երկհրից թափուող կրակից: Այդ կղզու վրայ գտնուող ձաղատ լեռոք (Montagne Pelée), որ յիսուն տարի մարած էր երեւում իբրև հրաբուլիս, դուրս ժայթքեց իր միջից հրանիւթ լուս, կրակի նման շիկաղած քարերի մի տարափ և ամպանման մոխիր, որոնք

միանգամայն ջնջեցին երկրի երեսից գարերի ընթացքում մըրջիւնային ջանասիրութեամբ կառուցուած քաղաքը իր բազմաթիւ բնակիչներով:

Այդ գաղութի մայրը, Պրանսիան, ամեն կողմից ստացաւ խոր ցաւակցութիւն և զրամական նուիրատուութիւններ աղէտից լեւասուածների օգտին: Բայց կեանքը սուղի և ուրախութեան անվերջ մի շղթայ է, ուստի Մարտինիկայի աղէտը չէր կարող նսեմացնել այն ցնձալի սղեւորութիւնը, որով կենսուրախ ֆրանսիական ազգը հետեւում էր իր ներկայացուցիչ Լուրէին, Կրօնշտատում, Յարսիօէ Սէլոյում և Պետերբուրգում ցոյց տուած փառաւոր ընդունելութեան մանրամասնութիւններին: Ի լուր աշխարհի երկու բարեկամ ազգերը, յանձին նիկոլայ II Միտպետի և Հանրապետութեան նախագահ Լուրէի, յայտնում էին ֆրանս-ռուսական զինակցութեան օրէցօր աճող և ամրացող կապերը:

Մինչդեռ Պրանսիայի ներկայացուցիչը փոխադարձ այցելութեան էր գնացել ուսաց Կայսրին, Պարիզում վերջնականապէս պարզում էր պատգամաւորների ընտրութեան վերջնական արտայայտութիւնը: Այդ ընտրութիւնները հաստատեցին, որ արմատական հայեացքները այժմ գերիշխում են Պրանսիայում: Ընտրուած 589 պատգամաւորներից միայն 41 հոգի են պատկանում անպայման յետադիմական կուսակցութեան կամ միպետականներին: «Matin» հաշւում է որ պատգամաւորներից 388-ը կառավարութեան կողմնակից հանրապետականներ են: Եւ թէ դա լաւատեսութիւն չէ այդ երկում է նրանից, որ մայիսի 19-ին պատգամաւորների ժողովի նախագահ ընտրուեց 326 ձայնով արմատական կուսակցութեան պարագլուխներից մէկը — Լէօն Բուրժուան...:

Չը նայած որ Պրանսիան ընտրութիւններով մեծամասնութիւն տուաւ Վալդեկ-Րուսսօյի կաբինետին, այդ վերջինը, երեք տարուայ ետանդուն զործունէութիւնից յետոյ, համարեց իր զրած նպատակներին հասած — երկիրը Դրէյֆուսեան և հակահանրապետական կուսակցութիւնների յարուցած յուզումներից և խոտվութիւններից հանգստացած էր — ուստի և, պատճառ բերելով յոգնածութիւնը, հրաժարուեց շարունակել կառավարութեան ղեկավարութիւնը:

Լուրէն յանձնեց նոր կաբինետի կազմութիւնը դարձեալ արմատականի, սենատոր Կոմբին, որ չը նայած իր մօտ 67 տարեկան հասակին բաւական ետանդուն մասնակցութիւն էր ցոյց տուել Վալդեկ-Րուսսօյի հակակղերական ձեռնարկութիւններին, Կոմբը ի միջի այլոց, նախագահում էր Մերակոյաի այն յանձնա-

ժողովին, որին յանձնուած էր միաբանութիւնների օրինագծի քննութիւնը:

Հետագիրներից յայտնի է, որ նախագահ Կոմքը նոր կարիւնետում լինելու է և ներքին գործերի ու զաւանութիւնների մինիստր, իսկ կարիւնետի միւս անդամներն են. Վալլէ—արդարագատութեան, Գեկլասէ—արտաքին գործերի, Անդրէ—գինուտրական, Մարէժուլ—ծովային, Շօմի—լուսաւորութեան, Պելլըտան—հասարակական աշխատանքների, Գումէրգ—գաղութների, Տրույօ—առևտրի, Մուժօ—երկրաբանութեան և Բուվիէ—ֆինանսների:

Այդպէս ահա երեսուն տարի առաջ պարտուած ու անպատուած միապետական Ֆրանսիան այսօր կարող է պարծենալ որ հանրապետական իրէպնները արդէն խոր արմատներ են դնել իր ժողորդի սրտում. հետեւանքը փառաւոր է թէկուզ այդ եղած լինի էլլաս-Լօթարինգիան կորցնելու գնով...

Երբեմն Ֆրանսիայի մի մաս եղած էլլաս-Լօթարինգիան էլ այնքան արդէն հաշտուած է երեսում իր խորթ մօր հետ, որ արժանի է գտնուել նրա չնորքին. Վիլհելմ II-ը այսուհետև աւելորդ է համարում սրահպանել կայսրութեան այդ գաւառում բացառիկ օրէնքների տիրապետութիւնը, սուտի վերայնում է զիկատաուրան էլլաս-Լօթարինգիայից և հաստատում է նրա մէջ գերմանական ընդհանուր օրինական կարգ կանոն. այլ ևս ոչ մի էլլաս-Լօթարինգիի չի կարող աքսորուել, ոչ մի լրագիր չի կարող գաղարկեցնուել, ոչ ոք չի կարող պատժուել լոկ ազմինիստարացայի բարեհայեցողութեամբ: Քաղաքացիական իրաւունքները վերականգնուած են Գերմանիայի և այդ մասում:

Այդպէս բարեհաճ վարուելով իր կայսրութեան արեմտեան սահմանի ազգայնակութեան հետ, Վիլհելմը չը քաշուեց հրապարակապէս, Մարիներուրգում, իր յասումը և սպանալիքը յայտնել արեմտեան սահմանի իր հպատակների, այսինքն լեհացիների հասցէին: Պրուսիան, Բիւմարիկից սկսած, ոչ մի միջոց չի խնայիլ գերմանացնելու համար լեհական գաւառները. բայց բաւական չը համարուեց հասարակական զարոցներից լեհական լեզուն հալածելը և 200 միլիօն գումարի յատկացումը լեհական կալուածները գերմանական դարձնելու նպատակով: Այժմ, երբ լեհը յոյց տուեց զօրեղ ինքնապաշտպանութիւն, սկսուած է գայի և գառան պատմութիւնը. ճնշողը գանգաւում է ճնշուողից: Պրուսական կառավարութիւնը ծրագրում է նշանակել նոր 250 միլիօն մարկ՝ գերմանական գաղթական հոսանքով ողողելու համար լեհական գաւառները:

Գերմանացման այդ քաղաքականութեան անարգար կողմը

լաւ ընտրուում են Ե. Րիխտէրի հետեւեալ խօսքերը. «Ով կանգնած է իրաւունքի և օրինականութեան կողմը, նա չը պէտք է այնպէս երեւակայի, որ իբրեւ թէ լեհերը—աւելի պակաս լիա-իրաւունք քաղաքացիներ են, քան գերմանացիները. սահմանադրութիւնը ասում է, թէ քաղաքացիները, առանց կրօնի և լեզուի խտրութեան, հաւասարապէս օգտուում են բոլոր հաստատութիւններից, բոլոր իրաւունքներից և ազատութիւնից, մինչդեռ կառավարութիւնը այդ օրինադրով, ինչպէս և զրա նախորդներով 1886 և 1898 թ.թ., սարբերութիւն է գնում լեհերի և գերմանացիների մէջ: Հարկ վճարողների փողերով, հետեւապէս նաև լեհերի փողով, հիմնուում է մի ֆօնդ՝ ձեռք բերելու հող, որից կարող են օգտուել միայն գերմանացիները: Այդ թէ ըստ էութեան և թէ ըստ ձեւի—սահմանադրութեան հիմնական յօդուածի խախտում է...»

Ի հարկէ, այդ բոլոր արտահարգ կարգադրութիւնները միայն ուժեղացնում են լեհ ազգի ընդդիմադրական ոյժը. չը նայած Պրուսիայի յատկացրած միլիօններին, լեհական մասնաւոր հողային բանկը մեծ աջողութեամբ մրցում էր այդ ֆօնդի հետ ու ինքը գնում լեհական դաւառներում վաճառուող հողերը. և այսօր ոչ միայն չի կրճատուել լեհական հողատիրութիւնը, այլ նոյն իսկ ընդարձակուել է Լեհաստանում...»

Այդ բոլորից յետոյ, ինչպէս կեղծիք և փարիսեյութիւն չը համարել գերմանական շովինիստների հարայ հրոցները Անգլիայի քաղաքականութեան դէմ բօէրների նկատմամբ: Կատարեալ իրաւունք ունէր Չեմբերլէնը համեմատական չափեր գնել Անգլիայի և եւրոպական միւս մեծ պետութիւնների գործ դրած միջոցների մէջ... Այդ հաստատուում է նոյն իսկ խաղաղութեան վերջին դաշինքի յօդուածներով. թշնամու քաջութիւնը և անվեհերութիւնը դրուատել և վեհանձնութիւն ցոյց տալ դէպի պարտուած ժողովուրդը, զրկելով նրան միայն քաղաքական անկախութիւնից, բայց ոչ քաղաքացիական լիակատար իրաւունքներից—այդ ներկայումս միայն Անգլիան գիտէ անել...»

Բօէրների պարագլուխները, մայիսի 15-ին, հաւաքուելով, Կիչների հաւանութեամբ, Ֆերէյնիզինգում, միասին խորհրդակցեցին Անգլիայի առաջարկած պայմանների մասին և ապա ուղարկեցին իրանց ներկայացուցիչներին Պրետորիա, Կիչների մօտ: Մայիսի 31-ին (ն. տ.) խաղաղութեան պայմանագիրը կնքուեց երկու ազգերի ներկայացուցիչների ստորագրութիւններով: Անգլիայի կողմից Կիչներն էր և Միլնէրը, Օրանժեան նախկին հանրապետութեան կողմից՝ Շաէյն, Դեվեա, Օլիվէ և

Հերցոգ, իսկ Տրանսվաալի կողմից—Շալկ Բուրգեր, Բէյց, Լուի Բօթա և Դելարէյ:

Ահա $2^{1/2}$ տարուայ սարսափելի մաքառումից յետոյ անգլո-սաքս և հօլլանդական ռասների կնքած պայմանագրի զըխաւոր կէտերը.

Պատերազմի դաշտում գտնուող բօէրները անյապաղ վայր են դնում զէնքը և յանձնում են իրանց ձեռքում և թէ իրանց հսկողութեան տակ եղած բոլոր թնդանօթերը, ուրիշ զէնքեր և պատերազմական պաշարք, և հրաժարւում են այլ ևս ընդդիմադրել Էդուարդ VII թագաւորի իշխանութեան, որին ընդունում են իրանց օրինաւոր վեհապետ:

Տրանսվաալի և Օրանժեան հանրապետութեան սահմաններից դուրս պատերազմի դաշտում գտնուող բոլոր բօէրները, և բոլոր բօէր գերիները, որոնք այժմ գտնւում են Հարաւային Աֆրիկայի սահմաններից դուրս, յետ են բերուելու, հէնց որ յայտնեն թէ ընդունում են Էդուարդ թագաւորի հպատակութիւնը, և հէնց որ կը ձարուեն և կը ապահովուեն դրանց փոխազրելու և պահելու միջոցները:

Անձնատուր եղածների կամ յօժարակամ վերադարձած բօէրների դէմ չի յարուցուելու ոչ քաղաքական, ոչ քրէական մեղադրանք պատերազմին մասնակցելու համար: Այս յօդուածը չի տարածւում մի քանի վարմունքների վրայ, որոնք հակասում են պատերազմական սովորութիւններին. դրանք քննուելու են զինուորական դատարանով, իսկոյն պատերազմը դադարելուց յետոյ:

Հօլլանդական լեզուն կը դասուանդուի Տրանսվաալի և Օրանժեան հասարակական գպրոցներում և կը թոյլատրուի դատարաններում:

Զինուորական կառավարչութիւնը ըստ կարելոյն կարճ ժամանակամիջոցում կը փոխուի քաղաքացիականով, և, հէնց որ հանգամանքները ներեն, կը մտցնուեն ներկայացուցչական հաստատութիւններ, որոնք տանում են դէպի ինքնավարութիւն:

Պատերազմական ծախքերը վճարելու համար առանձին հարկ չի դնուելու Տրանսվաալի և Օրանժեան գաղութի անշարժ կայքերի վրայ:

Անգլիական կառավարութիւնը կը յտակացնի անվերադարձ 3 միլիօն ֆունտ ստերլինգ՝ նպաստ տալու համար այն բօէրներին, որոնք իրանց սեփական ոյժերով անկարող են վեժականդնել իրանց անստեղծութիւնը:

Բացի այդ 3 միլիօնից, անգլիական կառավարութիւնը

պատրաստ է նոյն նպատակով տալ անտոկոս ավանս, իբրև փոխառութիւն երկու տարով:

Կապի և Նատալի ապստամբների (աֆրիկանդերների) բոլոր պարագլուխները դատի են մասնուելու և պատժի ենթարկուելու, սակայն ոչ մի ղէպքում մահուան պատժի: Իսկ մնացած ապստամբները, որոնք կուում էին Անգլիայի ղէմ իբրև հասարակ մարտնչողներ, կը պատժուեն նրանով որ կը զրկուեն ընտրողական իրաւունքից, այսինքն՝ իրաւունք չեն ունենալ իրանց ներկայացուցիչ ընտրել պարլամենտում և ընտրուել նրա մէջ: Նմանապէս դրանք զրկուում են իրաւունքից՝ ստանալ վերին յիշած օժանդակութիւնից և փոխառութիւնից՝ իրանց տնտեսութիւնը վերականգնելու համար:

Հասկանալի է, թէ ինչպիսի անկեղծ յնձուլթեամբ, սկսած թագաւորից մինչև վերջին բանուոր անգլիացին, ընդունեցին խաղաղութիւն կապելու լուրը: Անգլիան այդպիսով ազատուեց տարսափելի վտանգից, որ ինչպէս մի կօչմար 2¹/₂ տարի կաշկանդել էր նրա ներքին կեանքը և թուլացրել նրա ձայնը միջազգային հարցերում:

Անգլիայի այդ գրութիւնը, ի միջի այլոց, ձեւնաու էր գերմանական ազդեցութեան տարածման Թիւրքիայում և ուսասկանին՝ Պարսկաստանում: Ռուսաստանը, չը բաւականանալով իր զերիչխող գրութիւնից հիւսիսային Պարսկաստանում, փորձեր արեց երևալ և Պարսից Մոցում, առտարական կապեր սկըսել նաև հարաւային Պարսկաստանում, ուր մինչև այժմ զերիչխում էր Անգլիան: Ինականաբար, Թէհրանի կառավարութիւնը չի կարող, անգլիացիների «խաթեր» թուլացնել իր բարեկամական կապերը իր հիւսիսային մեծ և հզօր հարեւանի հետ: Պարսկաստանը զանուում է ամբողջապէս ուսասկան հմայքի տակ և ներքնապէս այնքան թոյլ է և յետամնայ, որ լոկ կրաւորական դեր կարող է կատարել միջազգային կեանքում:

Թէ նախկին վեհապետ Նասրէդդինի և թէ նրա յաջորդի, այժմեան Շահի, ճանապարհորդութիւնները եւրոպայում շատ քիչ բան կարող են փոխել պարսկական ներքին կայսութեան մէջ: Պարսկաստանը չունի այն մտաւորական տարրը, ինտելիգենցիան, որը կարողանար լուրջ վերանորոգումներ ածողեցնել իր հայրենիքում: Պարսկական միջավայրում հայերը, չը նայած որ թէ այժմեան Շահը և թէ նրա հայրը ստանձին համաիրանք և հովանաւորութիւն են յոյց տուել ղէպի իրանց այդ հպատակները դեռ շատ հետու են եւրոպական քաղաքակրթութեան ներկայացուցիչներ լինելուց: Իսկապէս, մինչև օրս շատ ուղորակի

առաջադիմութիւն են արել և, յամենայն դէպս, այնքան աչքաբայ և զարգացած չեն որ առաջնորդեն կոյրին . .

Այդ պէտք է խոստովանուել:

Շատ ուժեղ աշխարհական իշխանութիւն և լայն եւրոպական հայեացքներէ ու հզօր կամքի տէր, մի խօսքով, à la Մեծն Պետրոս վերանորոգիչ են պէտք Պարսկաստանին, որ նա դուրս զայ թէօկրատիական կապանքներից, զարթնի դարեւոր քնից և սկսի նոր կեանքով ապրել: Ինչքան և լցուած լինի մեր սիրտը բարի զգացումներով դէպի Պարսկաստանի ապագան, այնուամենայնիւ, ի նկատի ունենալով նրա մէջ դեր կատարող տարրերը, մտաւորականութեան բացակայութիւնը, գժբախտաբար, լուստես լինել և հաւատալ նրա ինքնուրոյն վերածնութեան—դժուարանում ենք...

Լ. Ս.

Մայիսի 27.

Կարնոյ Գաւառական ընդհանուր ժողովն Ապրիլ 24-ին երկար և կարեւոր նիստ մ'ունեցաւ: Դադրած ժողովականներուն տեղ նորեր ընտրելու որոշումէն և տարեկան ելմտացոյցին քննութեան յետաձգումէն ետքը, գիւղացի երկու ժողովականներ առաջարկեցին Կարնոյ երեք վանքերու հասոյթներն յատկացնել վանքի մը մէջ զպրոցի հաստատման, ուր գիւղերուն համար վարժապետ և քահանայ պատրաստուին: Որոշուեցաւ Գաւառային վարչութեան Խառն ժողովէն ստանալ ձիշտ տեղեկութիւն մը նոյն վանքերուն հասոյթներուն վրայ: Նստին մեծազոյն մասը, 7 ժամ, զոհուեցաւ Սանասարեան Վարժարանի խնդրոյն: Այս պատճառաւ Քաղաքական ժողովն հրաժարած էր, բայց անընդունելի դատուեցաւ Պ. Կարապետ Եզեանց կարնեցիներն «ապերախտ» կոչած ըլլալով, բողոքելու համար գրութեան մը պատրաստութիւնն յանձնուած էր մասնախմբի մը, որ փոխանակ մէկի, երեք տեսակ գրութիւն բերաւ: Յետ երկար վիճարանութեան ընդունուեցաւ Աստուրեան Յովհ. էֆ. ի պատրաստածը, որ երկարօրէն կ'իթուէ թէ կարնեցիք նրչափ բարեկամութեամբ, համակրութեամբ և թոյլուութեամբ վարուած են Սանասարեան Հաստատութեան հետ, և կ'եզրակացնէ խնդրելով որ վարժարանը Կարինէն չփոխադրուի: Արդէն Սանասարեանց վարձու տրուած չէնքն այնքան վնասուած է երկրաչարժէն որ բազում ծախքի կ'կարօտի անոր նորոգութիւնը, և Կարնոյ Առաջնորդարանի սնտուկն այնքան ուրիշ ծախքեր

Մայիս, 1902.

13

ունի որ կ'երեւի թէ հոն աւելի շահաւոր կ'զատուի որ ժամանակ մը ևս Սանասարեանք մեան՝ նորոգելով յիշեալ շէնքը:

Սանասարեան Վարժարանը Խարբերդ պիտի փոխադրուի թէ ոչ, օրուան զլիաւոր խնդիրն այս է տակաւին: Խնամակալութիւնը վերջնական որոշումը պիտի տայ այսօր վաղը, լսելէ ետքը նաև Աբուլեան էֆ.ն, որ եկած է փաստաբանելու Վարժարանին կարին մնալը: Ինչպէս մեր երէկի լուրերէն երևեցաւ, կարնոյ Գաւառական ժողովն որոշած է խնդրել որ Վարժարանը մնայ կարին, որովհետև կարնեցիք կ'օգտուին անոր ներկայութենէն:—Անտարակոյս: Բայց ասիկա պատճառ մ'է որ կարին մնայ, երբ ուրիշ աւելի ընդհանուր պատճառներ կ'պահանջեն որ այլուր փոխադրուի: Եթէ այսօր կարնոյ քաղաքի ազգայինք կ'օգտուին նիւթապէս, դրամապէս, կամ ուսումնապէս, վաղն ալ Խարբերդի քաղաքին ազգայինք կրնան օգտուիլ նոյն չափ և նոյն ձևերով: Դիտելին այն միայն կրնայ ըլլալ թէ իբրև վերջնական սեղ հաստատութեան կարին թէ Խարբերդ զգալի առաւելութիւն կ'ընծայէ, և իբրև բազմահայ թեմերու կեդրոն, կարին թէ Խարբերդ մեծագոյն իրաւունք ունի: Այս կրկին նկատուեալ ալ Խարբերդի առաւել յարմարութիւնն անվիճելի է: Բայց որովհետև մեր մէջ խնդիրները զոն ուրեք սկզբունքի տեսակետով կ'որոշուին, որովհետև մեր մէջ խնդիրներուն զոս իմացականը միշտ երկրորդական կամ զիպուածական տեղ մը միայն կ'ընէ, մեք միշտ կ'կասկածինք թէ տեղափոխութեան այս բոլոր պաշտօնական խօսուըտուողները լոկ ձեռնանութիւն կամ ժամալաճառութիւն են, և թէ Սանասարեան Տեսուչներն և իրենց բազմաթիւ կարնեցի խնամիք, պարագայք և այլք գոհ սրտով կրնան յեղյեղել ընդ միշտ թէ պապա պուրսա եերլի սիր: Արգէն, այս պահուս, կարնեցիք ստորագրած պիտի ըլլան իրենց մեղայագիրն առ Պ. կարապետ Եղեանց՝ երբէք իրենց մտքէն անցուցած ըլլալուն համար թէ Սանասարեան Վարժարանն այլուր կրնայ փոխադրուիլ և Ազգին մէկ կայուածն իրեն վերագարձուիլ: Տեսուչներն ալ, իբրև իրենց բանը գործը զիտցող մարգիկ, հարկաւ կ'նախադասեն մնալ կարին, փոխանակ տեղափոխութեան մը ծախքերուն և յոգնութիւններուն, այնպիսի տեղափոխութեան մը մանաւանդ որուն ծայրը մեծագոյն աշխատութիւն և յոգնութիւն կայ քան կարնոյ մէջ: զի Խարբերդի մէջ մրցիլ պէտք է Ամերիկացոց Եփրատ Քոլէճին և Լատին Քոլէճին դէմ, մինչ կարնոյ մէջ միակ ձեռ մրցումի դօր կ'ձանձնան Սանասարեան Տեսուչները կարնոյ պատուական ցուրտ ձմրան մէջ չմուշկի հիանալի, ոգեորիչ մըր-

ցումն է Վարժարանին հարժայտտակ և լոկ տախարակ սառնարանին վրայ...

Կիլիկիոյ Կաթողիկոսական նոր ընտրութիւնն յետաձգուած կ'մնայ մինչև որ Պատրիարքարանի պատուիրակն որոշուի. որովհետև, տեղւոյն Գաւառական Խառն Ժողովը խնդրած է Ազգ. Պատրիարքարանէն Աշոտ Եսայիին Սամսոն մնալը, եկեղեցին վերաշինութեան գործին համար: Առաջին օրէն յարմարագոյն ընտրելին նկատուած էր Պատրիարքական Փոխանորդ Սրբազանը, բայց իր նեղացուցիչ հիւանդութիւնն որ մերթ կ'նորոգուի՝ արգելք էր իր Պալէն հետանալուն: Կ'երկի թէ Ազգ. Վարչութիւնը պատուիրակի ուրիշ ընտրութիւն մի պիտի ընէ, և այն ատեն Ատանայի մէջ օրինական գործողութիւններն որոշուած ձևով պիտի կրկնուին, և այս անգամ աւելի դիւրին պիտի ըլլան, որովհետև Կիլիկիոյ Թեմականներուն կողմէ նոր պատգամաւորներու ընտրութեան պէտք չէ մնայած, նախորդ պատգամաւորներն իրենց պաշտօնին մէջ անխտիր ըլլալով:

«Բիւզանդիոն»

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

Թէհրան, մայիսի 22.

Նախորդ թղթակցութեամբ *) գրած էի որ Թէհրանը ունի միայն մէկ ազգային ուսումնարան՝ Հայկազեան երկսեռ դպրոցը: Արդ, Հայկազեան ուսումնարանը երկդասեան է և ոչ հինգ-դասեան, իսկ աղջկանցը՝ միադասեան: Դրամի և, հետեւաբար, ուսուցչի պակասութիւնը արգելեց անցեալ դպրոցական տարիի սկիզբին՝ երրորդ տղայոց դասարան մը ստեղծել: Աշակերտներ կային, բայց դրամ չկար: Ուստի, առաջինները հեռացան վարժարանէն և Alliance Française ի և ուրիշ օտար դպրոցներու աշակերտեցան:

Թէհրանի համար Հայկազեան վարժարանը բաւական չէ. Հասանապատի թաղին մէջ ևս անհրաժեշտ է ազգային դպրոց մը ունենալ, 150-ի չափ հայ աղջիկներն ու տղաքները օտար ուսումնարաններէն սպասելու համար:

Արդ Թէհրանցիները որոշած են այդ վարժարանի շինութիւնը աւարտելով բանալ այս տարի: Բայց ինչպէս պիտի ընեն. իրենց առաջին ուսումնարանը պահելու դժուարութիւններ ունին, երկրորդին ինչպէս պիտի հասնին:

Այս պատճառով իսկ պէտք է ուշադրութիւն դարձնել Թէհրանին՝ որուն հայ բնակչութիւնը երթալով բազմանալու վրայ է:

Թէհրանը այսօր ունի 360 տուն բնակիչ: Վերջին տասը տարուան մէջ 50 տուն աւելցած է:

Եթէ գրեւն անմիջական օգնութիւն չըլլայ, Հասանապատի դպրոցին բայումը այս տարի ևս չենք տեսներ:

Ահա այս տրտում հաւանականութեան առջև է, որ Թէհրանի «Խնամակալուհիները» վճռեցին պաշտօնապէս, լրագրական կոչով՝ զիմել հայ բարերարներու:

Այդ կոչը ժամանակին կ'երեւնայ:

*) Ցե'ս «Մուրճ» № 1.

Եթէ կրթական գործի ընդհ. կազմակերպութեան սպասեն թէհրանցիները, ապահովաբար, սերունդ մըն ալ պիտի կորցնեն, որովհետեւ արդէն, սերունդ մը վնասուած է գալրոցական գործի անկանոնութեան չնորհիւ: Այս վերջին տասը տարիներու միջոցին դպրոցէ ելող երիտասարդներու մէջ, հազիւ մէկ երկու հոգի կարող էք գտնել որ երկու տող անսխալ իր մայրենի լեզուն գրել պիտնայ: Այս երեւոյթը ամօթաբեր է ոչ միայն թէհրանցիներուն՝ այլ բոլոր հայութեան համար: Մտքի լայն զարգացումի վրայ չէ խօսքս, այլ պարզ գրել կարողալու. Թէհրանի ուսումնարանէն ինչո՞ւ ընդհ. զարգացում ունեցող երիտասարդներ չեն ելեր. չեմ ասում, ինչո՞ւ վերջապէս չենք կրցեր այնքան կանոնաւոր դպրոց մը ունենալ, որ հայ տղաքը պարզ հայերէն մը կարողանային սորվիլ, գէթ երկու տող անսխալ գրել:

Հօ, փառք Աստուծոյ, Թիւրքիոյ մէջ չենք որ հայ լեզուն հալածեն, մեր գալրոցները քար ու քանդ ընեն...

Ահաւասիկ այս բանն է որ մեզի համար ամօթ է:

ՏԻԳՐԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ա Շ Ի Ա Ր Հ Ի Ց

Ա Ն Վ Ն Ա Ս Ծ Խ Ա Խ Ո Տ

Մեր անցեալ յօղուածից ընթերցողները արդէն գիտեն, որ ծխախոտին վնասակար յատկութիւն տուող բանը, նրա մէջ գտնուող նիկոտին թոյնն է: Ուրեմն, եթէ կարելի լինի ծխախոտից անջատել այդ թոյնը, ծխախոտը վնասակար լինելուց դադարելու է:

Այժմ կարող եմ ծխողների աչքը լուսել, նրանց աւետելով, որ յետայսու կարող են ծխել առանց վնասուելու, որքան որ կամենան. որովհետեւ, մի կարգ քիմիական գործողութիւնների շնորհիւ յաջողուած է ծխախոտից անջատել, կամ աւելի ճիշտ ասած, չէզոքացնել նիկոտինը, և այսպէս անվնաս դարձնել ծխախոտը, առանց վնասելու նրա համն ու հոտին:

Նրանք, որոնք պատենութիւն ունեցել են դարմանել ծխախոտի վնասուած հիւանդներին, գիտեն թէ որքան դժուարին է ծխողը իր սիգառից զրկել: Բժիշկները իմանում են այն մասնաւոր տիրութիւնը՝ դիւրագրգռութիւն, անսխորթակութիւն, փորի պնդութիւն, որոնք առաջ են գալիս ծխախոտի միանպասից թողնելուց: Ուրեմն, շատ բնական է, որ աշխատէին ծխախոտը անվնաս դարձնելու մի միջոց գտնել: Դժբախտաբար, ծխախոտից նիկոտինը անջատելու բոլոր փորձերը ուրիշ անպատենութիւններ առաջ բերին, ծխախոտը այնքան անհամ անհոտ էր լինում, կամ մի այնպիսի անսխորթ համ էր ստանում, որ մինչև ցարդ շատ ծխողներ չունեցաւ. թէև այս կերպ պատրաստուած ծխախոտը բոլորովին անվնաս էր դառնում, բայց երբէք գոհացում չէր տալիս ծխողների արտրժակին, լստար նման մի բան էր լինում:

Վերջերս փորձելին կաֆէի տերևներից պատրաստել մի տեսակ ծխախոտ, բայց այդ պատրաստութիւնն էլ չէ կարող

գոհացում տալ ծխողների քմահաճոյքին, ծխախտախ անող բունել:

Այս անպատեհութիւնները նկատի ունենալով, Հալլի համալսարանին Պրոֆէսէօր Gerold մտածեց փոխանակ ծխախտախ նիկոտինը անջատելու, չէզոքացնել այն և անվնաս դարձնել ծխախտախ:

Իսկապէս, պրոֆէսօր Գէրօլդի պատրաստած ծխախտախ թունաւոր յատկութիւնից բոլորովին զերծ է և աւելի մեծ արժէք ունի, քան թէ նիկոտինից զուրկ կամ կաֆէի տերևներից պատրաստուած ծխախտախ: Անկասկած է, որ նիկոտինը չէզոքացրած Գէրօլդի ծխախտախ իր սիրողները պիտի ունենայ: Մեր կողմից աւելորդ կը լինէր ծխողներին խորհուրդ տալ Գէրօլդի ծխախտախի ծխելու. միայն կը բաւականանք Համբուրգում գումարուած դերմանացի բժիշկների կօնգրէսում՝ Բերլինից դօկտ. Ֆիւրստի (Fürst) արած խիստ շահագրգիռ հաղորդակցութիւնը ներկայացնել ընթերցողներին, համոզուած լինելով, որ այդ հաղորդակցութիւնը կարգալուց յետոյ, բոլոր ծխողները կը փնտուն նիկոտինը չէզոքացրած Գէրօլդի ծխախտախ և հասարակ ծխախտախ ծխելուց կը հրաժարուեն:

«Ծխախտախ տերևները գլոտորաթթուի (acide tannique) ջրով լուանում են, որը բոյսերի պարունակած ազդեցիկ աղերը (alcaloïde) մեկուսացնելու յատկութիւնն ունի, այնպէս, որ ցիկոտինը և բոյսի մէջ գտնուած ցնդող նիւթերը (essencis), ինչպէս ցիկոտինը (nicotianine) և այլն, չէզոքացուած և անվնաս են դառնում: Նկատելի է, որ ծխախտախ կրած այս փոփոխութիւնը, նրա ծխախտախ համը չի կորցնում: Ծխողներին հաճելի հոտը աւելացնելու համար, որը գլոտորից վնասուած է, իսկոյն ծխախտախ թաթախում են հասարակ զուբրակի (Origanum vulgare) բոյսով պատրաստուած խաշոյի (décoction) մէջ:

«Ներկայումս, Գերմանիայում, Ամերիկայում և Ռուսաստանում *) այս սիգարներից վաճառում են, որոնք, ինչպէս երևում է, շատ են գնահատուած ծխողների կողմից և բժիշկների կողմից մասնաւորապէս յանձնարարուած են:

«Այս խնդրում, ինչ որ մեզ աւելի պէտք է շահագրգռէ, այն է՝ թէ Գէրօլդի մէթոդով պատրաստուելուց յետոյ ծխախտախ իսկապէս դադարում է թունաւոր լինելուց: Այս մասին կարծում ենք, շահեկան կը լինի նշանակել Ֆիւրստ և Կօլլ բժիշկների կողմից մարզկանց և անասունների վրայ կատարուած փորձերը: 22-ից 24 տարեկան, առողջ կազմուածքով և

*) Հեռաքրքիր էր իմանալ գործարանների անունները՝ ձեռք բերելու համար անվնաս ծխախտախ: Ե. Բ.

ոչ արկղամուլ չափաւոր ծխողները հետեւեալ փորձերի են ենթարկուած: Նախապէս, Բաշի մասնաւոր գործիքով (sphygmanomètre de Basch) չափում էին բազիլերակի (artère radiale) ճնշումը, և Մարէյի գործիքով (spsygmographe) արձանագրում երակազարկը (pouls): Յետոյ, նրանց տալիս էին ծխելու սիգառներ, որոնք որ և է փոփոխութիւն չէին կրած, հետեւաբար իրանց մէջ պարունակում էին ազդեցիկ նիկոտինը: Նորից էին չափում երակային ճնշումը և վերստին արձանագրում երակազարկի հեաքերը: 24 ժամից յետոյ, որի միջոցում փորձի ենթարկուածները ծխելուց բոլորովին դադարում էին, նրանց տալիս էին ծխելու չէզոքացրած նիկոտինով սիգառներ (Գէրօլզի սիգառներ) և իսկոյն արձանագրում երակային ճնշումը և երակազարկի զիծը: Այս կարգի 50 փորձեր հետեւեալ արդիւնքները յոյց են տուած:—Չի պատրաստուած (ազդեցիկ նիկոտինով, սովորական) սիգառներից յետոյ երակային ճնշման պակասումը և երակազարկի տկարացումը հաստատում են:— Պատրաստուած (նիկոտինը չէզոքացրած, Գէրօլզի) սիգառներից յետոյ երակային ճնշումը և երակազարկը որ և է փոփոխութիւն չեն ընծայում: Այս մասին, № 1 (ծխելուց առաջ) և № 2 (Գէրօլզի սիգառներ ծխելուց յետոյ) արձանագրութիւնների բազմաթուութիւնը, որոնք բացարձակապէս նոյնաման են, շատ համոզող և հրահանգող է:

«Այս փորձերի եզրակացութիւնը բոլորովին նպաստաւոր է Գէրօլզի սիգառներին»:

«Փորձերի ենթարկուող անասունները նախապէս գորտեր եղած են, որոնց մորթի ներքեւ ներմուծում էին ծխախոտի տերեւներից պատրաստուած և թղթից անցկացրած թրջոցի (maceration) հեղուկը, յետոյ չէզոքացրած ծխախոտի տերեւներով պատրաստուած հեղուկը: 36—37 գրամ կշռող ուժեղ մի գորտի մորթի ներքեւ առաջին հեղուկից 5 հարիւրորդագրամ ներմուծելուց մի քանի վայրկեան յետոյ, նկատում էր մի անտրամադրութիւն և ծուլութիւն, և 20 րոպէ յետոյ մի կտտարեալ անզգայութիւն: Մէջքի վրայ շուռ արտած գորտը սրի է շարժում չէր կատարում և իր բնական զիբքը վերստանալու որ և է կամէութիւն յոյց չէր տալիս: Անդամներին ինչ զիբք որ տալիս էին, նոյն զիբքում մնում էին սառչած: Նման: Հազիւ մի ժամ յետոյ գորտը դանգազօրէն իր բնական կենդանութիւնը վերստանում էր: Երկրորդ հեղուկից նոյն չափով և նոյնաման պարագաներում մի գորտի ներմուծելով, հազիւ 10 րոպէ անող փոքր թուլութիւնից բացի ոչինչ չէր նկատուում, ոչ անտրամադրութիւն, ոչ անզգայութիւն: Կէս ժամից յետոյ ա-

նասունը վերստանում էր իր կենդանութիւնը: Սխալ մեկնութիւնների տեղի չը տալու համար, բոլոր գորտերը երկու օր թողնում էին հանգստանալ, և իսկոյն փորձերը կրկնում էին հակառակ կերպով, այսինքն, առաջին փորձում ազդեցիկ նիկոտին պարունակող հեղուկից ընդունող գորտերը, այս անգամ նիկոտինը չէզոքացրած հեղուկից էին ընդունում, և սրա հակառակը: Այս երկրորդ կարգի փորձերի արդիւնքները առաջին փորձերի արդիւնքների հետ համահման էին:

Նոյնպէս ճազարները ենթարկեցին շնչելու թէ ազդեցիկ նիկոտին պարունակող և թէ նիկոտինը չէզոքացրած ծխախոտի ծուխը, և հաստատեցին, որ այս անասունը ազդեցիկ նիկոտինի ծուխը տանել չէր կարողանում: Սրտի շարժումները անկասնոն և ընդհատ էին լինում, երակային ճնշումը պակասում էր և չնչառութիւնը դանդաղում: Ճազարը իր բնական վիճակը վերադառնալու համար 10 րոպէ էր հարկաւոր: Իսկ նիկոտինը չէզոքացրած ծխախոտի ծուխին ենթարկուող ճազարը հազիւ թէ անհանգստութիւն էր գգում: Սրտի բարախումների կողմից ոչ մի փոփոխութիւն: Միայն երակազարի և չնչառութեան մի թեթեւ թուլութիւն էր նշմարւում, բայց 3 րոպէում ամեն ինչ կարգի էր մտնում:

«Այս փորձերի արդիւնքները իսկապէս շատ շահագրգիռ են: Սակայն և այնպէս, այս սիգարետների գործնական օգուտը գնահատելու համար, հարկաւոր է կլինիքական փորձեր կատարել, այսինքն, այս սիգարետներից ծխել տալ այն մարդկանց, որոնք չափազանց ծխելուց նիկոտինով թունաւորուած են և հասարակ ծխախոտը երբէք չեն կարողանում ծխել»:

Ծխախոտի ահագին սպառումը և նրա չափազանց գործածութիւնից առաջացրած խանդարումների յաճախագէպ լինելը նկատի ունենալով, նիկոտինը չէզոքացրած ծխախոտի ինդիքը հանրային առողջութեան հետ այնքան սերտ կապ ունի, որ արժէ իսկապէս հիմնովին ուսումնասիրելու նեղութիւնը կրել:

Դոկտ. Բարդէ մեր թարգմանած այս յօդուածի մասին պատշաճօրէն մի քանի նկատողութիւններ է արած, որից քաղում ենք հետեւեալը.

«Պ. զոկտ. Հիրշբերգ իրաւունք ունի պրօֆէսէօր Գէրօլդի չէզոքացրած ծխախոտի վրայ ուշադրորթիւն հրաւիրելու, որովհետև, ինչպէս ինքն է ասում, խնդիրը ուսումնասիրելու համար արժէ այս մասին նեղութիւն կրել: Պ. Ֆիւրտտի կողմից վերջերս կատարուած ֆիզիօլօգիքական առաջին կարեւոր փորձերի արդիւնքը աչքի առաջ ունենալով, կարելի է նկատել, որ

խակապէս ծխախոտին տրուած այս պատրաստութիւնը մեծ ներգործութիւն է ունենում, որովհետեւ, ենթակայների արեան շրջառութիւնը կանոնաւորում է:

«Անցեալ տարի այս պատրաստութեան վրայ արդէն իմ ուշադրութիւնը հրաւիրուած էր պ. Հիրշբերգի կողմից և արձակուրդների միջոցում, ես ինքս ծխեցի երկու կամ երեք հարիւրի շափ Գէրօլդի մէթոդով պատրաստուած սիգարներից: Սովորական ծխախոտի նման երբէք ինձ չի հիւանդացրեց, չեմ կարող ասել, որ թոյնից զերծ այս սիգարը գործածելուց որ և է առաւելութիւն զգացի, բայց գոնէ կարողացայ հաստատել հետեւեալները, որոնք ունեն իրանց արժէքը:

«1—Այս սիգարները շատ հաճելի կերպով և կատարելապէս պահած են իրանց ծխախոտի համը, հազիւ թէ կարելի լինի հաստատել մի թեթեւ տարբերութիւն, երբոր նրանք բազդատուին չը պատրաստուած միևնոյն տեսակի սիգարների հետ: Այս բանը խակապէս նրանց տալիս է մի ահագին առաւելութիւն նիկոտինը բոլորովին հանուած ծխախոտների վրայ, որոնք, ինձ համար, երբէք չը պիտի համարձակիմ ծխելու:

«2—Յանկանալով այս ծխախոտի նուազացրած, այսինքն չէզոքացրած ներգործութեան մասին մի քանի փորձեր կատարել, մի օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6 սկսայ ծխել 15 սիգար, բաւական մեծ քանակութիւն: Արդ, այս բանը արեցի առանց վնասուելու, մինչև հետեւեալ օր, նոյնքան ժամանակամիջորում երբէք չը կարողացայ ըէժու իմ սովորական սիգարների 10-ից աւելին ծխել. նոյնպէս պէտք է նշանակեմ, որ շատ մեծ ահաճութիւնով կարողացայ տասներորդին համնել: Այս փորձը ինձ վճռական է երևում, եթէ աւելացնեմ, որ միևնոյն տեսակից և միևնոյն ծխախոտից, Բրէմի միևնոյն գործարանից, բայց չը պատրաստուած սիգարներով կատարածս փորձում, ինք սիգարից աւելի չէր կարելի գործածել, փորձի չորրորդ օրում:

«3—Վերջապէս, ահաւասիկ մի փորձ ևս, որ ես փորձել եմ. պատրաստուած Գէրօլդի մի սիգար տուեցի ծխելու 16 տարեկան մի պատանու, որը մի անգամ Ֆրանսական հասարակ կապօրալի մի սիգար ծխել փորձելով հիւանդացել էր: Այս կրիտասարգը որեւէ անախորժ ազգեցութիւն չի զգայ»:

Մեր յիշած բոլոր այս փորձերը շատ համոզիչ կերպով ապացուցանում են, որ վերջապէս գտնուած է ծխախոտը ան-

վնաս դարձնելու մեծ գաղտնիքը, և այլ ևս մարդկութիւնը չը պիտի տառապի ծխախոտի վնասակար հետևանքների պատճառով, միայն դաւում եմ, ընթերցողներին չը պիտի կարողանամ Գէրջլի ծխախոտ պատրաստող գործարանների անունները տալ, որպէս զի կարողանային ձեռք ձգել այդ անվնաս ծխախոտը:

ԴՈԿՏ. Կ. Յ. ՓԱՇՍՅԵԱՆ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգագրական հանդես, վեցերորդ տարի, 1901 թ., VII—VIII գրք.: Մի քիչ ուշ լոյս տեսնող այս հատորը աչքի է ընկնում իր ճոխ հրատարակութեամբ և բազմաթիւ նորր ստեղծութիւններով: Իբրև սխտեմատիկ կերպով կազմուած ազգագրական նկարագրութիւն ուշադրութիւն է զրատում մանաւանդ պ. Ծ. Լալայեանի «Թորչայուի զաւառ ուսումնասիրութիւնը: Հետաքրքրական է և պ. Ծ. Շահաղիյի «Նոր-Նախիջևան և Նոր-Նախիջևանցիք» գրուածքը: Ժողովրդական բանահիտութիւնը հարատւում է «Թըլուտա Պաւիթ» և «Թուտում Չալս վէպերով: Յերուած են և Ալաշկերտի ժողովրդական մի քանի երգեր ու առածներ: Քաջրեւոնին «Հայկական սովորութիւններ» չօղածում աւելիս է առատ նիւթ, կազմուած Անդրկովկասի մի քանի հայաբնակ զաւառների ժողովրդական վանազան սովորութիւններից և երգերից:

—
«Արտեմիս», ամսահանդէս ընտանեկան և գրական №№ 1 և 2:

Մառի Պէլլէրեանի խմբագրութեամբ հրատարակող այս նոր ամսագիրը, որ լոյս է տեսնում Պահիրձում, «20-րդ դարամատի նորածին աղջիկն է», որ երևան է գալիս իբրև հոյ կանանց օրգան—«Քսաներորդ դարամատի սկզբէն թող հայ կինն ալ իր բերան թերթն ունենայ, հո՛ն կառլի, հո՛ն վիճէ, հո՛ն երգէ, հո՛ն արտասուէ, և եթէ

շնորհք ունի՝ հո՛ն ցուցադրէ».— այսպէս է գրում առաջին համարի գըլխատոր չօղածագիրներից մէկը: Ողջունելով մի այսպիսի օրգանի հրատարակութիւնը՝ նրա կարևորութիւնը ակտոր կենք համարում փաստարանել: Յիրաւի «Արտեմիս», այս ԱՆՊրանիկ քոյր թերթին նշանակութիւնը շեշտուելու է ոչ միայն նրանով, որ դա պէտք է դառնայ մի օրգան կանանց խնդրի համար, այլ և մասնաւորապէս հայուհիների մտաւոր աշխատանքի և գրական զործունէութեան մի ասպարէզ: Պէտք է նկատել, որ մեր գրական անապատում տղամարդ գրողների հետ զուգընթաց առանձնապէս աչքի է ընկնում կին գրողների բացակայութիւնը. և սա նկատելի է մանաւանդ ուսահայ գրականութեան մէջ, որ բացի մէկից, մինչև այժմ չէ տուել և ոչ մի կին գրող, այն ինչ տանկահայերը այս կողմից սակի նախանձելի են. ապացոյց հէնց այն փաստը, որ կանանց օրգանի հիմնադիրը դարձեալ մի արևմտեան հայուհի է: Այսպիսի է անշուշտ, որ ուսահայ կանայք նոյնպէս կ'աջակցեն «Արտեմիսին» և չեն խնայի իրանց գրական օժանդակութիւնը:

«Արտեմիս» երկու համարներումն էլ առանձնապէս աչքի են ընկնում Մառիի և Ափի տաղանդող չօղածները: «Թէ ինչու այս թերթն այս չօղածում Մառին փորձում է հայ իգական սեռի համար զսեփական անկախ թերթ մը»

ունենալու անհրաժեշտութիւնը պարզելու Միւս կողմից ուղեգծում է այս նոր օրգանի նպատակը—«Արտեմիս պիտի հանդիսանայ խորհող և լուրջ մայրը, իմաստուն և պարտաճանաչ դատարարակը... պիտի զբաղի գաւառացի կնոջ ներկայ տխուր կեանքով... Արտեմիսի նպատակը պիտի ըլլայ պատրաստել օրիորդներ, ամուսիններ, մայրեր, որպէս զի օր մը հպարտութեամբ կարենայ ըսել— ահա ձեզ մայրեր, ճուէ՛ր ազգը», Ըստ երևոյթիւն այս նպատակովն է պաշտանաւորում հետեւեալ միտքը—«Մենք չը պիտի քարոզենք սանձարձակ ազատութիւն կնոջ, չէ թէ որովհետեւ կիներ իրատունք չունի զայդ ձեռք բերելու, այլ վասն զի մենք համոզուած ենք թէ՛ ընտանեկան չարկն է մասնատրապէս կնոջ վայել պատշաճ տեղը»։ «Արտեմիս» ֆէմինիստի էութիւնը հիմնովին չէ ձեւակերպում և ստահատրակ այս մեծ շարժումը շատ միակողմանի կերպով է հասկանում։ Այս կարևոր խնդրին մենք կը վերադառնանք մի այլ անգամ։ Աւելորդ չենք համարում ուշադրութիւն դարձնել առաջին համարում Բագուից գրուած մի նամակի վրայ, ուր պատմուած է մի «եղիւութիւն, իր իսկական գոչնով»—մի եղիւութիւն, որ իր զգուշի իրականութեամբ կովկասեան Բարիլոնի ապականուած բարքերից մի բնորոշ գիծ է ներկայացնում։

Բագուավէպ, մայիս—Հայերէն ամենահին պարբերական հրատարակութիւնն է «Բագուավէպը»։ այս մայիս ամսին նա մտաւ իր գոյութեան վաթսուամեայ շրջանը։ Խմբագրութիւնը այդ առիթով զրել է նախկին խմբագիրներէր պատկերները և համառօտ տեղեկութիւններ թէ նրանց և թէ գլխաւոր աշխատակիցներէր մասին։ Այսքան նոխարն՝ ձեռի և իրարակեցութեան դաղտ-

նիքը այն պիտի համարուի, որ Չեռեթիկի միաբանութիւնը գրական ոլմերի պակասութիւն երբէք չէ զգացել։ միշտ եղել են աշխատողներ, միշտ ամառգիրը նիւթ է ստացել գլխատրապէս միաբանութեան անդամներէր։ սերունդներ են լաջորդել իրար, անվարձ աշխատողներէր սերունդներ, որոնք պարտականութիւն են համարել տանել գործը առանց որ և է ակնկալութեան։ Այս դրութեան մէջ միայն տարաբան ծախսերը ստացուելը արդէն բաւական է եղել ամառգիրն յարատեւութիւն տալու համար։ Չենք կարող աւել թէ «Բագուավէպը» միշտ միանման կերպարանք է ունեցել իր երկարամեայ գոյութեան ընթացքում։ Ո՛չ, նա շատ փոփոխութիւններ է ենթարկուել թէ արտաքինի և թէ բովանդակութեան կազմից և հետաքրքիր ընթերցողը այս վաթսուն տարիներէր «Բագուավէպերի» վրայ կարող է տեսնել այն հոսանքները, որոնք մտնում էին միաբանութեան մէջ, այն աստիճանական փոփոխութիւնները, որոնք ենթարկում էին տարիներէր ընթացքում ։ Ղալարի վանքում գործող սերունդները, Յամենայն դէպս, նայելով «Բագուավէպի» հասակին դուր յրազրական տեսակէտից, չէ կարելի չը խոստովանել որ վաթսուն անընդհատ տարիներէր այդ հրատարակութիւնը պատիւ է բերում միաբանութեան, իբրև անխոնջ աշխատասիրութեան, յամառ և տոկուն յարատեւութեան մի նշան—«Բագուավէպը» սկսեց հրատարակուել 1843 թուականից, Սկիզբը դնողը Հ. Գարբիէլ վ. Այվազովսկին էր։ Խմբագրական յօդուածից երևում է թէ որքան մեծ դեր է կատարել այդ նշանատր հողեղբայրներ Մխիթարեան միաբանութեան մէջ։ Նա դրեց աշխարհաբար, ժողովրդական ընթերցանութեան ծառա-

յող ամասարի հիմքը և այնուհետև գործը շարունակեցին զլիաուրապէս նրա աշակերտները: Այդ աշակերտներից կ'անուանենք այստեղ հ. Ալվանին, որ մինչև իր կեանքի վերջը աշխատակցում էր «Բազմավէպի» Միա նշանաւոր աշակերտն էր անցեալ տարի վախճանուած Հ. Գարեգին Չարսնաւալիան. որ ասում է «Բազմավէպը»— յավշակութեամբ կը խօսէր իր զստարակին Հ. Ալվազովսկիի վրայ, կը զարմանար անոր արագահաս լայնաստարած գործունէութեան վրայ: Մասազրի արդիւնաւոր աշխատակիցներից մէկն էր և Հ Պապիկեան: «Յա Հ. Գարբիէլ Ալվազովսկիի ձեռնասուն աշակերտն էր, անկէ սովրած էր անձնուրացութեամբ նուիրագործուել հասարակութեան օգտին, ծառայութեան և յառաջադիմութեան. անկէ ընդունած էր եւրոպական լեզուաց կատարեալ հմտութիւն: Ասա ինչ է տուել Ալվազովսկին Մխիթարեան միաբանութեան: Աւպէտք է ասել որ Մխիթարեաները այսօր խոստովանում են նրա այդ ծառայութիւնները, թէև, ինչպէս յայտնի է, Ալվազովսկին, միաբանութիւնից հեռանալուց յետոյ, անինչայ մերկացումներով և խիստ քննադատութիւններով շատ վնասեց Մխիթարեաններին:— Յիշատակենք այստեղ և «Բազմավէպի» աչքի ընկնող աշխատակիցներից մէկին, որ Հ. Սուքրեանն է, մի երիտասարդ գիտնական:— Ճաշով իր անցեալի համառօտ հաշիւը, «Բազմավէպը» ասում է իր այսօրուայ բռնած զիրքի մասին. «Սոսնց մտլեռանդութեան» չարգել հին մատենագրութիւնը, տարածել զեղեցկագիտութիւնը, հաղորդել եւրոպական մտաւորական յառաջադիմութիւնը, անդրադառնալ մեր լաւ ու վատ բարքերու վրայ և յուզել մեռելութիւնը, հարուածել ազգակործան ոգիները, ճանչնալ և ճանչցնել

աշխատող արժանաւոր գործիչները, հաս այս է մեր նշանաբանը:» Աստարեակ աջողութիւն ենք ցանկանում մեր հնազոյն հայ ամսագրին — «Բազմավէպի» այս համարում «Հանդէս հանդիսից» բաժնի տեղ տեսնում ենք «Հանրապատում» անունով բաժինը, որ խօսում է զբքերի, նորութիւնների, տեղեկութիւնների մասին: Այդտեղ գրուած են Փօզօլի և Լեւոնաւոսովի պատկերները և համառօտ տեղեկութիւններ նրանց մասին: Տպուած է և Վիկտորիա Աղանուրի մի ոտանաւորի հայերէն թարգմանութիւնը: Վիկտորիա Աղանուր հայ տիկին է, բայց գրում է իտալերէն:

Համալսարան, սպրիլ-մայիս
 «Մուրճի» անցեալ համարներից մէկում մի նկատողութիւն էինք արել այս ամսագրում տպուած «Հայ կղերը և դիտութիւնը» յօդուածի մասին: Այժմ «Համալսարանը» մեզ պատասխանում է, և ի՞նչպէ՞տ Համաձայն չը լինելով յօդուածի հիմնական մտքին, մենք անուանել էինք նրան «Ղողթորթում խմբագրութեան երևակայութիւն»: Մենք ունէինք փաստը.— դառնիկ տառերով տպուած կոնդակն էր «Համալսարանը» մեզ անուանում է քինախնդիր խմբագրութիւն: Ինչո՞ւ «Ո՞չ ապաքէն Վեհափառ Հայրապետին նկատմամբ կովկասեան հրապարակագիրները ոմանց զղացումները հանրածանօթ են», ասում է նա: Ի՞նչ զղացումներ են զրանք: «Համալսարանը չը դիտէ, չէ էլ կարող իմանալ»: Չամաչելով իր վերնագրից, նա այնպիսի անգիտութիւն է ցոյց տալիս հանրածանօթ հարցերի և իրողութիւնների մէջ, որ մեզ չը պիտի դարմազնեն նրա վայրենի դատողութիւնները: Մենք ասում ենք կղերը անցեալում էլ նոր մտքերի թշնամի է եղել, «Համալսարանը» պատասխանում է.

«Անցեալ պատմութիւնը օրուան գաղափարներով չէ որ կը գատուի»: Հրաշալի գիւտ, եթէ Ասորեստանի բռնակալներից մէկը իր սեպածն արձանագրութեան մէջ պարծանքով պատմում է թէ ինչպէս ողջ-ողջ մաշկեց մարդկանց, ինչպէս մարդկացին գլուխներից շարաններ կաղմեց, ինչպէս լաճաբարեց չաղթուածների աղջիկներին և տղաներին բռնաբարեց, մենք չը պիտի ասենք, որ այդ թագուտը բարբարոս էր, որովհետեւ նրա գործերը մեր այժմեան գաղափարների տեսակէտից են բարբարոսութիւն, մինչդեռ սեպագիր արձանագրութիւնների ժամանակակից ասորեստանցու համար այդ գործերը առաքինութիւն էին: Չարամանալի է, որ Պարիզում հրատարակուող «Համալսարանը» չէ կարողանում իր այդ գիւտը հասկացնել եւրոպացի գիտնականներին և համոզել նրանց, որ ասորեստանեան արինամարաւ գաղանութիւնը չը պատասխարտուի իբրև բարբարոսութիւն: Եւ վերջապէս ներկայ դեպքում հարկատր էլ չէ, որ մենք զուտ պատռենք այն հարցի վրայ թէ որ գաղափարով պիտի նայենք հայ կղերի գործունէութեան վրայ—ներկայ օրերի», թէ անցեալի Խորենացու ուրը, Ղազար Փարբեցու թուղթը «օրուան գաղափարներ» չեն և սակայն, «Համալսարանը» պիտի կարմրէ, եթէ նայէ այդ կրակոտ բողոքներին, որոնք ուղղուած են կղերական անշարժութեան, հնամուտութեան և կարճամտութեան դէմ:

Բայց կա՞յ աւելի ապշեցուցիչ փաստ: Մենք խորհուրդ էինք տրուել կարգալ Սբուլեանցի, Նազարեանցի, Ոսկանի գրուածքները, հասկանալու համար, որ հայ կղերը գիտութեան թշնամի է եղել: «Համալսարանը» տւելորդ է համարել կատարել մեր խորհուրդը. ինչ կարիք կա՞յ նեղութիւն լանձն ասնե-

լու: Դրա փոխարէն նա վերցնում է Գրիգոր Արծրունուն, որովհետեւ նա «մեզի աւելի ժամանակակից է, ուստի իր տեսութիւնները աւելի մօտէն ուսումնասիրելու գիւրութիւնը ունեցած ենք»: Եւ ահա այդ «գիւրութեան» հետևանքը. «Գրիգոր Արծրունին չառաջդիմութեան պաշտարը ոչ թէ եկեղեցականութեան դէմ մղեց, այլ պահպանողականութեան, որուն ներկայացուցիչները աշխարհականներ էին ու են»: Այս խօսքերը ի՞նչ միանգամայն անզանալի կերպով ապացուցանում են, որ «Համալսարանի վարիչները Արծրունուց մի տող անգամ չեն կարդացած»:

Յիշենք այստեղ «Համալսարանի» մի աննման ազնիւ վարմունքն էլ: Մենք տեսել ենք, որ կղերը թշնամի է եղել նոր մտքին, նոր ուղղութեան Սրա դէմ «Համալսարանը» բերում է այսպիսի մի գոհար. «Ղուսերականութիւնը նոր ուղղութիւն մըն էր, հայ եկեղեցին պէ՛տք էր, որ գաշն գրկաբաց ընդունէր»: Եւ այս սողերը սպուած են մի ամասազրի մէջ, որ «Համալսարան» (Université) անունն է զրոշմում իր ճակատին, մինչդեռ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ Չամուրճեան պատուելի «Երեակը»: Միքայէլ Նալբանդեանցը իր «Երկու Տող» բրօշուպի մէջ գրել էր թէ հոգեորականութիւնը տղէտ է, ժամանակի պահանջներից չեա մնացած, թէ եկեղեցու վարչութեան մէջ օրէնք չը կա՞յ, թէ սըրբութիւնները վաճառում են, թէ ժողովրդի շահերը ոտնակոխ են լինում, թէ ուսումը հալածում է և սիմոնականութիւնը ծաղկում, — և Չամուրճեանը ասում էր թէ Նալբանդեանցը և նրա նմանները բողոքականներ են, հերետիկոսներ են, դարվինականներ և վճռեցականներ են: Այսօր նրա արձանատր ժառանգը այլ եւ Պոլսում չէ հրատարակում, այլ Պարիզում և,

գժբախտաբար, «Երեակ» չէ կոչում, այլ «Համալսարան»։ Միայն մեզանում կարելի է այդպէս անլանդակել անունների միտքը...

Մրանից աւելին հազիւ թէ կարելի լինի առել «Համալսարանին»։ Անգիրութիւնը, խակամտութիւնը երբէք չէ կարող հասկանալ իրերի իսկական դրութիւնը։ Եթէ հարցնենք այդպիսի «լուսաւորողներին» թէ ինչի՞ցն է, որ «կովկասեան հրապարակագիրներէն ոմանց զգացումները հանրածանօթ են», երեկ կը պատասխանեն թէ պատճառն այն է, որ այդ «ոմանք» ոսկի տառերով կոնդակներ տպելու բախար չունենալ «Համալսարանի» պէտ մի ամապիր շատ ընական է, որ դրանից դուրս մի այլ պատճառ չը գրտնէ։ Եւ ի՞նչ հարկաւոր է աւելի բարձր մասնումներ ունենալ, քանի որ կարելի է թեթեամտութեամբ, անգիրութեամբ վճռել ամեն մի ծանր հարց, ամեն մի երեւոյթ...

«Русская Мысль», մայիս։ Աւշապրտ է հանգուցեալ Ի. Ի. Սիլվէրէնցովի (որ գրում էր Եվանովիչ ծածկանուան տակ) մի մեծ յօդուածը՝ «Կովկասի գժբախտութիւն» վերնագրով, որի միայն մի մասն է դեռ տպուած։ «Ծանր սպաւորութիւն են թողնում կովկասեան կեանքի պատկերները—ստում է հանգուցեալ համակրելի գրողը։— Գիւղական ազգաբնակչութիւնը անօգնական է բնութեան՝ նրա համար վնասակար ոյժերի գէմ կոռելու մէջ։ շատ սեղերում նա ընտելինջ է դառնում մալեարիայից և ուրիշ հիւանդութիւններից, որոնք առաջ են գալիս սնունդի պակասաւորութիւնից. անբերրիութիւնները խրօնիկական են դառնում— վերջին տասն տարիներից հինգը անբերրի են—և սովից առաջացած մահերը հարիւրներով են հաշոււմ. Դազստանի լեռնականների մէջ

մշտական քաղցածութիւն է, որից էլ նրանք մեռնում են։ Կարկաւոր, մանաւանդ Կախիթում, ամեն տարի ոչնչացնում է խաղողի և հացի բերքի մի նշանաւոր մասը։ Մորեխը, հօտտենտօտեան մլուրը և ուրիշ միջատները ուտում են արտերը։ Երկրաշարժները ժամանակ առ ժամանակ քանդում են ամբողջ գիւղեր։ Բայց բնական ոչ-ժերից առելի Կովկասի ազգաբնակչութիւնը վնասում է սօցիալական անկարգաւորութիւնից։ Գիւղացիները քիչ հող ունեն, նրանց քանդում են վաշխատները, որովհետեւ բացակայում է էժան կրեդիտի կազմակերպչութիւնը. խիզանները հողադուրի կն դառնում։ Մտաւոր խտւար, զգրոցների, բժշկական օգնութեան և հաղորդակցութեան լուծանապարհների ծայրաւել պակասութիւն»։

Այնուհետև հեղինակը անցնում է դպրոցական գործին, բերելով թուանշաններ և տեղեկութիւնների կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի պաշտօնական հաշիւներից։ Այդտեղից նա հետաքրքրական եզրակացութիւններ է հանում, որոնցից զլիսատրն այն է, որ դպրոցական գործը, ինչպէս վկայում է և ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, բաւարարութիւն չէ տալիս ազգաբնակչութեան կրթական մեծ պահանջներին։

«Миръ Божій», մայիս։ Այս անգամ ամապիրը ողբում է իր խրմբադիր Վիկտոր Օստրօգօրսկու մահը։ Սա յայտնի է աւելի իրքն մտնկավարժ, բայց քառասուն տարուաջ ընթացքում ցոյց է տուել և մի վերին աստիճանի բեղմնաւոր գրական գործունէութիւն, աշխատակցելով բազմաթիւ պարբերական հրատարակութիւնների։ Ընչ ամենից շատ գնահատելին է հանգուցեալի մէջ, այն է, որ նա մէկն

էր վաթսունական թուականների առջև տր մարդկանցից և մինչև դերեզմանի ավեր հաստարիմ մնաց այդ գեղեցիկ ժամանակների իղէալներին, երբէք չը դաւաճանեց նրանց, նրա կեանքը ամբողջապէս աշխատանք էր. նա ձուլուած էր հասարակական հարցերի հետ, այն հաղուագիտ մարդկանցից մէկն էր, որոնք չեն կարող ապրել առանց հասարակութեան ծառայելու, առանց իրանց իմացածները հասարակութեան տալու: Աշխատանքի ծանրութիւն չը կազալգիտի մարդկանց համար և նրանց կեանքը սուղարական մի բանաստեղծի խօսքերի մարմնացումն է— «Առաստուրել կարելի է միայն այլուելով»: Տարիների ընթացքում աշխատում, տքնում է գործիչը, ուշադրութիւն չը դարձնելով որ սպառում են կենսական հիւթերը, որ ժամանակը իրանն է վերցնում. նա այլուում է ճրագի պէս, այլուում է մինչև որ հանգչում է: Վիկտոր Օտտոգորսկին մի մաքուր, բիրեղեղ մարդ էր, անսահման հաստ ունէր դէպի առաջադիմութիւնը, հաստում էր մարդկանց և կեանքին և պատրաստ էր զոհել ամեն ինչ՝ մարդկանց բարտաւորութեան համար: Իբրև խմբագիր էլ նա շատ ուշադիր և բարեխիղճ էր, ունէր իր հաստատ համոզմունքները և հովանաւորում էր սկսնակ գրողներին, առաջ էր քաշում նրանց: «Մեռնելով, նա կարող էր կատարեալ իրատունքով ասել թէ իր ոչ մի խօսքը, ոչ մի վարմունքը մէկին չարիք չէ հասցրել, իսկ այն ամեն բարիքը, ինչ կարող էր կատարել, կատարել է»: Հանգի՛տ այդպիսի լու մարդու ոսկրներին...

—
 „Журналъ для всѣхъ“, մայիսի թաւանի ռուս գիտնական և գրող Միլիկովի «Միջնադարեան մի անկէ»: ժամանակակից Եւրոպայում:

կարգացվում է հետաքրքրութեամբ, որովհետև ժամանակակից միջադրային հարցերից մէկին է վերաբերում: Այդ միջնադարեան անկիւնը Ալբանիան է: Հեղինակը ճանապարհորդել է այդտեղ, հնագիտական հետազոտութիւններ անելու համար և այժմ նկարագրում է այլանաչիների գրութիւնը թիւրքաց կառավարութեան տակ: Գրութիւնը անօրինակներից չէ: Գա էլ մի երկիր է, ուր երկար զարերի մեռելութիւնից յետոյ սկսել է զարթնել ազգային զիտակցութիւնը, ինքնաճանաչութիւնը: Կնտիլիգեցիան, որ գեւ փոքրաթիւ է, աշխատում է ժողովրդին սովորեցնել իր մայրենի լեզուն, թէև թիւրք կառավարութիւնը ամեն արգելքներ գործ է դնում այդ շարժման առաջն առնելու համար: Ալբանական տպագրած գիրքը Թիւրքիայում անպատճառ արգելուած է, որովհետև հրատարակուած է երիտասարդ-ալբանական կամիոնաներից մէկի ձեռքով Բոխարեստում, Բրիտանիայում, Աթէնքում կամ Նէպոլում: Աինելով բովանդակութեամբ բարբոզին անմեղ մի բան, նա բերում է իր հետ ազգային վերածնութեան գաղափարը և հէնց այս պատճառով էլ նա վտանգատու է և չեղափոխական, ոչ պակաս վատ, քան ամենակրակոտ պրօփլամայիան: Մութ գիշերով հաւաքում է արնատու երիտասարդութիւնը մի որ և է սարքած, չարմարեցրած զպրոցում սովորելու այդ արգելուած, բայց հասկանալի դասագրքերից մէկը—աշխարհագրութիւն կամ քերականութիւն... Եւ միևնույն ժամանակ հասարակ ալբանացու համար պարզում է, իր սմբողջ կոպտութեամբ, նրա գրութեան հիմնական հարցը: Նրան, այդ հովանի և յետնցում, հարկատու է հովանք նրա հօտերի համար և հոգաբարձական շտաբիցի աշխա-

տանքի համար: Կտրեցէք նրան հովտից, և նա կը մնայ աւազակ: Ինչպէս և է. տուէք նրան հովտ, և նրա համար կը բացուի աւելի խաղաղ քաղաքացիական կեցութեան հնարաւորութիւն: Արդեօք արգելուած ալբանական դասազիրքը կը նուաձէ՞ նրա համար այդ հովտը: Ով դիտէ, գուցէ և նուաձէ՞...:

Քիւրքական իրականութեան ամաստիւրը վերադառնում է և իր արտաքին տեսութեան մէջ, առիթ բռնելով առաջին քիւրքական պատերազմի 25 ամեայ տարեդարձը: «Քիւրքական հարցը XIX դարի սկզբից երկու կերպարանափոխութիւն կրեց: Առաջին շրջանի բնորոշ չափութիւն այն է, որ եւրոպական ապստամբութիւնը ձգտում է մի կողմից օգնել Քիւրքիայի քրիստոնեաներին Քիւրքիայի դէմ, միւս կողմից—օգնել Քիւրքիային Ռուսաստանի դէմ. «Ձեր թոյլ տալ որ կորչի Քիւրքիան, Ռուսաստանի այդ բնական թշնամին» նշանարանը առաջացրեց, Եւրոպայի մէջ ազատամիտ գաղափարների յաղթանակի հետ և Ղրիմի պատերազմը 1854—1856 թ.:

«Յետոյ գործը փոխուեց: Եւրոպական ապստամիտ կուսակցութիւնները համոզուեցին, որ Բալկանեան թերակղզու պլանին ժողովուրդները ընդունակ են ինքնուրոշն քաղաքական կեանքի և Քիւրքիայի խորտակումը չի ուժեղացնի Ռուսաստանը: Բայց զրա փոխարէն մեծ պետութիւնները, որոնք համարեա ամենքը ունեն այժմ Քիւրքիայում խոշոր առևտրական շահեր, էլի եկան այն եզրակացութեան, որ ցանկալի է պահպանել Բարձր Դուռը: Քիւրքիան, շինաստանի նման, այժմ ներկայանում լաւ կիթան կով, որից ամեն մէկը կարող է օգտուել, բայց որի բաժանումը պիտի անախտութիւն վէճեր և

թշնամութիւն կառուցանէ մասնակիցների մէջ: Եւ ահա, իբրև հետևանք այսպիսի հայեացքի, թիւրքական հարցը, Յերլինի կօնգրէսի ժամանակից մճճուեց պետութիւնների դաշնադրերով և համաձայնութիւններով, որոնց նպատակն է պահպանել թիւրքաց պետութիւնը մի առժամանակ նոյն դրութեան մէջ, որի մէջ նա գտնուած է այժմ:

«Այս բոլորը շատ գեղեցիկ կը լինէր, եթէ միայն Քիւրքիան ինքն իր մէջ չը կրէր քայքայման տարրեր, ունենալով մի չետամնաց, խաղաղ ըէֆօրմներ թոյլ չը տուող պետական կազմակերպութիւնը, որ ծանր է մանաւանդ նրա քրիստոնեանց հպատակների համար: Բոլոր տեղեկութիւնները Քիւրքիայից վերջին տասն տարիների ընթացքում, բացի սովորական հաղորդագրութիւններից փոքր պակասութեան մասին, հազարաւոր եղանակներով կրկնում են լուրերը քրիստոնեաների կոտորածի մասին Հայաստանում, կոտորածի Կ. Պօլսում, կոտորածի Մակեդոնիայում, երկուստարդ թիւրքերի կայսրաւորութեան մասին, դաւադրութիւնների մասին, եւրոպական կրթութիւն ստացած օֆիցերների ձերբակալութիւնների մասին և այլն և այլն: Այն ամենը, ինչ դեռ վերջնականացէս չէ ճշնշուած և չէ կորցրել սպրեւու և մտածելու ընդունակութիւնը, յուզում է և մենք հէնց այժմ տեսնում ենք որ Մակեդոնիայում իրերի դրութիւնը սուր կերպարանք է ընդունել:

«Եւրոպական դեմօկրատիան այդ յուզմունքների առիթով ցանկութիւն է չաչանում կամ որ պետութիւնները չը խառնուեն կամ որ նրանք ճնշում գործ դնեն Քիւրքիայի վրայ, որ հարկադրեն նրան անհրաժեշտ ըէֆօրմներ մտցնելու: Իսկ պետութիւնները ոչ այսպէս են ուզում անել, ոչ այնպէս նրանք

դատում են այսպէս. Քիւրքիան իր ճակատագրին թողնելը Երեւի այն հետեանքը կ'ունենայ որ Բաղկանեան մանր պետութիւնները կը չաղթեն նրան, որից յետոյ երեան կը գան բազմաթիւ ծանր հարցեր բաժանման մասին: Քիւրքիայից բէֆօրմներ ստանալ նոյնպէս հեշտ չէ,—սրա համար պետութիւնները բաւականաչափ միաբան չեն, և մինչդեռ մի քանիսները կը սկսեն բէֆօրմներ պահանջել, միտները կամացուկ, լաւ վարձատրութիւն ստանալով, կը սկսեն օգնել Քիւրքիային որ այդ պահանջները մերժուեն: Պարզ է, որ աւելի ձեռնտու է պահպանել Քիւրքիան իր այժմեան դրութեան մէջ, թող չը տալով, որքան այդ հնարատր է, որ չուզմունքները չը մեծանան նրա մէջ:

Եւ մենք իսկապէս տեսնում ենք, որ պետութիւնները մակեդոնական ապստամբութեան վերաբերմամբ, ինչպէս մի ժամանակ կրետականի վերաբերմամբ, բացարձակապէս բարեկամական զիրք են բռնել զէպի Քիւրքիանս—Եւ այսպէս, եւրոպական խաղաղութեան համար անհրաժեշտ է, որ Քիւրքիայի քրիստոնեայ հայտակները համբարութեամբ տանեն հարստահարութիւնները, կեղեքումները, սպանութիւնները: Բայց արդեօք հաստատումն է գոնէ այս ճանապարհով ձեռք բերուող խաղաղութիւնը: Վերեւում մենք ցոյց տուինք, որ ոչ թիւրքաց պետութեան Երկարակեցութեան վրայ չոյս դնելու բաւականաչափ հիմքեր չը կան:

«Մուրն» ամսագրի 1902 թ. № 1-ում սպուած «Աղջիկ» վերնագրով էշիւղիս յառաջաբանը գրելիս, ես վերցրել եմ ինննասպանութեան մի ցաւալի դէպք (որի սասին խու կերպով յիշատակուած էր մեր թերթերում), իբրեւ նիւթ գեղարուեստական գրուածքիս համար, եւ չէի կարող ենթադրել, որ ընթերցողը կարող կը յինէր գուշակել, թէ ի՛նչ իրական դէպք եմ ես ի նկատի ունեցել:

Սակայն ընթերցողներից ոմանք եւ մասնաւորապէս Մարիամի նախասիպի ազգականները հասկացել են, թէ ո՛ւմ եմ ես վերցրել իբրեւ նախասիպ իմ հերոսուհու համար:

Այս հանգամանքը ինձ վրայ պարտականութիւն է դնում բացարձակապէս յայտնելու, որ թէ՛ ինննասպանութեան պատճառները եւ թէ այն բոլորը, ինչ որ գրել եմ Մարիամի ժառանգականութեան եւ թէ նրա ծնողների դէպի նա ունեցած վերաբերմունքի մասին, լոկ իմ երեւակայութեան արդիւնքներն են եւ գրուած են այն պատճառով, որ այդպէս էր պահանջում էշիւղիս ծրագիրը:

Օգտուելով այս առիթից, յայտնում եմ իմ անկեղծ ցաւը, որ հակառակ իմ կամքին, ես, անզգուշաբար, գրուածովս նորոգել եմ Մարիամի նախասիպի մտերիմների արտում դեռ եւս թարմ խոցը:

ԲԺԿ. Վ. ԱՐՇՐՈՒՆԻ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

- Շուռի. Ս. Զ.—Ձի տպուելու
 Ռուզու. Վ. Թ.—Կարդացէք վերի պատասխանը:
 Սաչի. Պ. Ա.—Նոյնը:
 Մոսկուա. Պ. Ա.—Նոյնը:
 Դերբեկ. Յ. Բ.—Նոյնը:
 Աստուխան. Ա. Տ.—Չ.—Նոյնը:
 Թփիսուս. Տ.—Համարները կանոնաւոր ուղարկուած են. չտանալու դէպքում
 տեղեկացէք պատից:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» № 3-ում.

| | | | | | | |
|----------------|-----|-----------|---|-----------|---|------|
| Երես | սող | սպում | է | պէտք | է | լինի |
| 1 ⁹ | 12 | քաղաքային | | քաղաքային | | |

«Մուրճի» № 4-ում.

| | | | | | | |
|-----|----|-----------|--|-------------|--|--|
| 182 | 20 | հաշտուցին | | հրամարուցին | | |
|-----|----|-----------|--|-------------|--|--|

«Մուրճի» ներկայ №-ում.

| | | | | | | |
|----|----|-----|--|-----|------|--|
| 33 | 23 | ՃԼՃ | | ՃԼՃ | փոցի | |
|----|----|-----|--|-----|------|--|

«Գուսսենբերգ» գրավանձառանցում վաճառում են Ա. Պոզոսեանի գումարով հրատարակուած հետեւեալ գրքերը.

| | | | |
|--|---------------------------------------|-------------------------------------|------------|
| Եօրն ազուա. | Պատկերազարդ մանկական հէքիաթներ: | Փոխադրեց Լեոն Մելիք- Աղամեան: | 40-ական է. |
| Կարենն ու Մանենր կամ Քոյր եւ եղբայր. | | | |
| Պսիկ ու նոսիկ. | | | |
| Անդաւրդ Հանեսր. | | | |
| Ինչ է ասում սենեակը, թարգմ. Ջ. Տէր-Գրիգորեան | | | 10 է. |
| Եասի արկածները, թարգմ. Պ. Պոօշեան | | | 40 » |
| Պառաւ ծիսը, թարգմ. տիկ. Եղիս. Սարգսեան | | | 3 » |
| Խղճով դասասան, թարգմ. Ստ. Մալխասեան | | | 5 » |
| Արդար ծերունի, թարգմ. Ա. Մխիթարեան | | | 15 » |
| Մախիմկա, » » » | | | 15 » |
| Իւլիանկա, թարգմ. Պ. Հովուեան | | | 10 » |

Գումարով առնողներին գիշումն կը լինի:

Դիմել.—Тифлисъ, Книжный магаз. „Гуттенбергъ“, Лорисъ-Меликовская, 11. Г. Галустьяну. 4—2

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրսսեր դասարանների համար

համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ ԵՒ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Թիֆլիս, «Կենտրոնական» և «Գուտտենբերգ» գրավաճառոցները:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ն Ց Ա Ի

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ

Ծախուում է Թիֆլիսում: «Դուտառներէրգ» գրավա-
ճառանոցում:

Լ Է 0

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հասար երկրորդ. — XVIII դար

Ա Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.

Ծախուում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը եւ «Դուս-
սեննէրգ» գրավաճառանոցում:

ԲԱՅՈՒԱՇ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Տ Ե Մ Ի Ս

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱՀԱՆԴԷՍ

Օրդան XX-րդ դարու հայ կանանց

Պիտի հրատարակուի իր սեփական տպարանին մէջ: Բաղկացած
32 մեծադիր երկսիւնեակ էջերէ:

Տէր և տնօրէն-խմբագիր՝

Օր. Մառի Պէյլերեան

Ե գ ի պ տ ո ս ի հ ա մ ա ր

Տարեկան բաժանորդագինն է. զրշ. ողջ . . . 40

Վեցամսեայ 25

Արտասահմանի համար

Տարեկան ֆրանկ 12

Հասցէն՝ Rédaction de la Revue des Femmes Arméniennes
„Artémis“, le Caire, Egypte.

«Գուսսենբերգ» եւ «Կենսրոնական» գրավանառանոցներում ծախուում են «Մուրճ» ամսագրի հետեւեալ հրատարակութիւնները.

| | |
|---|--------|
| | Ռ. Կ. |
| 1. Լ. Տօլստօյ, «Յարութիւն», վէպ, թարգմ. Տ. Յ. | . 1 50 |
| 2. Ալ. Դօդէ, «Ֆրոմօն», վէպ, թարգմ. Տ. Յ. | . 1 — |
| 3. Լէօ, «Հայկական Տալապրութիւն», II հատոր | . 1 50 |
| 4. Բժպ. Վ. Արծրունի, «Ամուսնութիւն» | . — 75 |
| 5. Վ. Միրաքեան, «Լալուարի որսը», պօէմա | . — 40 |
| 6. Պուչկին, «Յաւերժահարսը», թարգմ. Կ. Կրասիլնիկեանի | — 15 |

«Ա Ն Ա Հ Ի Տ Ի»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Անահիթը»² կը հրատարակուի ամիսը անգամ մը: Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանկ (Ֆրանսիա), 12 ֆրանկ (օտար երկիրներ), 2 դօլար (Ամերիկա), 5 ուուրլի (Ռուսիա):

Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսիա), 6 ֆր. (օտար երկիրներ), 1 դօլ. (Ամերիկա), 3 ուրլ. (Ռուսիա):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԻԿ Է:

Ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Կ'ընդունուին ազգեր:

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիր՝ զրկել հետեւեալ հասցէին.

A. TCHOBANIAN

17. RUE LA BRAYERE

PARIS

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ»

«ԲԱՆԱՍԷՐԻ»-ի տարեկան գիրն է 15 ֆրանկ=6 ուուրլի, ԿԱՆՆԻԿ:

«Բանասէր»-ի Ա եւ Բ տարիներէն 25-ական օրինակ միայն ունինք մեր քովը. այդ անոնք որ կ'ուզեն ստանալ նոյն հատորները՝ պարտին վճարել 40 ֆրանկ իւրաքանչիւր հատորի համար:

Ո՛վ որ «Բանասէր»-ի Ա տարի ք պրակը զրկէ մեզ՝ վեցամսեայ «Բանասէր» կ'ընդունի. նոյնպէս՝ ո՛վ որ Բ տարի ա պրակը զրկէ մեզ՝ դարձեալ վեցամսեայ «Բանասէր» կ'ընդունի, իսկ այն որ մեր խնդրած երկու պրակներն ալ կը զրկէ՝ իրաւունք ունի տարւան մը «Բանասէր» ընդունելու:

Մեր հասցէն է՝

BASMADJIAN

112, Bd. Rochechouart. PARIS.

ռափարութիները.—Ելզաս-Լօթարինդում լայնադիակ օ-
 րէնքներ զերացումը.—Պրուսիայի քաղաքականութիւ-
 նը լեհական գաւառներում.—Համեմատութիւն Անգլիայի
 հետ.—Խաղաղութեան դաշն անգլիացիների և բօէրների
 մէջ.—Անգլիայի և Ռուսաստանի մրցումը մերձաւոր
 Արևելքում.—Պարսից Շահի նոր ճանապարհորդութիւ-
 նը և Պարսկաստանի բարենորոգման հարցը . . . 191

Սանասարեան զպրոցը.—Կիլիկիայի կաթողիկոսական հարցը. 197

- 18. ՆԱՄԱԿ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻՑ, Տիգրանի 200
- 19. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԵԱՐՀԻՑ, Անշլաս ծխախոտ, Կ. Փա-
 շայեանի 202
- 20. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 208
- 21. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ 216
- 22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 218
- 23. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», վէպ Ի. Ս. Տուրգենեվի 81—95

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1902 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Ետ շրջան, II-րդ տարի)

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ

Բ Ա Փ Ա Ն Ո Ր Գ Ո Գ Ի Ն Ը

Ռուսաստանում տարեկան 10 սուր. Արևաստեփանում՝ 12 սուր.

կէս տարին 6 " " " " 7 " "

1 ամսան 1 " " " " 1 " " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է դրուել Թիֆլիսում—խմբագրատանը (Գանձակալա փողոց, № 21, տ. Ջանջուղագոյի):

Խմբագրության այլ տեղերից պետք է դիմել՝ Тифлисе, въ редакцію журнала „Мурдж“.

Արևաստեփանից՝ Тифли, Rédaction de la revue „Mourtch“.

Պ ա ռ թ ի լ ի ն. Ով ղ ժ ու ա ր ա ն ու մ է Ռուսաստանում տարեկան բաժանորդագրությունը (10 ս.) վճարել միանույն, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ս., մայիսի 1-ին 3 ս. և յուլիսի 1-ին 2 ս.):

Հասցեն փոխելու համար պետք է ուղարկել 30 կ. (մարիաներով):

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ գեներելու համար պէժ է վճարել.

Մի երես բանոց լատարարություն համար . 10 ս.

1/2 " " " " " 5 " "

1/4 " " " " " 2 " "

ԱՊՍՏՈՒՆԻ ԿՐՈՒ ԶԲԻ ոչ ոքի «Մուրճ» չէ ուղարկում:

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրությունը յատուկ խնդրում է լոգոտադիրներից՝ զբել պարզ, մանասանոց թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Չբնդունում մեծ լոգոտաները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր լոգոտաներն ու բանաստեղծությունները չեն վերադարձնում: Ջեռադիրը լետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախար:

3. Գրտածքների վարձատրության համար որոշում է խմբագրությունը:

4. Խմբագրությունը իրան է վերադարձնում ուղարկուած լոգոտաները փոփոխելու կամ կրճատելու իրատները:

5. «Մուրճի» համարը չի ստացուելու ղեպըում պէտք է խմբագրության տեղեկություն տալ մինչև յաճորդ համարի լույս տեսնելը: Յից տեղեկության անհրաժեշտ է կցել տեղական պատասխան դրաստենակի հաստատագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի յանձնուած գանդատարին:

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԱՆ